932
L. E. 5

242. 5

ՓՈՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄԻԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.

ՅՈՒՆՎԱՐ.

№ I.

ՏՓԽԻՍ

1879.

ЛИТ. ТОМСОНА.

ՎԵՆՆՏԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ

ԳՐԱՄԱ

ԶԷԿՍՊԻՐԻ

ԱՆՁԻՆՔ։

ՎԵՆՆՏԿԻ ԴՈՒԿԸ։
ՄԱՐՕԿԿՕԻ ԻՇԽԱՆԸ, } Պօրցիայի փեսացուները։
ԱՐԲԱԳՕՆԻԱՅԻ ԻՇԽԱՆԸ, }
ԱՆՏՕՆԻՕ, Վենետկի վաճառական։
ԲԱՍԱՆԻՕ, նորա բարեկամը։
ՍՕԼԱՆԻՕ, } Անտոնիօի և Բասանիօի բարեկամները։
ՍԱԼԱՐԻՆՕ, }
ԳՐԱՑԻԱՆՕ, }
ԼՕՐԷՆՑՕ, Զէսիկայի սիրահարը։
ՇԷՅԼՕԿ, հրէայ։
ՏՈՒԲԱԼ, հրէայ, նորա բարեկամը։
ԼԱՆՉԷԼՕՏ ԳՕԲԲՕ, Շէյլոկի ծառան։
ԾԵՐՈՒՆԻ ԳՕԲԲՕ, Լանչէլօտի հայրը։
ՍԱԼԷՐԻՕ, Վենետկի սուրհանդակ։
ԼԷՕՆԱՐԴՕ, Բասանիօի ծառան։
ԲԱԼԹԱԶԱՐ, } Պօրցիայի ծառաները։
ՍՏԷՖԱՆՕ, }
ՊՕՐՑԻԱ, հարուստ ժառանգուհի։
ՆԷՐԻՍԱ, նորա աղախինը։
ԶԷՍԻԿԱ, Շէյլոկի դուստրը։
Ծերակոյտի անդամներ, դատարանի պաշտօնեաներ, բանտապետ, ծառաներ և ուրիշ անձինք։

Գործողութիւնը կատարվում է մասամբ Վենետկում և մասամբ Պօրցիայի Բէլմոնտ ամրոցում։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

վեներիկ· փողոց:

Մտնում են ԱՆՏՈՆԻՈ, ՍԱԼԱՐԻՆՈ և ՍՈԼԱՆԻՈ·

ԱՆՏՈՆԻՈ

Իրաւ, չը գիտեմ, ինչի՞ տխուր եմ.
Արդէն հերիք է· ասում էք, որ դուք
Նոյնպէս տխուր էք: Բայց ի՞նչպէս դտայ
Արդեօք այս վիշտը, ի՞նչտեղից փչեց,
Կամ ի՞նչ նիւթից է և ինչից ստեղծուած,
Ա՛հ, այդ բանն եմ ուզում իմանալ:
Այս վիշտն ինձ այնպէս յիմարացրել է,
Որ հազիւ ինքս ինձ ճանաչում եմ ես:

ՍԱԼԱՐԻՆՈ

Ձեր միտքը ծովի վրայ է թափառում,
Ուր ձեր նաւերը առաղաստարձակ,
Իբրև ծովային մեծատուն, հարուստ
Քաղաքացիներ, իբրև ծովի զարդ,
Նայում են փոքր նաւերի վերայ,
Որոնք ողջունում են խոնարհութեամբ,
Երբ նոցա մօտով թռչում են նոքա
Իրանց քամանի թևերի վերայ:

ՍՈԼԱՆԻՈ

Հաւատացէք ինձ, պարո՛ն, եթէ ես
Բաղդին այդքան շատ յանձնուած լինէի,

Սրտիս լաւագոյն կէսը կը լինէր
Ինձանից հեռու իմ յոյսերի մօտ։
Ես միշտ անդադար խոտ կը քաղէի,
Հողմի ընթացքը տեսնելու համար.
Քարտեզների մէջ ես կորոնէի
Նաւահանգիստներն ու կայանները.
Եւ այն բոլորը, որից որ և է
Վրտանգ է սպառնում իմ ապրանքներին,
Անշուշտ արտմեցնէր պիտի իմ սիրտը։

ՍԱԼԱՐԻՆՕ

Շունչս, որ ապուրս սառեցնում է,
Անշուշտ ինձ վերայ սառստուռ կը բերէր,
Երբ ես մտածեմ, որքան վընասել
Կարող է սաստիկ հողմը ծովի վրայ.
Երբէք չէի կարող նայել աւազի
Ժամացոյցի վրայ, որ չը յիշէի
Ծովի մէջ եղած ճանճաղ տեղերը,
Եւ ինձ կը թուէր, թէ հարուստ նաւս,
Աւազում խրուած, գլուխը թեքել է
Կողերից խորը, որ համբուրէ իւր
Թաց գերեզմանը։ Երբ եկեղեցում
Կանգնած նայէի նորա սրբազան
Քարէ շինուածքին. ի՞նչպէս ես իսկոյն
Չը մտանէի այն զարհուրելի
Ժայռերի վերայ, որոնք շատ թեթև
Եթէ դիպչէին իմ քնքոյշ նաւին,
Իսկոյն կը ցրուէր նա ծովի վերայ
Իւր միջի բոլոր համեմեղէնը
Եւ ալիքների վերայ կը փռէր
Իմ մետաքսները։ Կարճ ասեմ, ահա,
Մի վայրկեանի մէջ չը քացաւ բոլոր
Կարողութիւնս։ Ի՞նչպէս կարող եմ
Ես այդ մրտածել և չը մտածել,
Որ այդ դիպուածը ինձ կրոխրեցնէր։
Ուրեմն ոչինչ մի՛ ասէք դուք ինձ.

Գիտեմ, Անտոնիոն տրխուր է, որ նա
Մըտածում է իւր ապրանքի վերայ։

ԱՆՏՈՆԻՈ

Հաւատացէք ինձ, այդ չէ պատճառը։
Իմ բաղդից միակ նաւին չէ յանձնուած
Ապրանքս, կամ թէ մի տեղում պահուած։
Ոչէլ կախուած է կարողութիւնս
Այս ներկայ տարուայ յաջողութենից։
Այսպէս ուրեմն ինձ տրամեցնում չէ
Իմ առուտուրը։

ՍՈԼԱՆԻՈ

Ապա ուրեմն
Սիրահարուած էք։

ԱՆՏՈՆԻՈ

Ֆո՛ւ, ֆո՛ւ։

ՍՈԼԱՆԻՈ

Ի՞նչ, ոչէլ
Սիրահարուած էք։ Շատ լաւ, ուրեմն
Տրխուր էք, որովհետև ուրախ չէք։
Դուք կարող էիք նոյնպէս ծիծաղել,
Թռչկոտել, ասել, թէ դուք ուրախ էք,
Որովհետև դուք տխուր չէք։ Վրկայ
Թող լինի Յանոսը երկգլխանի,
Որ բընութիւնը երբեմն անսովոր
Մարդիկ է ստեղծում։ Մէկը խրխում է
Միշտ իւր աչքերը և ծիծաղում է,
Ինչպէս մի թուխակ պարկաբղուկի
Ձայնը լսելիս։ Իսկ միւսի դէմքը
Այնպէս քացխած է, որ նա ժպտելով
Երբէք չէր ցոյց տայ իւր ատամները,
Թէև Նեստորը նրան հաւատացնէր,
Որ կատակը շատ ծիծաղաշարժ է։

Գալիս են ԲԱՍԱՆԻՈ, ԼՈՐԷՆՑՈ և ԳՐԱՑԻԱՆՈ։

ՍՕԼԱՆԻՕ

Ահա գալիս է ազնիւ Բասանիօն,
Ձեր ազգականը, այլև Լորէնցօն
Եւ Գրացիանօն։ Այժմ մնաք բարով.
Լաւ ընկերութեան մէջ ենք թողնում ձեզ։

ՍԱԼԱՐԻՆՕ

Ես կը մնայի այստեղ, մինչև ձեզ
Ուրախացնէի, բայց առաջս առան
Ինձնից աւելի լաւ բարեկամներ։

ԱՆՏՕՆԻՕ

Անչափ թանգագին է ինձ համար ձեր
Բարեկամութիւնն։ Ես ընդունում եմ,
Որ ձեզ կանչում են հարկաւոր գործեր,
Եւ այդ պատճառն էք բերում, որ գընաք։

ՍԱԼԱՐԻՆՕ

Բարի առաւօտ, ազնիւ պարոններ։

ԲԱՍԱՆԻՕ

Պարոններ, էլ երբ պիտի միասին
Դարձեալ ծիծաղենք։ Շատ հաղուագիւտ է...
Ա՞յդպէս է կարգը։

ՍԱԼԱՐԻՆՕ

Ցարմար միջոցին
Կը ծառայենք ձեզ։

(ՍԱԼԱՐԻՆՕՆ և ՍՕԼԱՆԻՕՆ գնում են։)

ԼՈՐԷՆՑՕ

Որովհետև դուք
Բասանիո գտաք Անտօնիօին,
Ուրեմն հիմա մենք կը հեռանանք.
Միայն խնդրում եմ, որ չը մոռանաք,
Կէսօրին ինչտեղ պիտի մենք տեսնուինք։

ԲԱՍԱՆԻՕ

Անպատճառ կը գամ։

ԳՐԱՑԻԱՆՈ

Անտոնիո, դուք
Լաւ չէք երևում։ Աշխարքի վերայ
Շատ էք ուշք դարձնում։ Մարդս կորցնում է
Աշխարքը, երբ որ ձեռք է բերում այն
Անչափ հոգսերով։ Հաւատացէք ինձ,
Ես զարմանում եմ, ինչպէս փոխուել էք։

ԱՆՏՈՆԻՈ

Աշխարքը այնպէս եմ ընդունում ես,
Ինչպէս որ նա է, Գրացիանո. մի բեմ,
Ուր ամեն մէկը իւր դերն է խաղում.
Իմը տրխուր է։

ԳՐԱՑԻԱՆՈ

Թողէք ես խաղամ
Ծաղրածուի դեր. թող ես կնճռոտիմ
Ծաղը ու ծիծաղով, լաւ է բորբոքուի
Ստամքսս գինով, քան սիրտս ու վախից
Սառի իմ սիրտը։ Մարդ ինչո՞ւ պիտի
Պապի պէս նստի, ինչպէս մի արձան
Ալաբաստր քարից, երբ որ արիւնը
Դեռ տաք հոսում է երակների մէջ։
Ինչո՞ւ պիտի քնի, երբ որ արթուն է
Եւ չարանալով դեղնութիւն ստանայ։
Անտոնիո, լսիր, ինչեմ ասում քեզ—
Ես քեզ սիրում եմ, սէրն է խօսեցնում—
Կան մարդիկ, որոնց դէմքը անշարժ է,
Ինչպէս մի ճահիճ, որոնք պահում են
Համառ լռութիւն, ինչ է երևին
Խելօք, խորամիտ. կարծես ուզում են
Ասել. ես պարոն պատգամախօսն եմ,
Եւ եթէ բանամ բերանս, ապա
Մի շուն չի հաչի։ Ո՛վ իմ Անտոնիո,
Ես ճանաչում եմ այդպիսիներին,
Որոնք համարվում են միշտ իմաստուն,

Միայն այն պատճառով, որ բան չեն ասում.
Բայց եթէ խօսեն, անշուշտ մեծ տանջանք
Կըպատճառէին ունկնդիրներին,
Ստիպելով նոցա, յիմար անունը
Տալ եղբայրներին: Մի ուրիշ անգամ
Աւելի շատ բան կասեմ այդ մասին,
Միայն թէ տրտմութեան կարթով մի՛ որսար
Յիմար իմաստուն — դատարկ անունը,
Գընանք, Լօրէնցօ:—Առ այժմ մնաք բարով.
Քարոզս ճաշից յետոյ կաւարտեմ:

ԼՕՐԷՆՑՕ

Լաւ, մենք մինչև ճաշ կերթանք այստեղից:
Երևի ես էլ համր իմաստուն եմ,
Որովհետև ինձ խօսել չէ թողնում
Մեր Գրացիանօն:

ԳՐԱՑԻԱՆՕ

Միայն երկու տարի
Ապրիր դու ինձ հետ, և էլ քո ձայնը
Չես ճանաչի դու:

ԱՆՏՕՆԻՕ

Մնաք բարով, ձեզ հետ
Ես էլ կըդառնամ շատախօս մէկը:

ԳՐԱՑԻԱՆՕ

Շատ շնորհակալ եմ: Լռութիւնը իրաւ
Շատ վայելուչ է ծըխում ապխտած
Լեզուներին և ողջախոհ աղջկանց:
(Գրացիանօն և Լօրէնցօն գնում են:)

ԱՆՏՕՆԻՕ

Մի բան կա՞յ արդեօք նորա ասածում:

ԲԱՍԱՆԻՕ

Գրացիանօն այնքան դատարկ է խօսում, որքան հազիւ թէ մի ուրիշ մէկը ամբողջ Վենետիկում: Նորա խելացի մտքերը նման են երկու ցորենի հատիկներին, որոնք թաքցրած են երկու աման յարդի մէջ. պէտք է ամբողջ օր որոնէք, մինչև որ կը գտնէք, և երբ որ կըգտնէք, կըտեսնէք, որ չարժէր որոնել:

ԱՆՏՈՆԻՈ

Լաւ, այժմ ասացէք, ի՞նչ օրիորդ է,
Որին ուխտել էք դուք երկրպագել,
Եւ որի մասին խոստացաք պատմել։

ԲԱՍԱՆԻՈ

Անտո՛նիո, ձեզ անյայտ չէ, ինչպէս
Սպառել եմ ես իմ կարողութիւնը,
Աւելի շքեղ ապրելով, քան թէ
Ներում էին ինձ թոյլ միջոցներս։
Ես չեմ ափսոսում, որ առաջուայ պէս
Չեմ կարող ապրել։ Իմ միակ հոգսն է
Պատուով դուրս գալ իմ պարտքերի տակից.
Որոնց մէջ ձգեց ինձ շուայլ կեանքս։
Ես ամենից շատ ձեզ եմ պարտական,
Թէ փող և թէ սէր. և ձեր սէրը ինձ
Երաշխաւոր է, որ կարող եմ ձեզ
Համարձակ ասել մտադրութիւնս,
Ինչպէս եմ ուզում ազատուել ես իմ
Բոլոր պարտքերից։

ԱՆՏՈՆԻՈ

Խնդրում եմ ասէք,
Բարեկամ, ինձ ձեր մտադրութիւնը.
Եւ թէ այդ դուրս չէ պատուի սահմանից,
Ինչպէս որ այս դուք միշտ էլ անում էք,
Հաւատի եղէք, անձս, քրսակս,
Կարողութիւնս պատրաստ եմ նուիրել
Ձեր ծառայութեան։

ԲԱՍԱՆԻՈ

Աշակերտութեանս
Ժամանակ մի նետ կորցնելիս, իսկոյն
Արձակում էի միւսը նոյնպիսին
Եւ նոյն ուղղութեամբ, միայն աւելի լաւ
Ուշք էի դարձնում, որ առաջինը
Գտնեմ, և այդպէս երկուսն էլ վստահ

Բաղդիս յանձնելով, երկուսն էլ յաճախ
գտնում էի ես։ Ես ձեզ օրինակ
Բերի այս խաղը երեխայական,
Որովհետև այն, ինչ որ պիտի ասեմ,
Սորանից յետոյ, այն էլ կատարեալ
Անմեղութիւն է։ Անտօնիօ, դուք ինձ
Շատ էք փոխ տուել, և ես կորցրել եմ
Ձեր բոլոր տուածը, իբրև վայրենի
Մի երիտասարդ. բայց եթէ հաճիք
Արձակել էլի մի նետ նոյն կողմը,
Որ կողմը արդէն թռաւ առաջինը,
Ես չեմ կասկածում, որ լաւ նայելով
Նորա ետևից, երկուսն էլ գտնեմ,
Թէ ոչ, կբերեմ գոնէ վերջինը
Եւ առաջինի համար կմնամ
Միշտ երախտագէտ ձեր պարտապանը։

ԱՆՏՕՆԻՕ։

Դուք ճանաչում էք ինձ և ի զուր տեղ
Ժամանակ կորցնում իմ սիրոյ շուրջը
Պտոյտներ անելով։ Դուք, կասկածելով
իմ անձի վերայ, անշուշտ անում էք
ինձ աւելի մեծ անիրաւութիւն,
Քան թէ, եթէ որ վատնէիք բոլոր
կարողութիւնս։ Ուրեմն ասացէ՛ք,
ի՞նչ պիտի անեմ, և ի՞նչ կարող եմ
Ես ձեր կարծիքով անել ձեզ համար.
իսկոյն պատրաստ եմ. ուրեմն ասացէ՛ք։

ԲԱՍԱՆԻՕ։

Բէլմօնտ ամրոցում ապրում է մի շատ
Հարուստ օրիորդ, և գեղեցիկ է.
Աւելի ևս գեղեցիկ է նա
Առաքինութեամբ։ Նորա աչքերից
Ես մի ժամանակ ստացել եմ անխօս,
Նազելի ցոյցեր։ Նորա անունն է
Պօրցիա, պակաս արժանաւոր չէ,

Քան թէ Կատոնի դուստր և Բրուտոսի
Կինը Պորցիան։ Այլ և անյայտ չէ
Բոլոր աշխարհին նրա արժանիքը.
Եւ չորս հողմերը ամեն կողմերից
Փչում բերում են նրա հարստութիւնը
Խնդրող անուանի երիտասարդներ.
Նրա արևափայլ մազերը ինչպէս
Ոսկէ գեղմն ծածկում են նրա քունքերը.
Բէլմոնտ ամրոցը դառել է կողքիս,
Եւ շատ ցասոններ դալիս են այնտեղ
Նորան դրաւելու։ Ո՛վ իմ Անտո՛նիո,
Թէ ունենայի ես էլ միջոցներ
Նոցա հետ մրցել, սիրտս ասում է,
Որ ես անպատճառ կը բաղդաւորուիմ։

ԱՆՏՈՆԻՈ։

Դու գիտես, որ իմ բոլոր ստացուածքը
Ծովի վերայ է։ Ես ոչ փող ունիմ
Եւ ոչ էլ ապրանք, որ իսկոյն ճարեմ
Առ ձեռն գումար։ Ուրեմն գընա,
Փորձիր, իմացիր որքան զօրութիւն
Ունի իմ վարկը մեր քաղաքի մէջ,
Որից լեռվին օգուտ կը քաղեմ,
Որ քեզ պատրաստեմ Բէլմոնտ գընալու
Պորցիայի մօտ։ Գընա՝, հարցրու
Ամեն տեղ. ահա՛ գընում եմ ես էլ
Տեսնել, թէ ինչտեղ հնար է փող ճարել.
Յոյս ունիմ, չէ այդ այնքան անհնար,
Երբ երաշխաւոր կանգնեմ քեզ համար։

(Երկուսն էլ գնում են։)

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ·

Բէլմօնտ· մի սենեակ պօրցիայի տանը:

Մտնում են ՊՕՐՑԻԱՆ և ՆԷՐԻՍԱՆ·

ՊՕՐՑԻԱ

Իրաւ, Ներիսա, իմ փոքրիկ՝ անձը ձանձրացել է այս մեծ աշխարհից:

ՆԷՐԻՍԱ

Այո, այդպէս կլինէր, սիրելի օրիորդ, եթէ ձեր տարաբաղդութիւնը նոյն չափով լինէր, որքան և ձեր բաղդաւորութիւնը: Բայց ինչպէս տեսնում եմ, նոքա էլ այնպէս հիւանդ են, որոնք անչափ շատ են ուտում, ինչպէս և նոքա, որոնք տանջվում են սովից: Այդ պատճառով փոքր բաղդաւորութիւն չէ միջին դրութիւնը: Ճոխութեան մազերը շուտ են սպիտակում, իսկ չափաւորութիւնը ապրում է աւելի երկար:

ՊՕՐՑԻԱ

Լաւ առածներ են և լաւ էլ ասուած:

ՆԷՐԻՍԱ

Աւելի լաւ կլինէին, եթէ կատարուէին, ինչպէս հարկն է:

ՊՕՐՑԻԱ

Եթէ նոյնպէս հեշտ լինէր անելը, ինչպէս որ հեշտ է գիտենալը, թէ ինչ բան հեշտ է անել, այն ժամանակ մատուռները կլինէին եկեղեցիք և աղքատ մարդկանց խրճիթները իշխանական պալատներ: Լաւ քարոզիչը նա է, ով որ հետևում իւր սեփական խրատներին:— Ես կարող եմ քսանին ուսուցանել, թէ ինչ բան լաւ է անել, քան թէ այն քսանից մէկը լինել և իմ սեփական խրատներին հետևել: Ուղեղը կարող է օրէնքներ հնարել արեան համար, բայց տաք բնաւորութիւնը դուրս է թռչում սառը կանոնների վերայից: Անմիտ երիտասարդութիւնը նապաստակ է, որ վազում է զգուշաւոր խոհեմութեան թակարդի վերայից: Բայց այս խորհրդածութիւնը անօգուտ է ինձ ամուսին ընտրելու համար:—Աւաղ, ինչ ասել է ընտրել: Ես ոչ կարող եմ ընտրել, ում որ ուզում եմ, ոչ էլ մերժել, ում որ

չեմ հաւանում. այսպէս կաշկանդուած է մի կենդանի դստեր կամքը մի մեռած հօր վերջին կամքով: Մի՞թէ այս խիստ չէ, Ներիսա, որ ես ոչ կարող եմ մէկին ընտրել, ոչ էլ մէկին մերժել:

ՆԷՐԻՍԱ

Ձեր հայրը միշտ առաքինի էր, և բարեպաշտ մարդիկ մեռնելիս յղանում են բարի մտքեր: Ուրեմն վիճակախաղը, որ նա հնարել է այս երեք արկղով. ոսկէ, արծաթէ և կապարէ, որով ձեզ կը ստանայ նա, ով որ նորա միտքը կիմանայ, անկասկած ոչ ոք չի տանի, բացի այն մարդուց, որ ձեզ ճշմարիտ սիրում է: Բայց որքան ջերմ է ձեր սէրը դէպի այն իշխանազներից մէկը, որոնք եկել խնդրում են ձեր հարսնութիւնը:

ՊՕՐՑԻԱ

Խնդրում եմ մէկ մէկ ասա ինձ նոցա անունները, և երբ որ դու ինձ անունները կասես, ես կը նկարագրեմ նոցա, և իմ նկարագրութիւններից եզրակացութիւն արա իմ սիրոյ մասին:

ՆԷՐԻՍԱ

Ամենից առաջ նապոլիտանցի իշխանը:

ՊՕՐՑԻԱ

Է՛հ, նա կատարեալ քուռակ է, որովհետև միայն իւր ձիու վերայ է խօսում և մի մեծ յաւելուած է համարում իւր ձիրքերի վերայ, որ կարող է ինքը պայտել նորան: Ես շատ վախենում եմ, որ նորա պատուելի տիկին մայրը աչք է ունեցել մի դարբինի վերայ:

ՆԷՐԻՍԱ

Յետոյ պֆալցգրաֆը:

ՊՕՐՑԻԱ

Նա միայն կնճռում է ճակատը, կարծես ուզում է ասել. «եթէ դուք ինձ չէք ուզում, թողէք մնայ:» Նա առանց ժպտելու լսում է զուարճալի պատմութիւններ. ես վախենում եմ, որ նա ծերանալով լացկան փիլիսոփայ կը դառնայ, երբ դեռ երիտասարդ այդպէս անվայել տխուր է: Ես աւելի ուրախ կը լինիմ ուզել մի մեռելի գլուխ ոսկոր բերանում, քան թէ դոցանից մէկին: Աստուած ազատէ ինձ այդ երկուսից:

ՆԷՐԻՍԱ

Ի՞նչ կասէք Մօսիէօ Լը Բօն ֆրանսիացի պարոնի մասին:

ՊՈՐՑԻԱ.

Աստուած է ստեղծել նորան, ուրեմն թող մարդ համարուի: Ճշմարիտ է, ես գիտեմ, որ ծաղրելը մեղք է. բայց նա.... Այո, նորա ձին աւելի լաւ է, քան թէ Նապօլիտանացու ձին. Ճակատը կնճռելու վատ սովորութիւնը նորա մէջ աւելի լաւ է, քան թէ Պֆալցգրաֆի մէջ. նա ամէն ոք է և ոչ ոք: Տորդիկը սուլելիս, նա իսկոյն սկսում է թռչկոտել. նա պատրաստ է մենամարտել իւր ստուերի հետ: Նորան ուզելով, նոյն է, թէ քսան մարդ ուզեմ: Ես կըներէի նորան, եթէ նա ինձ ատէր. որովհետև, եթէ նա ինձ մինչև անգամ խելագարի պէս սիրէր, ես էլի չէի համակրի նորան:

ՆԵՐԻՍԱ.

Ի՞նչ կասէք երիտասարդ անգլիացի բարոն Ֆալկէնբրիջի մասին:

ՊՈՐՑԻԱ.

Դու գիտես, որ ես նորա հետ չեմ խօսում, որովհետև ոչ նա է ինձ հասկանում, ոչ ես նորան. նա չէ խօսում ոչ լատիներէն, ոչ ֆրանսերէն, ոչ էլ իտալերէն, և դու կարող ես դատաստանի առաջ երդուել, որ ես մի սև փողի անգլիերէն չը գիտեմ: Նա մի քաղաքավարի մարդու պատկեր է — բայց, ախ, ո՞վ կարող է մի համր տիկնիկի հետ խօսել: Ինչպէս զարմանալի հագնւում է նա: Ես կարծում եմ, որ նա իւր վերնազգեստը առել է Իտալիայում, իւր լայն վարտիկը Ֆրանսիայում, գլխարկը Գերմանիայում, իսկ շարժուածքը ամէն տեղ:

ՆԵՐԻՍԱ.

Ի՞նչ կարծիք ունիք նորա դրացի շոտլանդիացի պարոնի մասին:

ՊՈՐՑԻԱ.

Որ նա մարդասիրութիւն է զգում դէպի իւր դրացիները. նա փոխ առաւ անգլիացուց մի ապտակ և երդուեց կրկին վճարել, հէնց որ կը կարողանայ:—Ես կարծում եմ, որ Ֆրանսիացին երաշխաւոր եղաւ այդ բանում և նորա տեղ ստորագրեց:

ՆԵՐԻՍԱ.

Ի՞նչպէս էք հաւանում երիտասարդ գերմանացուն, Սաքսոնիայի դքսի եղբօրորդուն:

ՊՕՐՑԻԱ.

Նա շատ զզուելի է առաւօտները, երբ որ խմած չէ և ամենազզուելի ճաշից յետոյ, երբ որ հարբած է: Ամենալաւ ժամանակ նա մի փոքր վատ է մարդուց և ամենավատ ժամանակ փոքր ինչ լաւ է անասունից: Որքան կուզէ վատ լինի ինձ համար, ես յոյս ունիմ, որ ինձ անպատճառ կը յաջողի ազատուիլ նորանից:

ՆԵՐԻՍԱ.

Ուրեմն, եթէ նա կամենայ վիճակ հանել և ընտրէ իսկական արկղը, դուք կը հրաժարուիք կատարել ձեր հօր կամքը, հրաժարուելով ուզել նորան:

ՊՕՐՑԻԱ.

Այդ տարաբաղդութենից ազատ մնալու համար, խնդրում եմ մի ռէյնվէյնով լիքը մեծ բաժակ դիր փուչ արկղի վերայ, այն ժամանակ, թէև սատանան լինի նստած նորա մէջ, իսկ նորա վերայ այդ հրապոյրը, ես գիտեմ, որ նա այն արկղը կընտրէ: Ես ամեն բան պատրաստ եմ անել, Ներիսա, քան թէ դառնալ այդ սպունգի կինը:

ՆԵՐԻՍԱ.

Ձեզ հարկաւոր չէ վախենալ, օրիորդ, թէ դուք այդ պարոններից մէկին կը ստանաք: Նոքա ինձ յայտնեցին իրանց որոշումը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ իրանց տուները դառնալ և էլ չը ձանձրացնել ձեզ իրանց առաջարկութիւններով, եթէ ուրիշ կերպ կարելի չէ ստանալ ձեզ, բացի ձեր հօր կարգադրած վիճակախաղով:

ՊՕՐՑԻԱ.

Թէև ես պառաւեմ, ինչպէս սիբիլլա, կը մեռնիմ ողջախոհ, ինչպէս Դիանա, եթէ ինձ ոչ ոք չի ստանայ իմ հօր կամքին համաձայն: Ես շատ ուրախ եմ, որ այս փեսացուների խումբը այդքան խոհեմ է, որովհետև նոցանից ոչ մէկը չը կայ, որի բացակայութիւնը ցանկալի չը լինէր իմ սրտին, և ես խնդրում եմ Աստուծուն, որ նոցա բարի ճանապարհ տայ:

ՆԵՐԻՍԱ.

Չէք յիշում, օրիորդ, ձեր հօր կենդանութեան ժամանակ այն վենետիկցուն, որ ուսեալ էր և որ մարկիզ Մօնֆէրատի հետ գալիս էր այստեղ:

ՊՕՐՑԻԱ

Այո՛, այո՛, դա Բասանիօն էր. կարծեմ այդպէս էր կոչվում նա:

ՆԷՐԻՍԱ

Այո՛, օրիորդ: Բոլոր այր մարդկանցից, որոնց երբ և իցէ տեսել են իմ յիմար աչքերը, ամենից աւելի նա է արժանի մի գեղեցիկ կնոջ:

ՊՕՐՑԻԱ

Ես նորան լաւ միտս ունիմ, և յիշում եմ, որ նա արժանի է քո գովասանքին: (Մտնում է մի ծառայ:) Հ՞ը, ի՞նչ նոր բան կայ:

ԾԱՌԱՆ

Այն չորս օտարականները որոնում են ձեզ, օրիորդ, որ հրաժարական ողջոյն տան, այլ և եկել է մի սուրհանդակ մի հինգերորդից, Մարոկկոի իշխանից և յայտնում է, որ իշխանը, իւր տէրը, այս գիշեր այստեղ կը լինի:

ՊՕՐՑԻԱ

Եթէ այս հինգերորդին կարողանայի նոյնպէս ուրախ սրտով ասել «բարով եկաք,» ինչպէս այս չորսին ասում եմ, «բարով գնաք,» նորա գալուստը կուրախացնէր ինձ: Եթէ նա մտքով սուրբ է, իսկ դէմքով սատանայ, լաւ է լինի նա իմ խոստովանահայրը, քան թէ ամուսինը: Ե՛կ, Նէրիսա:—Դու, ա՛յ տղայ, առաջ գնա:—Այն ինչ մենք փակում ենք դուռը մէկի ետևից, միւսը արդէն ծեծում է:

(Բոլորը դուրս են գնում:)

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ:

Վենետիկ. հրապարակ:

Մտնումեն ԲԱՍԱՆԻՕՆ և ՇԷՅԼՕԿԸ:

ՇԷՅԼՕԿ

Երեք հազար ոսկի,—լաւ:

ԲԱՍԱՆԻՕ

Այո՛, պարոն, երեք ամսով:

ՇԷՅԼՕԿ

Երեք ամսով,—լաւ:

ԲԱՍՍԱՆԻՈ

Որի համար, ինչպէս ասացի ձեզ, Անտոնիոն երաշխաւոր կը լինի։

ՇԷՅԼՕԿ

Անտոնիոն երաշխաւոր կը լինի,—լաւ։

ԲԱՍՍԱՆԻՈ

Կարող էք ինձ օգնել։ Ուզում էք ինձ այդ ծառայութիւնը անել։ Կիմանամ ես ձեր պատասխանը։

ՇԷՅԼՕԿ

Անտոնիոն լաւ մարդ է։

ԲԱՍՍԱՆԻՈ

Մեթէ երբ և ինչ լսել էք նորա մասին դորա հակառակը։

ՇԷՅԼՕԿ

Է՛յ, ո՛չ, ո՛չ, ո՛չ։—Երբ որ ես ասում եմ, որ նա լաւ մարդ է, դորանով ուզում եմ ասել, հասկացէք ինձ, որ նա կարողութիւն ունի.... Բայց նորա միջոցները բաղդի ձեռին են. նա ունի մի նաւ, որ գնում է Տրիպոլիս, մի ուրիշը—Ղեկատան. բացի դորանից, ես լսեցի Ռիալտոում, որ նորա երրորդ նաւը Մէքսիկո է, չորրորդը Անգլիա—և այսպէս ունի նա էլի ուրիշ ապրանքներ զանազան տեղ ցրուած։ Բայց նաւերը տախտակներ են, նաւաստիները—մարդիկ. կան ցամաքի մկներ և ջրի մկներ, ջրի գողեր և ցամաքի գողեր—ուզում եմ ասել ծովային աւազակներ, և բացի դորանից վտանգ կայ հողից, ալիքներից և ժայռերից։—Բայց այնու ամենայնիւ այդ մարդը կարողութիւն ունի։—Երեք հազար ոսկի։—Ես կարծում եմ, որ կարող եմ ընդունել նորա երաշխաւորութիւնը։

ԲԱՍՍԱՆԻՈ

Միամի՛տ եղէք, կարող էք։

ՇԷՅԼՕԿ

Ես ուզում եմ հաւաստի լինել, որ կարող եմ, և հաւաստի լինելու համար ուզում եմ մտածել։ Կարող եմ խօսել Անտոնիոյի հետ։

ԲԱՍՍԱՆԻՈ

Եթէ կը բարեհաճիք մեզ հետ ճաշել։

ՇԷՅԼՕԿ

Հա՛, որ խոզի միս հոտն առնեմ, որ այն բնակարանից ուտեմ, որի մէջ ձեր մարգարէն, Նազարէթացին, աղօթելով հալածեց սատանային: Ես ձեզ հետ առուտուր կանեմ, ձեզ հետ կըխօսիմ, ձեզ հետ ման կըգամ և այլն, բայց չեմ ուտի ձեզ հետ, չեմ խմի ձեզ հետ, ոչ էլ կաղօթեմ ձեզ հետ: Ի՞նչ նորութիւն կայ Ռիալտօում: Այս ո՞վ է գալիս այստեղ:

Գալիս է ԱՆՏՕՆԻՕՆ

ԲԱՍԱՆԻՕ

Սինիօր Անտօնիօն է:

ՇԷՅԼՕԿ (ինքն իրան.)

Ինչպէս նման է նա նենգ մաքսաւորին:
Ես նրան ատում եմ, որ քրիստոնեայ է,
Աւելի ևս ատում եմ նորան,
Որ նա գարշելի պարզամտութեամբ
Առանց տոկոսի փող է փոխ տալիս
Եւ Վենետիկում պակասեցնում է
Շահի արժէքը: Թէ նա մի անգամ
Իմ ձանգը կընկնի, լաւ կը կշտացնեմ
Ես իմ վաղեմի ատելութիւնը:
Նա ատում է մեր սուրբ ժողովուրդը,
Եւ մինչև անգամ հայհոյում է նա
Վաճառականների ժողովներում
Ինձ, իմ գործերը, արդար վաստակս,
Որ վաշխ է կանչում:—Անիծած լինի
Իմ բոլոր ցեղը, թէ երբ և իցէ
Ներեմ ես նորան:

ԲԱՍԱՆԻՕ

Լսեցէք, Շէյլօկ:

ՇԷՅԼՕԿ

Ես իմ մտքի մէջ հաշվում եմ առ ձեռն
Ունեցած փողս, և դուրս է գալիս,
Որ երեք հազար ոսկի չեմ կարող
Ես իսկոյն ճարել:—Բայց այդ ոչինչ է:

Տուբալն, ունևոր հրէան, ինձ կոդնէ։—
Բայց որքան ամով կամենում էք դուք։—

(Անտոնիոին։)

Պատուարժան պարոն, ողջ լինիք։ Իսկոյն
Ձեր ազնուութեան վրայ էր մեր խօսքը։

ԱՆՏՈՆԻՈ

Շէյլօկ, թէև ես ոչ փոխ եմ տալիս,
Ոչ էլ փոխ առնում, որ շահ տամ, կամ թէ
Ինքս շահ ստանամ, բայց որովհետև
Իմ բարեկամը կարիքի մէջ է,
Ես վարվում եմ իմ սովորութեան դէմ։—
Արդէն գիտէ՞ նա, որքան էք ուզում։

ՇԷՅԼՕԿ

Այո՛, ես գիտեմ, որ երեք հազար
Ոսկի է ուզում։

ԱՆՏՈՆԻՈ

Եւ երեք ամով։

ՇԷՅԼՕԿ

Այդ մոռացայ ես։—Ուրեմն երեք
Ամով էք ուզում. շատ լաւ, և դուք էլ
Երաշխաւոր էք. մտածեմ, տեսնեմ։—
Բայց լսեցէք ինձ։ Կարծեմ, ասացիք,
Որ երբէք չահով ոչ փոխ էք տալիս,
Ոչ էլ փոխ առնում։

ԱՆՏՈՆԻՈ

Այո՛, ոչ երբէք։

ՇԷՅԼՕԿ

Երբ Յակոբ Լաբանի ոչխարները
Արածեցնում էր—նա, ինչպէս որ իւր
Մայրը խելացի կերպով գլուխ բերեց,
Սուրբ Աբրահամի երրորդ ժառանգն էր—
Այո՛, երրորդն էր։

ԱՆՏՈՆԻՈ

Բայց մեր գործի հետ

Ի՞նչ. կապ ունի այդ: Մի՞թէ Յակոբն էլ
Տոկոս էր առնում:

ՇԷՅԼՕԿ

Տոկոս չէր առնում.

Ո՛չ, նա չէր առնում այն, ինչ որ տոկոս
Անուանում էք դուք. բայց ահա տէսէք,
Ինչ էր անում նա: Լաբանն և Յակոբ
Պայման կապեցին, որ բոլոր սլիսակ,
Գոյնզգոյն մորթով ծընած դառները
Պիտի Յակոբը ստանար իբրև վարձ:
Երբ որ աշնանը մայրերը սիրով
Դարձան խոյերին և երբ այդ բրդոտ
Անասունները սկսեցին ստեղծել
Իրանց նմանները, խելօք հովիւը
Կեղևից մաքրած ծառի ճիւղերը
Ջուր գաւորութեան միջոցին ցցեց
Գետնում ամեն մի ոչխարի առաջ.—
Ա.յդպէս յղացան նոքա, և բոլոր
Գառները ծընան գոյնզգոյն մորթով,
Որոնք բոլորը Յակոբին ընկան:
Ա.յսպէս Յակոբը ստացաւ մեծ վաստակ,
Ստացաւ օրհնութիւն: Ա.յո՛ վաստակը
Միշտ օրհնութիւն է, երբ գողացած չէ:

ԱՆՏՕՆԻՕ

Յակոբի վարձը բաղդից էր կախուած,
Ոչ թէ իրանից. երկինքը շնորհեց
Նրան յաջողութիւն: Մի՞թէ դորանով
Կամենում էք դուք տոկոսը դովել:
Մի՞թէ ձեր ոսկին և ձեր արծաթը
Ոչխար են և խոյ:

ՇԷՅԼՕԿ

Զը գիտեմ: Ա.յդպէս
Ես բազմացնում եմ արծաթս ու ոսկիս:
Սակայն լսեցէք, սինիօր Անտօնիօ:

ԱՆՏՕՆԻՕ

Տե՛ս, Բասանիօ. սատանան ևս
կարող է բերել սուրբ գրքից պէսպէս
վկայութիւններ: Չարամիտ հոգին,
Որ պաշտպանում է իրան սրբազան
Մի վկայութեամբ, է մի չարագործ,
Ժպիտն երեսին, գեղեցիկ խնձոր,
փտած միջուկով: Ո՛հ, ինչպէս սիրուն
փայլում է դրսից խարդախութիւնը:

ՇԷՅԼՕԿ

Դուք երեք հազար ոսկի էք ուզում —
փոքր գումար չէ, — և երեք ամսով,
Տեսնենք, որքան է դորա տոկոսը:

ԱՆՏՕՆԻՕ

Շէյլօկ, ուզո՞ւմ էք մեզ պարտաւորել:

ՇԷՅԼՕԿ

Սինիօր Անտօնիօ, շատ և շատ անգամ
Հայհոյել էք ինձ Ռիալտոյի վրայ
Իմ փողի և իմ տոկոսի համար,
Ես համբերութեամբ տանում էի միշտ
Ձեր հայհոյանքը: — Համբերութիւնը
է ժողովուրդիս ժառանգութիւնը:
Անհաւատ և շուն կանչում էիք ինձ,
Եւ թքում էիք. դուք իմ հրէական
Հանդերձի վերայ. որովհետև ես
Միայն օգտվում եմ այն բանից, ինչ որ
Իմ սեփականն է: Շատ լաւ: Բայց հիմա
Երևում է, որ հարկաւոր եմ ձեզ,
Եւ դուք գալիս էք ինձ մօտ և ասում.
«Շէյլօկ, մեզ փող է հարկաւոր:» Այսպէս
Ասում էք ինձ դուք, դո՛ւք, որ թքում էիք
Մօրուքիս վերայ, դո՛ւք, որ աքացի
Տալիս էիք ինձ, ինչպէս մի օտար
Շանը ձեր դռան շեմքից քշելիս:
Փո՞ղ էք կամենում: Բայց ինչպէս պէտք է

Խօսիմ ես ձեզ հետ։ Արդեօք պիտ՝ չասե՞մ.
«Շունը փող ունի՞։ Ի՞նչպէս կարող է
Շունն երեք հազար ոսկի փող տալ ձեզ։»
Կամ գուց է պէտք է գլուխս խոնարհած
Մի պարտապանի ձայնով ասեմ ձեզ,
Շունչս պահելով. «Պատուելի պարոն,
Այս չորեքշաբթի ինձ վրայ թքեցիք,
Այս ինչ օրը ինձ աքացի տուիք,
Այն ինչ օրը ինձ շուն անուանեցիք,
Եւ հիմա ձեր այդ քաղաքավարի
Վարմունքի համար կամենում եմ ես
Այսքան և այսքան գումար փոխ տալ ձեզ։»

ԱՆՏՕՆԻՕ

Ես քեզ պատրաստ եմ այժմ էլ շուն կանչել,
Երեսիդ թքել, ոտիս տակ առնել։—
Ուզո՞ւմ ես դու այդ փողը փոխ տալ մեզ,
Փոխ տուր, ոչ իբրև բարեկամներիդ.
(Ո՞վ է իմացել, որ մի բարեկամ
Պահանջած լինի իւր բարեկամից
Օգուտ անպտուղ մեռալի համար)
Ո՛չ, լաւ է փոխ տուր իբրև թշնամուդ.
Կարող ես, եթէ նա չը վճարէ
Իւր ժամանակին, նրանից համարձակ
Պահանջել, ինչ որ քեզ պիտի հասնի։

ՇԷՅԼՕԿ

Ա՛յ, տեսէ՛ք, ինչպէս յանկարծ տաքացաք։
Ես ուզում էի բարեկամ լինել
Ձեզ հետ, սէր ցոյց տալ, մոռացութեան տալ
Նախատինքը, որ կրել եմ ձեզանից.
Կարիքում օգնել և ոչինչ տոկոս
Չառնել ձեզանից փողերիս համար.
Իսկ դուք ինձ լսել անգամ չէ՛ք ուզում.
Իբրև բարեկամ եմ ձեզ հետ խօսում։

ԱՆՏՕՆԻՕ

Այո՛, այդպէս է։

ՇԷՅԼՈԿ

Եւ ես իմ սէրը
Իսկոյն ցոյց կրտամ։ Գնանք նոտարի մօտ.
Այնտեղ մուրհակը դուք կրստորագրէք,
Եւ իբրև կատակ մէջը կրգրենք.
Որ եթէ դուք ինձ նշանակած օր,
Նշանակած տեղ չրվերադարձնէք
Բոլոր գումարը, որքան մուրհակում
Գրրած կրլինի, դուք իբրև տուգանք
Կրտաք ինձ ամբողջ մի ֆունտ ձեր մսից,
Որ ես կարող եմ կտրել ձեր մարմնի
Այն մասից, որից ինքս կամենամ։

ԱՆՏՈՆԻՈ

Լաւ, համաձայն եմ։ Ես կրստորագրեմ
Այդպիսի մուրհակ և կասեմ, հրէան
Շատ բարեսիրտ է։

ԲԱՍԱՆԻՈ

Ո՛չ, իմ պատճառով
Դուք չէք ստորագրի այդպիսի մուրհակ.
Լաւ է կրմնամ ես կարիքի մէջ։

ԱՆՏՈՆԻՈ

Ո՛չ, մի՛ վախենար։ Ես կրմճարեմ
Իւր ժամանակին։ Դեռ և ես երկու
Ամիս չանցկացած, ուրեմն ամբողջ
Մի ամիս առաջ մեր պայմանի մէջ
Որոշած օրից, անշուշտ կրստանամ
Ես մեր այս պարտքի տասնապատիկը։

ՇԷՅԼՈԿ

Ո՛վ հայր Աբրահամ, ահա այսպէս են
Քրիստոնեաները։ Նոքա սեփական
Խստասրտութեամբ կասկած են տանում
Ուրիշների վրայ։—Դէ՛հ, դուք ասացէք,
Խնդրում եմ, եթէ սա ժամանակին
Չրտայ իւր պարտքը, ի՞նչ օգուտ ունիմ

Ես այդ տուգանքից։ Մի մարդու մարմնից
Հանած մի ֆունտ միս ոչ այն գինն ունի,
Ոչ այն օգուտը, որքան ոչխարի, կամ թէ տաւարի,
Կամ այծի միսը։ Միայն սորա սէրը
Գրաւելու մտքով առաջարկում եմ
Ծառայութիւնս։ Կընդունէ, շատ լաւ,
Թէ չէ ճնա՛ք բարով, և մի՛ անպատուէք,
Խնդրում եմ, ինձ ձեզ սիրելուս համար։

ԱՆՏՈՆԻՈ

Ես համաձայն եմ, Շէյլօկ, ստորագրել
Ուզած մուրհակդ։

ՇԷՅԼՕԿ

Մինք կը հանդիպինք

Նօտարի տանը։ Ասացէք նորան,
Ինչպէս պիտի գրէ նա այդ ծաղրալի
Պարտամուրհակը. իսկ ես գնում եմ
Ոսկին ժողովել և տանս նայել,
Որ պահ եմ տուել մի փուչ ծառայի
Հայեցողութեան, և մի բոպէում
Կը լինիմ ձեզ մօտ։

(ՇԷՅԼՕԿ գնում է)

ԱՆՏՈՆԻՈ

Ուրեմն շտապիր,
Ո՛վ ազնիւ հրէայ։—Շատ կարելի է
Քրիստոնեայ դառնայ այս եբրայեցին,
Սկսել է ձգտիլ նա դէպի բարին։

ԲԱՍԱՆԻՈ

Արտանց ատում եմ ես միշտ այն մարդուն,
Որի սիրտը նենգ ու քաղցր է լեզուն։

ԱՆՏՈՆԻՈ

Ե՛կ, Բասանիո. ես միամիտ եմ.
Մուրհակի օրից առաջ անկասկած
Նաւերս այստեղ կը լինին հասած։

(Նոքա դուրս են գնում։)

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Բէլմօնտ. մի սենեակ պօրցիայի տանը։

Փողհարութիւն։ Մտնում են ՄԱՐՕԿԿՕԻ ԻՇԽԱՆԸ *և նորա հետեւորդները,* ՊՕՐՑԻԱ, ՆԵՐԻՍԱ *և ուրիշ աղախիններ։*

ՄԱՐՕԿԿՕ

Մի՛ մերժիր դու ինձ իմ գոյնի համար,
Այս սեւ հանդերձս լոյս արեւինն է,
Որ ինձ իբրեւ իւր մօտ հարեւանին
Սիրով զգուել է։ Բերէք ամենից
Գեղեցիկ մարդուն, հիւսիսում ծընած,
Ինչ տեղ Փէբոսի ճառագայթները
Հազիւ հալեցնում են սառցի ծայրերը,
Եւ թող ես և նա քո սիրոյ համար
Կտրենք մեր մորթը, տեսնենք, մեզանից
Ո՞րի արիւնն է աւելի կարմիր,
Ի՞մը, թէ նորա։ Հաւատացնում եմ,
Օրիո՛րդ, որ իմ այս դէմքը արդէն
Երկիւղ է ձգել քաջերի սրտում.
Սիրովս երդւում եմ, իմ երկրի ազնիւ
Օրիորդները ևս սիրել են
Իմ սեւ երեսը. և ես ուրիշ կերպ
Չէի կամենայ փոխել իմ գոյնը,
Եթէ ոչ զգացմունքդ գողանալով,
Ո՛վ դու իմ սրտի սիրած թագուհի։

ՊՕՐՑԻԱ

Իմ ընտրութեան մէջ ես չեմ հեռանում
Միայն աղջկայ աչքի քնքոյշ պահանջին,
Այլ և կախուած է իմ սրտի բաղդը
Վիճակախաղից, որ ինձ զրկում է
Ազատ ընտրելու իրաւունքներից։
Բայց եթէ հայրս ինձ չէր կաշկանդել,
Ցէր պարտաւորել նա ինձ իւր կամքով,
Այնէ, ամուսին դառնամ այն մարդուն,
Որ ինձ կստանայ այդ եղանակով,
Ինչպէս ասացի, պրա պրուք նոյնպէս,
Ո՛վ ազնիւ իշխան, դուք կունենայիք
Նոյն իրաւունքը խնդրել իմ սէրը,
Ինչպէս և նոքա, որոնց տեսել եմ
Ես մինչև հիմա։

ՄԱՐՕԿԿՕ

Դորա համար էլ
Շնորհակալ եմ ես. ուրեմն տարէք
Ինձ արիզերի մօտ. որ իսկոյն և եթ
Փորձեմ իմ բախտը։ Ահա երդվում եմ
Ես իմ այս սրրով, որ կարծեց կեանքը
Սօֆիի և մի պարսիկ իշխանի,
Եւ որ մեծ սուլթան Սոլիմանին տուեց
Երեք յաղթութիւն, որ կրմթնեցնեմ
Ամենայանդուգն աչքերի փայլը
Աչքերիս բոցով, որ ես կը յաղթեմ
Ամենավատահ մարդկային սիրտը,
Կրեսլեմ արջից իւր քոթոթները,
Նոյն իսկ առիւծին կը ծաղրեմ, երբ որ
Նա մռնչելով որս է որոնում,
Գեղ, ով օրիորդ, զրաւելու համար։
Բայց աւաղ, երբ որ Հերկուլէսը և
Լիխասը իրար հետ վէգ են խաղում,
Թէ ով նոցանից աւելի քաջ է,
Դիպուածը այնպէս կարող է բերել,

Որ ամենաթոյլ ձեռք կը ձգէ
Վէգը աւելի յաջողակ կերպով։
Այդպէս յաղթվում է քաջ Ալկիդէսը
Իւր սպասաւորից։ Ես էլ կոյր բաղդից
Առաջնորդուելով, կարող եմ կորցնել
Այն, ինչ որ ինձնից պակաս արժանին
Կը ստանայ և ես վշտից կը մեռնիմ։

ՊՈՐՑԻԱ

Դուք պիտի վատահ դէմ դնաք ձեր բաղդին,
Կամ բոլորովին վիճակ չը հանէք,
Եւ կամ ընտրելուց առաջ պիտի երդուէք,
Որ, եթէ սխալուիք, երբէք մի կնոջ հետ
Էլ չէք խօսելու ամուսնութեան վրայ.
Ապա զգոյշ եղէք։

ՄԱՐՕԿԿՕ

Համաձայն եմ դնանք,
Որ վիճակ հանեմ։

ՊՈՐՑԻԱ

Առաջ տաճարը.
Սեղանից յետոյ կը փորձէք բաղդը։

ՄԱՐՕԿԿՕ

Գնանք։ Ո՛վ բարի բաղդ, գալիս եմ անվախ.
Շուտով ամենից թշուառ, կամ ուրախ։
(Ամենքը դուրս են գնում։)

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ։

վենետիկ. փողոց։

ԼԱՆՉԷԼՕՏ ԳՕԲԲՕՆ գալիս է։

ԼԱՆՉԷԼՕՏ

Անկասկած խղճմտանքս թոյլ կըտայ ինձ փախչել իմ այս հրէայ պարոնից։ Չար թշնամին քամակիս կանգնած փորձում է ինձ և ասում, «Գօբբօ, Լանչէլօտ Գօբբօ, «կամ» բարի Գօբբօ, կամ բարի

Լանչելօտ Գօբբօ, գործ դիր քո ոտները, շուտ փախիր այստեղից։ Խղճմտանքս ասում է. «Ո՛չ, ղժոշ կաց, աղնիւ Լանչելօտ, ղժոշ կաց, աղնիւ Գօբբօ, կամ ինչպէս վերևն ասած է, աղնիւ Լանչելօտ Գօբբօ, մի՛ փախչիր, փախչելը թոյլ։» Լա՛ւ. բայց ամենասրտակից բարեկամս հրամայում է բաներս ժողովել» «Գնա՛.» ասում է Թշնամին, «հեռացի՛ր», ասում է Թշնամին «թէ Աստուած կըսիրես, սիրատառ»,»ասում է Թշնամին, «և փախիր։» Լա՛ւ, բայց խղճմտանքս փաթաթվում է իմ սրտի վրին և շատ խելացի կերպով ասում է ինձ. «իմ աղնիւ բարեկամ Լանչելօտ, որովհետև դու մի աղնիւ մարդու որդի ես»—կամ աւելի լաւ է ասել մի աղնիւ կնոջ որդի ես, որովհետև ճշմարիտ ասեմ, հայրս ունէր մի տեսակ կողմնակի ճաշակ. նա սիրում էր զուարճանալ—Ուրեմն խղճմտանքս ասում է ինձ. «Լանչելօտ, պինդ կաց։» «Գնա՛,» ասում է Թշնամին. «պինդ կաց,» ասում է խղճմտանքս։ Խղճմտանք, ասում եմ ես, քո խորհուրդը լաւ է. Թշնամի՛, ասում եմ ես, քո խորհուրդը լաւ է. եթէ խղճմտանքիս խրատին հետևիմ, պէտք է մնամ իմ հրէայ պարոնի մօտ, որ, Աստուած ներէ ինձ, մի տեսակ սատանայ է։ Եթէ ես փախչեմ հրէայից, պէտք է հետևիմ չար Թշնամու խրատին, որ, համարձակվում եմ ասել, սատանան ինքն է։ Անկասկած հրէան մարմնացած սատանայ է. և խղճմտանքով խօսելով, խղճմտանքս մի տեսակ խիստ խղճմտանք է, որ ինձ խորհուրդ է տալիս մնալ հրէայի մօտ. Թշնամին աւելի բարեկամական խորհուրդ է տալիս ինձ։ Ես կըփախչեմ, Թշնամի՛, ոտներս պատրաստ են հրամանդ կատարել, ես կըփախչեմ։

Գալիս է ծեր ԳՕԲԲՕՆ ձեռին մի կողով։

ԳՕԲԲՕ

Երիտասարդ պարոն, խնդրում եմ ասէք, ո՞րն է պարոն հրէայի տան ճանապարհը։

ԼԱՆՉԵԼՕՏ (մի կողմը)

Ո՛վ երկինք, այս իմ օրինաւոր հայրն է, որ ոչ միայն կոյր է, այլ և բոլորովին կոյր է և ինձ չէ ճանաչում։ Արի նորա հետ մի կատակ կանեմ։

ԳՕԲԲՕ

Երիտասարդ պարոն, խնդրում եմ ասէք, ո՞րն է պարոն հրէայի տան ճանապարհը։

ԼԱՆՁԷԼՕՏ

Առաջին անկիւնի մօտ գնացէք աջ կողմը, բայց ամենաառաջին անկիւնի մօտ ձախ կողմը, հասկացէք. բոլորովին ամենաառաջին անկիւնի մօտ մի դառնաք ոչ աջ, ոչ ձախ, այլ գնացէք ուղղակի հրէայի տունը:

ԳՕԲԲՕ

Տէր ողորմած Աստուած, այդ ճանապարհը դժուար է գտնել: Արդեօք չէք կարող ինձ ասել, մի Լանչէլօտ, որ նորա մօտ է բնակում. նորա մօտ է բնակում, թէ ոչ:

ԼԱՆՁԷԼՕՏ

Երիտասարդ պարոն Լանչէլօտի վերայ է՞ք խօսում: (մի կողմը.) Դէհ, հիմա ասէք, թէ ինչպէս պիտի խառնեմ բանը:—Երիտասարդ պարոն Լանչէլօտի վերայ է՞ք խօսում:

ԳՕԲԲՕ

Պարոնի վերայ չէ, պարո՛ն, այլ մի խեղճ մարդու որդու վերայ: Նորա հայրը—թէպէտ ես այդ ասում եմ—աղնիւ և բոլորովին աղքատ մարդ է և, փառք Աստուծոյ, բոլորովին առողջ է:

ԼԱՆՁԷԼՕՏ

Շատ լաւ. ինչ կուզէ թող լինի նորա հայրը, մեր խօսքը այստեղ երիտասարդ պարոն Լանչէլօտի վերայ է:

ԳՕԲԲՕ

Ձեր խոնարհ ծառայի և Լանչէլօտի վերայ, պարո՛ն:

ԼԱՆՁԷԼՕՏ

Ergo (ուրեմն), խնդրում եմ ձեզ, ծերունի, egro աղաչում եմ ձեզ, երիտասարդ պարոն Լանչէլօտի վերա՞յ է՞ք խօսում:

ԳՕԲԲՕ

Լանչէլօտի վերայ, եթէ կրպարիհաճի ձեր ազնուութիւնը:

ԼԱՆՁԷԼՕՏ

Ergo, պարոն Լանչէլօտ: Մի՛ խօսիք պարոն Լանչէլօտի վերայ, հա՛յր, որովհետև երիտասարդ պարոնը, բաղդի և ճակատագրի կամքով և զարմանալի ոճով խօսելով, երեք քոյրերի և դիտութեան այլ և այլ ճիւղերի կամքով ճշմարտապէս վախճանուել է, կամ աւելի պարզ խօսելով, միւս աշխարհն է գնացել:

ԳՕԲԲՕ

Ո՛Հ, Աստուած ոչ անէ։ Այն տղան իմ Ծերութեան գաւազանն էր, իմ ամենալաւ նեցուկը։

ԼԱՆՉԷԼՕՏ

Մթէ ես նման եմ փայտի, դերանի, գաւազանի կամ նեցուկի։ —Ճանաչո՞ւմ էք ինձ, հայր։

ԳՕԲԲՕ

Ա՛խ, ժամանակ, ինչ ասեմ քեզ. ես ձեզ չեմ ճանաչում, երիտասարդ պարո՛ն. բայց ես ձեզ խնդրում եմ, ասացէք ինձ արդեօք իմ տղան—Աստուած հոգին լուսաւորէ, կենդանի՞ է, թէ մեռած։

ԼԱՆՉԷԼՕՏ

Չէ՞ք ճանաչում ինձ, հայր։

ԳՕԲԲՕ

Աստուած իմ, ես մի ծեր կոյր մարդ եմ, ես չեմ ճանաչում ձեզ։

ԼԱՆՉԷԼՕՏ

Ճշմարիտ ասեմ, եթէ դուք աչքեր էլ ունէնայիք. էլի չէիք ճանաչի ինձ. խելօք է այն հայրը, որ ճանաչում է իւր սեփական որդուն. լա՛ւ, ծերունի՛. ես ձեզ տեղեկութիւն կըտամ ձեր որդու մասին։ (Զոքում է նորա առաջ։) Տուէ՛ք ինձ ձեր օրհնութիւնը։ Ճշմարտութիւնը պէտք է յայտնուի։ Սպանութիւնը չէ կարող երկար ժամանակ ծածուկ մնալ, մարդու որդին կարող է, բայց ճշմարտութիւնը պէտք է վերջապէս յայտնուի։

ԳՕԲԲՕ

Խնդրում եմ ձեզ, պարո՛ն, վերկացէք. ես համոզուած եմ, որ դուք իմ տղան չէք, Լանչէլօտը։

ԼԱՆՉԷԼՕՏ

Խնդրում եմ ձեզ, վերջացնենք կատակը, և տուէ՛ք ինձ ձեր օրհնութիւնը։ Ես Լանչէլօտն եմ, որ ձեր տղան էր, որ ձեր որդին է, որ ձեր երեխան կըլինի։

ԳՕԲԲՕ

Ես չեմ կարող հաւատալ, որ դուք իմ որդին էք։

ԼԱՆՉԷԼՈՏ

Դորա մասին ես չը գիտեմ, թէ ինչ մտածեմ. միայն թէ ես Լանչէլոտն եմ, հրէայի ծառան և հաւատացած եմ, որ ձեր կինը, Մարգարիտան, իմ մայրն է:

ԳՕԲԲՕ

Ճշմարիտ է, նորա անունը Մարգարիտա է, պատրաստ եմ երդուել, որ եթէ դու Լանչէլոտն ես, ապա իմ միս ու արիւնն ես: Օրհնեալ է Աստուած: Այդ ինչ երկար մորուք ունիս: Քո կղակի վերայ աւելի շատ մազ կայ, քան թէ իմ ձիու պոչի վերայ:

ԼԱՆՉԷԼՈՏ

Երևի քո ձիու պոչը ներսն է աճում. իմ միտս է, որ նորա պոչի վերայ աւելի շատ մազ կար, քան թէ երեսիս վերայ, երբ որ ես վերջին անգամ տեսայ նորան:

ԳՕԲԲՕ

Տէր Աստուած, ինչպէս փոխուել ես: Ի՞նչպէս ես կառավարվում քո պարոնի հետ. ես ընծայ եմ բերել նորա համար, դէհ, ասա, ի՞նչպէս է քեզ կառավարվում իրար հետ:

ԼԱՆՉԷԼՈՏ

Լաւ, լաւ. բայց ինչ որ ինձ է վերաբերում, որովհետև ես մտքումս դրել եմ փախչել այստեղից, էլ չեմ կանգնի, մինչև որ բաւական տեղ չը փախչեմ: Իմ պարոնը ի՛սկ հրէայէ. նորան ընծայ տա՛ք: Զուան տուէք նորան: Ես սովամահ եմ լինում նորա մօտ. կողերս մատներով կարող էք համարել: Հայր, ես ուրախ եմ, որ դուք եկաք: Լաւ է տուէք ինձ ձեր ընծան մի ուրիշ պարոնի համար. որի անունն է Բասանիո. որ պատուական և նոր հանդերձներ է տալիս իւր ծառաներին: Եթէ ես նորա մօտ ծառայ չըմնեմ. այնքան հեռու կը փախչեմ, որքան տարածութիւն ունի Աստուծոյ ստեղծած աշխարքը.—Ո՛հ, ինչ բարդաւորութիւն, ահա նա ինքը դալիս է: Հայր, մտեցէք նորան. թող հրէայ լինիմ, թէ այսուհետև էլի ծառայեմ հրէային:

Մտնում են ԲԱՍԱՆԻՕ, ԼԵՕՆԱՐԴՕ և ուրիշ ծառաներ

ԲԱՍԱՆԻՕ

Այդ կարող էք անել— բայց շտապեցէք. որ ընթրիքը ամենաուշը հինգ ժամին պատրաստ լինի: Ուղարկեցէք այս նամակները

հանդերձները տուէք կարելու և խնդրեցէք Գրացիանոյին, որ իսկոյն իմ բնակարանը գայ:

(Ծառաներից մէկը գնում է։)

ԼԱՆՉԵԼՈՏ

Մօտեցէք նորան, հայր:

ԳՕԲԲՕ

Աստուած օրհնէ ձեզ, ազնիւ պարոն:

ԲԱՍԱՆԻՕ

Շատ շնորհակալ եմ, ի՞նչ ես ուզում:

ԳՕԲԲՕ

Այս իմ որդին է, պարոն, մի խեղճ տղայ:—

ԼԱՆՉԵԼՈՏ

Ո՛չ, պարոն, խեղճ տղայ չէ այլ մի հարուստ հրէայի ծառայ, որ շատ սրտով ուզում է, ինչպէս հայրս կը բացատրէ ձեզ—

ԳՕԲԲՕ

Այ, պարոն, ինչպէս ասում են մեծ հակումն ունի ծառայելու—

ԼԱՆՉԵԼՈՏ

Այո՛, խօսքի երկարն ու կարճը այս է, ես ծառայում եմ հրէային և ցանկանում եմ, ինչպէս որ հայրս կը բացատրէ ձեզ—

ԳՕԲԲՕ

Որա պարոնը և սա, համարձակվում եմ ասել ձեր ազնուութեանը, ապրում են իրար հետ, ինչպէս շունն ու կատուն—

ԼԱՆՉԵԼՈՏ

Մի խօսքով, այս է ճշմարտութիւնը, որ հրէան, որովհետև նա ինձ անիրաւութիւն է անում, ստիպում է ինձ, ինչպէս որ հայրս, որ Աստուծոյ ողորմութեամբ մի ծեր մարդ է, բայց խեղճ մարդ է, մանրամասն կը յայտնէ ձեզ—

ԳՕԲԲՕ

Ահա այստեղ ես ունիմ մի կերակուր աղաւնիներից պատրաստած, որ կը կամենայի առաջարկել ձեզ. և խնդիրքս այս է—

ԼԱՆՉԵԼՈՏ

Որ քաղաքովին կարճ կտրում, այդ խնդիրքը ինձ է վերաբերում,

որ ինչպէս ձեր ազնուութիւնը կրկսէ այս պատուական ծեր մարդուց, որ, թէպէտ այդ ես եմ ասում, թէպէտ նա ծեր մարդ է, բայց խեղճ մարդ է և իմ հայրն է—

ԲԱՍԱՆԻՕ

Թող երկուսի տեղ մէկը խօսի, ի՞նչ էք ուզում:

ԼԱՆՉԵԼՕՏ

Ձեզ ծառայել, պարոն:

ԳԱԲԲՕ

Այո՛, այդ էինք ուզում խոնարհաբար յայտնել ձեզ:

ԲԱՍԱՆԻՕ

Ճանաչում եմ քեզ և կատարում եմ
Ես քո խրդիրքը: Շէյլակ պարոնդ
Այսօր խօսեցաւ ինձ հետ քո մասին,
Եւ համաձայն է քո բարձրանալուն,
Եթէ բարձրանալ է նշանակում,
Հարուստ հրէային թողած ծառայել
Ինձ նման մի խեղճ ազնուականին:

ԼԱՆՉԵԼՕՏ

Հին առածը շատ լաւ բաժանուած է իմ պարոն Շէյլօկի և ձեր մէջ, պարոն. դուք վայելում էք Աստուծոյ ողորմութիւնը, իսկ նա հարստութիւն:

ԲԱՍԱՆԻՕ

Շատ լաւ ասացիր: Հայր, դնա որդուդ հետ.
Իսկ դու տուաջ գնա, մնաս բարով ասա
Քո հին պարոնին, յետոյ էկ ինձ մօտ:

(Իւր ծառաներին.)

Սորան աւելի դեղեցիկ ըզգեստ
Կը հագցնէք, քան թէ միւս ընկերներին.
Շուտ արէք, ինչ որ պատուիրեցի ձեզ:

ԼԱՆՉԵԼՕՏ

Եկէք, հայր:— Հը, ես չեմ կարող դործ գտնել. ոչ. ես լեզու չունիմ դլխումս:—Շատ լաւ: (Նա նայում է իւր ձեռի ափին.) Կայ արդեօք ամբողջ Իտալիայում մի մարդ, որ իմից դեղեցիկ ձեռի ափ ունենայ, որով սուրբ գրքի վերայ երդուի:—Ես լաւ բաղդ կունենամ,

այդ մասին կասկած չըկայ: Տեսէք այս պարզ կեանքի գիծը. այստեղ երևումեն քանի մի հատ կանայք: Ա՛խ, տասն և հինգ կին. այդ ոչինչ է. տասնևմէկ այրի և իններ աղջիկ. այդ հազիւ բաւական է մի մարդուն: Ցեռոյ այս երեք միաւորուած գծերը, որոնք նշանակումեն, որ երեք անգամ կազատուիմ խեղդուելուց. և այս նշանը, որ ինձ մահու վտանգ է սպառնում կակուղ անկողնի մէջ—լա՛ւ պրծանք: Եթէ բաղդը կին է, էլի բաւական բարի է այս բանի մէջ:—Գնանք, հայր, ես մի բոպէում հնաս բարով կասեմ հրէային:

ԲԱՍԱՆԻՕ

Խնդրումեմ այդպէս արա՛, Լէօնարդօ.
Երբ որ այդ կառնես և կը կարգադրես,
Շուտ վերադարձի՛ր. որովհետև ես
Այս գիշեր պէտք է մի մեծ խնջոյք տամ
Իմ ամենալաւ բարեկամներին.
Ուրեմն շտապի՛ր:

ԼԷՕՆԱՐԴՕ

Միամի՛տ եղէք,
Ես չեմ խընայի ոչինչ աշխատանք:

Մտնումէ ԳՐԱՑԻԱՆՕՆ

ԳՐԱՑԻԱՆՕ

Ո՞ւր է պարոնդ:

ԼԷՕՆԱՐԴՕ

Այստեղ է, պարո՛ն:

ԳՐԱՑԻԱՆՕ

Սինիօր Բասանիօ:

ԲԱՍԱՆԻՕ

Գրացիանօ:

ԳՐԱՑԻԱՆՕ

Ես մի խնդիրք ունիմ ձեզ մօտ:

ԲԱՍԱՆԻՕ

Առաջուց խոստանումեմ կատարել:

ԳՐԱՑԻԱՆՈ

Դուք չէք կարող մերժել իմ խնդիրքը. ես պէտք է ձեզ հետ Բէլմոնտ գամ։

ԲԱՍԱՆԻՈ

Գնանք, թէ որ պէտք է,—բայց Գրացիանո,
Լեզուդ շատ անսանձ, կոշտ ու յանդուգն է,
Յատկութիւն, որ քեզ լաւ վայելում է,
Եւ մեզպէսների աչքին հաճելի.
Բայց ինչտեղ որ քեզ դեռ չեն ճանաչում,
Այնտեղ չափազանց ազատ կերևիս։
Եւ այդ պատճառով ահա խնդրում եմ
Փոքր ինչ ստիպիր քեզ, և համեստութեան
Պաղ կաթիլներով զսպիր չափազանց
Վառվռուն ոգիդ, որ քո վարմունքով
Զընայեն ինձ վրայ այնտեղ վատ աչքով
Եւ իմ յոյսերից չը զըկուիմ յանկարծ։

ԳՐԱՑԻԱՆՈ

Սինիօր Բասանիո, լըսեցէք. եթէ
Ես այնտեղ պարկեշտ կերպարանք չառնեմ,
Համեստ չը խօսիմ և երբեմնապէս
Միայն չը հայհոյեմ, աղօթագիրքը
Գրպանս դըրած, աչքերս դետնին
Չը խոնարհեցնեմ, և մինչև անգամ
Սեղանի վերայ աղօթք կարդալիս
Գլխարկով այսպէս դէմքս չը ծածկեմ,
Խոր չը հառաչեմ և ամէն չասեմ
Եւ չը կատարեմ մարդավարութեան
Բոլոր ծէսերը, ինչպէս այն մարդը,
Որ իւր մեծ մորը դուր գալու համար
Սուրբ է ձևանում, այն ժամանակ
Ինձ էլ մի՛ հաւատաք։

ԲԱՍԱՆԻՈ

Շատ լաւ, կըտեսնենք,
Ինչպէս կը վարուիք։

ԳՐԱՑԻԱՆՈ

Բայց միայն այսօր
Բացառութիւն է, այս երեկոն մեր
Պայմանից դուրս է։

ԲԱՍԱՆԻՈ

Այո՛, ի հարկէ,
Շատ կարիսոսայի, թէ այդպէս չլինէր.
Ընդհակառակը, ես ձեզ խնդրում եմ,
Որ ուրախութեան պայծառ գոյներով
Լինիք զարդարուած, որովհետև մեր
Բարեկամները ուզում եմ այսօր
Լաւ ուրախ լինել։ Այժմ մնա՛ք բարով.
Ես մի գործ ունիմ։

ԳՐԱՑԻԱՆՈ

Ես Լորէնցոի
Եւ միւսների մօտ ուզում եմ գընալ.
Իսկ երեկոյեան ձեզ մօտ ենք դարձեալ։

(Նոքա դուրս են գնում։)

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Մի սենեակ շէյլոկի տանը։

Մտնում են ՋԷՍԻԿԱՆ և ԼԱՆՋԷԼՕՏԸ։

ՋԷՍԻԿԱ

Յաւում եմ, որ դու մեզնից գընում ես.
Այս տունը դժոխք է, իսկ դու, մի ուրախ
Սատանայ, մասամբ փարատում էիր
Նորա ճանձրոյթը։ Բայց մընաս բարով,
Ա՛ռ քեզ այս ոսկին։ Լանչէլօտ, այսօր
Իրիկնահացին անշուշտ կը տեսնես
Դու Լորէնցոին. նա հրաւիրուած է
Քո պարոնի մօտ. այս նամակը տո՛ւր
Նորան. բայց ծածուկ։ Հիմա մնաս բարով,

գնա՝, որ հայրս քեզ ինձ հետ չը տեսնէ։

ԼԱՆՉԵԼՕՏ

Ադիօ։—Լեզուիս փոխանակ արտասուքներս են խօսում։ Ո՛վ դու ամենագեղեցիկ հեթանոսուհի՝ ամենասիրելի հրէայ աղջիկ։ Եթէ մի քրիստոնեայ չը խաբէ և չը սատանայ քեզ՝ ուրեմն ես շատ սխալուել եմ։ Բայց ադիօ։ Այս յիմար կաթիլները սաստիկ կակղեցնում են իմ այրական սիրտը։ Ադիօ։

(Դուրս է գնում։)

ՋԷՍԻԿԱ

Մնաս բարով՝ բարի Լանչելօտ։ Աւաղ՝
Որքան ատելի բան է ամաչել՝
Որ ես իմ հօր սէս մէկի աղջիկն եմ։
Բայց ես արիւնով միայն նորանն եմ
Եւ ոչ թէ սրտով։ Ով իմ Լորէնցօ՝
Օգնի՛ր և հաստատ մնա միշտ քո խօսքին
Կը մկրտուիմ և կլինիմ սիրող կին։

(Դուրս է գնում։)

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Մի փողոց։

Մտնում են. ԳՐԱՑԻԱՆՕ, ԼՕՐԷՆՑՕ, ՍԱԼԱՐԻՆՕ և ՍՕԼԱՆԻՕ։

ԼՕՐԷՆՑՕ

Ընթրիքից ծածուկ մենք կը հեռանանք՝
Տանս կը փոխենք մեր հանդերձները
Եւ մի ժամի մէջ կը վերադառնանք։

ԳՐԱՑԻԱՆՕ

Մենք չենք պատրաստուել՝ ինչպէս որ հարկն է։

ՍԱԼԱՐԻՆՕ

Ոչ էլ վարձել ենք կերոնակիրներ։

ՍՕԼԱՆԻՕ

Թէ որ շնորքով բան պիտի չը լինի՝
Աւելի լաւ է որ թողնենք մընայ։

ԼՕՐԵՆՑՕ

Հազիւ չորս ժամն է. դեռ կա երկու
Ամբողջ ժամ ունինք մենք պատրաստուելու։
Գալիս է ԼԱՆՉԵԼՕՏԸ մի նամակ ձեռին։

ԼՕՐԵՆՑՕ

Եղբայր Լանչելօտ, ի՞նչ լուր ես բերում։

ԼԱՆՉԵԼՕՏ

Եթէ կը բարեհաճիք բանալ այս նամակը, իսկոյն կիմանաք։

ԼՕՐԵՆՑՕ

Զեռն ինձ ծանօթ է.
Նա գեղեցիկ է 'ւ աւելի սպիտակ
Քան թէ այն թուղթը, որի վրայ գրել է
Գեղեցիկ ձեռը։

ԳՐԱՑԻԱՆՕ

Անշուշտ սիրահարական նամակ է

ԼԱՆՉԵԼՕՏ

Այո՛ այդպէս է, պարոն

ԼՕՐԵՆՑՕ

Ո՞ւր ես գնում։

ԼԱՆՉԵԼՕՏ

Ես գնում եմ, պարոն, իմ հին հրէայ պարոնի մօտ, որ նորան ընթրիքի հրաւիրեմ իմ նոր քրիստոնեայ պարոնի մօտ։

ԼՕՐԵՆՑՕ (փող տալով նորան.)

Ահա՛, առ այս քեզ. ասա՛ գեղեցիկ
Իմ Ջէսիկային, որ կը գամ նրա մօտ.—
Բայց ծածո՛ւկ ասա, հասկանո՞ւմ ես. գնա՛։

(ԼԱՆՉԵԼՕՏԸ գնում է։)

Հապա՛, պարոննե՛ր, ուզո՞ւմ էք կազմել
Դիմակահանդէս. ես արդէն ունիմ
Մի կերոնակիր։

ՍԱԼԱՐԻՆՕ

Այո՛, ես իսկոյն

Ահա գնում եմ։

ՍՕԼԱՆԻՕ

Ես էլ գընում եմ։

ԼՕՐԵՆՑՕ

Մի ժամից յետոյ ես և Գրացիանօն
Ձեզ Գրացիանօի տանը կը սպասենք։

ՍԱԼԱՐԻՆՕ

Լաւ, այդպէս անենք։

(Սալարինօն և Սօլանիօն գնում են։)

ԳՐԱՑԻԱՆՕ

Նամակը սիրուն
Զէսիկա՞ն էր գրել։

ԼՕՐԵՆՑՕ

Այո՛, քեզանից
Շատ ուզում թաքցնել։ Նա ինձ գրում է,
Թէ ինչպէս Նորան հօր տանից փախցնեմ։
Թէ որքան ունի նա փող ու ակներ.
Թէ պատրաստել է նա մանկաւիկի
Հանդերձ իւր համար։ Թէ երբ և ինչ
Հրէան, նրա հայրը, երկինքը գընաց,
Այդ կը պատահի անշուշտ իւր սիրուն
Աղջկայ համար։ Եւ երբէք Նորան
Պատահելու չէ տարաբաղդութիւն,
Եթէ ոչ միայն այն բանի համար,
Որ նա խաբեայ հրէայի դուստր է։
Ե՛կ, ճանապարհին արդէն կը կարդաս.
Կերոնակիրս է սիրուն Զէսիկան։

(Նոքա դուրս են գնում։)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Շէյլօկի տան առաջ։

Գալիս են ՇԷՅԼՕԿԸ *և* ԼԱՆՉԷԼՕՏԸ։

ՇԷՅԼՕԿ

Լաւ, քո սեփական աչքերով արդէն
Կըտեսնես, թէ ինչ տարբերութիւն կայ
Քեր Շէյլօկի և Բասանիօի մէջ։
Է՛յ, Ջէսիկա։—Դու այնտեղ քո փորը
Չես կարող լցնել, ինչպէս իմ տանը։—
Է՛յ, Ջէսիկա։—Եւ խռմփալով քնել,
Շորեր պատռտել։—Է՛յ, Ջէսիկայ, է՛յ։

ԼԱՆՉԷԼՕՏ

Է՛յ, Ջէսիկա, է՛յ։

ՇԷՅԼՕԿ

Քեզ ո՞վ հրամայեց,
Որ կանչես։ Ես քեզ չը հրամայեցի։

ԼԱՆՉԷԼՕՏ

Ձեր ազնուութիւնը ինձ միշտ ասում էիք, որ ես առանց հրամանի ոչինչ չեմ իմանում շինել։

Մտնում է ՋԷՍԻԿԱՆ

ՋԷՍԻԿԱ

Հա՛յր, դո՞ւք էք կանչում, ի՞նչ էք հրամայում։

ՇԷՅԼՕԿ

Ես հրաւիրուած եմ ընթրիքի. ահա՛
Ջէսի՛կա, առ այս բանալիները,
Ինքս էլ չըգիտեմ, ինչի եմ գնում։
Նոքա իրանց մօտ ինձ հրաւիրում են,
Շողոքորթում են. բայց էլի կերթամ
Եւ ատելութեամբ կուտեմ քրիստոնեայ
Շռայլի սեղանից։—Ջէսի՛կա, որդեակ,
Տունս լաւ պահիր։—Ակամայ եմ գնում,

Անշուշտ սպառնում է մի դժբաղդութիւն
Հանգստութեանս, որ ես այս գիշեր
Ոսկով լի պարկեր տեսայ երազում:

ԼԱՆՁԷԼՈՏ

Խնդրում եմ, պարո՛ն, գնանք, իմ երիտասարդ պարոնը ձեր գալուն է սպասում:

ՇԷՑԼՈԿ

Ես էլ անհամբեր եմ նորան տեսնելու:

ԼԱՆՁԷԼՈՏ

Նոքա այնտեղ խօսք են կապել իրանց մէջ: Ես չեմ ասում, որ դուք մի դիմակահանդէս կը տեսնէք, բայց եթէ տեսնէք, ուրեմն ի զուր չէր, որ վերջին մեծ պասի առաջին երկուշաբթի օրը առաւօտեան վեց ժամին քթիցս արիւն գնաց և այս տարի պատահեցաւ այդ կէսօրից յետոյ այն օրը, որ չորս տարի սորանից առաջ մեծ պասի առաջին չորեքշաբթին էր:

ՇԷՑԼՈԿ

Դիմակահանդէ՞ս կը լինի այնտեղ:—
Ջէսի՛կա, լսի՛ր. դռները կողպի՛ր,
Եւ երբ թմբուկի ձայնը կը լսես
Եւ կռկռոցը ոլորած փողի,
Լուսամուտների վրայ չը բարձրանաս,
Գլուխդ չը հանես բաց փողոցի մէջ
Քրիստոնեաների ներկած դէմքերը
Տեսնելու համար. պի՛նդ խցիր դու իմ
Տան ականջները, ուզում եմ ասել,
Պատուհանները. և թող չը մտնեն
Իմ պարկեշտ տան մէջ անմիտ շռայլութեան
Աղաղակները:—Երդվում եմ Յակոբ
Նահապետի սուրբ գառաղանովը,
Որ ամենևին չունիմ ցանկութիւն
Անել այս գիշեր դուրսն ուրախութիւն:
Բայց պիտի գնամ:—Ա՛յ տղայ, առա՛ջ գնա,
Ասա՛, որ կը գամ:

ԼԱՆՁԷԼՈՏ

Գընում եմ, պարո՛ն:—

Բայց աղջիկ պարոն մի՛ լսէք նորան,
Էլի նայեցէք դուք պատուհանից
Քրիստոնեայ մարդ մի կանցնի,
Հրէայ աղջկան արժանի։

(Դուրս է գնում։)

ՇԷՑԼՕԿ

Այդ ի՞նչ ասաց քեզ յիմար ծաղրածուն
Հազարի ցեղից։

ՋԷՍԻԿԱ

Ասաց, ճնա՛ք բարով
Օրիորդ—ուրիշ ոչինչ չասաց ինձ,

ՇԷՑԼՕԿ

Բաւական բարի է այս յիմարը
Բայց շատակեր է, աշխատանքի մէջ
Կատարեալ խխունջ և ամբողջ օրը
Քընած է ինչպէս վայրենի կատու.
Ես իմ փեթակում չեմ ուզում պահել
Զաշխատող մեղու, և դորա համար
Ես արձակեցի նորան իմ տանից
Եւ թողի մտնել մի ուրիշ մօտ,
Որ կարողանայ դատարկել նորա
Փոխ առած ոսկով լցրած քրսակը։
Ջէսի՛կա, տո՛ւն գնա, գուցէ ես ինքս
Իսկոյն յետ դառնամ։ Ա՜խ, ինչպէս որ
Ասացի ես քեզ, կողպի՛ր դռները
Յայտնի առածը. կողպիր, կը գտնես,
Միշտ մտքումն ունի մի խելօք տնտես.

(Դուրս է գնում։)

ՋԷՍԻԿԱ

Մնա՛ք բարով. բաղդն ինձ թէ չէ հակառակ,
Ես հայր կը կորցնեմ և դուք մի զաւակ։

(Դուրս է գնում։)

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Նոյն տեղը։

ԳՐԱՑԻԱՆՈ և ՍԱԼԱՐԻՆՈ մտնում են դիմակաւորուած։

ԳՐԱՑԻԱՆՈ

Ահա ծածկոյթը, որի տակ սպասել
Խնդրեց Լորէնցօն։

ՍԱԼԱՐԻՆՈ

Նորա որոշած
Ժամը համարեա արդէն անցկացաւ։

ԳՐԱՑԻԱՆՈ

Զարմանալի է, որ նա ուշացաւ.
Սիրահարները միշտ ժամացոյցից
Առաջ են փախչում։

ՍԱԼԱՐԻՆՈ

Սովորականից
Տասն անգամ շուտ են թռչում Աստղիկի
Աղաւնիները, երբ պիտի կապեն
Մի նոր սիրոյ կապ, քան երբ առաջուց
Տուած երդումները պիտի կատարեն։

ԳՐԱՑԻԱՆՈ

Ամեն բանի մէջ այդպէս է լինում։
Ո՞վ է սեղանից արդեօք վեր կենում
Նոյն ախորժակով, որով նստեցաւ,
Կա՞յ այնպիսի ձի, որ իւր անցկացած
Ճիգ ճանապարհը կրկին յետ դառնար
Նոյնպէս աշխուժով, ինչպէս որ գընաց։
Մենք սովորաբար ամեն մի բանին
Աւելի շատ ենք յետամուտ լինում
Քան թէ ճաշակում։ Ինչպէս նրման է
Մի շքեղայլ մարդուն այն դրոշակներով
Զարդարած նաւը, երբ դուրս է գալիս

Նաւահանգստից, սիրած ու զզուած
Հեշտասէր հողմից. ինչպէս նման է նա
Մի շրջայլ մարդուն, երբ յետ է դառնում
Նա պատառոտած առագաստներով,
Ջարդուած կողերով, մերկ ու կողոպտած
Հեշտասէր հողմից։

Մտնում է ԼՕՐԷՆՑՕՆ

ՍԱԼԱՐԻՆՕ

Ահա՛ Լորէնցօն։
Այդ մասին յետոյ էլ կը խօսինք։

ԼՕՐԷՆՑՕ

Ո՛վ բարեկամներ, ներեցէք, որ ես
Այսքան ուշացայ պատճառը ես չեմ,
Այլ իմ գործերը։ Երբ որ մի անգամ
Դուք էլ կամենաք կանայք զողանալ,
Նոյնչափ ես էլ ձեզ պատրաստ եմ սպասել։
Մօտ եկէք։ Ահա՛, այստեղ է բնակում
Հրէայ աներս։—Է՛յ, ո՞վ կայ այստեղ։

ՋԷՍԻԿԱՆ երևում է պատուհանում տղայի հանդերձով։

ՋԷՍԻԿԱ

Ո՞վ է՛ք, ասացէ՛ք, որ հանդիստ լինիմ.
Թէև երդվում եմ, որ ինձ ծանօթ է
Ձեր ձայնը։

ԼՕՐԷՆՑՕ

Ես եմ, Լորէնցօն, սէրդ։

ՋԷՍԻԿԱ

Իրաւ Լորէնցօն իմ սէրն է, այո՛։
Էլ ուրիշ ո՞ւմն եմ ես այնքան սիրում։
Բացի քեզանից, Լորէ՛նցո, ասա՛,
Ո՞վ գիտէ արգիօք, որ ես էլ քոնն եմ։

ԼՕՐԷՆՑՕ

Երկինքն ու սիրտդ կը վկայեն քեզ։

ՋԷՍԻԿԱ

Բռնի՛ր այս արկղը, արժէ բռնելը։

Լա՛ւ, որ գիշեր է և ինձ չէ՛ք տեսնում։
Շատ եմ ամաչում ես իմ հագուստից.
Բայց սէրը կոյր է. սիրահարները
Չեն տեսնում իրանց երեխայական
Արարմունքները. եթէ նոքա այդ
Կարողանային, Ամուրը ինքը
Անշուշտ կը կարմրէր, եթէ ինձ այսպէս
Տղայ փոխուած տեսնէր,

ԼՈՐԷՆՑՈ

Ե՛կ, դու պիտի լինիս
Կերոնակիրս։

ՋԷՍԻԿԱ

Ի՞նչ, լուսաւորեմ
Ինքս իմ ամօթը, որ բոլորովին
Պարզ ու յայտնի է։ Ո՛չ, իմ սիրական,
Այդ պաշտօնը ինձ իսկոյն կը մատնէ.
Ես պիտի ծածկուիմ։

ԼՈՐԷՆՑՈ

Սէր իմ, դու արդէն
Ծածկուած ես սիրուն այդ հանդերձի մէջ.
Բայց ցած ինչեր, շուտ։ Մութը դիշերը
Շուտ է անցկենում, մեզ Բասանիոն
Արդէն սպասում է իւր մօտ խնջոյքի։

ՋԷՍԻԿԱ

Դռները կողպեմ, դրպանս լցնեմ
Ոսկով, և իսկոյն ցած կը գամ ձեզ մօտ։
(Յետ է քաշվում պատուհանից։)

ԳՐԱՑԻԱՆՈ

Ո՛չ, Աստուած վկայ, հրեշտակ աղջիկ է
Եւ ոչ թէ հրէայ։

ԼՈՐԷՆՑՈ

Անիծած լինիմ,
Եթէ որ սրտանց չեմ սիրում նորան։
Որովհետև նա խելօք է, որքան

Հասկանում եմ ես, զեղեցիկ—եթէ
Աչքս չէ խաբում և հաւատարիմ—
Ինչպէս, որ արդէն փորձով ցոյց է տուել.
Եւ այդ պատճառով, քանի խելօք է,
Քանի զեղեցիկ և հաւատարիմ
Եւ միշտ կը պահեմ նորան սրտիս մէջ:

Մտնում է ՋԷՍԻԿԱՆ

ԼՕՐԷՆՑՕ

Արդէն այստեղ ես:—Գրնանք, պարոններ,
Դիմակահանդէսը մեզ սպասում է:
(Դուրս է գնում Ջէսիկայի և Սալարինոի հետ:)

Մտնում է ԱՆՏՕՆԻՕՆ

ԱՆՏՕՆԻՕ

Ո՞վ է:

ԳՐԱՑԻԱՆՕ

Սինիօր Անտոնիо:

ԱՆՏՕՆԻՕ

Գրացիանո, ո՞ւր են միւս ընկերները,
Ինչը ժամն արդէն լրացաւ և ձեզ
Զաղուց սպասում են բարեկամները,
Դիմակահանդէսն էլ չէ լինելու.
Հողմը փոխուեցաւ, Բասանիոն իսկոյն
Պիտի նաւ մտնի. ես ձեր ետևից
Քանից աւելի մարդ եմ ուղարկել:

ԳՐԱՑԻԱՆՕ

Ես շատ ուրախ եմ: Այո՛, երանի
Մեր նաւն այս գիշեր ճանապարհ ընկնի:
(Նոքա դուրս են գնում:)

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ։

Բելմօնտ· մի սենեակ պօրցիայի տանը։

Փողհարութիւն։ *Մտնում են* ՊՕՐՑԻԱՆ *և* ՄԱՐՕԿԿՕԻ ԻՇԽԱՆԸ *իրանց հետևորդներով։*

ՊՕՐՑԻԱ

գնացէք վարագոյրը յե՛տ քաշեցէք.
Բոլոր արկղերը ցոյց տուէք դուք այս
Ազնիւ իշխանին։—Այժմ ընտրեցէ՛ք։

ՄԱՐՕԿԿՕ

Առաջին արկղը ոսկուց է, ունի
Այս մակագիրը. «Ով որ ինձ կընտրէ,
կըստանայ, ինչ որ շատերի իղձն է։»
Երկրորդն արծաթից և խոստանում է.
«Ով որ ինձ կընտրէ, կըստանայ, որքան
ինքն արժանի է։» Երրորդը ծանր
կապարից շինած. կոպիտ վերնագրով.
«Ով որ ինձ կընտրէ, պէտք է ինձ համար
Տայ և վըտանգի ենթարկէ բոլոր
Իւր ունեցածը։» Բայց ինչի՞ց պէտք է
Իմանամ, արդեօք ուղի՞ղ եմ ընտրել։

ՊՕՐՑԻԱ

Դոցանից մէկում պատկերս է դըրած,
Եթէ այն կընտրէք, ես իսկոյն ձերն եմ։

ՄԱՐՕԿԿՕ

Մի Աստուած ուրեմն թող կառավարէ
Իմ ընտրութիւնը. Տեսնենք։ Մէկ անգամ
Էլի կըկարդամ մակագիրները։
Ի՞նչ է ասում այս կապարէ արկղը.
«Ով որ ինձ կընտրէ, պէտք է ինձ համար
Տայ և վըտանգի ենթարկէ բոլոր
Իւր ունեցածը։» Տա՞յ—ինչի՞ համար,
կապարի համա՞ր. վտանգի ենթարկէ

Կապարի համար։ Այս մակագիրը
Մի սպառնալիք է։ Երբ որ վրտանգի
Ենթարկում է մարդ իւր ունեցածը,
Նա այդ անում է, յուսալով ստանալ
Թանգագին վաստակ։ Բայց մի ոսկէ սիրտ
Երբէք չի խնդրի անպէտ մետալ,
Ուրեմն ոչինչ չեմ տայ և ոչ էլ
Վնտանգի կենթարկեմ կապարի համար։
Բայց ի՞նչ է ասում տեսնենք արծաթը
Իւր անմեղ գոյնով. «Ով որ ինձ կընտրէ
Կըստանայ, որքան ինքն արժանի է։»
Որքան արժանի՞։—Կաց, ով Մարոկկո
Եւ հաստատ ձեռով կշռիր արժէքդ։
Եթէ գնահատուիս քո գնահատելով,
Ապա բաւական արժանի ես դու.
Բայց բաւականը անշուշտ հերիք չէ,
Որ արժանանաս այս օրիորդին։
Սակայն արժէքիս մասին կասկածել,
Այդ կը լինէր թոյլ անվստահութիւն
Իմ անձի վերայ։ Այնքան, որքան որ
Արժանի եմ ես։—Այդ օրիորդն է.
Ես արժանի եմ նորան ծննդեամբ,
Իմ հարստութեամբ, բնական ձիրքերով
Եւ իմ կրթութեամբ. բայց և ես աւելի
Արժանի եմ ես նորան իմ սիրով։
Էլ ի՞նչ հեռու գնամ, լաւ չէ՞ այս ընտրեմ։
Թող մէկ անգամ էլ կարդամ ոսկու վրայ
Դրոշմուած բառերը։ «Ով որ ինձ կընտրէ,
Կըստանայ, ինչ որ ամենի իրաւն է։»
Այդ օրիորդն է։ Բոլոր աշխարհի
Ըղձալին նա է, ամեն կողմերից
Գալիս են այստեղ այս սուրբ պատկերին
Երկրպագելու. Հիրկանիայի.
Անբնակ դաշտերը. Արաբիայի
Անապատները անցնում են իրրև
Հարթ ճանապարհներ իշխանաձները,

Որոնք դիմում են Բէլմոնտ գեղեցիկ
Պորցիայի մոտ։ Անսահման ծովը,
Որ իւր լեռնաչափ ալիքներովը
Փրփուր է ցայտում երկնի երեսին,
Չէ կարողանում մի արգելք դրնել
Օտար հիւրերին. ոչ, անհուն ծովը
Նոքա անցնում են, ինչպէս մի վըտակ,
Որ տեսնեն չքնաղ Պորցիայի դէմքը։
Նորա երկնային պատկերն այս երկք
Արկղերից մէկն է իւր մէջ անփոփում։
Միթէ կապարն է այն իւր մէջ պահում։
Այդ անարդանքը մոքից անցկացնել ն
Անգամ կը լիներ արբասլոծութիւն.
Մեծ անդթութիւն կը լինէր դրնել
Նորա պատանքը այսպիսի մի մութ
Գերեզմանի մէջ։ Միթէ հաւատամ,
Որ այն անփոփած է արծաթի մէջ,
Որ տասն անգամ աժան է, քան զուտ ոսկին։
Ո՛հ, յանցաւոր մի՛տք։ Այսպիսի մի գանձ
Միայն ոսկու մէջ են միշտ նստեցնում.
Անգլիայում կայ մի ոսկէ դրրամ,
Որ մի հրէշտակի պատկեր է կրրում.
Այնտեղ հրէշտակը դրսից է դրոշմած,
Բայց այստեղ ոսկէ անկողնում պարկած։—
Տուէք բանալին։ Ես այս եմ ընտրել,
Տեսնենք բաղդս ինձ ինչ է վիճակել։

ՊՈՐՑԻԱ

Առէք բանալին. թէ իմ պատկերը
Դրա մէջն է, իշխան, ես էլ եմ ձերը։

ՄԱՐՈԿԿՈ

(Բաց է անում ոսկէ տրկղը։)

Դրժոխք, այս ի՞նչ է։ Մի մեռելի գանգ,
Եւ աչքի փոսում տոմսակ է դրրած,
Բայց կարդամ, ինչ կայ սորա մէջ գրրած։

Ասած է, թէ ոսկի չէ
Ամենն, ինչ որ փայլում է։
Շատը մահ է վարձ ստանում,
Ով իմ տեսքով հրապուրվում։
Եւ դերեզման ոսկեպատ
Որդունքներից չէ ազատ։
Ոչքան յանդուգն էք, նոյնքան
Թէ լինէիք բանական,
Մարմնով մանուկ, խելքով ծեր,
Այն ժամանակ այսպէս չէր
Լինի ձեր պատասխանը.
Գնացէք, պրծաւ ձեր բանը։
Այո՛, պրծաւ իմ բանը,
Շատ դառն է այդ պատասխան.
Մընաս բարով, սրտիս կրակ,
Ե՛կ, պատիր ինձ, ցուրտ մահուան։
Մընացէք բարով, Պորցիա, վերջը
Խոր վերաւորեց, մեռցրեց իմ սիրտը,
Եւ յուսահատուած հեռանում եմ ես.
Այսպէս գնում է, ով տարուել է ինձ պէս։

(Դուրս է գնում)

ՊՈՐՑԻԱ

Ցանկալի՛ վախճան։ Գնացէք, ծածկեցէք
Վարագոյրները։ Ա՛խ, երանի թէ,
Նորա պէս ընտրէր և ամէն մէկը,
Ով որ կըրում է մի և նոյն դէմքը։

(Ամենքը դուրս են գնում)

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Վենետիկ· մի փողոց

Մտնում են ՍԱԼԱՐԻՆՕՆ և ՍՕԼԱՆԻՕՆ·

ՍԱԼԱՐԻՆՕ

Այո՛, բարեկամ, ես ինքս տեսայ,
Ինչպէս նաւ մտաւ մեր Բասանիօն.

Նրա հետ ուիասին ճանապարհ ընկաւ
Եւ Գրացիանօն. բայց հաստատ գիտեմ,
Որ այն նաւի վրայ չըկար Լորէնցօն:

ՍՕԼԱՆԻՕ

Գարշելի հրէան իւր աղաղակով
Զարթեցրեց դքսին, որ գնայ նորա հետ
Նաւը քրքրելու:

ՍԱԼԱՐԻՆՕ

Բայց նա ուշացաւ,
Նաւը պարզել էր սուադասները.
Բայց միայն դուքսը իմացաւ այնտեղ,
Որ տեսել էին Լորէնցօին իւր
Ջէսիկայի հետ մի գօնդոլի մէջ.
Այլ և Անտոնիօն հաւատացրեց նրան,
Որ այն նաւի վրայ Բասանիօի հետ
Չը կայնն նոքա:

ՍՕԼԱՆԻՕ

Երբէք իմ օրում
Ես չէի տեսել այնպիսի ցնորուած
Այնպիսի անկարգ, սաստիկ, վայրենի,
Զարմանալի և խառնաշփոթ կիրք,
Որպիսի այն շուն հրէան ցոյց տուեց,
Երբ որ գոռալով վազվզում էր նա
Փողոցների մէջ, «Իմ դուստրը, դուստրը—
Իմ ոսկինները—Ո՛հ, դուստրս փախաւ
Քրիստոնեայի հետ:—Ո՛հ, ոսկիներս,
Քրիստոնեաներից շահած ոսկիներ:
Արդար դատաստան, օրէնք, իմ դուստրը
Իմ ոսկիները: Մի պարկ, երկու պարկ,
Երկուսն էլ կնքած, լի ոսկիներով,
Ծանր ոսկիներով, դուստրս գողացաւ.
Թանկագին քարեր, երկու քար—երկու
Ամենաազնիւ, դեղեցիկ քարեր
Դուստրս գողացաւ: Ո՛վ արդարութիւն,
Գըտէք աղջկան—նորա մօտ են իմ

Ազնիւ քարերը, իմ ոսկիները։

ՍԱԼԱՐԻՆՈ

Փողոցի տղայքը նորա ետևից
Վազում էին և անդադար կանչում.
«Քարերը, դուստրը և ոսկիները։»

ՍԱԼԱՆԻՈ

Թող Անտոնիոն չուշացնէ պարտքը,
Թէ չէ բոլորը նա կը վճարէ։

ՍԱԼԱՐԻՆՈ

Լաւ միտս բերիր։ Երէկ պատմեց ինձ
Մի Ֆրանսիացի, թէ այն նեղ ծովում,
Որ բաժանում է Ֆրանսիան Անգլիայից,
Նոր կործանուել է ապրանքներով լի
Վենետիկեան մի նաւ։ Երբ այդ լսեցի
Իսկոյն յիշեցի Անտոնիոին
Եւ իմ սրտի մէջ ցանկացայ, որ այն
Կործանած նաւը նրանը չըլինի։

ՍՈԼԱՆԻՈ

Դուք պէտք է յայտնէք այդ Անտոնիոին.
Բայց յանկարծ չասէք, թէ չէ կըտխրի։

ՍԱԼԱՐԻՆՈ

Բոլոր աշխարհում չըկայ նրանից
Բարեսիրտ մի մարդ։ Եւ տեսայ ինչպէս
Բասանիոն և նա բաժանվում էին։
Բասանիոն ասաց, թէ նա կաշխատի
Որքան կարող է շուտ վերադառնալ։
«Ո՛չ,» պատասխանեց նորան Անտոնիոն.
«Մի՛ շտապիր, գործդ թերթիւ մի՛ բռնիր
Դու իմ պատճառով. թող ժամանակը
Հասցնէ գործդ։ Եւ այն մուրհակը,
Որ հրէան ունի, թող չըշփոթէ
Սիրով լի սիրտդ։ Ուրախսիրտ եղիր
Եւ բոլոր միտքդ նուիրիր միայն
Հաճոյանալուն, սիրոյ ցոյցերին,

Որոնք քեզ այնտեղ պատշաճ կըլլինին։»
Եւ այս ասելով, աչքերը լցուած
Արտասուքներով, մի կողմը դարձրեց
Նա իւր երեսը և զարմանալի
Ջերմեռանդութեամբ սխմեց իւր ձեռքում
Բասանիոի ձեռը։—Եւ այսպէս
Բաժնուեցան երկու բարեկամները։

ՍՕԼԱՆԻՕ

Ինձ այնպէս է թվում, թէ նա աշխարհը
Միայն Բասանիոի համար է սիրում։
Գնանք գտնենք նորան և մի կերպ ցրուենք
Նրա տրտմութիւնը։

ՍԱԼԱՐԻՆՕ

Այո՛, եկէք գնանք։
(Նոքա դուրս են գնում։)

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

քէրմօնտ. մի սենեակ պորցիայի տանը։

Մտնում է ՆԷՐԻՍԱՆ ՄԻ ԾԱՌԱՅԻ հետ։

ՆԷՐԻՍԱ.

Շո՛ւտ արա, շտապի՛ր, բաց վարագոյրը,
Արրագոնիայի իշխանը երդուեց
Եւ իսկոյն կըգայ վիճակ հանելու։

Փողհարութիւն։ ԱՐՐԱԳՕՆԻԱՅԻ ԻՇԽԱՆԸ, ՊՕՐՑԻԱ և նոցա հետևորդները։

ՊՕՐՑԻԱ.

Ո՛վ ազնիւ իշխան, ահա արկղները։
Եթէ երեքից կընտրէք այն մէկը,
Որի մէջ պահած է իմ պատկերը,
Իսկոյն կըտօնենք մեր հարսանիքը։
Բայց եթէ սխալուիք, պէտք է դուք, իշխան,
Հեռանաք առանց այլևայլութեան։

ԱՐԲԱԳՈՆ

Այս երեք բանն է ինձնից պահանջում
Երդումը, որ ես տուն տաճարում.
Առաջին, երբէք ոչ ոքին չասել,
Թէ երեք արկղից որն եմ ես ընտրել.
Երկրորդ, եթէ որ անյաջող ընտրեմ,
Երբէք իմ կեանքում պիտի չը խնդրեմ
Ես մի աղջկայ ամուսնութիւնը.
Վերջապէս, եթէ իմ ընտրութիւնը
Բաղդն յաջողութեամբ չուզէ պըսակել,
Իսկոյն գնալ և ձեզ անհանգիստ չանել։

ՊՕՐՑԻԱ

Այդ երեք բանը ամենքն են երդվում,
Որոնք անարժան անձիս վրայ խաղում։

ԱՐԲԱԳՈՆ

Ահա պատրաստ եմ։ Ո՛վ, բաղդ, կատարիր
Իմ սրտի իղձը։—Ոսկի, արծաթ և
Անպիտան կապար։ «Ով որ ինձ կընտրէ,
Պէտք է ինձ համար տայ և վըտանգի
Ենթարկէ բոլոր իւր ունեցածը։
Պէտք է աւելի գեղեցկատեսիլ
Երևէիր դու, նախ քան թէ ես այդ
Անելու էի։ Բայց ի՞նչէ ասում
Ոսկէ արկղիկը։ Կարդանք մի տեսնենք.
«Ով որ ինձ կընտրէ, կը ստանայ, ինչ որ
Շատերի իղձն է։» Կը ստանայ, ինչ որ
Շատերի իղձն է։—Բայց ի՞նչ ասել է
Արդեօք շատերը։ Գուցէ այդ բառը
Ցիմարների խումբն է նշանակում,
Որ բանն արտաքին տեսքով է ընտրում,
Որ այնքան միայն գիտէ, որքան իւր
Կարճատես աչքով կարող է տեսնել,
Որ չէ թափանցում իրերի ներսը
Եւ որ իւր համար ծիծեռնակի պէս
Բաց օդում, դրսի պատերի վրայ

Շինում բնակարան, ենթարկուած ամեն
Պատահարներին։ Ես չեմ կամենում
Ընտրել այն, ինչ որ շատերի իղձն է,
Որովհետև ես չեմ ուզում անցնել
Ստոր մարդկանց կարգը, ոչ էլ խառնուիլ
Կոյր ամբոխի հետ։ Ուրեմն այժմ
Քեզ պիտի դիմեմ, ով դու արծաթէ
Փոքրիկ զանձարան։ բայց մի անդամ էլ
Ասա իմանամ՝ քո մակաղիրը։
«Ով որ ինձ կընտրէ, կը ստանայ, որքան
Ինքն արժանի է։» Շատ լաւ է ասած։
Որովհետև ով կը համարձակի
Խաբել բազդը և պատիւներ ստանալ,
Երբ ոչինչ գործով արժանի չէ նա։
Թող ոչ ոք իրան չը սեփականէ
Մի պատիւ, որին ինքն անարժան է։
Ո՛հ, եթէ մարդիկ խաբեբայութեամբ
Ձեռք չը բերէին, թէ հարստութիւն,
Թէ աստիճաններ և թէ պաշտօններ,
Եւ եթէ պատիւը ստացվում լինէր
Կրողի ճշմարիտ վաստակի գլխով,
Ո՛րքան մերկ գլխներ պիտի ծածկուէին,
Որքանը, որոնք այժմ հրամայում են,
Իրանք հրամաններ պիտի ընդունէին։
Որքան փուճ սերմեր կը բաժանուէին
Պատուի անարատ, մաքուր սերմերից,
Եւ որքան աղնիւ, պատուական սերմեր
Կընտրուէին յարդից, որ ժամանակը
Ցափշտակում է, և էլի նորից
Պըտուղ կըտային։—Բայց սկսեմ ընտրել.
«Ով որ ինձ կընտրէ, կը ստանայ, որքան
Ինքն արժանի է։» Վասահ առնում եմ
Ես իմ արժանին. տուէք բանալին.
Եւ խսկոյն այստեղ կը բացուի բազդս։

ՊՕՐՑԻԱ

Այդքան խօսելուն չարժէ այն բանը,

Ինչ որ այս արկղում դուք պիտի գտնէք։

ԱՐԲԱԳՕՆ

Այս ի՞նչ եմ տեսնում։ Ցիմարի պատկեր,
Որ ինձ աչքով է անում և տոմսակ
Է առաջարկում։ Կարդամ, ինչ է գրած։
Ո՛հ, ինչպէս նման չես բոլորովին
Դու Պորցիային. ինչպէս նման չես
Դու իմ յոյսերին, նման չես դու իմ
Արժան՝ուորութեան։ «Ով որ ինձ կընտրէ,
Կստանայ, որքան ինքն արժանի է։»
Միթէ մի յիմար գլխից աւելի
Արժանի չե՞մ ես։ Ա՞յս է իմ գինը,
Միթէ աւելի չէ՞ իմ արժէքը։

ՊՈՐՑԻԱ

Մէկը մեղանչում, միւսը դատում է.
Այդ պաշտօնները միշտ բաժանուած են
Ես միշտ իրարու հակառակում են։

ԱՐԲԱԳՕՆ

Տեսնենք, թէ ինչ է ասում այս թուղթը։
«Եօթն անգամ այս արծաթը
Հալուել, զտուել է կրակում,
Նոյնպէս է և այն մարդը,
Որ ոչինչով չէ խաբվում։
Կայ մարդ, որ ստուեր է սիրում,
Միւսի բաղդն է միայն ստուեր.
Քիչ յիմարներ չեն կըրում
Արծաթամթել հանդերձներ,
Ինչպէս ես ինքս ահա,
Որ ձեզ խրատում եմ հիմա։
Ում կամենաք ձեզ համար
Ընտրեցէք կին ամուսին,
Իմ պատկերը անդադար
Թագ կը լինի ձեր գլխին։
Ստացաք դուք ձեր արժանին,
Հիմա գնացէք ձեր բանին։»

Որքան այստեղ շատ մընամ,
Այնքան կը յիմարանում։
Կին ուզելու մէկ յիմար
Գրլուխ բերի հետս այստեղ,
Այժմ այստեղից տանում եմ
Ես երկուսը մէկի տեղ։
Սէր, ճնաս բարով։ Քանի կամ
Խօսքիս հաստատ կը մնամ,
Եւ չեմ լինի հակառակ
Բաղդիս վճռին խայտառակ։

(Արբագօնը գուրս է գնում իւր հետևորդներով։)

ՊՕՐՑԻԱ

Ձրագին շատ մօտիկ թռաւ թիթեռը,
Ո՛հ, այս իմաստուն խելացնորները,
Այնքան են նոքա խելքին զօր տալիս,
Որ աւելի շուտ սխալվում ընտրելիս։

ՆԷՐԻՍԱ

Ուրեմն սուտ չէ այն առածը հին,
Թէ պսակն ու մահը են բաղդի ձեռին։

ՊՕՐՑԻԱ

Ե՛կ վարագոյրը քաշէր, Նէրի՛սա։

Մտնում է ՄԻ ԾԱՌԱՑ։

ԾԱՌԱՑ

Ո՞ւր է տիրուհիս։

ՊՕՐՑԻԱ

Այստեղ եմ. Ի՞նչ կայ։

ԾԱՌԱՑ

Նոր ձիուց իջաւ ձեր դրան առաջ
Մի վենետիկցի երիտասարդ մարդ,
Որ յայտնում է, թէ խսկոյն գալուէ
Այստեղ իւր տէրը, որից բերում է
Ջերմեռանդ ողջոյն, այն է ոչ միայն
Գեղեցիկ խօսքեր, այլ և թանկագին,
Ընտիր ընծաներ։ Երբէք չեմ տեսել

Այդպիսի քաղցր սիրոյ սուրհանդակ.
Երբէք ապրիլին չէ եղել մի օր
Դեռևս այնքան սիրուն, որ ցոյց տայ,
Թէ որքան շքեղ ամառն է գալու,
Ինչպէս որ ահա այս սուրհանդակը,
Որ առաջընթաց է իւր տիրոջը:

ՊՕՐՑԻԱ

Լա՛ւ, բաւական է. խնդրում եմ: Այնքան
Գովում ես նորան» որ վախենում եմ
Շուտով կասես, թէ քո ազգականն է:
Ե՛կ, ե՛կ, Ների՛սա, գնանք դիմաւորենք
Շատ ցանկանում եմ տեսնել, ով է այդ
Ճարտար սուրհանդակը Կուպիդոնի:

ՆԵՐԻՍԱ

Աստուա՛ծ, երանի՛ Բասանիոն լինի:

(Ամենքը դուրս են գնում:)

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ [1]

Գերմանական համալսարանները այսօրուայ օրը մեծ համբաւ ունին Եւրոպայում: Գերմանիայում բարձրագոյն դասատուութեան հիմնական սկզբունքների մասին հաղիւ թէ մի վէճ կայ և զանազան կարծիքները տեղի ունին միայն այն հարցի մասին թէ կարելի է արդեօք առանց վնասելու գործի գլխաւոր էութեանը հասնել մի քանի կողմնակի թէև օգտաւէտ նպատակների: Իսկ Գերմանիայի դրացի մեծ ազգերը նոյն իսկ հիմքից են վերաքննում իրանց համալսարանական հաստատութիւնները, մեծամեծ փոփոխութիւններ են առաջարկում և միշտ իբրև մի հիանալի օրինակ աչքի առաջ ունին գերմանական համալսարանները: Կասկած չկայ, ասում է անգլիական պարլամենտի անդամ Գրենտ-Դուֆը, այն մարդը որ ամբողջ Եւրոպայում ամէնից լաւ տեղեակ է բարձր դասատուութեան գործին, թէ գերմանական համալսարանները չնայելով իրանց բոլոր պակասութիւններին, իրանց գործունէութեան ամէն մի ճիւղում անհամեմատ բարձր են բոլոր համանման հաստատութիւններից: Մի փոքրիկ գերմանական համալսարան, ասում է Ֆրանսիայի հռչակաւոր գիտնական պ. Էրնեստ Ռընանը, իւր նստել վեր կենալ չիմացող պրոֆեսորներով և սոված պրիվատ-դոցենտներով, աւելի է գործում գիտութեան համար քան Օքսֆորդը իւր բոլոր աչքի ընկնող հարստութիւններով:

---

[1] Այս յօդուածը քաղելով հանած ենք Ժորժ Պուշէի (Georges Pouchet) L'enseignement supérieur des sciences en Allemagne վերնագրով-աշխատութիւնից, աչքի առաջ ունեցել ենք նմանապէս հետևեալ գրուածքները. Taccoud: De l'organisation des facultés de médecine en Allemagne, Paris 1864.—H. von Sybel: Die deutschen und die auswärtigen Universitäten, Bonn 1868.—Ahrens: Die Abwege der deutschen Geistes-Richtung. Leipsig 1873.

Մեր սրտումը դրոշմուած է մնացել դեռ ևս այն զգացմունքը, որով մենք ուսանող ժամանակը առաջին անգամ գերմանական մի մեծ համալսարանի շեմքը կոխեցինք։ Այդ Բերլինումն էր։ Համալսարանը գտնվում է քաղաքի ամենապատուական թաղումը, Թագաւորի պալատի հանդէպ, Ֆրիդրիկոս Բ արձանի մօտ, Շպրէ գետի այն հոյակապ կամուրջի միւս կողմը, որ զարդարուած է ուլթը սպիտակ մարմարիոնի խմբիկներով, որոնք ներկայացնում են ազատ մարդու վէպը։ Համալսարանի շինուածքը ինչպէս կրվայելի գիտութեան պալատին, առանց աչքերդ շքեղութեան է. մի դալարի խոտով ծածկած գաւթի երեք կողմն է բռնում իսկ առաջևից կողպած է երկաթեայ վանդակով։ Ներքին յարկումը այդու շուրջը գտնվում են կօրրիդօրներ մերկ սլատերով, որոնք տանում են դէպի լսարանները։ Սոյա ցածր և ծանր դռները կարծես թէ առաջնորդում լինին դէպի աբեղաների խուցեր։ Վերին յարկումը գտնվում են ժողովածուները և գրադարանը։ Ուսանողները գալիս և գնում են իրանց տեսարանները կռան տակը։ Այստեղ դուք չէք տեսնում ոչ գոյնաւոր զլխարկներ, ոչ բարձր կօշիկներ, որոնք մենամարտութիւնների հետ միասին դեռ ևս սովորական են փոքր համալսարաններում։ Բոլորեքեան մը-ծածմունքներով են զբաղուած և լուռ. իւրաքանչիւր դուռն վրայ խփած ցուցակը ցոյց է տալիս դասերի ժամը. օրուայ մէջ համարեա թէ ամենայն բոպէ դասախօսութիւններն լինում։ Երեսուն և երկու լսարանում իւրաքանչիւր վեցամսեակ 300-ից աւելի դասախօսութիւնների ընթացքներ են կարդացվում թէ մաթեմատիկական, թէ բնագիտական, թէ հասարակական, թէ աստուածաբանական և այլ գիտութիւնների վերայ։

Աչքի առաջ ունենալով այս զարմանալի գործունէութիւնը, ասում է պ. Գ. Պուշէն, — որի յօդուածը մեծ տպաւորութիւն գործեց Ֆրանսիայում, — որի մասին ոչինչ գաղափար չի կարելի կազմել մինչև անգամ Փարիզում, մենք դարձնում էինք մեր աչքերը դէպի Ֆրանսիա, որ անցեալ դարում բոլոր գիտական Եւրոպայի համար օրինակ էր և օրէնսդիր, մենք մտածում էինք Գեօթէի մասին, որ իւր մահուան անկողնում աւելի մեծ ուշադրութեամբ էր հետևում Ինստիտուտի և Թանգարանի մէջ եղած մեծ վիճաբանութիւններին քան Եւրոպական քաղաքականութեան մէջ տեղի ունեցած յեղափոխութիւններին։ Այն ժամանակ, երբ մենք վկայ էինք գերմանական ուսման և գիտութեանց փառաւոր վերանորոգութեան, շատ սակա-

ւաթիւ մարդիկ Ֆրանսիայում այն զերազանցութեան դաղափարն ունէին, որ մի քանի տարիներից յետոյ պէտքէ խոստովանէին բոլորքեան, մինչև անգամ տէրութիւնը։ Գերմանիան այդ ժամանակից յետոյ դեռ նորանոր յառաջադիմութիւններ է արել։ Ով գիտէ, կարող ենք մենք արդեօք կրկին յետ բերել մեր կորցրած նշանակութիւնը առանց այն զարմանալի քայլերից մէկի, ինչպէս այն, որ մի հարուածով տուեց Ֆրանսիային Օրինակական ուսումնարանը, Բազմարուեստական ուսումնարանը, Ճարտարութեանց և Արուեստների ճեմարանը, Լայնութեանց Բիւրօն, Թանգարանը. դոնեա անհրաժեշտ կարևորութիւն ունի մեզ համար լաւ ծանօթանալու Գերմանիայի դասատուութեան կազմակերպութեան հետ, որպէս զի կարողանանք նորա հոգին ընդունել և եթէ կարելի է, սեփականացնել մեզ։

Ա.

Գերմանիայում, ինչպէս և Ռուսաստան, բաժինների (Ֆակուլտէտ) միջնորդութեամբ է մատակարարվում բարձր դասատուութիւնը. սոքա են շնորհում համալսարանական աստիճանները։ Երկու երկրների հիմնարկութեանց նմանութիւնը այդտեղ վերջանում է. չորս հիմնական Ֆակուլտէտների, այն է՝ աստուածաբանական, իրաւաբանական, բժշկական և փիլիսոփայական բաժինների միաւորութիւնը մի և նոյն քաղաքում կազմում է մի համալսարան։ Ամբողջ Գերմանիան քսան և վեց համալսարան ունի, հետը հաշուելով և Զուիցերիայի գերմանական դաւառները և այն սլավօնական երկրները, որոնք կախում ունին Աւստրիայի թագից։ Համալսարանական քաղաքներից շատերը հասարակ աւաններ են, որոնք կարողացել են անուն հանել մարդկային մտքի պատմութեան մէջ։ Հալլէն, Գէօտինգէնը, Տիւբինգէնը մի երևելի գիտական շարժման կենտրոններ էին։ Այս համալսարաններից մեծ մասը շատ հին են, և երբ ուսումնասիրում ենք դոցա կազմակերպութիւնը, մեզ սակաւ չէ զարմացնում այն փաստը, որ միջին դարերից առաջ եկած հիմնարկութիւնները այսպիսի մեծ դեր են խաղում մեր ժամանակը։ ԺԴ դարում հիմնուել են երկու համալսարան, որոնք միշտ շատ յաճախուած են եղել—Հէյդլբերգինը (1346) և Պրագինը (1347)։ Լայբցիգի համալսարանը հիմնուել է ԺԵ դարու առաջին տարիներում (1409)։ Դոցա կազմակերպութեան նախատիպը Սորբօնն է եղած. այս կազմակերպութիւնը շատ չնչին փոփոխութիւններ է կրել հինգ դարուայ ընթացքում և նոյն իսկ նախագծի վերայ են հիմնուած Բերլինի (1809) և Բոննի (1818) նոր համալսարանները։

Ամենայն իրաւունքով կարծում են որ այդ կազմակերպութիւնը շատ ընտիր է։ այս համալսարանները ոչինչ քաղաքական կապով չեն կապուած միմեանց հետ և իւրաքանչիւրն ունի իւր առանձին պատմութիւնը. սոքա ունեցել են իրանց ճգնաժամը, իրանց փառաւոր շրջանը, իրանց անկման ժամանակը։ Վիեննայի համալսարանը, Աւստրիայի փոխակերպութիւնից յետոյ, դառնում է համարեա թէ մի բողոքական հաստատութիւն։ Մի հանգամանք լաւ է ցոյց տալիս ժամանակի հոգին. 1576 թուից մինչև 1589-ը ոչ ոք չի ստացել աստուածաբանութեան դոկտորի աստիճան և 1626 թուին կային մօտ քսան և ութ պրոֆեսօր, որոնք չէին պատկանում կաթոլիկական դաւանութեան։ Համալսարանը անց է կենում մի դարով ճիզուիտների ձեռքը և երբ 1735 թուին նոցա ճանկերից խլում են այդ հաստատութիւնը, նա դառնում է Կարլոս VI-ի և նորա յաջորդների ձեռքին կառավարութեան գործիք։ Համալսարանը գրաքննութեամբ է պարապում և նորա դռները փակվում են հրէայների համար։ Գործերի այդ դրութիւնը տևում է մինչև 1848 թիւը և այդ ժամանակը միայն Վիեննայի համալսարանը մի պատուաւոր տեղ է բռնում Գերմանիայում և իրան վայել դերը կատարում։ Այսօրուայ օրը նա մի փոքրիկ բողոքական աստուածաբանական բաժին ունի վեց պրոֆեսօրով։

Երբեմն պատահում է, որ համալսարանները մի տեղից միւսն են փոխադրվում և մինչև անգամ բոլորովին անհետանում։ Ինգոլշտադտի հին համալսարանը (1472), որ յետոյ տեղափոխուեցաւ Լանդշուտ, 1826 թուին Միւնխէնի փառաւոր համալսարանը դարձաւ։ Ֆրէյբուրգի համալսարանը անցաւ Կոնստանց ֆրանսիական տիրապետութեան ժամանակ (1679-ից մինչև 1697), նոյն միջոցին Ստրասբուրգի համալսարանը 1681 թուի հոկտեմբերի 3-ին կնքած դաշնադրութեան 4 յօդուածի հիման վերայ, քաղաքի հետ միասին անցաւ Ֆրանսիայի թագի հովանաւորութեան ներքոյ։ Ստրասբուրգը իւր բոլոր անփոփոխ արտօնութիւններով և ազատութիւններով շարունակեց XVIII դարում գերմանական քաղաք լինել։ Նորա համալսարանը, որ աւելի ծաղկած էր քան երբևիցէ, դրաւում էր դէպի իրան Հռէնոսի այն կողմի երիտասարդութիւնը։ Գէոթէն և իշխան Մետտէրնիխը ուսած են Ստրասբուրգ։

Համալսարանը խափանուեցաւ 1793 թուին։ Դա անկասկած մի ցաւալի գործ էր, բայց հասարակապետութիւնը այնքան բանէ

արել Ֆրանսիայի կրթութեան համար, որ նորան չի կարելի շատ նախատել այդ սխալի պատճառով: Այն յառաջադէմ զարգացումը, որ նա տուեց դիտութեանը, Հռենոսի այս կողմը հրաշալի պտուղներ կրբերէր, եթէ մէկ օր Նապոլէոնի գլուխը չէր մտել ֆակուլտէտներով կազմակերպել բարձր ուսումը: 1871ին Ստրասբուրգը կրկին գերմանական համալսարան դարձաւ:

Իւրաքանչիւր համալսարան սովորաբար այն քաղաքի անունն է կրում, ուր որ գտնվում է. սակայն իրան իւր հիմնողի կամ նորոգողի անունն է տալիս: Այսպէս Բերլինն ունի իւր Ֆրիդերիկոս—Վիլհելմի համալսարանը իսկ Ֆրէյբուրգը Ալբերտի համալսարանը (Albert-Ludwigs Hochschule). Տիւբինգէնի համալսարանը երկար ժամանակ կոչվում էր Alma Eberhardiana, կոմ Եբերհարդ Մորուքաւորի անունով, որ հիմնեց այն 1477 թուին: Դուքս Կարլը նորոգեց համալսարանը 1770 թուին և նա այսօրուայ օրը անուանվում է Եբերհարդ Կարլի համալսարան (Eberhard Carl Universität): Բոլոր համալսարանները Պրուսիայում, Աւստրիայում, Զուիցերիայում, Բոհեմիայում նայում ու համարում են միմեանց եղբայր: Հոլանդիայի և Ռուսաստանի համալսարանները այժմ հրաւիրում են պրոֆեսորներ Գերմանիայից: Մի մեծ քայլ կըլինի արած քաղաքակրթութեան մէջ այն օրը, ասում է մեր յիշած հեղինակը, երբ Ֆրանսիայի վերափոխուած հիմնարկութիւնները թոյլ տան նմանապէս Ֆրանսիային գիտնականների փոխանակութիւն անել դրացի ազգերի հետ [1]): Գերմանական համալսարանները, թէ և միմեանցից բոլորովին անկախ, սահմանուած են մի և նոյն նախագծի հիման վերայ և ենթարկուած կառավարութեան մի և նոյն ձևին. կանոնադրութեան մանրամասնութիւնները, մասնաւոր հարստութիւնը և ունեցած կայքը, պէսպէս յարաբերութիւնները, որ նոքա ունին այն տէրութիւնների հետ, որոնց ձեռքի տակ գտնվում են, ցոյց են տալիս մեզ քանի մի զանազանութիւններ. բայց սիստէմայի

---

[1]) Ֆրանսիայում պրոֆեսորները, որոնք իսկապէս տէրութեան ծառայողներ են, պէտք է համապատասխանեն ազգայնութեան մի քանի պայմաններին: Ոչինչ այսպիսի բան չկայ Գերմանիայում: Գիտութիւնը այնտեղ համաշխարհական է համարվում: Ոչ ոք չի կասկածում որ եթէ մի երևելի ֆրանսիական գիտնական ցանկանար Բերլին կամ Վիեննա պրոֆեսորի պաշտօն ստանալ, նորան անչուշտ կհրաւիրէին ուզած տեղը:

հիմքը ամենայն տեղ նոյնն է: Այս երկար ժամանակ բաժանած երկրում, համալսարանները քաղաքագիտութիւնից գուցէ աւելի իրապէս են նպաստել բնաջնջ անելու միջին դարերի մնացորդները և պատրաստել գերմանական միութիւնը, որ իբրև սկզբունք միշտ ընդունած են:

Մեծ սխալ է կարծել որ Գերմանիայի համալսարանները անկախ են տէրութիւնից: Իրօք տէրութիւնը դրամական օգնութիւն է տալիս նոցա, այլև նա է նշանակում պրօֆեսօրներին: Ի հարկէ կան այնպիսի համալսարաններ, որոնք կարող են համարեա թէ առանց այդ դրամական օգնութեան առաջ տանել գործը: Օրինակ Գրէյֆսվալդի փոքրիկ պրուսական համալսարանը 75000 թալեր եկամուտ ունի, իսկ տէրութիւնից ստանում է մօտ 1200 թալեր: Եթէ համալսարանը կայք ունի, այդ համարվում է ընկերութեան (կորպորացիայի) սեպհականութիւն և տէրութիւնը իրաւունք չունի ձեռք տալու նորան. եթէ կայքը բաւականին է, համալսարանը, այսպէս ասել, դուրս է գալիս կառավարութեան ձեռքից, որ չի կարող նորան մինչև անգամ մէկ տեղից միւս տեղ տանել: Ֆրէյբուրգի համալսարանը իւր դրամական գլխաւոր աղբիւրն ստանում է քաղաքից, որ կ'ոչնչանար եթէ համալսարանը տեղափոխուէր. բայց և այնպէս այս բոլորը բացառական դէպքեր են: Համալսարանների մեծ մասը մեծ դրամական օժանդակութիւն է ստանում, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք դրամով օգնող երկիրների ելումուտքը: Լայպցիգի համալսարանը 120000 թալեր եկամուտ ունի, Սաքսօնիան աւելացնում է այդ գումարին տարեկան 53,000 թալեր: Բերլինի համալսարանը միայն 72 թալեր եկամուտ ունի: Նա ստանում է 180000 թալեր տէրութիւնից: Պրուսիան իւր Բերլին, Բօնն, Բրեսլաու, Կէօնիգսբերգ և Միւնստեր համալսարանների վերայ ծախսել է 1861 թուին 530, 860 թալեր, որին պէտք է աւելացնել համալսարանի մասնաւոր մուտքերը: Ընդ ամէնը Պրուսիան ծախսել է բարձր լուսաւորութեան համար 1861 թուին, 2,500000 ֆրանկ [1]): Այս գումարի մէջ չէ հաշուած ուսման վարձը, որ վճարվում է անմիջապէս պրօֆեսօրին, որ կազմում է շատ անգամ ուսուցչի ստացած բոլոր ռոճիկը:

Պրուսական օրէնքի խօսքերին համեմատ «Թագաւորութեան հա-

---

[1]) Պրուսիայի բնակիչների թիւը նոյն ժամանակ, պրուսական տեղեկութիւնների համաձայն, համարվում էր 18,491,271 հոգի:

մասնարանները արտօնաւորուած կօրպօրացիաներ (ընկերութիւն) են, որ կազմվում է պրոֆեսօրների, ցուցակ անցրած ուսանողների ժողովից, ինչպէս և իւր կառավարութեան ծառայողներից և ծառայողների օգնականներից,» այսինքն համալսարանի հետ կապուած բոլոր անձինքը արտօնութիւններ են վայելում: Նոյն իսկ սրախաղութեան, ըղալու, ձի հեծնելու վարժապետներից սկսած մինչև դռնապանը, բանտապետը, մամ վառողը և ոչ մէկը չկայ, որ օգուտ չքաղէր այս արտօնութիւններից, և ընկերութեան անդամների պաշտօնական ցուցակի մէջ սոցա անունները գրվում են պրոֆեսօրների անուններից յետոյ: Ինչ որ վերաբերում է ուսանողներին, ուսանող գրուիլը արդէն նոցա իրաւունք է տալիս համալսարանի քաղաքացի դառնալու: Այդ ժամանակից սկսած նոքա, ինչպէս և ծառայողներն ու ծառայողների օգնականները ենթարկուած են մի մասնաւոր իրաւասութեան, որի ներկայացուցիչը, օրինակ Պրուսիայում և Սաքսոնիայում կոչվում է համալսարանի դատաւոր: Սովորաբար այդ դատաւորը քաղաքում ծառայող մի անձն է: սա պրոֆեսօրի աստիճան ունի և տեղ է բռնում ռեկտօրի ձախ կողմը: Նորան յայտնի են այն բոլոր յանցանքները, որ գործում են ուսանողները և ծառայողները նաև համալսարանից դուրս. նա բանտարկելու իրաւունք ունի: Պատիժը քաւում են նոյն իսկ համալսարանական բանտում:

Ինչ որ վերաբերում է պրոֆեսօրներին, նոքա իրանք են կառավարվում, որոշում են դաստիարակութեան վերաբերեալ բոլոր հարցերը և ամենայն ջանք գործ են դնում որ անվտանգ պահեն իրանց հին արտօնութիւնները: Ի հարկէ այդ արտօնութիւնները նոյնը չեն ինչ որ առաջ. դոքա պակասել են ընդհանուր օրէնքների տարածման համաձայն, բայց դոքա ապահովում են դասատու ժողովի անկախութիւնը և այդ բաւական է որ նոցա համար թանգագին լինին: Պրոֆեսօրները կախումն ունին միմիայն իրանցից և այն նախագահներից, որոնց իրանք ընտրել են: Ուրաքանչիւր տարի, ֆակուլտէտը ընտրում է իւր դեկանին, իսկ չորս ֆակուլտէտները ընդհանուր ժողովում ընտրում են ռեկտօրին և Սենատը: Այս վերջինը կազմուած է ռեկտօրից, նորա նախորդից, չորս նախկին ռեկտօրներից և վեց անդամներից, որոնք ընտրվում են պրոֆեսօրների միջից:

Սենատը ներկայացնում է համալսարանի ամենաբարձր իշխանութիւնը, քննում է ամենայն գործ վճռական իրաւասութեամբ: Նա պարտաւորուած է կառավարել ընկերութիւնը և հարկաւոր եղած

ժամանակը պաշտպանել իշխանութեան յարձակումներից։ Ահա և մի համալսարանական արտօնութիւն. ամենայն սենատի կողմից հրատարակուած թուղթ և ստորագրուած ռեկտորից, ազատ է եղել դրաքննիչի ճանկերից։ Այս փոքրիկ ժողովները, հպարտ իրանց անկախութեամբ, զօրեղ իրանց իրաւունքներով, թագաւորների ականջին հասցրել են շատ անգամ ազատութեան աղնիւ խօսքեր, որոնք մանաւանդ այն պատճառով նշանակութիւն են ունեցել, որ շատ երկրներում պրոֆեսօրները միևնոյն ժամանակ տէրութեան խորհրդատուներ են։ Այդ տեսակ բաներով բարձր ուսում մատակարարող անձինքը իրաւունք են ստանում հասարակական յարգանքը վայելելու։ 1862 թուին թագաւորը արձակեց պատգամաւորների ժողովը։ Ֆօն դեր Հայդտի նախարարութեանը յանձնուած էր ընտրողութիւններ պատրաստել և յաղթել ազատ կուսակցութիւնը։ Նախարարութեան գլուխը կամեցաւ մեծ ճշտութեամբ կատարել իւր դերը։ Տէրութեան բոլոր հաստատութիւններին շրջաբերականներ գրուեցան, որոնցով հրաւիրում էին նոցա աշխատել առաջիկայ ընտրողութիւնների ժամանակ, ձեռքից եկածի չափ, թագաւորի քաղաքականութեան յաղթութեանը մասնակցել։ Մարտի 22ին Բերլինի համալսարանը պատցաւ ազգային լուսաւորութեան պաշտօնէի միջնորդութեամբ այս մտքով գրուած մի շրջաբերական։ «Մեր լաւ մտքին է, ասում է պ. Պուշէն, այն աղմուկը, որ դա բարձրացրեց համալսարանում և հասարակութեան մէջ։ Ցնայելով որ նախարարի նամակը խիստ չափաւոր էր, ապրիլի 7ին ռեկտորը և սենատը պատասխանեցին այն եղանակով, որի հետ ծանօթանալը կարծում ենք շատ օգտաւէտ է մեր երկրում։ Մեր իրաւունքների և պարտաւորութիւնների շրջանից դուրս է, գրում էին նոքա, քննել ներքին գործոց նախարարի շրջաբերականը իւր տեսչութեան ներքոյ գտնուող ծառայողների վերաբերութեամբ։ Մեզ չի պատկանիլ նաև այն հարցը յարուցանել թէ մինչև ինչ աստիճան տէրութեան ծառայողները կարող են կապուած լինել իրանց դլխաւորի հրամանով մի ընդհանուր քաղաքական իրաւունքի իրագործութեան մէջ, և մինչև ինչ աստիճան այդ տեսակ մի ճնշումն կարող է յարմար համարուիլ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ։ Մենք ուզում ենք միայն մեր խնամքին աւանդուած համալսարանական ընկերութեան իրաւունքները պաշտպանել և առաջ բերել նորա անդամների ամէն մէկի անձնական անկախութիւնը։ Այս պատճառով մեր իրաւունքն է և պարտաւորութիւնը յայտնել ընդ սին, որ մենք չենք կարող կար-

ծել, որ նորին գերազանցութեան, ազգային լուսաւորութեան պաշտօնեայի կողմից իրաւացի լինի որ ևէ կերպով խանգարել համալսարանի ընկերութեան անդամներին՝ քաղաքական գործերում ձայն տալու, ինչպէս նորին գերազանցութիւն ներքին գործոց պաշտօնեայն այդ արել է իւր տեսչութեան ներքոյ գտնուող ծառայողների վերաբերութեամբ:»

Բոննի և Բրեսլավլի համալսարանները մօտաւորապէս նոյն խօսքերով պատասխանեցին այս ապաբաղդ շրջաբերականին:

Մեծ իրաւունքով գերմանական համալսարանները փոքրիկ հասարակապետութիւնների հետ են համեմատել. նոցա ներքին կազմակերպութիւնը միայնդամայն հասարակապետական է: Դեկանի և ռեկտորի պաշտօնները չեն կարող միշտապէս մի և նոյն մարդու ձեռքում մնալ: Երբէք չի կարելի այդ պաշտօնները երկու տարի շարունակ նոյն պրոֆեսորին յանձնել: Այնպիսի համալսարաններ կան, ուր իւրաքանչիւրը հերթով դեկան է լինում և կարգը եկած ժամանակը մասնակցում է համալսարանական գործերի կառավարութեան: Եթէ յարգելի պատճառների պաշտօնից հրաժարուելու, համալսարանը կարող է ընդունել կամ հերքել այդ պատճառը: Այս ընտրողական կազմակերպութեան շնորհիւն է, որ գերմանական համալսարանները պէտք է բարգաւաճէին, իսկ հակառակ պատճառները սպանում են տէրութեան տեսչութեան տակ գտնուող համանման հաստատութիւնները:

Գերմանական համալսարանի դասատու անձինքը բաղկանում են չորս միմիանցից տարբեր իրաւունքներ ունեցող կարգերից, սոքա են՝ օրդինար—պրոֆեսորներ, էքստրաօրդինար—պրոֆեսորներ, պրիվատ—դոցենտներ, վերջապէս նախընթացներից աւելի ստոր դրութիւն ունեցող լեզուների և զանազան վարժողութիւնների ուսուցիչներ: Այս վերջինները դոկտորներ չեն և համարեա թէ ֆակուլտէտի ծառայողների հետ մի դաս են կազմում: Սոքա ուսուցանում են բոլոր օտար լեզուները, երբեմն մինչև անգամ արևելեան լեզուներ, երաժշտութիւն, երգեցողութիւն, ձիահեծելութիւն, պար, զինավարժութիւն, մարմնամարզութիւն, սղագրութիւն, վայելչագրութիւն և այլն: Վարժապետները ոչ միայն վայելում են ակադեմիական հովանաւորութիւնը այլ և Սենատը վերահսաու է լինում նոցա դասատուութեան: Այն վարձը որ նոքա ուսանողներից պէտք է ստանան,

երբեմն նախապէս որոշվում է։ Մի քանիսը ստանում են նաև չափաւոր ռոճիկ։

Ֆակուլտէտը կազմում են գլխաւորապէս օրդինար—պրոֆեսորները. թէ դեկանը և թէ ռեկտորը ընտրվում են միշտ նոցանից։ Սոքա միայն կարող են սենատի անդամ լինել։ Սոցա թիւը երբէք մեծ չէ. փիլիսոփայական ամենամեծ ֆակուլտէտները, որպիսիք են Բերլին, Վիեննա, Լայբցիգ, Բրեսլաու, 25 ից մինչև 28 օրդինար—պրոֆեսորից աւելի չունին։

Այդ փոքր է, եթէ աչքի առաջ ունենանք, որ փիլիսոփայական բաժիններում մատակարարվում են մարդկային գիտութեան բոլոր ճիւղերը, բացի աստուածաբանութիւնից, իրաւաբանութիւնից և բժշկականութիւնից։ Նոցա թիւը կախուած է համալսարանի հարստութիւնից և այլ անունից որ վայելում է։ Փոքր ֆակուլտէտներում նոցա թիւը այնքան սակաւ է որ անզգոհացուցիչ և ծիծաղելի կարող է երևիլ։ Իենայի բժշկական ֆակուլտէտը միայն վեց այսպիսի պրոֆեսոր ունի, Գիսսենի իրաւաբանական ֆակուլտէտը—չորս։

Այս պրոֆեսորները ներկայացնում են, եթէ կարելի է ասել, ֆակուլտէտի դասաւորութեան անհրաժեշտ կարևորութիւն ունեցող չափը, որ ճշդապէս համապատասխանում է ֆակուլտէտի պահանջներին։ Բայց նոքա միշտ իրանց կողքին բազմաթիւ էքստրաօրդինար—պրոֆեսորներ և պրիվատ դոցենտներ ունին, որոնք ընդարձակում են և լրացնում գիտութեան շրջանը։ Օրդինար—պրոֆեսորներին նշանակում է տէրութեան գլուխը ֆակուլտէտի առաջարկած ցուցակի համաձայն։ Բոլոր գերմանական երկրներում ձևերը համարեա թէ նոյն են։ Այս կամ այն ամբիոնի պարապելները օրագրների միջնորդութեամբ հրապարակաբար յայտնվում է և ամենայն դոկտոր կարող է այդ տեղ մրցել ֆակուլտէտի անունով մի խնդիրք տալով։ Ֆակուլտէտը իւր կողմից պարտաւորուած չէ խնդրողների միջից ընտրել, այլ բոլորովին ազատ կազմում է իւր ցուցակը մի մասնաւոր ժողովում, որին մասնակից են միայն օրդինար—պրոֆեսորները։ Այս ցուցակը սովորաբար երեք անուն է պարունակում, բայց երբ ֆակուլտէտը յարմար է համարում, երբ մի առանձին յարգանքի նշան է ուզում ցոյց տալ իւր ընտրածին—նորան միայնակ է առաջարկում։ Այդ պատիւը միշտ յայտնվում է երբ ընտրածը արդէն օրդինար—պրոֆեսոր է մի այլ ֆակուլտէտում։ Ռեկտորը ներկայացնում է ցուցակը նախարարին, սա մատուցանում է նոյնը թագաւորին, բայց

մէջը բան փոխելու իրաւունք չունի: Այս արտօնութիւնը, որ համալսարանը ներկայացնում է տէրութեան դլխին իւր ընտրած մարդու անունը, առանց ենթարկելու որևէ միջնական իշխանութեան քննութեան, նորա ամենահին արտօնութիւնն է որով նա պարծենում և հպարտ է:

Օրինակ չկայ, մինչև անգամ Աւստրիայում, որ տէրութեան գլուխը Ֆակուլտէտի ցուցակից դուրս մի մարդ նշանակէր: Պատահել է երբեմն, որ նա քաղաքական պատճառներով, մերժել է նշանակելու, այն ժամանակ տեղը պարապ է մնացել մինչև որ տարաձայնութիւնը վերջ ստանար: Այս դէպքում տէրութիւնը ընդդիմադրում է համալսարանական վճռին մի տեսակ veto, բայց նորա մոքովն անդամ չէր անցկենալ ընկերութեան իրաւունքի փոխարէն իւրը մէջ բերել: Ուսանողները կարողեն իրրև ընկերութեան անդամներ որոշ հանդամանքներում, անմիջապէս խառնուիլ բանի մէջ: Երբ նոքա մի հիմնաւոր պատճառ ունին նոր օրդինար—պրոֆեսորի ընտրողութեանը չհաւանելու, իրաւունք ունին իրանց անտես արած ցանկութիւնները թագաւորի ականջին հասցնել: Վիեննայի բժշկական Ֆակուլտէտի մի պրոֆեսոր իւր ամբիոնը ստացել է այս տեսակ մի բողոքի շնորհով:

Ամենայն օրդինար—պրոֆեսոր, թէև տէրութիւնից ռոճիկ է ստանում, այնու ամենայնիւ միանդամայն ազատ է կառավարութեան վերատեսչութիւնից: Այնտեղ երբէք չեն ունեցել, ինչպէս Ֆրանսիայում, այն երևելի գաղափարը որ պրոֆեսորների վրայ, որպէս ծառայողների վրայ նայեն իսկ նոցա ռոճիկը մի ամենողորմ պարգև համարեն, որ երախտագիտութիւն է պահանջում կամ շինջուցանում է թշնամութիւնը: Հռչակաւոր Վիրխովը, Պրուսիայի ընդդիմադրական կուսակցութեան ամենազօրեղ առաջնորդներից մէկը, իբրև Բերլինի համալսարանի պրոֆեսոր ստանում է ընդհանուր եղումուտքից 1200 կամ 1500 թալեր և այդ չի խանդարում նորան յարձակուիլ տէրութեան վերայ թէ ամբիոնից, թէ իւր դասախօսութիւնների ժամանակ և թէ հասարակական ժողովներում: Ոչ մի նախարար երբէք չէ մտածել նորան հասկացնելու որ նա դոնեա հրաժարական պէտք է տար. Պրուսիան է վճարում իւր պրոֆեսորների վարձը և ոչ թէ թագաւորը: Ամբիոնը անդրժելի ապաստանարան է և յայտնի է որ 1866ի պատերազմից յետոյ Գէօտինգենի մի պրոֆեսոր, որ փոքր

գերմանական տէրութիւնների ինքնավարութեան ջերմ պաշտպանն էր, սկսեց բացարձակ պատերազմել Վիլհելմի դէմ:

Օրինաւոր—պրոֆեսորներին նշանակուած ռոճիկը զանազան է այլեւայլ համալսարաններում և մինչև անգամ մի և նոյն համալսարանում: Ռոճիկը աւելացնում են ամենայն տասը տարի: Բացի այդ այն համալսարանը որ ուզում է իւր ուսուցիչների շարքում մի պրոֆեսոր ունենալ, որ արդէն մի մեծ և երևելի անուան տէր է, շատ անգամ ստիպուած է նորան իւր կողմը քաշելու համար սովորականից դուրս շահեր առաջարկել:

Ամէն անգամ երբ ամբիոնը պարապ է, համալսարանների մէջ պրոֆեսորի մի տեսակ ածուրդ է տեղի ունենում, որ շատ հետաքրքրական է: Բոլորը համեստ և օրինաւոր կերպով է կատարվում, բայց ածուրդը այնու ամենայնիւ ածուրդ է մնում: Այսպիսով մի պրոֆեսոր իւր արժանաւորութեան համեմատ, թէ որպէս գիտնական թէ որպէս իւր դասախօսութիւններով մեծ ազդեցութիւն ունեցող (այս երկու առաւելութիւններն էլ մեծ դին ունին) բարձրանում է փոքր համալսարաններից մինչև ամենաերևելիները, բայց եթէ և այդ դրութեանը վերջը Վիեննա կամ Բերլին հասած լինէր, նա պէտք է պահպանի դորան անխոնջ աշխատանքով: Գերմանիայում պրոֆեսորութիւնը երբէք հանգստութեան տեղ չէ կամ մարդուս գիտնական ապարիզի պակումը, դա միշտ մրցարան է և պատերազմ: Նիւթական օգուտները թոյլ չին տալիս քնելու:

Արդարև պրոֆեսորը տէրութենից չէ ստանում, ինչպէս օրինակ Ֆրանսիա կամ Ռուսաստան, իւր ամբողջական վարձատրութիւնը: Վարձի մի մասը նորա աշակերտները ուղիղ իրան են վճարում: Ֆրանսիական սիստեմը կարող է ունենալ իւր լաւ կողմերը, բայց ունի անկասկած և մեծ անյարմարութիւններ: Այդ անյարմարութիւններից ամենափոքրը դեռ այն է, որ մարդ սովորում է այդ մշտական եկամուտը գիտնական կեանքի վարձատրութիւն համարել և ոչ թէ այն աշխատանքի վարձ, որ գործ է դնում իւր դասերի վերաբերութեամբ: Հետևանքը այն է որ պրոֆեսորը շատ փոքր է պարապում իւր աշակերտներով: Շատ տակաւ է պատահում, ասում է Պ. Պուշէն, որ մեր գիտնականներին ուսանողները վճարեն. այս բանը մեր գիտնականները իրանց պատուի և արժանաւորութեան դէմ են համարում, որ և Գերմանիա խստութեամբ դատապարտում են «ձեր դասախօսութիւնների ճրիութիւնը» ասում են մեզ գերմանացիք, ըստ երևոյ

ւոյթին օգտաւէտ է աշակերտներին, բայց մանաւանդ օգտաւէտ է պրոֆեսորի համար, որ ազատւում է այն բոլոր ժամերի դասատուութիւնից, որոնց համար նա իրաւունք ունի կարծելու թէ վարձատրուած չէ: Արդարև կասկածելի է որ ձրիավարժութիւնը մինչև անգամ ուսանողի համար օգտաւէտ լինի: Ամենքը որոնք յաճախել են լաբորատորներ գիտեն իհարկէ, որ բացառութիւնները մի կողմ թողնելով, նոքա են միայն աշխատում, որոնք վճարում են: Ինչ անես որ մենք այսպէս ենք ստեղծուած: Բարձր ուսումնատւութեան ձրիութիւնը մի ազնիւ ցնորք է և արդեօք իրաւացի՞ կլինէր, որ այն ուսմունքները, որոնք տանում են դէպի պատիւ, դէպի մեծ գործքերը, դէպի փառաւոր և շահաւէտ դրութիւններ, ձրի լինէին. այն ինչ ոչ ոք չի մտածում անգամ միջին ուսումնարանների ձրիավարժութեան մասին, որ այսօրուայ օրը անհրաժեշտ կարևորութիւն ունի նաև ամենահամեստ գործին ձեռնամուխ լինելու համար: Այստեղ մի տեսակ անհետևողութիւն կայ:

Գերմանիայում կրկնապատիկ օգուտ են տեսնում այն բանի մէջ որ պրոֆեսորը բացի տէրութենից ստացած որոշ ռոճկից նաև վարձ ստանայ անմիջապէս այն ուսանողներից, որոնք հետևում են նորա դասախօսութիւններին: Նախ և առաջ վարժապետը աւելի ջանք է գործ դնում նոցա պահանջներին համապատասխանելու, երկրորդ, այս կերպով նորա վարձատրութիւնը միշտ համապատասխանում է նորա այն արժանաւորութեան, որ գեղեցիկ դասախօսութիւններով գրաւում է ուսանողներին, կամ որ ամենայն կողմից գալիս են մեծահամբաւ աշխատաւորութիւնների հեղինակին լսելու: Ֆրանսիայում ուսանողը ամենայն երեք ամիս գրուելու վարձ է վճարում, որ իրապէս ոչինչ իրաւունք չէ տալիս նորան, որովհետև Ֆակուլտէտի դասախօսութիւնները հրապարակական են: Գերմանիայում, ուսանողը ամէն վեցամսեակի (սեմեստր) սկզբում, ընտրում է այն դասերը որ ցանկանում է լսել: Նա գրվում է քարտուղարատունը վճարելով իւրաքանչիւր դասախօսութեան համար մի առանձին գումար, որ որոշվում է պրոֆեսորի կամքով: Կանոնադրութիւնները բաւականանում են գումարի մինիմումը որոշել և այն եղանակը որով սա դրուած է լաւ է ցոյց տալիս գերմանական համալսարանի մշտական ցանկութիւնը վարձատրել ամէնին իւր աշխատանքի համեմատ: Ուսանողի վճարելիք փողը այնքան դրամական միութիւններ են, որքան պրոֆեսորը ամենայն շաբաթ դասեր է կարդում: Եթէ նա շաբաթը հինգ դաս է կար-

դում, որ հազիւ չէ պատահում Աւստրիայում վճարում են հինգ Ֆլօրին, Պրուսիայում հինգ թալեր: Վարձը ստանում է ամբողջութեամբ պրոֆեսորը: Բայց այդ գումարը վճարւում է ֆակուլտէտի քարտուղարատանը. այդ կերպով ամենայն տեսակ անյարմարութեան կամ տարակուսանքի առաջն առնում են: Պրոֆեսորը, ուսանողներից այս տեսակ եկամուտ ստանալով, աշխատում է շատ դասախօսութիւններ կարդալ որպէս զի մինիմումը բարձրացնի և նորա օգուտն է ընտիր դասախօսութիւններ կարդալ, որպէս զի շատ լսողներ ունենայ: Իւր եկամուտի այն մասով որ իբրև ռոճիկ տէրութիւնից ստանում է, նա ապահովուած է հիւանդութեան և ծերութեան ժամանակ: Գործից ձեռք վերառնել չի լինիլ, պրոֆեսորի աթոռը շարունակվում մինչև ի մահ: [1]) Երբ ծերութիւնը կամ տկարութիւնը հասնում է, պրոֆեսորը հանգստանում է. էքստրաօրդինար—պրոֆեսորների և պրիվատ—դօցենտների շնորհով դասախօսութիւնը վնաս չէ կրում:

«Համալսարանի նպատակն է, ասում են պրուսական կանոնադրութիւնները, գիտութեանն ընթացքների և այլ վարժմունքների միջնորդութեամբ ընդհանուր գիտնական և գրականական կրթութիւն մատակարարել այն երիտասարդներին, որոնք սկզբնական ուսմամբ պատշաճապէս պատրաստուած են. նա պէտք է նոցա այն տեղը հասցնի, որ դոհացուցիչ ընդունակութիւններով կարողանան մտնել տէրութեան և եկեղեցու ծառայութիւնը, այլ և կատարեն այն պաշտօնները, որոնք բարձր գիտնական կրթութիւն են պահանջում:» Իհարկէ, համալսարանը չի կարող իրագործել այսպիսի մի նախագիծ իւր սակաւաթիւ օրդինար—պրոֆեսորների ձեռքով: Այստեղ իսկ օգնութիւն են հասնում էքստրաօրդինար—պրոֆեսորները և պրիվատդօցենտները: Բերլին, փիլիսոփայական ֆակուլտէտում 27 օրդինար պրոֆեսորների վրայ կան 33 էքստրա—օրդինար պրոֆեսոր: Սոցա թիւը երբէք սահմանափակուած չէ: Այդ թիւը կախումն ունի այն եկամուտներից, որ համալսարանն ունի կամ որ տէրութիւնը տալիս է նորա ձեռքը: Եթէ ֆակուլտէտի կարծիքով գիտութեան մի կարևոր կամ նոր ճիւղ իւր դասատվութեան շրջանում պատշաճաւոր տեղ չէ բռնում, նա այդ բաց տեղը գոցելու համար նշանա-

---

[1]) Այս պատճառով սովորութիւն կայ, դասախօսութիւնների ցուցակում միշտ յիշելու և այն պրոֆեսորներին, որոնք արդէն իրանց ծերութեան պատճառով դասախօսութիւններ չեն կարդում.

կումէ, մի էքսթրաորդինար պրոֆեսոր կամ տալիս է այս տիտղոսը մի արժանաւոր մարդու, որին կամենումէ քաշել դէպի իրան մինչև որ կարողանայ բոլորովին կապել իւր հետ։ Էքսթրաորդինար—պրոֆեսորներին հաստատումէ նախարարը ֆակուլտէտի առաջարկութեամբ, սոցա պաշտօնը մշտական է։ Շատ անգամ նոքա ուրիշ ռոճիկ չունին բացի ուսանողների վճարած վարձը, որի գումարը իրանք են որոշում ինչպէս և այլ պրոֆեսորները։ Երբև բացառութիւն մի որոշ ռոճիկ կարելի է տալ նոցա, որոնց դասախօսութիւնների առարկան այն տեսակից չէ, որ կարողանար շատ լսող գրաւել։

Ինչ որ կրվերաբերի պրիվատ—դոցենտի կոչման դա մատչելի է ամենայն դոկտորի։ Այդ կոչումը կարելի է ձեռք բերել մասնագիտական քննութիւնով, որի մանրամասնութիւնները ճշդապէս որոշուած են։ դա մի քննութիւն է և ոչ մրցումն։ Գերմանիայում մրցումն չկայ, դա կհակասէր համալսարանական հաստատութիւնների հոգուն, որ է դուռը բաց թողնել ամենայն ընդունակութեան համար, որպէս զի ոչինչ բացի դասատվութեան պահանջներից չահմանափակէր այն տնձանց թիւը, որոնք կամենումեն զբաղել։ Պրիվատ—դոցենտները ուրիշ ոչինչ եկամուտ չունին բացի ուսանողներից ստացած վարձը, և կորցնումեն իրանց տիտղոսը, եթէ երկու տարի շարունակ դասախօսութիւններ չկարդան։ Ինչպէս էքսթրաորդինար—պրոֆեսորները լրացնումեն դասատվութիւնը, սոքա նոյն դասատվութիւնը պէսպէսացնումեն։ Պրիվատ—դոցենտները շատ անգամ նոյն առարկաների մասին ենդասախօսութիւններ կարդում որպէս և պրոֆեսորները։ Առհասարակ շատ սովորական բան է որ մի ֆակուլտէտում մի քանի դասախօսութիւնների ընթացքներ կարդացուին միևնոյն առարկայի մասին։ Այդ բանը մի տեսակ մրցումն է առաջ բերում պրոֆեսորների մէջ, որ խիստ օգտաւէտ է ուսանողներին։ Երկու կողմից և լիակատար աղատութիւն. վարժապետը ուսուցանումէ այն, ինչ որ կամենումէ և ինչպէս կամենումէ, աշակերտը գնումէ այնտեղ ուր օգուտ և ծախսի խնայողութիւն է տեսնում։ Մի հետաքրքրելի կանոն թոյլ է տալիս ուսանողին վեցամսեակի առաջին տասն օրը ձրի (gratis) յաճախել ֆակուլտէտի բոլոր դասախօսութիւնները։ Այս ժամանակէտի վերջին միայն նա պարտաւորուած է ընտրողութիւն անել և դրուել։ Միայն մի ընթացքին ներկայ դանուելու վկայագիրը, թող դա լինի պրիվատ—դոցենտից կամ մինչև անգամ մի այլ համալսարանից, իրաւունք է տալիս ուսանողին քննութիւն

տալ և երբէք քննողը վատ աչքով չէ նայում եթէ ուսանողը նորա դասախօսութիւնները չի լսել։

Գերմանական բարձր դասատուութեան վրայ այն նախատինքն են դրել, որ նորա գինը աւելի բարձր է քան թէ օրինակ Ֆրանսիա կամ մինչև անգամ Ռուսաստան։ Այո, ի հարկէ, այն վարձը որ իւրաքանչիւր վեցամսեակի սկզբում պրոֆէսօրներին վճարվում է, անցնում է շուտով այն գումարից, որ վճարում է, օրինակ, Ֆրանսիայի ուսանողը։ Բայց պէտք է ամենայն բան աչքի առաջ ունենալ, թէ ժամերի թիւը, որ պրոֆէսօրը նուիրում է իւր դասախօսութիւններին, թէ լսողների թիւը և թէ վերջապէս այն յարմարութիւնները, որ ունի գործնական դասատուութիւնը։ Այս կերպով կարելի է շատ հեշտ համոզուիլ որ գերմանական ուսանողի փողը աւելի լաւ է գործ դնվում, և կրթութեան այն չափը որ նա Ֆրանսիայում, էլ չենք ասում Ռուսաստան, նոյն գնով կարող է ունենալ, չի կարելի համեմատել այն կրթութեան հետ, որ ստանում է Գերմանիայում։ Աւելացնենք որ երբ մարդս ուզում է մի երկրի ուսման գնի նշանակութիւնը հասկանալ, բաւական չէ իմանալ թէ ինչ արժէ ուսումնարանը, պէտք է խելամուտ լինել թէ ուսումնարանական ծախսերը ինչ տեսակ կապ և յարաբերութիւն ունին տեղափոխուելու և մանաւանդ կենցաղավարութեան ընդհանուր ծախսերի հետ։ Պարզ է որ Գերմանիայի փոքրիկ համալսարանական քաղաքներում չքաւոր ուսանողները արժան կեանք են վայելում։ Մի քանի համալսարաններ, օրինակ Գրայֆսվալդը, յաճախում են համարեա թէ միայն չքաւոր ուսանողներ, այն ինչ Բոնն և Հէյդելբերդ աւուր գինի են խմում ժողովում է հարուստ երիտասարդութիւնը։ Վերջապէս աչքի առաջ պէտք է ունենալ մի քանի կարգադրութիւններ որոնք Գերմանիայում աւելի փոքրացնում են միջին ծախսը։ Պրոֆէսօրը իւր կամքով կարող է ուսանողին բոլորովին ազատել վճարելուց։ Նա այդ բանն անում է միշտ այն օտարացիների վերաբերութեամբ, որոնց նորան ներկայացնում են։ Պ. Պուշէն պատմում է որ ամենայն տեղ գտել է այս տեսակ գիտնական հիւրասիրութիւն։ Մենք համոզուած ենք որ ոչ մի փոքր ի շատէ ունևոր օտարացի ի հարկէ օգուտ չի քաղել այդ հիւրասիրութիւնից, համոզուած լինելով որ պրոֆէսօրին վճարած փողը նորա անխոնջ աշխատանքի գլխաւոր վարձն է։ Մի ուրիշ սովորութիւն ազատում է պրոֆէսօրի և համալսարանի ուրիշ պաշտօնակատարների (մինչև քարտուղարի) օրգոց։ Ինքը ֆակուլտէտը

և՛ կարող է բոլորովին կամ կիսով չափ ազատել ուսանողին պրոֆեսորին վարձ վճարելուց. այդպիսի ուսանողը պէտք է ապացուցանէ իր չքաւորութիւնը և մի առանձին քննութիւնով իւր կրթութեան և ընդունակութեան վկայութիւնը տայ։ Հաշուում են որ գերմանական ուսանողների վեցերորդ մասը օգուտ են քաղում այդ արտօնութիւններից։ Ուսանողներին ուսումի ծախսից ազատելու համար ֆակուլտետների մեծ մասը ունին թոշակաւորների մայր գումարներ տերութիւնից, համայնքներից և մասնաւոր անձինքներից նուիրած։ Գրայֆսվալդը, որի համալսարանը յաճախում են 350 ուսանող, 40 թոշակաւորների մայր գումար ունի։ Այդ գումարները մրցմամբ բաժանում են այն ուսանողների մէջ, որոնք աղքատութեան վկայականներ են ներկայացնում։ Կան և ուրիշ աւելի սոյորին կարգի հաստատութիւններ. քաղաքի հիւրանոցներից մէկում համալսարանը իւր ձեռքի տակ ունի մի քանի անձանց ձրի կերակրելու իրաւունք, որ նա իւրաքանչիւր վեցամսեակ տալիս է մի առանձին քննութեամբ աղքատ ուսանողներին։ Ցիշենք վերջապէս այնպիսի հիմնարկութիւններ, որոնք նոր հոգւով կազմուած, զօրեղ ապացոյց են այն մշանջենաւոր խնամատարութեան, որ ունի ընդհանուր մայրը, alma mater, իւր անբաղդ որդոց համար։ 1863 թուից Հէյդելբերգ գտնվում է մի ընկերութիւն հիւանդ ուսանողների համար։ Պրոֆեսորները այդ ընկերութեանը մասնակից են։ Ուսանողները իւրաքանչիւր վեցամսեակ վճարում են մի տեսակ հարկ որ 30 կրէյցերից (20 կոպ.) աւելի չէ, իսկ եթէ աղքատ են բոլորովին ազատվում են վճարելուց։ Պրոֆեսորները նուիրում են գործին իրանց ժամանակը, խնամքը և բարի կամքը։ Քաղաքի հիւանդանոցում տկարները մի առանձին դահլիճ ունին, նոքա իրանց ուղեցած բժշկին են ընտրում։ Ունևորները փող են վճարում իսկ չքաւորներին բժշկում են ձրի։ Ընկերութեան խորհուրդը կազմում են պրօրեկտորը, բժշկական ֆակուլտետի երկու պրոֆեսոր, քաղաքի մի բժիշկ, սենատից ամենայն տարի ընտրուող երկու պրոֆեսոր և հինգ ուսանող։ Այն իրողութիւնը որ քաղաքի մի բժիշկ խորհրդի անդամ է, կարծես հակասութիւն է համալսարանական ընկերութեան հին սովորութիւններին, և այդ կարող է յառաջադիմութեան համարուիլ։

Եթէ մենք այստեղ յիշեցինք այն յարմարութիւնները, որ գտնում են Գերմանիայում ուսանողները, մեր նպատակը կրթութեան սիստեմի մի կողմը նկարագրելը չէր. մենք ուզում էինք ցոյց տալ

այն սիրայիր համակրութիւնը որ բարձր ուսումը գտնում է ժողովրդի սրտի մէջ։ Ի հարկէ օգնութիւնները, թոշակները, ամէն տեսակ քաջալերութիւնները, հրապարակական վարձատրութիւնները նպաստում են ուսման և գիտութեան յառաջադիմութեան, բայց գլխաւորը դասատու անձանց թիւն է, նոցա արժանաւորութիւնը, անկախութիւնը և այն ժամանակը որ նուիրում են աշակերտներին։ Անհրաժեշտ կարևորութիւն ունի մանաւանդ որ դասատուութիւնը այնպիսի պայմանների մէջ լինի որ կարողանայ ենթարկուել պատշաճաւոր փոփոխութիւններին։ Ռուսական բարձր դասատուութիւնը, որ միշտ կառավարութեան ձեռքումն է եղած, նոյնն է այսօրուայ օրը ինչ որ քանի տարի առաջ. Գերմանիայում ընդհակառակը, կրթութիւնը զանազան արգելքներից ազատ, հենց միայն համասարանների փոխադարձ ազդեցութեան և մրցման պատճառով, ոչ մի օր չէ դադարել փոխակերպուելու, լայնանալու, բարւոքուելու։ Վերջին յիսուն տարում դասախօսութիւնների ընթացքների թիւը կրկնապատկուել է։ Իրաւաբանական և աստուածաբանական ֆակուլտէտները համարեա թէ անփոփոխ են մնացել, բայց բժշկական և փիլիսոփայական ֆակուլտէտների մէջ, որոնք առաւել կապուած են ժամանակի ընթացքի հետ օր ըստ օրէ աւելացրել են դասատու անձանց թիւը։ Բերլին 1862 թուի յունվարի մէկին բժշկական և փիլիսոփայական ֆակուլտէտների պրօֆեսօրների և պրիվատ—դօցենտների թիւը 127 էր, 1864 թուին նոցա թիւը 140 էր, այսինքն երկու տարում 13 պրօֆեսոր աւելացան և որովհետև իւրաքանչիւրը միջին թուով դասախօսութիւնների երկու ընթացք է կարդում, ուրեմն իւրաքանչիւր վեցամսեակում 36 ընթացքով աւելացաւ դասերի թիւը։ [1])

Բ.

Գերմանիայի համալսարանները մի որոշ նախագիծ չունին։ Այս կէտը շատ կարևոր է։ Ամբիոններ բառի բուն նշանակութեամբ չկան, այլ կան միայն պ ր օ ֆ ե ս օ ր ն ե ր. դասախօսութիւնների մի որոշեալ միաւորութիւն չէ կազմում ֆակուլտէտ ասած բառը, այլ վերջինս պրօֆեսօրների ժողով է որ ուսուցանում է իւր ցանկութեան

1) Ռուսաստանում 1874 ին պարապ ամբիոններ կային. Պետերբուրգի համալսարանում 12, Մոսկվայի 18, Խարկովի 36, Ղազանի 43, Կիէվի 33 Օդեսայի 21, Դօրպատի 7, Վարշավի 4, ընդ ամէնը 174։

համեմատ։ Երբ գիտութիւնների մէջ մի նոր ուղղութիւն է երևան գալիս ոչ միայն նոր մարդիկ են աւելանում դասատու անձանց թուին, այլ իւրաքանչիւր պրոֆեսոր ինքն է փոփոխում իւր դասերը ժամանակի ընթացքին համեմատ, նա ստիպուած չէ յարմարուիլ, սակայն հենց արտաքին կերպով, մի նախագծի որ դուցէ քսան և աւելի տարի առաջ մի նախարար վաւերացնելով իրրև հրահանգ է տուել։ Եթէ նա սխալվում է, եթէ այն ուղղութիւնը, որին հետևում է վատ է, պրիվատ-դոցենտները իրանց տեղն են։ Նոքա կաշխատեն — այդ նոցա օգուտն է — օրդինար և էքստրա-օրդինար պրոֆեսորի դասատուութեան պակասորդը լրացնել։ Եթէ մի պրոֆեսոր մեռնում է, համալսարանը իրան ստիպուած չէ համարում նշանակել նորա տեղը մի օրինաւոր բայց միջին ընդունակութիւնների տէր մարդ, որի գլխաւոր արժանաւորութիւնն այնէ, որ ուշի ուշով հետևել է մնացուած ճանապարհներին։ Ֆակուլտէտը իրան ստիպուած չէ համարում անպատճառ շարունակելու ինչպէս և լինի այս կամ այն դասախօսութիւնը։

Գերմանական դասատուութեան մէջ, պրոֆեսորի ազատութեան շնորհիւ, որ նոյն իսկ կրթութեան հիմքն է, մենք տեսնում ենք մի տեսակ բազմատեսակութիւն, պէսպիսութիւն և յարմարութիւն որ ամենալուսաւորեալ և խիստ նախատես կենտրոնական վարչութիւնն անգամ երբէք չէ կարող իրագործել։ Գիտութիւնների ամենայն ճիւղ, որքան և մասնագիտական լինի, երբէկուայ ծնունդ մինչև անգամ, քաղաքացութեան իրաւունք ունի համալսարանում և դրաւում է դէպի իրան ուսանողներ։ Մենք կցանկանայինք առաջ բերել այստեղ մի ամբողջ ցուցակ այն ընթացքների, որ վերջին վեցամեակում մատակարարվում էին մի մեծ փիլիսոփայական ֆակուլտէտում։ Այդ ցուցակում կարելի է տեսնել բնագիտական, պատմական, հասարակական գիտութիւններ, որոնք ժամանակի ուղղութեան և պահանջների համեմատ տեղ են բռնում։ Դասատուութիւնը ամեն տեսակ ձևեր է ընդունում։ Այս ինչ պրոֆեսոր բացադրում է մի աշխատասիրութեան սկզբունքներ որ շատով պէտք է հրատարակի, այն ինչ պրոֆեսորը պատմում է իւր արած ճանապարհորդութիւնը։ Հազուադիւտ բան չէ, որ օտար գրականութեան մասին դասախօսութիւնները նոյն իսկ օտար լեզուով լինին, օրինակ Ֆրանսերէն, կամ իտալերէն, անգլիերէն։ Մի քանի հին պրոֆեսոր դասախօսութիւնները լատիներէն են կարդում։ Գրա-

գում երիտասարդ պրիվատ-դոցենտներ կան որոնք չէխական լեզուով են դասատուութիւն անում:

Իւրաքանչիւր պրոֆեսոր սովորաբար, զանազան դրամական պայմաններով, երկու կամ մինչև անգամ երեք դասախօսութիւնների ընթացքներ է կարդում: Ցուցակների մէջ այդ ընթացքները անուանվում են publice, privatim, privatissime. Publice դասախօսութիւնները նոքա են, որոնց համար ուսանողը ուսումնարանական վարձի մինիմումն է վճարում: Բոլորից բազմաթիւը դոքա են: Միւսների նիւթը ընդհանրապէս գիտութեան մի մասնագիտական ճիւղ է կամ մի գործնական նշանակութիւն ունեցող հարցը: Շատ անգամ դա իսկապէս մի երկրորդ դասատուութիւն է: Այս ինչ պրոֆեսորը իւր ընթացքներից մէկում ուսուցանում է Օդաերևաբանութիւն իսկ միւսում փորձնական ֆիզիկա: Բօպպը կարդում էր իւր publice դասախօսութիւնները սանսկրիտի մասին իսկ privatim դասերը յունական լատինական և գերմանական համեմատական քերականների մասին:

Ընդհանրապէս ձևին մեծ նշանակութիւն չեն տալիս: Դասերը ատենաբանական ճառեր չեն: Պրոֆեսորների միակ հոգն է, որ նորան հասկանան: Մեծ քաղաքներում մի քանի պրոֆեսոր փորձ փորձեցին ձեռք վեր առնել համալսարանական պարզութիւնից, դրաւելով դէպի իրանց դուրսի ժողովուրդը: Մենք ականատես եղանք Բերլինում, պատմում է մեր յիշած հեղինակը, Դիւբուայ—Բայմոն (Du Bois-Reymond) ֆիզիօլոգի այդ տեսակ մի փորձին: Համալսարանի մի մեծ լսարանում, ուր միայն 360 մարդու տեղ կար ժողովուել էին Բերլինի բնակիչները: Ուսանողների թիւը շատ փոքր էր, հանդիսականները մեծ մասամբ հասակաւոր մարդիկ էին, գիտութիւններ սիրող, համալսարանի հին աշակերտներ, որոնք վայելչութեամբ տեսնում էին այն պատերը որոնք վկայ են եղել նոցա երիտասարդութեան պարապմունքների: Պարոն Դիւբուա Բայմոնը կարդում էր իւր դասը և աշխատում էր ճարտար լինելու: Դասերի նիւթն էր բիօլոգիական գիտութիւնների մէջ իրագործուած ամենանոր առաջադիմութիւնները: Մարդուս հնութիւնը, պալեոնտոլոգիան և շատ ուրիշ բաներ յիշվում էին դասերի մէջ: Կարդալու այս ձևը, որի մասին կարող են Սորբոնի դասախօսութիւնները մի գաղափար տալ, այն զանազանութեամբ միայն որ կանայք ներկայ չէին և որ փորձեր չէին անում աչքը զուարճացնելու համար,—բոլորը միայնդամայն հակառակ էր համալսարանական

հին սովորութիւններին և այն պատճառով մի քանի փոքրիկ անբաւականութիւններ ծնեցրեց:

Ուսանողները տեսնելով, որ երևելի Ֆիզիօլոգը այս տեսակ ամէն բանի մասին խօսում էր, ասում էին ժպիտը երեսին, որ նա աշխատում է Հումբոլդտի ժառանգը հանդիսանալ: Նոքա ասում էին նաև որ այդ սիրողների խմբին մատակարարող դասերը, ոչինչ օգուտ չէին բերում գիտութիւնների յառաջադիմութեան և պարոն Դիւբուա-Բայմոնը աւելի լաւ կանէր այնպիսի մարդկանց ձեռքին թողնել գիտութիւնների ժողովրդացնելը, որոնք ինչպէս նա պատիւ չեն ունեցել դոցա առաջացնելուն:

Գերմանիայում ոչ մի տեղ այնպիսի մեծ լսարաններ չկան, ինչպէս մենք պատահում ենք Փարիզ և միւս մեծ քաղաքներում: Դասերի դահլիճները փոքր են, շատ անգամ անյարմար դնտեղուած և վատ լուսաւորված: Իսկապէս ամենայն տեղը յարմար է համարվում դասախօսելու համար: Պարոն Զիբօլդը Մինխենում կարդում էր իւր դասերը թանգարանի տանիքի տակ մի փոքրիկ սենեակում: Դասերի խիստ մասնագիտական նիւթը, ուսանողների փոքր թիւը այդ ամենը ծնում է մի տեսակ սերտ յարաբերութիւններ վարժապետի և աշակերտի մէջ: Մի քանի տարի է որ Գեօտինգենի արևելագէտ Պ. Եվալդը հիւանդութեան պատճառով չէր կարող տանից դուրս գալ և դասերը իւր սենեակումն էր կարդում: Աշակերտները անկողնու չորս կողմը ժողովուած գրում էին, իսկ տիկին Եվալդը տան խնամքներով էր զբաղուած: Պատահում է շատ անգամ, որ մինչև անգամ publice դասախօսութիւնները այսպէս ընտանեբար տեղի ունին պրոֆեսորի տանը: Էրլենբերգի դասերին հինգ կամ վեց մարդ էինք գնում, պատմում է մեր յիշած գիտնականը: Նա ընդունում էր մեզ իւր առանձնասենեակը որ լի էր խոշորացոյցներով, գրքերով և ջրածինների լցուած փողկներով: Նախ խօսք էր ընկնում նախընթաց ժողովի վրայ, ուսանողները բացատրութիւններ էին խնդրում. շատ անգամ հարցից շեղվում էին, փողկների մէջ մի անասուն էինք որոնում, գտնում էինք մի այլ անասուն և դասը կրկին շեղվում էր կամ առիթ էր տալիս գիտութեան մի մութ կողմը պարզելու. նոյն նստի ժամանակ քրքրում էինք գրատունը՝ և վերջ ի վերջոյ այդ ընդհատուած դասերը պատուական և օգտաւէտ դասեր էին:

Արտաքին շքեղութեան այս արհամարանքը, այս բարեհոգութիւնը ձևի բան չէ այլ մի սերտ կապ ունի նոյն իսկ գերմանական

դասաւորութեան էութեան հետ։ Վարժապետը ուսուցանում է այնպէս ինչպէս ինքը աշխատասիրում է։ Նորա դասախօսութիւնը իւր մեծագոյն բացատրութիւնն է։ Ինքը մտնում է իւր ընտրած նիւթի խորքը և այսպիսով ցոյց է տալիս թէ ինչպէս պէտք է խորասուզուիլ գիտութեան մէջ։ Ասում են որ գերմանական պրոֆէսօրը «բարձր ձայնով աշխատում է» իւր աշակերտների առաջ։ Այդ խօսքը շատ ճիշդ է։ Ռուսաստան պրոֆէսօրները բաւականանում են հաղորդելով գիտութեան արդասիքը և պաշտօնական նախանդծի վրայ հիմնուելով ձևակերպում են ֆակուլտէտի դասախօսութիւնները։ 1868 թուին ֆօն Զիբելը, Բոննի համալսարանի պատմութեան պրոֆէսօրը, իւր գերմանական և օտար համալսարանների վերայ արած ատենաբանութեան մէջ խստութեամբ քննադատեց ֆրանսիական սիստեմը, որին այդ կողմանէ մօտենում է և ռուսականը։ «Ֆրանսիայում, վարժապետը առաջարկում է ունկնդիրներին իւր շատ անգամ երկարատև և բազմարդիւն հետազօտութիւնների արդասիքը։ Բայց նա ոչինչ չէ ասում այն մնաւոր միջոցների մասին որոնցով հասել է այդ արդասիքներին։ Գերմանիայում, ընդհակառակը աշխատում են գլխաւորապէս ուսանողին սովորացնել մի դիտութեան մեթոդը։ Աշխատում են նորան ոչ թէ այնտեղը հասցնել, որ ինքը գիտնական դառնայ, այլ տալիս են նորան մի պարզ դաղափար թէ գիտութեան խնդիրների և թէ այն միջոցների մասին որոնցով լուծվում են այդ խնդիրները»։ Ընդհանրապէս խօսելով պարոն ֆօն Զիբելի նկատողութիւնները հիմնաւոր են։ Նորա սխալն այն է որ տարածել է իւր միտքը ֆրանսիական ամբողջ դասաւորութեան վերայ։ Բացառութիւններ կան։ այստեղ կարելի է յիշել Collége de France'ի այնպիսի դասախօսութիւններ որոնք ճշդապէս համապատասխանում են պարոն Զիբելի կաղմուած դաղափարին։ Այստեղ էլ երբեմն պրոֆէսօրը մի որոշ նախագիծ չունի։ Նա ուսուցանում է այն, ինչ որ կամենում է, մի ամենամասնագիտական առարկայ կամ մի ամենամութ հարցը աշխատում է պարզել լսողների հետ միասին։ Նորա լսարանը դառնում է դասի ժամերին նորա գործարանը՝ չգանելով բազմաթիւ լսողներ այդպիսի դասերի համար նա հետևողներ ունի, նա մի ուսումնարանի գլուխ է հանդիսանում։ Այդ է բարձր դասաւորութիւնը իւր վեհ դաղափարներով։

Մինչև այստեղ մենք ներկայացրինք գերմանական համալսարանը որպէս դասաւորութեան մի հրաշալի մեքենայ, բայց դա է մի այլ

բան ևն: Միայն իսկական արժանաւորութիւնը ամենայն յառաջադիմութեան պայման համարելով, համալսարանը հիմնել է երկրի գիտնական մեծութիւնը: Պրիվատ-դոցենտը միայն մի հնար ունի առաջանալու, այն է՝ որ անուն ստանայ իւր հետազօտութիւններով, իւր մրցակիցներից աւելի լաւ աշխատանքներով: Նա գիտէ որ իւր գիտնական արժանաւորութիւնը չի կարող երկիւղ կրել ոչ խարդախութիւնից, ոչ աչքից ընկնելուց, ոչ ատեանների և ոչ մի հեռու կառավարչի կարծիքներից, որ մի քանի շրջապատող մարդկանց հաւատ է ընծայում: Նորա դատաւորները նորա հաւասարներն են, այսինքն մի ուրիշ ֆակուլտէտի պրոֆեսորները. բացի այդ հասարակական կարծիքն էլ միշտ հսկում է: Գիտնական լրագիրները և հանդէսները հեռու տեղեր են հասցնում նորա աշխատասիրութիւնների արգասիքը, ուսանողները տարածում են նորա դասատուութեան համբաւը: Ապագայն նորան է պատկանում, նա ժամանակով պատուաւոր կամ գոնեա օգնական պրոֆեսոր կ'դառնայ: Ոչինչ իշխանութիւն, ոչ մի կուսակցութիւն չի կարող խանգարել նորան: Օրինակ չկայ որ մի արժանաւոր մարդ բոլոր ժամանակը պրիվատ-դոցենտ լինի մնացած: Մեծ համալսարանի պրիվատ-դոցենտը առանց երկիւղի թողնում է իւր տեղը, նա հարկաւորութիւն չունի այնտեղ բարեկամներ կամ մի զօրեղ հովանաւոր ունենալու, որպէս զի մի օր կրկին հրաւէրք ստանայ դասախօսելու. նա համոզուած է որ նորան կ'հանեն փոքր համալսարաններից ինչպէս են Գիսսէնը, Ռոստօկը, Մարբուրգը, եթէ արժանաւոր է: Եւ այս փոքրիկ քաղաքների խորին անդորրութեան մէջ, «ուր բնակվում են, ինչպէս ասում էր Գեօթէն, պրոֆեսօրներ, ֆիլիստերներ, ուսանողներ և անասուններ» նա անվրդով աշխատում է, նա գործում է, նա անուն է ստանում: Ոչինչ չէ խանգարում նորան, աշխարհիս կեանքի ձայնը հազիւ է հասնում նորա ականջին: Մի օր եւրոպական հռչակաւոր անատոմ Բիշօֆը գանգատվում էր որ Միւնխէնը իբրև մեծ քաղաք շատ ժամանակ է խլում իրանից....: Այսքանը հաստատ է որ եթէ գերմանացիք այդ քաղաքը հիւսիսի Աթէնք են անուանել հասարակական հրապարակների կենդանութեան պատճառով չէ: Պարոն Բիշօֆը ափսոսալով միայն էր բերում իւր կեանքը Երլանգենում, ուր իւր գեղեցիկ հետազօտութիւններն էր արել և բացի այդ ստեղծել էր մի անատոմիկական ժողովածու: Նա մեզ պատմում էր, ասում է Ֆրանսիայի մի գիտնական, թէ ինչ աղմուկ բարձրացրեց մի սատկած տիտեան (կոկորդիլոս),

ուղարկուած էր իրան փարիզի Մուզէումից։ Թէ նորա օգնականները, թէ նորա աշակերտները դիշեր և ցերեկ չարաչար աշխատում էին որպէս զի թանդարին անասունից և ոչ մի կտոր չկորչի։ Դորանից հանեցին բազմաթիւ պրեպարատներ, որոնք այսօրուայ օրը լցնում են անատոմիկական ժողովածուն։ Ահա կեանքը, ահա երևելի անցքերը այդ հանգստարանական աւաններում, որոնցով անց են կացել Գերմանիայի ամենահռչակաւոր մարդիկը։ Ամբողջ օրը իրանց աշխատութիւններով և դասատուութեամբ զբաղուած, երիտասարդ պրոֆեսօրները երեկոյները հաւաքվում են պանդոկը, հաղորդում են միմեանց նոր գիտնական լուրեր, վիճում են, հիմնական մտքերը աւելի հաստատութիւն են ստանում և այս յարաբերութիւններից յառաջանում է աւելի մեծ եռանդ միւս օրուայ հետազոտութիւնների համար։

Մենք աշխատեցինք մի ընդհանուր գաղափար տալ գերմանական համալսարանների կազմակերպութեան մասին. մեր հանդէսի հետևեալ համարներում ընթերցողը կգտնի յօդուածների մի շարք, որոնք մանրամասն կքննեն բարձր ուսման հարցը, որ կեանքի ուսմունքն խնդիր է մեզ համար։

ԾՆՈՂՆԵՐ ԵՒ ԿՐԹԵԱԼ ՈՐԴԻՔ

Այս ընթերցուածների վիճաբանական ձեր և մասամբ նիւթը առնուած է ֆրանսիական մատենագիր Լեգուվէի «Les pères et les enfants du XIX siècle» վերնագրով գրուածքից։ Այդ գրուածքի մի գլուխը առիթ տուեց մեզ մի թեթև հայեացք ձգել մեր հայերիս ծնողների և կրթեալ որդոց ընտանեկան յարաբերութիւնների խնդրոյն։ Մեր կարծիքով, այդ հարցի մէջ միակողմանի յարձակմունքները միայն ծնողների դէմ, գրգռողական ձեր՝ գուցէ զարթեցնում են ընթերցասիրութիւն, բայց խնդիրը թերի են թողնում, և գլխաւորը՝ ժողովրդի գիտակցութեան մէջ մի հիմնաւոր յարատև բարոյական ազդեցութիւն չեն տալաւորում։ Այդպիսի հարցեր քննելիս մեր մատաղ գրականութեան ասպարիզում, շատ յարմար է առհասարակ «դիալոգի» ձեր, որ ընթերցողին քարշում է վիճաբանութեան, և հարկաւ ինքնուրոյն մտածողութեան աւելի նպաստում։

I.

Ամեն հայր, որ խղճի մտօք կատարում է իւր պարտականութիւնները դէպի իւր զաւակները, ոչինչ չէ խնայում—ո՛չ դրամ, ո՛չ աշխատութիւն և եռանդ իւր որդիքը բարեկրթութեան մէջ դաստիարակելու և իւր հասարակութեան համար աղնիւ, որոշեալ բնաւորութեամբ օգտաբեր անդամներ պատրաստելու. այդպիսի մի հայր, ասում եմ, չէ կարող անտարբեր և անուշադիր մնալ միւս առաւել խեղճ չքաւոր կամ անկիրթ հայրերի դրութեան. նա հարկաւ կաշխատի նկատել, համեմատել և քննել թէ ի՞նչ դէպքեր են պատահում և ի՞նչ յարաբերութիւններ կան ուրիշ ծնողների և նոցա որդոց մէջ։

Ահա այս մտքերով պաշարուած մի օր ուղղակի գնում եմ բարեկամիս դուռը խփում։ Այս մարդը մեր կեանքին շատ մերձ ծանօթ էր և երկար ժամանակ մեր որդոց՝ մեր նոր սերունդի կրթութեան ղեկը իւր ձեռին ունէր. այժմ տեղական մի ճեմարանի (գիմ-

նազելօնի) տեսուչ էր։ Իմ մտատանջութեանը և կասկածներին փարատութիւն տրանից լաւ՝ ո՞վ կարող էր տալ։

Պարզապէս սկսեցի խօսակցութիւնս։

—Քանի՞ ժամանակ է որ դու դաստիարակութեամբ ես պարապում։

—Ահա 15-տարի կը լինի։

—Ի՞նչ դասակարգի աշակերտներ ըստ մեծի մասին քո հսկողութեան տակ են եղել մինչև այժմ։

—Վաճառականների, արհեստաւորների, մանր աստիճանաւորների, մշակների և այլ այսպիսիների որդիք։

—Ի՞նչ գիտութիւններ էիք աւանդում ձեր ուսումնարանների մէջ։

—Զանազան արուեստներին և բնութեան վերաբերեալ գիտութիւններ, նոր լեզուներ, ծանօթութիւն գրականութեան և պատմութեան առհասարակ։

—Ուրեմն որդիքը առաւել լուսաւորուած և կրթուած պէտք է լինէին քան ծնողները։

—Շատ և շատ առաւել։

—Եթէ այդպէս է, խնդրեմ ինձ անկեղծօրէն պատասխանիր, այդ անհաւասարութիւնը ի՞նչ ազդեցութիւն է անում մեր դերդասանների վերայ. այդ ազդեցութեան տակ մեր դերդասանական զգացմունքները և կապերը մնում են ամուր, թէ թուլանում են արդեօք։

Բարեկամս մի վոքր մտածելուց յետոյ շտապով պատասխանեց։

—Վտանգաւոր և թուլացնող ազդեցութիւն։

—Վտանգաւո՞ր.... զարմացած հարցրի նորան.... Եւ ինչ բաների մէջ է երևում այդ վտանգը.... պատասխանիր խնդրեմ։

—Այդ անհաւասարութիւնը խախտում է որդոց ունեցած պատկառանքն ու մեծարանքը դէպի ծնողները, առանձնացնում է և հեռացնում մինչև անգամ որդոցը ծնողներից. և շատ անգամ այս վերջինները դերի է շինում առաջինների կամքին, թէև մի այլ դասի մէջ ընդհակառակն էլ է պատահում։

—Քո ասածը բացատրութիւններ են, պարոն, կարեցի խօսքը։

—Այո՛, քանից 12-ն այդպէս է լինում։

—Ի՞նչ.... քանից 12-ն. այդ միանգամայն զարհուրելի բան է։ Զարմանում եմ դարձեալ, որ այդ բանը քեզանից եմ լսում. դու, որ քեզ համարում ես լուսաւորութեան մշակներից մինը. դու, որ

քարոզում ես դատիարակութիւն, հրաւիրում ես դէպի դատիարակութիւն, 15 տարի է, որ այդ իսկ դատիարակութեան մէջ ես ապնած,—այդ դո՞ւ ես ասում թէ դատիարակութիւնը կամ կրթութիւնը քանդում է մեր ժողովրդի վերջին հիմքը, ինքնուրոյնութեան վերջին ապաստանարանը, այն է դերդաստանը: Եթէ այդպէս է, ինչո՞ւ ուրեմն այդքան ժամանակ ծառայում էիր այդ վտանգաւոր գործին:

—Թոյլ տուր, եղբայր, դեռ խօսքս վերջացնեմ, յետոյ դատիր ինձ, ինչպէս կամենաս: Ես հաւանում եմ և հիանում ծնողների այն յօժարութեանը, որով նոքա ամեն կերպ աշխատում են փրկել իւրեանց որդոցը մոռաւոր չքաւորութիւնից, այն չքաւորութիւնից, որ իրանց նեղութեան և թշուառութեան գլխաւոր պատճառն է եղել միշտ: Ես հաւանում եմ որդոցն էլ, որոնք ձգտում են ուսանել, իմանալ այն, ինչ որ իւրեանց ծնողները չը գիտէին: Հաւանում եմ և հասարակութեան այն կարգին ու սովորութեանը, որ ջատագովում է մի կողմից ծնողական զգաբերութիւնը, միւս կողմից որդիական ինքնասիրութիւնը և յառաջադիմութիւնը: Ես արդար եմ համարում և օրինաւոր այն աւետարանական եղանակը, որով յետինք լինին առաջինք և ներքին դասերը բարձրանում են փոքր առ փոքր դէպի լոյսը: Բայց այնու ամենայնիւ իմ 15 ամեայ փորձը անխաբ ինձ ցոյց է տալիս այն անուրանալի փաստը թէ կրթութիւնը իրաւի բարձրացնում է որդոցը, բայց մի և նոյն ժամանակ և քանդում է նոցա դէպի իւրեանց գերդաստաններն ունենալու յարաբերութիւնների բարոյականութիւնը:

Այս խօսքերից՝ ես դարձեալ վեր թռայ տեղից...

—Մի շտապիր, եղբայր, թող միտքս աւելի պարզեմ: Իմ ակնարկութիւններից տեսնում ես, որ ես խօսում եմ որդիական առաքինութիւնների անհետանալու մասին. ծնողական առաքինութիւնները ընդհակառակն այս նոր դրութեան մէջ առատանում են և մեծանում, նոյն չափով համարեա, ինչ չափով որ պակասում է որդիականը:

—Ծնողական առաքինութիւններ... բայց դու միտդ բեր մեր ծանօթների կեանքից թէ՝ քանի քանի ծնողներ իւրեանց կրթուած և դատիարակուած որդոց բարոյական ոյժերը խեղդում են և մաշում, յամառութեամբ և ինքնակամութեամբ նոցա բարակացուի մէջ ձգում և մինչև իսկ ինքնասպանութեան հասցնում... Այդպիսի

ծնողները կամ ճիշդ ասել՝ այդպիսի հայրերն են, հարցանում եմ քեզ, աւելի արդար և առաքինի իւրեանց որդոց առաջև։

—Եղբայր, այդպիսի ծանրակշիռ հարցերի մէջ, որպիսին է ընտանեկան փոխադարձ յարաբերութեան կամ այսպէս անուանուած «որդոց և հայրերի» խնդիրը, պէտք է առնել ընդարձակ՝ հասարակական կեանքի վերայ հիմնուած՝ հայեացք ունենալ, և ոչ թէ մի քանի բացառութեանց առանձին ուշք դարձնելով միակողմանի եզրակացութիւնների գալ։ Արդարև, կը զանուին քո ասած հայրերից, որ սկզբից կոպիտ և կոշտ բնաւորութեամբ, որ և իցէ յաջողակ դէպքերով արտաքին կրթութիւն են ստացել, ծառայական կամ առևտրական գործերով զանազան ճանապարհորդութիւններ արել, աշխարհ տեսել, մարդ են ճանաչել, անձնական յատուկ այժերով բաւականին բարձրացել և հարստացել,—այնուհետև կարծում են թէ իրանցից խելօք աշխարհիս երեսին ոչ ոք չը կայ։ Զանազան կուսակցութիւնների գաղափարների ծանօթանալով՝ երբ տեսնում են թէ՝ իւրեանց որդիքը կրթութեան շնորհիւ այնպիսի կուսակցութեան են հետևում, որ դեռ մեծ այժ և համարում չէ ստացել, հասարակութեան բարձր շրջանները չէ բռնում, վերջապէս անձնական շահեր շատ չի տալ,—այդպիսի հայրերը իւրեանց իրաւունք են համարում որդոցը փրկել կարծեցեալ խորխորատից. սոցա նոր ձգտումները խեղդել, սոցա անձնական անհատականութիւնը անպատուել և այլն։ Ինչպէս և հասարակ ժողովրդի մէջ կան ինքնահաւան բռնակալ տանտէրեր, որ ամենայն ճշտութեամբ կամենում են հետևիլ աւանդութեամբ և մասամբ օրէնքով ստուած իւրեանց իրաւունքը, այն է՝ որդոց վերայ իբրև սեփականութեան, իրի վերայ նայելու, և ոչ իրանցից առաւել զարգացող և մտածող էակի կամ անհատի։ Այո՛, կան մեր մէջ վերին աստիճանի բռնակալ հայրեր. բայց, որքան ես այժմեան կեանքը ճանաչում եմ ամբողջութեամբ, դոքա օր ըստ օրէ սակաւանում են, և շատ անդամ յաղթվում որդոց ներողամիտ բարոյական վարմունքով և հաստատակամ գործունէութեամբ։ Այո՛, կան այդպիսի հայրեր. բայց միայն դոցա վերայ խօսելով և դոցա անարգելով թերևս զարթեցնում ենք քանի մի մոքեր. այնու ամենայնիւ մեր կեանքի ուշադրութեան արժանի խնդիրը, այն է կրթութեան անհաւասարութեան հետևանքները, պարտով քննած չենք լինիլ. և այդ այդպէս է, քանի որ զանազան դասերի կրթեալ որդոց յարաբերութիւնները դէպի

իւրեանց ծնողները և գերդաստանը նոյնպէս անպաշտաւութեամբ և հոգեբանօրէն հետազօտած չենք: Որովհետև ծնողների և որդոց փոխադարձ ազնիւ յարաբերութեան մէջ կը տեսնուի մի ժողովրդի գերդաստանական առաքինութիւնները. Եւրոպական զարգացումը, ուստի խնդրեմ շրջահայեաց և ընդարձակօրէն նայենք քո յարուցած խնդրին:

— Ինքս այդ խոկ մտքով եմ եկել քեզ մօտ, բայց ցաւում եմ, որ ստիպուած եմ ընդհատելու մեր խօսակցութիւնը հետաքրքրական տեղում, միւս անգամ աւելի թարմ մտքով կը շարունակենք մեր վիճաբանութիւնը: — Ցտեսութիւն:

II.

— Անցեալ անգամ ծնողների և որդոց կրթութեան անհաւասարութեան հարցին դիպչելով, դու եկար այն մտքին թէ՝ կրթութեան շնորհքով որդոց դէպի իւրեանց գերդաստանն ունենալու բարոյական պարտականութիւնները թուլանում, իսկ ծնողական առաքինութիւնները սկսում են տատանել: Ես էլ իմ կողմից ասած առաքինութիւններիդ դէմ շատ մի ծնողական բարբարոսութիւններ միտք ձգեցի, որով կամենում էի կրթութիւնը անմեղադրելի կացուցանել և մեղադրել միայն ծնողների տգիտութիւնը: Այդ միտքը աւելի կապացուցանի կրթեալ օրիորդների վերաբերութեամբ: Արդարև, մի լաւ ուշադրութիւն դարձրու թէ՝ որքան զարհուրելի է մեր այժմեան կըրթեալ օրիորդաց դրութիւնը անկիրթ կամ կիսալուսաւոր գերդաստանների մէջ: Այդ բոլորը ծնողների տգիտութիւնից է, ասում եմ, և ոչ որդոց կրթութիւնից:

— Վերջապէս՝ դու ինքդ հասար այն կէտին, որից մենք դուրս եկանք մեր վիճաբանութեան սկզբում: Կրթութիւնը առաջ է բերում գաղափարների անհաւասարութիւն, անհաւասարութիւնը— մշտական անբաւականութիւն, խորթութիւն և անջատում: Մեր հայեացքի կէտերի զանազանութիւնն էլ այժմ պարզուեցաւ. երկու գործիչ (փակտօր) են՝ որ ծնեցնում են այդ վատ հետևանքները գերդաստանի վերաբերութեամբ, մէկ կողմից՝ կրթութիւն, միւս կողմից՝ անկրթութիւն: Դու կամենում ես անպատճառ մեղադրել վերջինը, ես մեղադրել չեմ սիրում, այլ կամենում եմ քննել և հ ո գ ե բ ա ն օ ր է ն ն ա յ ե լ հարցին: Գործնական կէտին գալով, ես առաւել սրամադիր եմ պահանջներ անել կրթուած սերնդից, որովհետև նա է յառաջադիմութիւն ներկայացնողը, — նա առաւել բարոյական պաշար է

տանում, աւելի և նորանից վլիտի սպասուի: Բայց ի՞նչ ենք տեսնում մեր այժմեան կեանքում. Հրամայեցէք, իրողութիւններին նայենք այժմ, ժողովրդի խորքերում և բազմաթիւ գերդաստանների մէջ հետազօտենք քեզ զբաղեցնող խնդիրը:

Բարեկամս այս խօսքերն ասելով սակաւ ինչ լուռ մնաց, յետոյ աւելի հանդարտ կերպարանքով և փոքր ինչ տխուր հայեացքով շարունակեց կրկին:

— Մեր նոր դրութեան մէջ, երբ ուսումը միայն ազնուականների և շատ հարուստների առանձնաշնորհութիւնը չէ, այլ ամեն դասի իրաւունքն է, մի և նոյն ժամանակ լաւ ուսումնարաններ և վարժապետներ սակաւ լինելուց, ուսումը դեռ բաւականին թանգ է: Այսպիսի հանգամանքների մէջ, երբ տեսնում ենք՝ ջաղացպանի, հասարակ գիւղացու, պանդուխտ պաշտօնների, մանր վաճառականների և աստիճանաւորների որդիք — բժիշկներ, իրաւաբաններ, ագրոնոմներ, վարժապետներ, այս և այն կարգի աստիճանաւորներ դուրս եկած. մի՞կ մտածենք թէ՝ որքան և որպիսի զոհաբերութիւններ են ծնողները յանձն առնում իրենց որդոց մինչև այդ աստիճան կատարելութեան հասցնելը. քանիներով երեսուններով այժմ տեսնում ենք սոցա միջնակարգ ուսումնարաններում այս և այն դասարից, տարիներով նոյն գերդաստանը սպասում է նրանց ուսման աւարտելուն, երբեմն զարմանալի զոհողութիւններ ամբողջ գերդաստանը կրում է մի որդու կրթութեան համար, որ այս տեղ մի առ մի նկարագրելը շատ կը երկարէր: Բայց շահախնդրական յոյսերը՝ մի՞թէ բարոյական մխիթարութեան յոյսեր չունին այդ գերդաստանները իրենց որդկերանցից... Ի՞նչ են բերում տուն այդ ամենի փոխարէն որդիքը:

— Նոքա տուն են բերում լոյսը, պատասխանեցի շուտով. վերանենք փոքր տեղերի այժմեան օրինակաց դպրոցները: Մի աշակերտուհի վերադառնալով ամեն օր դպրոցից իր խեղճ գերդաստանը, որքան քաղաքավարութիւն և մաքրասիրութիւն է բերում իր հետ տուն, որքան նոր յոյսեր և ազնուացնող մտքեր է ածում ամեն անգամ. իրենց դասագրքերից բարոյական առածներ և պատմութիւններ երբեմնապէս երեխաները կարդալով բարձրաձայն ի լսողութիւն իր անգրագէտ ծնողների, որպիսի ուրախութիւն և մխիթարութիւն է բերում նոցա: Այս ամենը մի՞թէ աւելի չէ ամրացնում գերդաստանի մէջ սիրոյ կապերը. իսկ դու ասում ես թէ կրթութիւնը և ուսումնարանները քանդում են այդ կապերը...

—«Այդ սամծները ուղիղ են սկզբնական կրթութեան վերաբերելով, փոքր քաղաքների նկատմամբ, ուր ժողովուրդը ինքն է հըսկում ուսումնարանների վերայ, իսկ դրութիւնը հասկացող վարժապետներ յաջողում է ձեռք բերել, վերջապէս՝ մանրադահան աշակերտների վերաբերութեամբ։ Բայց մէկ էլ, նայիր մեծ քաղաքների մէջ, դուրս գալով սկզբնական կրթութեան շրջանից, մտիր, օրինակ մեր ճեմարանները ահա որտեղ կը տեսնես դու կրթութեան անհաւասարութեան պտուղները։ Դու լաւ գիտես հօ մարդկային սեռի ամենայամառ մեղքերից մինը, որի դէմ շատ դժուար է մաքառել, առաւել ազնիւ զանազան ախտաւորութիւնների, այն է ա ն պ ա ր ծ ո ւ թ ի ւ ն ը։ Ահա այս զգացմունքն է, որ գրգռում է անհաւասարութիւնը։ Երեխան մինչև 13—14 տարեկան դառնալը նեղութիւն չէ կրում այդ կողմից և ոչ նեղացնում ծնողներին. բայց 14—15 տարեկան հասակից արդէն նա փոխւում է, որպէս մարմնով, նոյնպէս հոգով, հէնց որ նորա շրթանցը և ծնօտին երևացին մի քանի մազեր, որոնց մէջն ևս երևան կը գան այն ամեն ախտերը, որոնք սեփական են պատանեկան հասակին, այն է՝ երևալու ցանկութիւն, ժպրհութիւն, ինքնահաւանութիւն, և այն բոլոր պակասութիւնները, որ կը պատկանին «անպարծութեան դասակարգին»։

Մի պատանի միշտ գալիս էր մեր ուսումնարան մի խեղճ և գծուծ հագուստով ծերունու հետ։ Մէկ անգամ նորա ընկերներից մինը հարցրեց—«ո՞վ է այն ծերունին, որ միշտ քեզ ճանապարհ է ձգում»։

—Դա մեր դռնապանն է, պատասխանեց տղան։

Դա նորա հայրն էր....

Գիւղացից մի ճեմարանի աշակերտի մօտ եկել էր իւրեանց քաղաքի պատուաւոր և արժանաւոր անձերից մինը տեսութեան ճեմարանի բակում, ի հարկէ տեղական անշնորհ հագուստով, «փափախը» գլխին ծածկած և այլն։ Պատանին ամենայն արհամարհանօք էր հետը վարվում և խօսում, թէ ի՞նչ է, ընկերները չը կարծեն թէ դա նորան ազգական է կամ մօտ բարեկամ։

Անցեալները Ա. գիւղաքաղաքից մի պառաւիկ եկել էր մի ուրիշ քաղաք իւր որդուն տեսնելու, որ արդէն լուսաւորեալ վարժապետ է նոյն քաղաքում, աստիճանաւոր և այլն։ Սա այդ եկաւոր խղճուկին ծառայի պէս բանեցնում է, դէս ու դէն տոմսակներ է ուղարկում նորա հետ այսպիսի խօսքերով «խնդրեմ այս գրաբերիս հետ ուղար-

կէք... և այլն։ Վերջապէս տոմսակ ստացողներից մէկը, մի օր հարցնում է նորանից «ո՞վ է այդ դրաբերդ»։ Պ. կրթեալը և ազգի լուսաւորիչը պատասխանում է՝ «մեր զիւղացիներից մէկը»։ Դա էլ դուրս եկաւ՝ նորա հայրը։

Այս մօտ օրերս ուսումնարանների վերատեսչի պաշտօնով գնացել էի մեր Ա. փոքրիկ քաղաքը, ինձ ճանապարհակից էր նոյն քաղաքացի մի բարեկամ Մոսկուայի ճեմարանից դուրս եկած, որ ինձ հետ ծառայում է. դա ընդունեց ինձ իւր հարուստ բարեկամներից մէկի տանը. բայց մի խօսքով գոնէ ցոյց չը տուեց նա, մեր բոլոր այնտեղ եղած ժամանակը, թէ՝ հայր կամ մայր ունի այդ տեղում որովհետև նոքա խեղճ և չքաւոր դրութեան մէջ էին. և իւրեանց որդուն սիրելուց շարունակում են առաջուայ դառն աշխատանքով ապրիլ, որպէս զի նորա ուռճկից իրանց հարկաւոր եղած մի աննշան գումար չը վերառնեն, քանի որ ինքը չէ ուզում տալ, կամ չէ կարողանում հասցնել։

Մենք գիտենք և համաշխարհից դուրս եկած հայ երիտասարդ, որ մի նահանգական քաղաքում ծառայելիս, տեղական բարձր դասի անձանց հրաւիրում է իւր քրոջ տուն խնջոյքի, իսկ քրոջն արգիլում է խնջոյքին երևան դուրս գալ, որովհետև նորան արժան չէ համարում այդ դասին մասնակցելու։

Ես շատ առաւել կրթեալ երիտասարդներ եմ տեսել, որոնք ամաչել են իւրեանց մօր հետ դուրսը մանգալու, նորա տեղական կոպիտ հագուստի, և մի քանի ոչինչ պակասութիւնների պատճառով...

Սոքա աչքով տեսնուած առօրեայ իրական երևոյթներ են մեր այժմեան կեանքի մէջ, և այդպիսի շատ օրինակներ ես գիտեմ, բայց բանի էութիւնն այն է, որ դոքա մի-մի պատկեր են աւելի ընդհանուր անուրանալի փաստի։—Մի պատանի կամ երիտասարդ առաւել կրթուած քան ծնողները և ազգականները, սաստիկ ամաչում է, երբ մի օտար մարդու մօտ հանդիպում է նոցա. ամենայն բոլէ երկիւղալի է, որ մի դուցէ տղէտ և անկիրթ ազգականը, որ և է սխալանք կամ անկարգ շարժումներ անի, և իրան կարմրացնի, որ և իցէ վարմունքով նորան ստորացնէ.....

—Այո՛, բայց մի՛ մոռանար դու և ես թէ՝ այդ արարմունքները, այդ որդիական խորթութիւնը բոլորը մեղադրութեան չէ վերաբերում։ Երբ մի որդի կարմրում է իւր հօր պատճառով՝ այդ մի որ և է նորա սխալմունքի պատճառովն է աւելի։ Այն ցաւակցական ամօթ-

խածութիւնը, որ նա զգում է իւր արբեցող հօր գինացը՝ իւր կոպիտ հօր կարծրամտութեան պատճառով, գողութիւն է և ոչ պախարակութիւն որդու կրթութեան բարձրութեանը։ Աւելացրու, որ այդ բարձրութիւնն է, որ երբեմն պաշտպանում է տղայի մօրը՝ հօր գազանաբարոյութիւնից։ Շատ որդիք իւրեանց ներկայութեամբ, միայն իւրեանց կրթութեան բարձրութիւնովը իւրեանց հօրը այնքան պատկառանք են ազդել, որ նոցա բերաններին չորացել է շատ անասնական քլչոցներ՝ ուղղած խղճուկ կնոջ դէմ, կամ կանգնացրել է նոցա ձեռքը, երբ արդէն խփելու էր…

—Ո՜հ, բարեկամ, կտրեց վերջապէս խօսակիցս, ի՞նչ է, ուզո՞ւմ ես ամեն բան մերկապարանոց անենք. դու ինձ հարկադրում ես այդ քո մեղմացուցիչ պատկերի դէմ մի այլ պատկեր յառաջ բերել, որ աւելի ընդհանուր է և զարհուրելի։ Ահա՛ ճշմարտութիւնը. ինչ ենք տալիս պատանուն մեր գիտութիւններով և կրթութեամբ։ Ընտիր խօսակցութեան ձևեր, նոր և աւելի ընտիր ու բազմակողմանի հարկաւորութիւններ (պիտոյքներ), դոցա համար առանձին ճաշակ, արտաքին գեղասիրութիւն, ձգտումն բարձր մտքերի և բարձր բաւականութիւնների, առաւել կրթեալ գերդաստանի գաղափար, որի առաջև իւրեանց նախկին գերդաստանը զզուելի և զարշելի է երևում։ Այս ամենը բաւականին պատճառ են ծնողների և կրթեալ որդոց մէջ սառնութիւն ձգելու։ Որդին աւելի խոտակ և մաքուր լեզուով է խօսում, երբեմն ծնողները դժուար են հասկանում անգամ, մի և նոյն իրը նոցա միակերպ չէ հետաքրքրում, սովորութիւններն ուրիշ են։ Հարկաւ որդին կամաց-կամաց հեռանում է նոցա, կամ որ աւելի վատն է, եթէ մնում է՝ առանձնանում մի սենեակ կամ մի անկիւն. իւրայինների հետ շատ սակաւ խօսում՝ իւր մտքերով զբաղած,—այդ բոլորը խորը ծածկուած արհամարհանքի ձև է ստանում։ Եւ այդ շատ հասկանալի է. մեր դարձնենք հասարակ ժողովրդի դասին, կրթուած տղայն մնալով իւր հայադարձ (փունջի) ազգականի մօտ, միւսը իւր հօր գինետունը, երրորդը իւրեանց մանրավաճառական խանութը—այն տեղ որքան և է կզգայ իւր ցած դրութիւնը և կամաչի. այն տեղ մի փոքր կը նստի և իսկոյն կաշխատի հեռանալ այդ չքաւոր և աղքատների բնակարանից, անպատեհ խօսակցութիւններից և վարմունքի բնից։ Ես ճանաչում եմ այնպիսի տղայոց, որոնք տեսնելով իւրեանց գերդաստանի ցած դրութիւնը, իւրեանց հօր ծառայական կամ անարգ պաշտօնը,

վեր են առել իրանց գլուխը կորցրել, բարձր շրջանների մէջ ընկնելով շատ անգամ բոլորովին մոռացել են իրանց գերդաստանը....

Ես էլ չեմ կամենում այս տեղ երկարաբանել, այդպիսի հանգամանքից յառաջացած մայրերի ողորմելի դրութիւնը նկարագրել, նոցա ծածուկ և արտասուալի հառաչանքները, նոցա տառապանումն և չը գիտենալը թէ ինչպէս վարուել, իւրեանց որդոց փոխադարձ սէրը և համակրութիւնը գրաւելու համար..։ Հայրերի երբեմն վերին աստիճանի խոնարհուիլը «աղայ» որդու կամքին, նոցա կապուիլը և համոզուիլը, որ արդարև կրթութիւնը օգտաւէտ է, իւրեանց որդին բարձր է իւրեանցից, բայց նորանից բարոյական մխիթարութեան ճաշակ չառնելը... խաբուսիկ յոյսերով գերդաստանի անկապ դրութեան մէջ ընկնիլը... Այս բոլորը մի լաւ հոգեբան վիպասանի գրչի տակ ընկնելու բաներ են, որ վերջապէս հասկանանք ծնողների դրութիւնն էլ...

—Ուրեմն ինչպէս եմ ծառայում, դարձեալ բարկացած հարցրի ես, այդպիսի մի վտանգաւոր գործին, որպիսի է՝ կրթութիւնն ու դաստիարակութիւնը:

—Բարեկամս ծիծաղելով պատասխանեց, «այս անգամ էլ ես չեմ կամենում շարունակել խօսակցութիւնը. քո հետաքրքրական հարցի պատասխանը թողնում եմ մի այլ ժամանակի, այժմ շտապում եմ կարևոր գործով—ներիր ինձ....

III.

Երրորդ իմ տեսութիւնը բարեկամիս հետ աւելի խաղաղ ազդեցութիւն թողեց ինձ վրայ, այն ինչ առաջինները ինձ շատ գրգռում էին, ուստի շտապում եմ հաղորդել ընթերցողիս վերջին իմ այցելութեան հետևանքները մեր խնդրոյ մասին:

—Բարեկամ, սկսեցի ես, անցեալ անգամի քո խորհրդածութիւնները բանը այն կողմն էին շրջում որ մեր այժմեան դրութեան մէջ, կրթութիւնն այնպիսի հանգամանքներ է ծնեցնում, որոնցով շատ անգամ որդիք ևս մեղանչում են մաքուր բարոյականութեան դէմ, զանցառու են իւրեանց պարտքերը դէպի իւրեանց գերդաստանը ճանաչելու: Այդ լաւ էր, որ խնդրի երկու կողմն էլ քննեցաւ,

երեան էլ, աստառն էլ. սակայն իրրև կրթութեան հետևանքներ շատ տխուր պատկերներ բերիր, ասելով որ այդպիսի օրինակներ մեր կեանքի մէջ այժմ շատ կան: Այդ իսկ պատճառով հարցրեցի և կրկին հարցնում եմ այժմ՝ ի՞նչպէս ես դու ծառայում ուրեմն, այդ վտանգաւոր գործին, որպիսի է դատարակութիւնն առհասարակ:

—Ա՛հա, իմ համոզմունքը այդ մասին, պատասխանեց բարեկամս, քանի՛ մտածում եմ՝ դուրս է գալիս, որ վերանորոգութեան՝ մի ճգնաժամի միջոց՝ ամէն բան դժուար դրութեան մէջ է, ճգնաժամի մէջ է: Պատմութիւնը մեզ արդեօք պարզէ՞ ցոյց տալիս թէ մեծամեծ փոփոխութիւններ հասարակութեան և զերդաստանների կեանքի մէջ շատ հաղիւ են տեղիք ունեցել առանց նախապէս փոքր ինչ խախտելու նոյն իսկ հասարակութիւնը, որին վերանորոգում են. նոյն իսկ զերդաստանը, որին բարգաւաճեցնում են: Վերջապէս սա մի բնական օրէնք է, որ մի յեսին փոքրիկ միջատն անգամ իւր զանազան փոխակերպութիւնների ժամանակ իւր զլխաւոր փոխակերպութիւնը ստանում է և դուրս թռչում իրրև թիթեռն, քանդելով փոքր ինչ և ձեղքելով այն կոկոնը, որի մէջ զարգացել էր....

Այդ խօսքերի վրայ ես դարձեալ ձգեցի բարեկամիս աչքերին մի զարմացական և աւելի հարցական հայեացք. նա շտապով շարունակեց, խնդրելով որ չը ընդհատեմ:

—Ես արդ այսպիսի մի օրէնքի առաջև, իրաւի, ի՞նչ պէտք է անի մի մարդ, որ իւր անձը նուիրել է իւր հասարակութեան յառաջադիմութեանը, նոր սերնդի դաստիարակութեանը, ի՞նչ յոյսեր ունի այդ օրէնքի հետևանքները մեղմացնելու, և, որքան կարելի է, խաղաղ առաջ տանելու լաւ կողմերը:

Ա՛հա, ի՞նչ յոյսեր.

Նախ և առաջ, սա մի սկզբունք է թէ ամենայն չար, որ յառաջ է եկել բարի բանից, բնականաբար, ժամանակաւոր է և շատ շուտ անցնողական: Այդ բանի մէջ պէտք է տեսնել,—եթէ հին փիլիսոփայական ոճով խօսենք,—նախախնամութեան այն անօրինութիւնը, որով ամենայն յառաջադիմութեան առաջև արգելքներ են դալիս, որպէս զի մենք այդ խոչընդոտները, արգելքները յաղթելով, կամ խոհեմութեամբ անցնելով՝ հասնենք մեր նպատակին և առաւել գնահատենք բարին և ազնիւը: Այդ սկզբունքը վերաբերելով մեր հարցին, ի՞նչենք տեսնում. որդիական առաքինութիւնները, սէր և պատիւ դէպի ծնողները, յարգանք և երախտապարտու-

թիւն եթէ սոքա փոքր ինչ պակասում են մեր խեղճ և անկիրթ գերդաստանի մէջ, դա տեղի ունի առժամանակ միայն, մի քանի դասերի մէջ. ուրեմն դա էլ անցողական դրութիւն է, որովհետև մեր կրթուած որդիքը աւելի լաւ հայրեր կը լինին և աւելի լաւ պատիւ և յարգանք կունենան իրանց որդկերանցից, սոցա որդիքը էս առաւել իւրեանցներից և վերջապէս հասարակութիւնը կը հասնի զարգացման այն աստիճանին, որ եթէ միշտ զանազանութիւն դաղափարների և ձգտումների կը լինի (և պէտք է լինի) ծնողների և որդոց մէջը, սակայն ոչ ահագին, անյատակ, նոցա իրարուց բաժանող վիհեր, ինչպէս այժմ է:

Երկրորդ՝ այս էլ մի փորձուած բան է, որ որդոց ապերախտութիւնը, իւրեանց ծնողներին արհամարհիլը, այն դէպքերի մէջ, որոնց մասին առաջ խօսեցինք, սկսում է ըստ մեծի մասին 14—15 տարեկան հասակից, աղնիւ և խոհեմ երիտասարդների համար, շատ շատ տևէ այդ, մինչև 20—22 տարին. (կաւելացնեմ, որ իմ խօսքը բացառութիւնների մասին չէ): Որդիական ապերախտութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ, առաջին շապիկը, որ դէն է ընկնում հասակն առածին պէս: Պատանին կրթութիւն ստանալով, սկիզբը՝ ձգտում է բարձր շրջանների, բարձր ընկերութեան և հասարակութեան. շատ անգամ բարձր ձգտումներով, ցնորքների մէջ է ապրում, և իւր գերդաստանի իրական կեանքը ամենահասարակ տոմրական մանրակեցութիւն է երևում աչքին: Երիտասարդ դարձած՝, շատ շրջանների մէջ պրոստած՝ զանազան դասերի մարդկանց ծանօթանալով, նոցա հետ գործ ունենալով, տեսնում է, որ փոքրոգութիւն, ծայրայեղ եսականութիւն, մարդկային արժանաւորութիւն ոտքի տակ առնելը, զանազան մոլութիւններ՝ բարձր և նոյն իսկ կրթեալ դասերում էլ պակաս չեն: Երբ գործի մէջ այդպիսի երիտասարդը սկսում է փորձել իւր բարոյական այժերը և համեմատել անաչառութեամբ, կոպիտ, յամառ, ինքնասէր համարած հօր աշխատակրութիւնը, զոհաբերութիւնները կրթուածների հետ՝ միայն նոր է նշմարում այդ հօր արտաքին հասոյ, խոշոր կեղևի տակ, կակուղ սիրտ, նուրբ զգացմունքներ, բնական խելք, զրքերից չը գողացած առողջ դատողութիւն: Խոստովանում է, որ կան բաներ, որոնց մէջ այդ հասարակ հին մարդիկը գերազանցութիւն էս ունին:

Երրորդ՝ չը պէտք է մոռանալ և ինքն ըստ ինքեան ամենին յայտնի է, որ ամենայն դէպքի, ամենայն հանգամանքների մէջ բնական սէրը, այսինքն բնութիւնից դրուած կապը որդոց և ծնողների մէջ

միշտ կայ ու կայ. մենք խօսում ենք միայն զանազան հանգամանքներից, այդ կապի մի փոքր թուլանալու մասին, իսկ բոլորովին անհետանալը շատ հազիւ կը պատահի: Ի հարկէ, այդ բնական կապն էլ մէկ յոյս է:

— Վերջապէս՝ մի այլ միջոց և հնար որ շատ յոյս, ակնկալութիւն և ոյժ է տալիս իմ գործունէութեան այն է՝ բարոյական կրթութիւնը ուսումնարանների մէջ: Ինչ վարժապետ, որ պատվում է մի որևէ ժողովրդի գերդաստանական կեցութիւնը, զգում է և հասկանում գերդաստանական բարոյականութեան նշանակութիւնը, նա ամենայն կերպ, ամենայն յարմար դէպքում, կաշխատի որդոցը հասկացնել թէ իրաւի իրանք առաւել կրթվում և զարգանում են քան ծնողները, սակայն դա ում շնորհից է լինում— նոյն իսկ ծնողների յօժարամտութիւնից և զոհաբերութիւններից. կաշխատի հասկացնել առհասարակ այն սիրոյ նշանակութիւնը, որով ամենայն հնար և միջոց մարդ գործ է ածում իւր զիտեցածի չափ ուրիշին բարոգելու:

Սրանից պարզ հետևանք է թէ մեր ծնողները եթէ կամենում են իւրեանց որդոց կրթութեամբ բացի նիւթականը, բարոյական մխիթարութիւն ևս ստանալ, պէտք է սկզբում 7—8 տարեկանից մինչև 14—15 տարին մերյիշած այդպիսի վարժարանների մօտ, կրթել տան և ոչ հետու իւրեանց գերդաստանական, մայրենի շրջանից: Բայց մենք ինչենք տեսնում այժմ. ուղարկում են մատաղահաս երեխին օտար տեղ, օտար ուսումնարան, ուր ուսուցիչները մեր ժողովրդի կեանքից, մեր գերդաստանի դրութիւնից ոչինչ տեղեկութիւն չունին. այն տեղ շատ անգամ մեր որդոց քարոզում են արհամարհանք դէպի մեր ծնողները, դէպի մեր սովորութիւնները և աւանդութիւնները, որպէս մի օտար ուսուցիչ մի ժամանակ այդ անում էր Ճեմարանում, ուր ես ուսում էի առնում: Ուրեմն որդոց կրթութիւն ցանկացող ծնողներ, թող այսուհետև մտածեն ուշադրութեամբ ինչպէս կրթութիւնը սկսել և շարունակել տալ. թող մեր գաւառի փոքր քաղաքներում ծնողները առանձին ուշադրութիւն դարձնեն իւրեանց նախակրթական ուսումնարանները որքան կարելի է բարեկարգելու. ժողովրդի ցաւերը ճանաչող, նորա սիրով վառուած վարժապետներ ձեռք բերելու. նոցա չափաւոր բայց վայելուչ տպրուստի համար կանոնաւոր ռոճիկ հայթայթել, նոցա շնորհիւ՝ երեխային գերդաստանից բոլորովին չանջատելով մինչև 13—14—15 տարին այնքան զարգացնել,

որ կարողանան ապա միջնակարգ և բարձր ուսում շարունակել առանց վախենալու վտանգաւոր ազդեցութիւններից։ Այդպէս կրթուած որդիք մեր գերդաստանների համար կորած չէն, նոքա երբէք չէն քանդիլ իւրեանց գերդաստանների հետ ունենալու բարոյական կապերը, այլ կաշխատեն խոհեմութեամբ գերդաստանի վերայ ազդել և նորան բարձրացնել։ Մեր կեանքի մէջ այժմ իսկ սակաւ առ սակաւ սկսել են երևնալ հասուն և կրթեալ երիտասարդներ, որոնք իւրեանց սրբազան պարտքերից մինն են համարել, նախ և առաջ ապացուցանել ծնողներին, ազգականներին և իւրեանց փոքրիկ հասարակութիւններին իւրեանց վարմունքով, որ կրթութիւնը չի հեռացրել նոցա իւրեանց կեանքից, այլ աւելի սէր և համակրութիւն է ծնեցրել դէպի այդ խեղճ կեանքը... և ընդունակ է արել մինչև անգամ անձնական աւժամանակեայ զոհաբերութիւններ յանձն առնելու այդ սկզբունքի համար։ Այդ բարոյական յաղթութիւնը իւր մէջ այնքան հոգեկան սփոփանք կը պարունակէ, որ այդպիսի երիտասարդներ համբերութեամբ կարողացել են տանիլ այն զրկանքները, որ կրում են, հեռու մնալով բարձր շրջաններից և աւելի լայն ասպարիզից, ուր նոքա ընդունակ էին գործելու և ճշմարիտն ասեմ այդ անյայտ և համեստ գործունէութիւնը, կեանքի մէջ երբեմն աւելի հաստատ բարոյականութեան և յառաջադիմութեան հիմունք է արծարծում և արմատներ ձգում։ Այդպիսի ոյժերը իւրեանց չափը ճանաչում են և չափը զարգացնելուն համեմատ իւրեանց ասպարէզը լայնացնում, սկսելով իւրեանց որդիական պարտքերը վճարելուց և կատարելուց, փոքր առ փոքր ամբողջ հասարակութեան ծառայելու են դիմում։ Մեր խօսքը միջնակարգ ոյժերի վերայ է, որոնք շատ են լինում, ուրեմն դոցա կանոնաւոր ուղղութիւնը մի հասարակութեան խաղաղ յառաջադիմութեան մէջ մեծ դեր ունի։ Մեր խօսքը բարձրագոյն բնաւորութեանց մասին չէ, որոնք շատ վաղ իւրեանց ոյժերը ամբողջ մարդկութեանն են նուիրում։ գերդաստանական յարաբերութիւնները նոցա համար երկրորդական, երրորդական կարգի խնդիր են.... այդ բնաւորութիւնների բոյսը մեր հողը շատ սակաւ է աճեցնում, դոցա ժամանակն էլ կգայ.....

—Բաւական է, եղբայր, ասելով, կանդնեցի տեղիցս. դու սկսում ես աւելի բարդ հարցերի դիպչել, իսկ մեր խօսակցութիւնը մի մասնաւոր երկրորդական խնդրի վերայ էր, որի մասին քո բոլոր վիճաբանութիւնդ լինձ հետևեալ շատ յայտնի և պարզ եզրակացութիւնների բերեց։

1.) Առաջինը՝ որովհետև որդիք առաւել կրթվում են քան ծնողները, առաջիններից էս աւելի բարոյական պահանջներ պիտի անէ դերդաստանը, հետևելով աւետարանական առաձին «որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ»...

2.) Երկրորդ՝ հայ դերդաստանը, եթէ կամենում է իւր կրթեալ որդկերանցից թէ բարոյական մխիթարութիւն էս ստանալ, և առանց մեծամեծ վնասների յառաջ գնալ, պէտք է առանձին ուշադրութիւն դարձնի մեր սկզբնական և երկրորդական ուսումնարանների մէջ բարոյական կրթութեան խնդրոյն: Այդ կրթութիւնը, ի հարկէ, քանի մի չոր ու ցամաք խրատներով չի լինիլ. այլ ժողովրդի ինքնուրոյնութեան և բարեկեցութեան հիմունքը ճանաչող և գնահատող վարժապետների կապմակերպութեամբ:

Թող ձգտի հայ դերդաստանը այդպիսի վարժապետներ պատրաստելուն.... դա նոյն իսկ մեր դերդաստանի յառաջադիմութեան խնդիրն է:

ԳԻՒՄՐԵՑԻ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ

ԻԳ.

Նոր Ջիվայի հին աւերակները.—Նլիին եւ Վարթանէս գիւղերը.—Երէց բլուրը.—Նոցա պատմական անունները.—Նոր ժամանակի նշանաւոր ոչնչները.—Բինգ կիտը.—Իւլգիւրթի աւերակները.—Աշնանածոր գիւղը.—Արմանյակ եւ այլ աւերակները.

Վերադառնալով Արփաչայի ակունքներից կրկին դէպի Արփայ, ես այժմ այդ գիւղից Թեքվում եմ դէպի հիւսիս. փոքրիկ գետակի հակառակ ընթացքով, 5—6 վերստից յետոյ, մենք կհասնենք տաճկաբնակ Ջիվայի գիւղը, որ մուլքադարի իրաւունքով պատկանում է նոյն գիւղացի Հասան-Ալի սուլթանին։ Վերջին մուլքադարը գրաւել է նա և Տանձիկ, Արփայ, Ղոյթուլ և Կնիշիկ գիւղերը։ Այս տեղի մուլքադարների իրաւունքի վերայ ես կխօսեմ յետոյ։

Նոր Ջիվան դրած է հարթ տափարակի վերայ, գետակի երկու ափերումը և զարդարուած է ծիրանի և այլ պտղատու ծառերով։ Գիւղի մէջ ամենանշանաւորն է նոյն իսկ Սուլթանի կացարանը, որ մի քանի հասարակ աւելորդութիւններով զանազանվում է միւս գիւղական տներից։ Տան առաջ՝ փոքրիկ պարտիզի մէջ զարկում է մի չադրեվան, որի աւազանի պատերը կազմուած են հայ գերեզմանաքարերից։ Բարձր բարեծնունդ սուլթանը բարեհաճել է շինել աւազանի ափերի նստարանները նոյնպէս հայ տապանաքարերից։

Գիւղից դէպի արեւմուտք, լեռնահարթի վերայ երեւում են հայ գիւղի աւերակներ, ուր եկեղեցու լոկ հիմքն է մնացել. իսկ գերեզմանատան մէջ դեռ ևս կանգնած են անարձանագիր խաչքարեր։ Ահա այս է հին Ջուայ գիւղը, որ մի քանի անգամ յիշվում է Օրբէլեանի պատմութեան մէջ։ Նա երբեմն ամբողջապէս պատկանում էր Օրբէլեան Տարսայիճի որդի Ջալալին, որից նորա եղբայր Ստեփաննոս եպիսկոպոսը, այն է մեր պատմաբանը, գնեց քսան և մի հազար դրամով և իբրև իւր հալալ հայրենիք և գանձագին գիւղ իւր սահմանով, հողով, ջրով, այգեստանով և բոլոր բնակիչներով ընծայեց Ամաղուի Նորավանքին, 1298 փրկչական թուականին։ Նորին

սրբազնութիւնը սորա մասին կազմել է երկարօրէն արձանագրութիւն Ամաղուի Նորավանքի եկեղեցու հիւսիսային պատի վերայ՝ ներսի կողմից։ Սորա մասին յիշում է Օրբէլեանը և իւր պատմութեան մէջ։ (Օրբ. հ. բ. գլ. 71)։

Օրբէլեան եպիսկոպոսի խօսքերից պարզ երևում է, որ հին Զուայումը եղել են այգեստանեայք։ Նոյնը երևում է և Նորավանքի զանգակատան հարաւային պատի ներսի արձանագրութիւնից, որ սմն Հազար և նորա ամուսին Մելիքը զաւակ չունենալով՝ իւրեանց ձեռաստանի այգին ընծայել են Նորավանքի եկեղեցուն։

Զուայից 5 վերստ անցնելով դէպի հիւսիս, մենք կհասնենք հայաբնակ այգեղարդ Ելփին գիւղը։ Երևանի թուականներում այդ տեղ բնակուելիս են եղել տաճիկներ, որոնք սեղմուելով գաղթական հայերից՝ տեղափոխուել են մօտակայ Արղալազ գիւղը, ուր և բնակուում են այժմ։ Ելփինի այժմեան բնակիչ հայերը գաղթած են Պարսկաստանից և բաղկանում են 201 արական և 207 իգական հոգուց՝ բաժանուած 50 ծուխի վերայ։ Զուայի Հաւանալի սուլթանը դեռ ևս երևանական թուականներում ճիգ էր գործ դրել սեփականացնելու ինքեան այդ գիւղը իբրև մուլք, բայց արդէնք գտնելով գիւղացոց և նոյն իսկ կառավարութեան կողմից՝ չկարողացաւ հասնել իւր արդիւնաբեր ձգտումներին։ Հայերը ամրանալով այստեղ՝ ծածկել են գիւղի շրջակայքը լայնատարած այգիներով։ Գիւղը չէ ներկայացնում ոչինչ հնութիւն։ Թէև գերեզմանատանը կան մի քանի հին անարձանագիր տապանաքարեր, բայց նոքա ևս բերուած են մերձակայ տաճկաբնակ Քեօմուրլու գիւղի հայ աւերակներից։

Ելփինի արևելեան կողմից բարձրանում է կոնաձև վիթխարի բլուր, որի հարթ գագաթի վերայ ցանուցիր երևում են հին բերդի մնացորդներ։ Այդ բլուրի այժմեան անունն է Շրէշի սար, որ առնուած է նորա վերայ մեծ քանակութեամբ բուսնող շրէշ բուսից։ Բլուրի սարտոտը շրջապատում են, բացի Ելփինը, այլ ևս չորս տաճկաբնակ գիւղեր՝ հայ աւերակների վերայ չինած, Ալմալու, Աղքլիսայ, Վարթանէս և Հէշին։ Աւերակները բաղկանում են եկեղեցիների աւերակներից և դերեզմանատան տապանաքարերից։ Միայն Վարթանէս գիւղում ուշադրութեան արժանի է լայնանիստ լճակը, իւր բնական բարձր ափերով, որի միայն հարաւային կողմը պատած է և մէջը խոզակ դրած։ Լճակը իւր ջուրը ստանալիս է եղել իւր յատակումը բղխող աղբիւրից և իւր մօտով հոսող գետակից։ Ուրեմն նա եղել է մեծ ջրամբար, որով երբեմնապէս ոռոգել են Հէշին գիւղից մինչև Զուայ ձգուող դաշտավայրը։ Յայտնի բան է, այս լճակը այժմ կոպիտ տաճիկների ձեռքում խանդարուած է։

Արդեօք հին ժամանակները Շրէշ բլուրը շրջապատող գիւղերը ինչ անուն էին կրում։ Դորան բացատրելու համար թէև մենք չունենք ոչ մի պատմական տեղեկութիւն, բայց և այնպէս Շրէշ սարի, Ելփին և Վարթանէս գիւղերի վերաբերութեամբ կամենում եմ անել այստեղ մի ենթադրութիւն։ Ստեփաննոս Օրբէլեան պատմագիրը աւանդում է մեզ որ Զա-

քարէ Մոխրալարի եղբայր Խվանէ աթաբէկը Բաղաց իշխանութեան աւերուելուց յետոյ՝ բերում և բնակեցնում է Վայոց ձորումը Բաղաց իշխանազուններից մէկին և նորան ժառանգեցնում է իբրև հայրենիք Նորոյն բերդը այլ ագարակներով։ Սորանից սերուած ոմն Մահեան Ջուրջի Թոռը, որ անմիջապէս ժառանգում է. յիշեալ կալուածքները, «անզաւակ գոլով «բաժանէ զհայրենիս իւր ընդ եղբօր որդւոյ իւրում Ամիրային և առնու «զկէս բերդին և որչափ ջուրն հատանէ զանդաստանն որ ի Վարդենեաց կողմանն և եկեալ ի սուրբ ուխտն (Ամաղուի Նորավանքը) առ «Տէր Սարգիս՝ ստանայ ինքեան զաւակ զսուրբ եկեղեցին և զսուրբ նշանն «և ընծայէ զիւր հայրենաբաժին զՆորոյն….» (Օրբ. հ. բ. գլ. 65. երես 111—112)։

Արդեօք Վայոց ձորի ո՞ր անկիւնում են այժմ Նորոյն բերդը և Վարդենիքը։ Սոցա մասին ոչինչ պատմական և աշխարհագրական տեղեկութիւն չգտանելով Օրբէլեանից, բացի յիշեալ պարբերութիւնը, ես ենթադրում եմ, որ Նորոյն բերդը պէտք է լինի այժմեան Շրէշ բլուրի գագաթի աւերակը, որից և ստացել է իւր անունը այժմեան Նլփին գիւղը։ Նոյն պարբերութեան մէջ յիշած Վարդենիքը պէտք է լինի այժմեան Վարթանէս գիւղը։ Այդ երկու գիւղերը յիշվում են Օրբէլեանի ցուցակի մէջ։ Նկատի ունենալով տաճկաց բնաւորութիւնը, որ իւրաքանչիւր յատուկ հայկական անուն աղաւաղելով վերածում են տաճկականի, հաւանական է, որ Նորոյնը ու Վարդենիքը կարող էին փոխուել այնպէս, ինչպէս փոխուել են Աղաւնաձոր, Եղեգնիս, Ռոտինք, Արէտես, Երեն և այլ բազմաթիւ գիւղեր, որ յետոյ կտեսնենք։

Շրէշ բլուրի շրջակայ գիւղերը, որոնց թւումը նոյն իսկ Նլփինը և Վարթանէսը, այժմ պատկանում են թագաւորական գանձարանին։ Միլլի կոչուած տաճիկ ցեղը, որի մասին յիշած է ԺԹ նամակիս մէջ, բնակվում է այժմ Արդալաս, Ալմալու, Աղբլխայ, Վարթանէս, Հէշէն գիւղերումը։

Վարթանէսից դուրս գալով ես իջնում եմ դէպի Հէշէն գիւղը։ Նեղ ճանապարհը, որ Շրէշ բլուրի արևելեան լանջով ժայռերի միջից անցնում է, ունի մի խորխոտ կերպարանք։ Ճանապարհորդը իւր գլխի վերեւ կտեսնի բլրի բարձր գագաթը, իսկ ստորը մի ժայռապատ ձոր, որից խոխոջալով հոսում է Վարթանէսի գետակը։ Վերջինի արևելեան ափից անմիջապէս բարձրանում է մի այլ լեռնային գօտի, որի սեպաձև ժայռերի ծայրերին երբեմն կրկչալով պտտում են կարմրակտուց կաքաւները։

Անցնելով յիշեալ ժայռերի մօտից՝ չէ կարելի չմտաբերել մի ծիծաղաշարժ անցք, որ կենդանի ապացոյց է թէ ինչպէս Դարալագեազի մըլամայից տաճիկները ազատութեամբ օգտւում են այնպիսի հարստութեան աղբիւր, ուր չէ հարկաւոր ոչինչ մարդկային աշխատանք։ Անցքը, որ պատահել է 1876—77թուի ձմեռը, այս է։ Շարուրի Ենգիջայ գիւղի բնակիչ ոմն արհեստաւոր տաճիկ գալով Զիվայ Հասան Ալէ սուլթանի տանը՝ գաղտնաբար պատմել է սուլթանի որդի Բախշալի բէգին՝ թէ Շրէշ բլուրի ժայռի

մէջ կայ մի այր եօթը միմեանց մէջ բացուող դռներով։ Առաջին դրան մօտ բերանը լայն բացած պարկած է մի վիշապ և պատրաստ է կլանել իւր ժանիքների առաջ պարկած սև ոզունին։ Վիշապի ստորը պատի վերայ կայ մի Թալիսմանական (կախարդական) արձանագրութիւն։ Վիշապի բերանը փակելու և նորա ժանիքներին դէմ չգնալու համար պէտք է նախ և առաջ այդ արձանագրութիւնը կարդալ։ Հենց որ յաջողուեց առաջին դուռը բանալ, այնուհետև միացած վեց դուռը իրանք իրանց կբացուին։ Սենեակների մէջ դրած են ոսկէ աքաղաղ, ոսկէ եզ, ոսկէ բրեզններ և անհամար փող։

Արհեստաւոր տաճիկի այս հրաշափառ պատմութիւնը դիւթական ազդեցութիւն է անում Բախչալի բէգի վերայ, որ մոմերով, նոյն գիշերը, մի քանի մտերիմ բարեկամների և նոյն իսկ Ենգիջեցու հետ գնում է յափշտակելու Շրէչ բլուրը պահած գանձը։ Նոր ժամանակի Եազոն Բախչալի բէգը յիշեալ դիւթական պատմութիւնով յափշտակուած, կորցնում է ամենատարրական ընդունակութիւնը մտածելու, որ եթէ Ենգիջեցին արդարև գիտենար անհամար գանձի տեղ, անշուշտ ինքը իւրեան կսեփականացնէր և չէր թոյլ տալ Նոր Եազոնին ոսկէ գեղմը յափշտակելու։

Արգոնաւորդները որքան և աշխատեցին ծածուկ պահել իւրեանց գիշերային ճանապարհորդութիւնը, վերջինս այնուամենայնիւ շատ շուտ յայտնուեց և Շրէչ բլուրը մնացել էր ափշած՝ երբ յանկարծ տեսաւ, որ իւրեան գրականապէս պաշարել են Զաւայ գիւղի բոլոր բնակիչները՝ թէ տղամարդիկ և թէ կանայք, թէ մեծ և թէ փոքր։ Նոյն գիւղացի Մամադ քեռբալայ Խալիլ օղլին, որ հօրից իրաւայի նախանձոտ ստանալով թէ ճամբոթ քեզ գանձը Ենգիջեում բաժանեցին, իսկ դու դեռ ես քնած ես՝ իսկոյն չուայը ուսին ձգելով, բակտը՝ ձեռնի մէջ վազեց դէպի գանձը։ Յայտնի բան է, արգոնաւորդները ոչինչ չգտան, միայն աւարից յետ մնացած Մամադը ճանապարհին քրտնելով և մրսելով՝ այնպէս է հիւանդանում, որ ոտքերը և լեզուն բոլորովին բռնուում են։ Մամադին ձիով բերում են իւր տուն, մի կով են մորթում և նորա տաք կաշու մէջ փաթաթվելով հազիւ հազ մի քանի ժամանակից յետոյ կամաց կամաց առողջանում է։

Հէչինից արևելեան ուղղութեամբ գնալով 5—6 վերստից յետոյ մենք մտնում ենք մի հայաբնակ գիւղ, շրջապատած կանաչազարդ այգիներով։ Այդ Ռինդ գիւղն է՝ շինուած պարսկական հայ գաղթականներով, որոց թիւը այժմ հասնում է 122 արական և 106 իգական հոգու, բաժանուած 23 ծխի վերայ։ Գիւղը նոր կազմուած լինելով բոլորովին ամայի տեղ, բնական է, չէ ներկայացնում հնութեան հետքեր. բայց նա վկայ է շատ հրաշալի երևոյթների։ Գիւղական հոգևորականութիւնը ծնկաչոք աղօթարարութեան միջոցին լուսաւորում է գիսաւոր աստղերի լուսափայլ ճաճանչներով։ Բոցավառ ճառագայթների ազդեցութիւնը Ռինդեցիք թէև ըստ սովորութեան սառնասրտութեամբ են տանում, բայց միւս գիւղացւոց աչքերը, որ հեռաւորութեան պատճառով աւելի ապահով պէտք է

կէնքերն, ընդհանրապէսը նաստիկ չլանում են։ Այս գծերնական երևոյթների և նոյն բացատրութեան վերայ ես մտադիր եմ խօսել յետոյ, երբ նամակներիս մէջ տեղի կունենայ Դարալագեազի հողերագիտութիւնը։ Ասում են որ Ոսկոդ գիւղը իսկապէս այժմեանը չէ, այլ սորանից դէպի հիւսիս-արևելք գտնուող Խ ո ւ լ գ ի ւ ր դ անունով աւերակն է։ Ոսկոդ գիւղը գուցէ լինի Օրբելեանի ցուցակի մէջ յիշուած Ը ռ և դ ի գիւղը։

Խուլգիւրդ այցելելու համար մենք պէտք է բարձրանանք լեռնային ցուռ լանջով և 2—3 վերստից յետոյ գանք բարձրադիր տափարակի վերայ, ուր երեւում են տների աւերակները։ Այս տեղից նայեցէք այն հիասքանչ տեսարանի վերայ, որ սփռւում է ձեր աչքի առաջ։ Ձեզանից դէպի արևելք ձգւում է լեռնային գօտիներով փակուած մի ծառազարդ խորաձոր, որի յատակով հոսում է փրփրադէզ Արփաչայը։ Գօտիների լանջերի վերայ այս և այն տեղ ցանուցիր դրած են հայ և տաճիկ գիւղեր, իսկ վերջին ծայրումը բարձրանում է Ե ղ գ ի ւ ր դ սրածայր կանաչազարդ սարը։

Խուլգիւրդի աւերակների մօտ, բարակ առուակի ափումը կանգնած է եղել մի փոքրիկ սրբատաշ եկեղեցի, որի հիմնապատերը միայն մնացել են։ Նորա անունը եղել է Ս ո ւ ր բ Ս տ ե փ ա ն ն ո ս, ինչպէս ցոյց է տալիս բեմի ճակատի վերայ մասամբ ամբողջ մնացած արձանագրութիւնը։ Ահա նորա պատճէնը. «Կամաւն ողորմածին Աստուծոյ մեք Աւետարկայ որ-
« դիքս Հասանոյ և խոյադեղ մեր աղպոր որդոքս մեր սրտի յօժարու-
«-թեամբն զմեր հայրենական հողն ի խա.....քանին տուաք ի սուրբ
« Ստեփաննոս հոգւոյ եղբօր մերոյ Մխիթարայ փոխեցելոյ առ. Քրիստոս
«-միաբանեցաք ժամանդ սուրբ եկեղեցոյս հաստատեց * ուր պատարագ
« ամեն յայտնութեան։ Արդ թէ մեք կամօք, ի մերոց կամ յօտարակա-
« նաց ասացաց հանէ զնողն ՅԺԸ (318) հայրապետաց նզովեալ եղիցի ի
« Թվիս ՉԽԱ. (741)։»

Խուլգիւրդից կէս վերստով դէպի արեւելք, Վ ա ն ք ի դ ի ւ զ կոչուած տափարակի վերայ կանգնած է փոքրիկ սրբատաշ կամարակապ մի արևմտեան դռնով եկեղեցի սուրբ Աստուածածին անունով, ինչպէս ցոյց են տալիս նորա արձանագրութիւնները։ Նորա երկարութիւնը եօթը քայլ է, իսկ լայնութիւնը չորս քայլ։ Կամարակապ առաստաղը արդէն խոնարհուած է։

Հարաւային պատի վերայ եկեղեցու ներսը գրուած են հետեւեալ երեք արձանագրութիւնները մասամբ եղծուած. «Ես............եսուն մեզ պա-
« տարագ զ(6) Ղազարու աւուրին, և զ(6) Ծաղզարդզարին։ ով խափանէ
« մեր միզաց պարտական է. Թվին ՉԷ (707)։ Սորա տակը. «Ես Թամթա
« խաթունս տուի Աստուածածնի սուրբ Վանուց քա.....րաժակ ի Մճռ-
« կամօր, իմ յետոյ իմ որդիքն տան անխափան։ Ով չտայ իմ
« մեղացն տէր է։ ՉԾԷ. (757)։ Մճռակամօր գիւղը որ Դարալագեազի հնութիւնների արձանագրութեանց մէջ մի քանի տեղ յիշւում է, Ինճիճեանի հնախօսութիւնը դնում է Գեղարքունեաց գաւառումը։ Ջահարեր Թամ-

թա խաթունի հետ ընթերցողին կծանօթացնեմ Ամաղուի Նորավանքում։ Ցիշեալ արձանագրութեան ստորը գրած է «Ես Տէրս Սարգսի որդիս զԿաէ-
« քոսու հողն ու զտանձին սեռն մին կով տուի սուրբ Աստուածածնիս.
« միաբանքն տուին Բ աւր պատարագ Հուսիկին աւագ հինգշաբթի օրն,
« ով խափանէ մեր մեղացն պարտական է թվին ՉՀԲ (772)։ Նոյն եկեղե-
« ցու հիւսիսային պատի վերայ ներսը գրած է՝ Ես Դաւիթս միաբանեցանք
« սուրբ Աստուածածնիս, սպասաւորք սուրբ ուխտիս Պետրոսի և Պո-
« ղոսի..... տունին Ա. պատարագ անխափան կատարողքն աւրինին Աս-
« տուծոյ և խափանողքն դատին. թվիս ՉՂԶ (796)։

Եկեղեցու չուրջը, մանաւանդ արևելեան պատի տակ, կան խաչքարեր և սապանաքարեր։ Մինի վերայ գրած է «Ես Յովհաննէս կանդնեցի խաչս ի բարեխօսութիւն.....։ Միւսի վերայ «Գրիգոր քահանայ յիշեցէք.....։ Երրորդի վերայ «Տղայ տիրք կատարեալ Դանիէլ քահանայ։ Եկեղեցու մօտ կայ անների աւերակ, որ գուցէ լինեն միաբանութեան կացարանները։

Վանքի դիւղ տափարակը դէպի արևելք աստիճանաբար փոխվում է գաւիվայրի և երկու վերստ ստորոտումը գրած է Աղաունաձոր հայաբնակ գիւղը։ Սորա բնակիչները Դարալագեազի բնիկներից են, մասամբ խառն գաղթական հայերի հետ։ Գիւղը տեղական լեզուով կոչվում է Ը ղ ն ա ձ ո ր, իսկ տաճկերէն Այնաղիւր։ Նա ունի 204 արական և 163 իգական բնակիչ՝ բաժանուած 43 ընդարձակ տանի վերայ։ Նա ինչպէս յիշուած է ԺԹ նամակիս մէջ, Ռուսաց և Պարսից վերջին պատերազմի ժամանակ փոքր էր մնացել Պողոսյանցէր՝ Բեհլանեցի տաճիկ Աղաբէգի աւազակ խմբից, որպիսի փորձանքից յետոյ Նոքա Արփայեցոց հետ պատսպարուեցին Ուլիի ձորումը։ Այս գիւղը թէև ըստ երևոյթին պէտք է լինի հին, բայց հնութեան հետք չունի և ոչ մին։ Նաև Օրբէլեանը չէ յիշում ոչ մի այսպիսի անուն իւր ցուցակի մէջ։

Այնաղիւրից վեց վերստ հեռաւորութեամբ դէպի հարաւ կանգնած է այն հին քարուանսարան, որ արդէն նկարագրուած է՝ (Նամակ ԺԹ)։ Այնաղիւրի չուրջը կան մի քանի գիւղերի փլատակներ, որոնք այժմ անբնակ են։ Երեք վերստ դէպի արևելք Աբանայ աւերակը, որ գուցէ լինի Օրբէլեանի ցուցակի մէջ յիշած Աղանայ գիւղը։ Այն տեղը, որ կոչվում է Քեանչիկ բուլաղ, գուցէ լինի տառացի թարգմանութեամբ Օրբելեանի կաքաւուց աղբիւրը։

Աղաունաձորից ոչ հեռի՝ մի ամայի տեղ գետեղուած է՝ ամբողջ Դարալագեազում միակ քրդի գիւղ՝ Նամազայի անունով, որի բնակիչները թուով 158 արական և 112 իգական, իւրեանց ամենակատարելագործուած գողութիւնամբ կատարեալ Աստուածային պատիժ են դրացի գիւղերի համար։ Աղաունաձորից ուղղուելով դէպի հիւսիս, ես լեռնային անտառազարդ բարձր գոտու լանջերով իջնում եմ դէպի Սելիմի ձորը։

ԻԴ.

Սելիմի ձորը։—Քարագլուխ գիւղը։—Սուրբ Մամասի աւերակը և պատմական ծագումը։—Հորս գիւղը։—Աղբեանցը և նորա անմեղ հրեշտակները։

Այն ձորը, որ ձգվում է Հասանի գիւղի դէպի արևմուտք և ապա հիւսիս և վերջանում է Այռիջու բարձրավանդակ դաշտի եզրում՝ կոչվում է Ս ե լ ի մ ի ձոր։ Նորա երբեմնական անունը եղել է Սուլեմայ ձոր՝ առնուած նոյն անունով մի տանուտէրից։ Օրբէլեան եպիսկոպոսը այդ անունը յիշատակում է երեք տեղ իւր պատմութեան մէջ։ Օրբ. հատոր ա. երես 52, 309 և 311։ Սելիմի ձորը, ուր անցնելով մի գետակ խառնւում է Ալագեազի գետին Ձիբուխ քեօրփու մօտ, ներկայացնում է մեզ նոյնպէս պատմական յիշատակներ։ Եթէ գետակի հակառակ ընթացքով բարձրանանք, հետևաբար հանդիպում ենք մեզ Շահգեալդի Գչլաղ և Սալլի տաճկաբնակ գիւղերը, որոնք բացի աթարի դէզերը, ոչինչ հետաքրքրելի նիւթ չեն տալիս։ Առաջին գիւղից դէպի հարաւ, ձորակի մէջ երևում է մի հին գիւղատեղ Վախսէ անունով, որի պատմական կոչումը անյայտ է։

Մի ժամ ևս ճանապարհը շարունակելով՝ Սելիմի գետակի ձախ ափից փոքր հեռի կտեսնենք Քարագլուխ (տաճկերէն Քեալագլուխ) հայաբնակ գիւղը։ Մինչև նորան հասնելը՝ նորա ճանապարհի մօտ, բլրակի վերայ, մի առանձնակի քարի գլխին ցցուած է ահա երեք արշինաչափ բարձրութեամբ խաչքար, որ 586 տարի անշարժ մնացել է կանգուն։ Նորա արձանագրութիւնը ձայնում է «ի թվին ՉԼԹ (739) Ես Թագիկս՝ դուստր Սարգսի որ-
«դւոյ կարիչանի կանգնեցի զխաչս ի բարեխօսութիւն և ողորմութիւն յա-
«ղօթս յիշեցէք»։ Քարագլուխը ունի 231 արական և 139 իգական բնակիչներ, բաժանուած 35 ծուխի վերայ, որոնք պարսկական գաղթականներ են և պարապում են հողագործութեամբ և անասնապահութեամբ։ Գիւղի շուրջը զարդարել են ծառաստաններով և մօտ 5—6 տարի առաջ տնկել են խաղողի այգիներ, բայց տեղի ցրտութեան պատճառով դեռ խաղող չեն ստացել։ Գիւղի դիրքը բարձր լինելով՝ շատ գեղեցիկ տեսարան է ներկայացնում.

Գիւղից երեք վերստ դէպի հիւսիս բարձրավանդակում կայ մի եկեղեցու աւերակ՝ երեք սեղանով։ Քարագլուխցիք տապանաքարերով և հասարակ քարերով սեղանների վերայ մի փոքրիկ տնակ են շինել, գլուխը ծածկել փայտով, դարձրել են ուխտատեղի և մկրտել են Թ ո ւ խ մ ա ն ու կ կոչումով։ Պատերի մէջի երկու քարի կիսատ մնացած արձանագրութիւնը ցոյց է տալիս որ նոքա բերուած են այլ շինութիւնից։ Սեղանի առաջ երկու կարգով շարուած են 16 հատ տապանաքարեր, որոնցից միայն մինը ունի հետևեալ արձանագրութիւնը։ «Այս է հանգիստ պարոն Գրիգորի որդւոյ
«Գամուրդաշի, յորժամ հասաւ վախճան իմ եղայ ի դուռն տաճարիս. ԲՎ
«կարդէք յիշեցէք ի Քրիստոս և Քրիստոս զձեզ յիշէ ի կեանս. Թ. ՉՁԲ

« (982). Հայրապետութեան Տարսոյիճին հանդեաւ»։ Աւերակի շուրջը կան մինչև տասը հատ կանգուն և անարձանագիր տապանաքարեր։

Սորանից մօտ հարիւր քայլ այն կողմը, ձորակի մէջ, հին գիւղի աւերակները կրում են Բալլայ կոչումը։ Սա է ահա իսկական Բարազլուվը, որի տեղի անյարմարութեան պատճառով գաղթականները հենց սկզբից ընտրել են այժմեան գեղեցիկ գիւղատեղին։

Թողնենք այդ գիւղը և գնանք դէպի նորա արևելեան կողմը։ Փոքրիկ խոխոջուն առուակը անցնելով մենք դուրս ենք գալի մի բարձր տափարակ տեղ, ուր կան 7—8 հատ առանց գրութեան կանգուն արձանաքարեր։ Այդ ուղղութեամբ շարունակելով կրկին հանդիպում ենք ծիրանի և փշատի ստուերի տակ տապանաքարեր, որոնցից միայն մինի վերայ գրոշմած է ՌՃԾԳ (1153)։ Այս թուականը ապացոյց է, որ մօտ ժամանակ, այսինքն մեզանից 179 տարի առաջ եղել է այդ տեղ բնակութիւն։ Մի տապանաքարի վերայ նկարած է վազր և նորա ոտերի տակից օձը բերանը բացած կամենում է խայթել նորա երեսը։ Դոցա մօտ նկարած են սղոց, փիղ, վիշապ և մարդկային դէմք։ Նոյն քարի միւս երեսի վերայ ամանների, դաւաթ, բաժակ, այծ, աշուղ սաղը կրծքին և մի մարդ ձիու սանձը բռնած։

Այդ գերեզմանատան մէջ երևում է ահա մի փոքրիկ աւերակ եկեղեցի, որ ունի հին պատմական ծագում։ Դա է սուրբ Սահասի տաճարը։ Եկեղեցու շինութիւնից մնացել են այժմ հիմնապատերը և միջին սեղանի կամարը։ Շինութիւնը, ինչպէս ցոյց են տալի այժմեան մնացորդները, կազմուած է եղել երկու տնակից միջնապատի դռնով միմեանց հետ հաղորդուած։ Հիւսիսակողմի տնակը ունի մի լեմ հատարակ քարից, իսկ հարաւակողմինը ներկայացնում է երկու կից սեղան, մինը միւսից մեծ և գլխին կամարակապ առաստաղ։ Աւերակը այնքան է ծածկուած հողով, որ նորա արձանագրութիւնները բանալու և կարդալու համար հարկաւոր է մի արշին աւելի փորել գետինը։ Որովհետև այս եկեղեցու մասին ամենևին խօսք չկայ Ջալալեան արքեպիսկոպոսի գրքի մէջ, վասնորոյ հարկաւոր եմ համարում գրոշմել այս տեղ նորա արձանագրութիւնները։

Հարաւային ժամատան երկու սեղանների միջնապատի արևմտեան ճակատին կարդում ենք։ «Ի ժամանակին, յորում եկ զաւրն (զօրն) Պարսից « յաշխարհն հայոց և զի բազում գաւառս աւերեաց և բազում արիւն հե- « ղին զանմեղաց և զայլսն գերեցին, ընդ որս և զհայր Պաւղոս զպատուա- « կան քահանայն՝ զմուրացիչն իմ սպանին. և մեք որք մնալով փոքր մի « խաղաղանալ երկրիս՝ ես Սեթն քրոջ որդի Պաւղոսի շինեցի զեկեղեցիքս « յանուն նորա բարեխօս նորա և մեր է ընծայ յԱռփի զծաղկելոյն այգին « զնեցի և տուի սուրբ Մամայ և զլեցաք ի տարում Դ (4) աւր ժամ « Պետրոսի և Պաւղոսի տանին, Բ սուրբ Պաւղոսիս Սեթին անխալ (ան- « խափան) ընաւին հակառակորդքն ՅԺԸ (318) հայր. (հայրապետաց) նզ. « (նզովից) և առաջի Քրիստոսի մեր մեղացս տէր է սո ը ը ա ր է ճ ո ր տ ս

«տուի սուրբ Մամա զծաղկելոյն այգոյն զմարփածին Մխիթ.....հոգւոյն «իմ..... հակառակողքն ՅԺԸ (318) հայրապետացն Նզովեալ եղիցին։» Նոյն պատի հիւսիսային ճակատի վերայ «ի Թ. ՉԽ (740) կամաւն Աստու- «ծոյ ես Խուրշիթ Ուրանշահի որդի ամյանս (անուամբ) ուխտի սուրբ Մա- «մասայ ետու զիմ հայրենիքս Մարաք անուամբ......» Նոյն սեղանի հիւսիսային պատի վերայ «կամաւն Աստուծոյ ես Գրիգոր որդի Ասպատայ «տուի սուրբ Մամասայ զիմ Գոկարչին հողն......» Ահա այս է այն բոլորը, ինչ որ հասել է մեզ արձանագրութիւնների միջոցով։ Այժմ դիմենք պատմութեանը։

Սուրբ Մամասի Նահատակութեան տեղը, որի մասին Օրբելեան եպիսկոպոսը ոչինչ չէ յայտնում, Յայսմաւուրքը որոշում է Պափլագոնիան։ (Յայսմ. աւերես 110. տպ. Կոստանդնուպ. 1834). Բայց թէ ինչ ճանապարհով նորա նշխարը հասել է Վայոց ձոր, դորա տեղեկութիւնները աւանդում է մեզ նոյն Օրբելեանը։ Վերջինը հաստատում է, որ հին և հարուստ ժամանակներում մեծ և յագներանեան սուրբ Մամաս Նահատակին բերել էին այս աշխարհը և հանգստացրել Վայոց ձորի Սուլեմայ անառիկ դղեակի սահմանների մօտ։ Արշակունեաց հարստութեան շրջանում, քանի հայոց աշխարհը շէն էր և խորոտ իշխանութիւնով ճոխ, քանի մարդիկ իբրև նորահաւատներ եռում էին Աստուծոյ սիրով և վառուած էին ջերմ բոցով զանազան բարեգործութեան համար, մանաւանդ Աստուծոյ վկաների սիրով, այնպէս որ ամեն ոք անչափ աշխատութիւնով և անհուն ծախքով որոնում էր սրբերի նշխարներ, որպէս զի բերեն նորանց իւրաքանչիւր գաւառ և իշխանութիւն, «զի նովաւ պարսպեալ ամրասցին յամենայն հինից թշնամեաց և պատահմանց չարեաց և լցցին մշտնջենաւոր բարեխօս առ Քրիստոս։»

Սիւական իշխանները որ սուրբ Գրիգորի ու սուրբ Ներսէսի հետ և կամ այլ ժամանակներ գնացել էին Կեսարացւոց քաղաքը, մեծածախ աշխատութեամբ խնդիր եղան մեծ ճգնաւորի (Մամասի) նշխարներին և իւրեանց մեծահաւատ յոյսովը արժանի եղան «Աստուածային պարգևացն և վերին տեսչութեամբ առեալ զանկշռելի գանձն զկէս նշխարաց սրբոյն Մամասայ ի միջոյն ի վեր գլխովն և բազկօքն հանդերձ և զայլն թողին յիւրում սուրբ եկեղեցւոյ ի նմին տապանի։» Սիւական իշխանները կառք կազմելով սպիտակ ջորիներից և սրբի նշխարները արծաթից արկղիկի (կողոբ) մէջ դրած՝ սաղմոսերգութիւններով և օրհնութիւններով կեսարիայից հասան իւրեանց տէրութեան բնիկ սահմանին, այն է Մաղազ գաւառին (այժմ Մազրայ Սևանայ ծովի արևելեան ափի մօտ. Ջալալեան ճանապարհորդութիւն հ. բ. երես 110) և անցնելով Գեղամը մտան Վայոց ձորը։ Այս տեղից պէտք է տանէին դէպի իւրեանց արքունական գահը, բայց սուրբ հոգւոյ ակնարկութեամբ կապուելով ջորիների ոտքը՝ կանգ առան Սուլեմայ ձորի մէջ մի հարթ տեղ, որ կոչւում էր Դ ե գ պ ա ն ա ր ո ւ։

Սիւական իշխանները այս երևոյթի վերայ շատ տխրեցին և ժողո-

վերով գաւառը աղօթքներ մատուցին ու կամեցան յառաջ գնալ, բայց հազիւ հեռացել էին իբրեւ երկու ձայնընկեց եւ ահա ջորիքը կրկին կանգնեցին մի պատշաճաւոր տեղ Խ ա ր ա չ կ օ ն ք գիւղի սահմանումը։ Ապա հրաւիրեցին Սիւնեաց եպիսկոպոսին եւ բոլոր վանականներին, որոնք սրբի նշխարները քարէ տապանի մէջ դրած թաղեցին նոյն տեղում, մօտը կանգնեցնելով կրաշաղաղ քարերին վկայարան եւ սորա մէջ, բնակեցրին կրօնաւոր մարդիկ սրբին սպասաւորելու համար։ Նորակառոյց վանքի անդաստանի համար որոշեցին բոլոր վայրը։

Հայոց աշխարհի անիշխանութեան ժամանակ, Աթաբէգ Իվանէի օրով՝ երկու եղբայրները Սէթ եւ Պօղոս, որ նոյն վանքի քաջակրօն առաջնորդներն էին, շինեցին մի փոքրիկ խորան ուր եւ հանգստացրին սրբի տապանը՝ հանելով առաջին տեղից։ Այստեղ Օրբելեանը թէեւ աւելացնում է «ի Թուականին հայոց» բայց թուականը չէ նշանակում։ Երբ սրբի տապանը տեղից շարժում էին, նորա ձեռքը տուին Գնդաբերդայ վանքին, ուր լինում էր մեծամեծ բժշկութիւն։ Ստեփաննոս Օրբելեանը խոստովանում է թէ չկարողացաւ իմանալ սրբի առաջին բերող իշխանների անունները եւ ժամանակը։ (Օրբել. հ. ա. գլուխ ծ. երես 309—312)

Օրբելեանի նախընթաց խօսքերից պարզաբանւում է որ սրբի մասունքը կարճ միջոց կանգնել է Գեղզանարտ հարթավայրումը եւ ապա բոլորովին կանգնել է Խարաչկօնք գիւղի մօտ, Մուլեմայ ձորի մէջ։ Մուլեմա ձորը անշուշտ այժմեան Սելիմի ձորն է, բայց ուր են Գեղզանարտը եւ Խարաչկօնքը։ Այդ տեղերը այժմ բոլորովին անյայտ են։ Մամասի ներկայ աւերակի բլուրի արեւելեան լանջումը կայ հին գիւղատեղ Ս ա լ լ ի անունով, որից տաճիկ բնակիչները իջնելով դէպի Սելիմի գետակը, հիմնել են այժմեան Սալլին։ Գուցէ այդ հին գիւղատեղը լինի Օրբելեանի Խարաչկօնքը՝ որ յիշւում է նաեւ նորա ցուցակի մէջ։

Սուրբ մասունքի վերայ վանք շինելով վերջինին յատկացրել են իբրեւ անդաստան բոլոր շրջակայ վայրը։ Թէ եւ այժմ մեզ յայտնի չեն այդ վայրի տեղը եւ սահմանը, բայց եւ այնպէս հաւաստի է, որ ներկայումս Սելիմի ձորի բոլոր հողերը պատկանում են թագաւորական գանձարանին, բացի Աղքենդ տաճկաբնակ գիւղը, որ իբրեւ մուլք նախ պատկանում էր Նախիջեւանցի գեներալ Քեալբալի խանին, ապա Կարաբաղլար գիւղացի Ջալիլ խանին, իսկ 1876 թուականին նոյն պարոնից անուրդով գնել է Գէորգ Թառումեանը։

Օրբելեանի նախընթաց խօսքերից երեւում է որ Խարաչկօնքի մօտ, Մամասի նշխարների համար, սկզբումը շինեցին կրաշաղաղ քարից վկայարան, բայց յետոյ Հայոց աշխարհի անիշխանութեան միջոցին, Աթաբէկ Իվանէի օրով երկու եղբայրք Սէթ եւ Պօղոս հին տեղից փոխեցին սրբի տապանը եւ վերջինի վերայ շինեցին փոքրիկ խորան։ «Եւ հանգուցանեն յայդ երեւակի տեսողաց զկափարիչն» ի թուականին հայոց։ (Այստեղ թուականը չէ դնում Օրբելեանը։)

Որովհետև ներկայ խորանի նորոգումը եղել է Իվանէի օրով, վասնորոյ այդ կատարուել է մինչև 1227 փրկչական թուականը, այն է մինչև Իվանէի մահուան տարին։ Այս ևս պէտք է նկատի ունենաք, որ Իվանէի մահուան տարին վիճի է ենթարկուում, ըստ որում Օրբելեանի խօսքով նա մեռել է 1227 թուին, (Օրբ. հ. բ. երես 144.) իսկ Ջալալեան արքեպիսկոպոսը կարդացել է Դսեղի եկեղեցու արձանագրութեանց մէջ, որ Իվանէն դեռ 1247 թուին կենդանի էր։ (Ջալալ. Ճանապ. ի մեծն Հայաստան. երես 112.) Այժմ հանդուցեալ Աբել արքեպիսկոպոս Մխիթարեանցը կազմելով Արարատեան նահանգի երևելի վանքերի ժամանակագրութիւնը, Մամասի վանքի նորոգութիւնը Սեթ կրօնաւորի ձեռքով դնում է 1251 թուին, չգիտեմ որ աղբիւրից հանած։ (Արարատ. Հոկտեմբեր 1873 թ.)

Թէ այսպէս և թէ այնպէս, սուրբ Մամասի այժմեան աւերակ եկեղեցին չինուել է ԺԳ դարի երկրորդ քառորդումը՝ ինչպէս ցոյց են տալիս յիշեալ թուականները և նոյն իսկ Ուրանչահի որդի Խուրշիթի արձանագրութիւնը սեղանի պատի հիւսիսային ճակատի վերայ։ Այդ եկեղեցին մեր պատմաբանի օրով ծաղկեալ դրութեան մէջ կար, ըստ որում նա ասում է «և արդ կայ և մնայ սա ի պարծանս և ի բարեխօսութիւն այսմ աշխարհի մեծ հրաշս գործելով օր ըստ օրէ յամենայն նեղեալս և յախտաժէտս և ի դիւահարս.» (Օրբ. հ. ա. երես 312)

Մի հանգամանք։ Եպիսկոպոս Օրբելեանը այժմեան եկեղեցու չինուելիւնը յատկացնում է երկու քաջակրօն Սեթ և Պօղոս եղբայրներին. Աբել Եպիսկոպոս Մխիթարեանը Սեթին միայն, իսկ ամբողջութեամբ մեզ հասած և վերը արտագրած արձանագրութիւնը սեղանների միջնապատի արևմտեան ճակատի վերայ, թէ և առանց թուականի, բայց որոշ յայտնում է, թէ Պաւղոսը Սեթի սնուցիչն և նորա մօրեղբայրն էր, որին այլոց հետ սպանեցին Պարսից զօրքերը և արդէն նորա մահից յետոյ Սեթը չինում է եկեղեցիքը և այլն։

Թէև սուրբ Մամասի եկեղեցու տեղը և անունը Դարալագեազում յայտնի չէ, բայց Քարագլխի մի քանի բնակիչներից, բայց և այնպէս վերոգրեալ արձանագրութիւնները և Օրբելեանի աւանդած պատմական տեղեկութիւնները փարատում են ամէն մի կասկածանք մեր որոնած եկեղեցու ճիշտ այդ լինելու վերաբերութեամբ։

Որոշելով սուրբ Մամասի պատմական դալուստը դէպի Սիւնեաց աշխարհը, նորա այժմեան տեղը և վանքի չինութեան շրջանը, այնու ամենայնիւ ես չունեմ ոչ մի պատմական կամ աւանդական տեղեկութիւն այն իրողութեան մասին, թէ այդ եկեղեցին հիմնուելուց յետոյ ինչ վիճակէ ունեցել, ինչպիսի և որքան միաբանութիւն է ունեցել, մինչև երբ է չէն մնացել, երբ է աւերուել և այլն։ Նախընթաց էջերումը հաղորդեցի, որ եկեղեցու շուրջը կան ծիրանի և փչատի ծառեր անյայտ ժամանակից մնացած, կայ և մի խաչքար 1153 հայկական թուականից։ Ես կարծում եմ որ՝ այդ թուականը ու ծառերը ապացոյց են, որ մօտ 200 տարի մեզանից

առաջ այդ տեղ եղել է մարդկային բնակութիւն, որ գուցէ չէնէր պահում սուրբ Մամասի տաճարը։ Եթէ եկեղեցիները քանդուած չլինէին, նորանց պատերը գուցէ ներկայացնէին այնպիսի արձանագրութիւններ, որ կարողէին պարզաբանել յիշեալ հարցերը։

Քարագուխ գիւղից եթէ նայէք դէպի հարաւ, դուք կնկատէք Սելիմի գետակի աջ կողմումը հայ անբնակ գիւղի աւերակ իւր կանգուն խաչքարերով, տապանաքարերով, քանդուած եկեղեցիով և տներով։ Նորա անունն է Դարակուզէյ, որ քրդերէն նշանակում է արև չտեսած տեղ։ Գետակով փոքր ինչ դէպի վեր՝ ահա գալիս է մեր առաջ կանգնած հայաբնակ Թառաթուն գիւղը, որ չէ տալի ոչ մի հնութեան առարկայ։ Նա ունի 92 արական և 90 իգական 17 գերդաստանով գաղթական բնակիչներ։

Այս գիւղից դէպի հարաւ՝ անտառապատ բարձրադիր ձորակի մէջ, խոխոջիւն առուակի վերայ դրած է Հորս անունով տաճկաբնակ գիւղը, որ չինած է հայ աւերակների վերայ։ Հնութիւնների կարգումն է մի աւերակ կրաշաղաղ փոքրիկ եկեղեցի, որի սեղանը կամարակապ է և սրբատաշ քարից, իսկ միւս պատերը հասարակ քարից։ Եկեղեցու մէջ լիք է մարդկային աղտոտութիւններով։

Գիւղի հիւսիս-արևելեան կողմի գերեզմանատան մէջ կան շատ անարձանագիր տապանաքարեր և խաչքարեր։ Մի կանգուն խաչքարի վերայ գրած է «կանգնեցաւ խաչս հոգւոյն պարոն Խուշահին..... Տերին։» Մի խաչքար ևս, որ երեսի վերայ ընկած է իւր պատուանդանի մօտ, ունի այս արձանագրութիւնը «թվին ՉՂԸ. (798) իշխանութեամբ պարոն Զեսարին ես Տիրի կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ։» Տեսնելով որ այս արձանագրութիւնը պահպանուել է հողի մէջ, ես կրկին չրջել տուի քարը երեսով դէպի հողը։ Սորա մասին դարձեալ կգրեմ՝ երբ կգնեմ Սելիմի քարավանսարան։

Հորս գիւղում կայ սրբատաշ քարից կրաշաղաղ հին տուն, որի վերայ չէ կարելի ուշադրութիւն չդարձնել։ Տունը իւր առաջ ունեցել է սրահ նոյնպէս սրբատաշ քարից, որ այժմ քայքայուած է։ Բարձր կամարակապ դուռը արևելեան կողմից տանում է ձեղ տան մէջ, որ ունի քառանկիւնի ձև 10 քայլ լայնութեամբ և 12 քայլ երկարութեամբ։ Դուռն երկու կողմից, արևելեան պատի մէջ ներսը կան չորս չորս կամարակապ պատուհաններ միմեանց վերև։ Հիւսիսային պատի մէջ երևում է կամարակապ վառարանը (բուխարի), իսկ տան երկու ծայրումը մի մի թոնդիր։ Տան գլուխը ծածկուած է եղել փայտեայ գերաններով, որոնց պահպանելու համար եղել են չորս քարէ սիւներ, ըստ որում վերջինների քանդակագործ ծաղկահիւս հիմունքները այժմ ևս կան տան մէջ։ Նոյն տան արևմտեան պատի մէջ չինած է մի բեմաձև խարշ հինգ քայլ երկարութեամբ, երկու քայլ լայնութեամբ և մի արշին բարձրութեամբ, որ գուցէ առաջի կողմից վարագուրով ծածկուած օթևան լինէր կանանց համար։ Այս տունը թէև

այժմ նոյն գիւղացի Ֆարզալի Սուլէյման օղլու քնակարանն է, բայց սեղական աւանդութիւնը պնդում է, որ դա եղել է Սելիմի քարավանսարան չինողի, այն է Զեսար իշխանի տունը։ Եթէ այս աւանդութիւնը ունի ճշմարտութեան նշոյլ, ուրեմն տունը պէտք է ունենայ մօտ 550 տարի հասակ։ Շատ և շատ հաւանական է, որ նա լինի որ և է իշխանի տուն, ըստ որում նորա պէս հոյակապը ամբողջ Դարալագեազում չէք կարող գտնել։ Այժմեան Հորսը գուցէ լինի Օրբէլեանի ցուցակի մէջ յիշուած Հորք գիւղը։ Գիւղից ցած դէպի աւելը, ձորակի մէջ, առուակի ափերը զարդարուած են արդէն վայրենացած տանձի, խնձորի, ընկուզի, սալորի և այլ պտղատու ծառերով, որոնք ցոյց են տալի թէ երբեմն այս տեղ սիրուած են եղել այգիներ։

Բարձրադիր բլուրներից իջնելով կրկին դէպի Սելիմի գետակը՝ շարունակում եմ ճանապարհս նորա հակառակ ընթացքով։ Եւ ահա ձորի մէջ գետակի ալ ափի վերայ, լայն տափարակ տեղ հանդիպում է ինձ տաճկական Աղքեանդը, որ կազմում է Սելիմի ձորի ամենավերջին գիւղը։ Գիւղը թէև այժմ ոչինչ հայկական հետքեր չէ ցոյց տալի, բայց և այնպէս նա երբեմն եղել է հայաբնակ (և որ գիւղը այստեղ չէ եղած հայաբնակ) ըստորում մի քանի տարի առաջ այդ տեղ հողի տակից բացուել է աւերակ եկեղեցի, որի քարերով տաճիկները անյապաղ շինել են իւրեանց տների և գոմերի պատերը։ Աղքեանդը, ինչպէս վերը յիշած է, երբեմն պատկանում էր իրրև մուլք Նախիջեանցի զեներալ Բեալբալի խանին, որ իւր քրոջը ամուսնացնելով կարաբաղլար գիւղացի Ջաֆլ խանի հետ, տուեց նորան իրրև օժիտ, իսկ վերջին ժամանակ վերջին խանից գնեց Շուշեցի Գէորգ Թառումեանցը։

Գիւղը այժմ երևելի է նորանով, որ նորա մեծը և փոքրը, հասակաւորը և չափահասը, կին և մարդ զարմանալի ճարպիկութեամբ և հմտութեամբ գողութիւն է անում։ Նոցանից մինը ինձ պատմում էր, որ ձմեռային ժամանակ, երբ խոտ և դարման չկար անասունների համար, նա դարման է խնդրել Թառաթունցի մի հայից և բացասութիւն ստանալով դնացել է գիշերը դարման գողանալու նոյն հայի մարաքից։ Թառաթունցին վտանգը զգալով՝ նախապէս պահ է մտել իւր մարաքի մէջ։ Իմ խօսակից գողը ձեռքը մտցրել է ներսից կողպած դուռը բանալու և յանկարծ զարմանատէրը պինդ բռնել է նորա ձեռքը։ Դռան ծակի միջից միմեանց սկսում են քաշքշել մինը դէպի դուրս իւր ձեռքը ազատելու և միսը դէպի ներս։ Վերջապէս գողին յաջողվում է ազատուել և փախչել։ Փախուստի ժամանակ նա իւր ծոցի քարերը մին մին ձգելով յետքից վազող հայի վերայ՝ հազիւ թէ կարողացել է անհետանալ գիշերային մթութեան մէջ։

Նոյն խօսակիցս մի սով տարի երեկոյին դառնալով տուն, նկատում է, որ մեծ եղբայրը մի անծանօթ քրդի իւր ոչխարներով օթևան է տուել դիշերելու։ Նորեկ եղբօր մկանները և ոսկրները սկսում են շարժուել, գողութեան ցանկութիւնը եռում է նորա մէջ։ Նա իսկոյն դուրս է գնում որպէս

դի քուրդը նորան չնշմարի։ Քանի անգամ նա գլխիը փորձ է փորձում խլնել երդիկից, բայց քուրդը իմանալով ամեն անգամ ճրագը վառել է գոմի մէջ։ Առաւօտեան լոյսը դեռ չբացուած, երբ քուրդը իւր ոչխարներով շարունակում է իւր ճանապարհը, գիւղից դուրս ձորակի մէջ յանկարծ ահա մի ձիաւոր արծուի նման հասնում է, քրդի գլխին փայտի մի ուժեղ հարուած հասցնելով թաւալում է նորան գետնի վերայ և ինքը մի ոչխար փախցնում։ Դա էր իմ գող խօսակիցս։ Կէս ժամից յետոյ գողի մեծ եղբայրը, որ ամեն բան գիտէր, իբր իւր գործի համար նոյն ձորակով անցնելիս՝ յանկարծ տեսնում է թաւալուած քրդին, ղորանի քարոզած մարդասիրութեան համաձայն կարեկցում է նորան, կրկին բերում է իւր տուն, ուր երկու հրեշտականման եղբայրները ևս կարեկցաբար փաթաթում են օտարականի վէրքը, ուտեցնում են նորանից գողացած ոչխարի մսից և երկու երեք օր խնամ տանելուց յետոյ՝ արձակում են հիւրին։ Երախտապարտ քուրդը ոչինչ կասկած չունենալով տան տէրերի ազնուութեան վերայ, ընծայում է նորանց մի ոչխար իբրև վարձ նորանց հիւրընկալութեան և կարեկցութեան……։ Շատ լսած օրինակներից այսքանս ևս բաւական է, որ ցոյց տար Աղքեանդցւոց հրեշտակային անմեղ բնաւորութիւնը։

Աղքեանդից դէպի արևելք գտնվում է հին գիւղատեղի Ն ա վ ա ր կամ Բ ա ս ո ւ լ Ղ շ լ ա ղ ի անունով, ուր կան տների փլատակներ, տապանաքարեր և խաչքարեր։ Նոյն գիւղից դէպի հիւսիս, գետակի աջ ափի վերայ կայ միւս գիւղատեղը Աղ դարայ անունով։ Վերջին աւերակներից դէպի հարաւ ձգւում է լեռնային գօտի, որ սահման է Դարալագեազի և Այրիվու տարածութիւնների։ Յիշեալ լեռնային գօտու այն տեղ, ուր Նամազալի գիւղի քրդերը անցնում են ամառը, որ և կոչվում է Կարագեօլլար, այդ սև լճակների մօտ մի բլրի վերայ քրդերը հողը փորելով միշտ գտնում են ուլունք, ածուխ, պղնձէ մանր իրեղէնները և այլն։ Այստեղի մի տեղ ևս կայ Ալէքսանդրապօլի գաւառի Փամբակի ձորում, մեծ Ղարաքլիսայ գիւղից դէպի հարաւ, Մայմեխ անունով բլրի լանջի վերայ, որի մասին երբեմն յիշւում է Մեղուի թերթերի մէջ։

ԻԵ.

Աղքեանդի քարվանսարան։—Սուլեմայ դղեակը։—Այրիջի բարձրավանդակը։—Սեվանի քարվանսարան։—Նորա շինողը եւ վերջինիս նպատակը։

Աղքեանդից վերև դէպի հիւսիս, գետակի ձախ ափումը, հին գերեզմանատան անարձանագիր և անթուական տապանաքարերի մօտ կանգնած է ահա մի հին կամարակապ քարվանսարայ սրբատաշ քարից, կիսով չափ գետնում խրուած։ Նա ձգվում է հիւսիսից հարաւ, ուր և բացւում է նորա դուռը ճանապարհի վերայ։ Քարվանսարան շինած է եօթը միմեանց կից միաչափ կամարներով եօթը ոտնափակ սիւների վերայ։ Վեց կամարը

բոլորովին նոր և անխախտ մնում են, իսկ եօթներորդը, որ զետեղում է իւր մէջ և քարվանսարայի դուռը, քանդուած է բոլորովին։ Ազքեանդցիք այնքան երկար ժամանակ ոչխար են պահել նորա մէջ, որ նա թրքով լցուել է համարեա մինչև կամարները, իսկ պատերը մնացել են ծխոտ։ Սա զանազանվում է միւս քարվանսարաներից, (Սելիմի, Աշնագիրի) նորանով, որ չունի երկու կողմի զուգահեռական կամարներ։ Քարվանսարան այժմ չէ ներկայացնում ոչ մի արձանագրութիւն, վասնորոյ նորա անունը չկայ Ջալալեանի գրքի մէջ։

Այս տեղից դէպի Սելիմի քարվանսարան ճանապարհը աստիճանաբար բարձրանում է լեռնային գօտու լանջերով։ Գետակի աջ ափի վերայ, ուղղակի ձեր գլխավերև անա մի չէկ քարաժայռ, որի ճակատին երևում է մի նեղ մուտք դէպի խոր այրը։ Այս տարի (1876) այրի մէջ բացուել է խոր և մութը հոր, որից հանել են փայտէ ածուխ, շատ ոսկրներ և պղնձէ փոքրիկ ափսէ։ Այս վերջինը ես անձամբ տեսնելով ոչ մի արձանագրութիւն չգտայ։

Երբ կանգնած էք դուք այդ ժայռի տակ, նայեցէք դէպի հիւսիս—արևելք և Սելիմի գետակի ձախ ափի մօտ կնկատէք երկու ձորի մէջ բարձրացած հողաբլուր՝ գագաթը սև քառաժայռով պսակուած։ Բլուրը երկարութեամբ ձգւում է հիւսիսից դէպի հարաւ և այս ծայրումը փոքր ցածնալով մատչելի է, այն ինչ միւս կողմերը ուղղահայեաց լինելով բոլորովին անմերձենալի են։

Տափարակի գագաթի վերայ ցանուցիր երևում են փոքրիկ սենեակների, կրապատ հորերի և այլ շինութիւնների 50 հետքեր։ Դա է Սուլեմա անառիկ դղեակը, որի մասին յիշում է Օրբելեանի պատմութիւնը (հատոր ա. գլ. ծ. եր. 309) բնութիւնը այնպէս է ամրացրել դորա շուրջը, որ թշնամուց պաշտպանուելու համար ոչինչ արհեստական միջոց չէր հարկաւոր, մանաւանդ դղեակի գործունէութեան շրջանում, երբ մարդկութեան կործանիչը էին նետ և աղեղը և ոչ թէ կրակի թնդանօթը։ Պատմութիւնը չէ ներկայացնում մեզ ոչինչ նիւթ այս բերդի վերաբերութեամբ, բացի այն, որ նա շինեալ է ի Սուլեմայ տանուտեառնէն» (Օրբ. հ. ա. գլ. 3.)

Սուլեմայ դղեակից օձապտոյտ լեռնային քարքարոտ ճանապարհը կէս ժամում տանում հասցնում է մեզ անձ մի բարձրավանդակ անծայր տափարակ։ Շուրջը չկայ ոչ մի ինչ, այլ միմիայն հեռու տարածուող լեռնային գօտիներ ու ձորակներ են։ Կանգնեցէք տու ժամանակ այդ տափարակում և զուարճացէք բնութեան վայրենի տեսարաններով։ Ձեր կանգնած տեղը Շարուր—Դարալագեազի և Նոր Բայազետի գաւառների սահմանն է։ Նայեցէք դէպի հիւսիս և տեսէք ինչ գեղեցիկ կանաչազարդ բարձր դաշտավայր է սփռւում ձեր առաջ։ Դարձրէք ձեր տեսողութիւնը և նշմարեցէք հեռու և շատ հեռու հարթ հորիզոնի վերայ փայլուն մակերևոյթը։ Դա Սևանայ ծովն է։ Իսկ առաջին բարձրալիր հիասքանչ ծաղկափթիթ տարածութիւնը Այրիջի լեռներն են, որոնք ամառնային ժամա-

նակ զետեղում են իւրեանց մէջ հազարաւոր վրանաբնակ մարդիկ իւրեանց անասուններով։

Այժմ երեսներդ դարձրէք դէպի հարաւ։ Ո՜հ, ինչ հրաշալի, բայց սոսկալի տեսարան։ Ձեր աչքի առաջ ծածանվում է ամբողջ Դարալագեազի մակերևոյթը։ Տեսէք բնութիւնը ինչ խոր ակօսով պատառոտել է այդ երկիրը։ Լեռնային գօտիները և անձև ու անկանոն ձորերը խճճուել են միմեանց։ Եթէ մինը ձգւում է դէպի հարաւ, միւսը անպատճառ հասանում է արևելք և այլն։ Միով բանիւ երբ բնութիւնը արտադրում էր Դարալագեազի մակերևոյթը, նա կարծես վճռել էր գործ դնել այդ րոպէին իւր բոլոր չար կամայականութիւնը։

Որքան և դիւթիչ լինեն մի կողմից Այրիջու լայնածաւալ հարթ դաշտը և միւս կողմից Դարալագեազի հսկայական խորխորատները, մենք այնու ամենայնիւ չափաւորենք մեր հայեացքը և տեսնենք ինչ կայ մեր գարշապարի մօտ։ Այս ինչ հոյակապ և սքանչելի շինութիւն է կանգնած մեր առաջ, երկու գաւառների սահմանակից տափարակի վերայ։ Մենք տեսնում ենք սրբատաշ քարից մի կամարակապ վիթխարի շինութիւն որ ձգւում է արևմուտքից դէպի արևելք։ Հետաքրքրութեամբ մօտենում էք դորա դուռը գտնելու և ահա նա հոյակապ զարդարուն շինած է արևելեան ծայրի հարաւային ճակատումը։ Հենց կամենում էք մտնել ներս, ձեր աւելի փորձուած ուղեկիցները կանգնեցնում են զգուշացնելով ձեզ, որ այդ շինութեան մէջ յաճախ թաք են կենում գողերը իւրեանց աւարովը մինչև գողի սիրելի ժամանակը, մթանալը։

Այս հոյակապ շինութիւնն է Սելիմի քարվանսարան։ Այսպիսի հզօր և խրոխտ շինութիւններ Դարալագեազի սահմանում միայն երեք են իմ կարծիքով. այն է սոյն այս քարվանսարան, Աշագեազի բերդը և Ամաղուի Բուրթել իշխանի շինած տաճարը։ Չնայելով որ քարվանսարայի մէջ յանկարծ մտնելը վտանգաւոր է գողերի պատճառով, բայց որովհետև նորանց զրութիւնը աւելի վտանգաւոր է, վասնորոյ վստահանանք մտնել և ներսից զննել այդ հրաշագեղ շինութիւնը։

Կանգնելով հոյակապ դրան առաջ՝ դուք տեսնում էք, որ նա կազմուած է երկու սրբատաշ սիւներից գլուխները կամարով միացած։ Կամարի ճակատը այնպիսի գեղեցկավանդակ և միմեանց հագցրած քարերից է, որի տեսակը աւելի գեղեցկաշէն կարելի է տեսնել Անի քաղաքի մօտ Ղօչավանքի սքանչելազարդ նշխարանոցումը։ Կամարի տակ՝ երկու սիւնի վերայ, կանգնեցրած է մի մեծ կիսաբոլորակ սև սրբատաշ քար պարսկերէն կամ զուցէ արաբերէն արձանագրութեամբ, որի մասին Ջալալեանի գիրքը ոչինչ չէ յիշում։ Ես ոչ մի ժամանակ այնպէս խոր հառաչանք չէի քաշել արաբական գրութիւնը չիմանալուս համար, ինչպէս այդ րոպէին։ Նոյն լեզուով արձանագրութիւն երեւում է և ձեզանից ձախ (արևմտեան) սիւնի վերայ։

Ձեզանից ձախ սիւնի ճակատի վերայ քանդակած է մի կատաղի ցուլ,

իսկ աջ սիւնի վերայ առիւծ, որ պոչը մի անգամ կապ տուած աղեղնաձև թեքել է մէջքից դէպի գլուխը և ծայրը ներկայացնում է լեզուն հանած վիշապի բերան։ Ցուլը և առիւծը միմեանց կատաղաբար նայում են։ Չգիտեմ որպիսի գիւթական զօրութեամբ այս առիւծը Ջալալեանի գրքի մէջ դարձել է եղջերու (հատ. բ. եր. 164)։ Արաբական արձանագրութիւն կրող կիսաբոլորակ քարի արևմտեան կողմը, տարաբաղդաբար, փոքր է մնացել ընկնի սիւնից և եթէ պատահի, դարպասի հոյակապ կամարը անշուշտ կխոնարհուի։

Անցնենք դարպասը, մտնենք ընդարձակ նախասենեակի մէջ, որ ձգվում է երկարութեամբ հարաւից դէպի հիւսիս։ Դորա կամարակապ առաստաղը ամրացած է երկու կողմի չորս չորս որմնափակ սիւների վերայ։ Լոյսը թափանցում է առաստաղի միակ լայն երդիկից։ Յատակից փոքր ինչ բարձր հանդիպակաց պատերին կպած՝ շարուած են սալաքարերից նստարաններ իրեք արշին երկարութեամբ և մի և կէս լայնութեամբ։ Նախասենեակի արևելեան կողմի կամարի տակ՝ սև քարերի վերայ կարելի է նըշմարել ընդարձակ հայերէն արձանագրութիւն, որի տառերը շատ տեղ ոչընչացել են և ոչնչանում են։ Այդ հանգամանքը պատճառ է եղել սխալ արտագրելու արձանագրութիւնը Ջալալեանի գրքի մէջ, ինչպէս կտեսնենք ստորը։ Արձանագրութիւնից ցած, նախասենեակի արևելեան պատի մէջ մի քանդուած և իւր քարերովը ծածկուած դուռ տանում է դէպի միւս սենեակը, որ բաղկանում է հինգ կամարից և երկարութեամբ զուգահեռական է նախասենեակին։ Նորա հարաւային պատը քանդուելով բացել է սենեակի բերանը։

Նախասենեակի արևմտեան պատի մէջ տեսանելի են նոյնպէս մի ընդարձակ կամարակապ դուռն քարերով ծածկուած։ Կամարի սիւները թէև սարսափելի ճեղքուելով կրկնապատկել են վտանգը, մենք այնուամենայնիւ կանցնենք՝ միայն կուզեկով, քարերի պատճառով։ Անցանք և ահա ինչ։ Մենք կանգնել ենք մի լայնատարած հոյակապ շինութեան մէջ, որի առաջին տպաւորութիւնը ակամայ յիշեցնում է ինձ Մոսկվայի մանէժը, ուր ձմեռնային ժամանակ զօրախումբը մարզվում է։

Քարվանսարայի առաստաղը ներկայացնում է երեք զուգահեռական կարգ երկայն կամարներ, որոնց մէջտեղինը շատ բարձր է, իսկ երկու կողմին ցածր։ Միջին կամարը և կողքերի կամարների ներքի ծայրերը ամրացած են տասն և վեց (ութը իւրաքանչիւր կողմումը) սիւների վերայ կազմած կամարների վերայ։ Առաւել տեսանելի կերպով նկարագրելու համար ասենք այսպէս։ Քարվանսարայի երկարութեամբ ձգվում են իւրաքանչիւր կողմից ութ ութ միաչափ հեռաւորութեամբ կրապատ քառանկիւնի սիւներ, որոնց վերի ծայրերը անընդհատ կապած են կամարներով։ Ուրեմն այս կամարները և սիւների հետ ձգվում են քարվանսարայի երկարութեամբ արևելքից արևմուտք։ Առաստաղի կամարները, որ ունին հակառակ ուղղութիւն, երևակայեցէք իբրև գծագրական աղեղ։ Այսպէս՝.

փոքր աղեղի մի ծայրը սկսվելով քարվանսարայի հարաւային պատից ձգվում է դէպի հիւսիս և միւս ծայրով ընկնում է սիւների կամարի վերայ։ Այստեղից նա կրկին շարունակուելով երկարանում է և բարձրանում և ընկնելով հիւսիսային սիւների կամարների վերայ՝ կազմում է առաջինին հաւասար փոքր աղեղ և ապա ամրանում է քարվանսարայի հիւսիսային պատի վերայ։ Ուրեմն՝ փոքր աղեղները կազմում են կողքերի կամարները, իսկ մեծ աղեղը—մէջ տեղի մեծ կամարը։

Սիւների արանքներումը բարձր հագուցած են տասն և վեց հատ քարէ նաւակներ իբրև մսուրք։ Իւրաքանչիւր նաւակի եզրումը երևում են չորս ծակ՝ ձի կապելու համար։ Ուրեմն իւրաքանչիւր երկու սեան արանքումը կանգնելիս են եղել չորս ձի, կամ քարվանսարայի մի կողքի կամարի տակ երեսուն և երկու ձի, ընդ ամենը քարվանսարայի մէջ վաթսուն և չորս ձի։ Կողքերի կամարները լոկ ձիանց համար են և ձիանքը կանգնելիս են եղել միմեանց դէմ, այսինքն պոչերով դէպի հարաւային և հիւսիսային պատերը, իսկ գլուխներով դէպի քարվանսարայի մէջ տեղը, որ բոլորովին արձակ և ազատ դաշտ է կազմել։

Դռնից հաշուելով մի կողմի չորրորդ սիւնից դէպի միւս կողմի նոյներորդ սիւնը ձգվում է միջնապատ՝ մի դռնակով, որով կազմվում է առանձնարան մեծ կամարի տակ նորա (միջնապատի) և դռան արանքում։ Առանձնարանի հարաւային և հիւսիսային կողմերում՝ դռնից մինչև չորրորդ սիւները ձգվում են լայն սալաքարեր ննջելու և նստելու համար։ Սոքա մսուրներից բարձր են դրած և թէ ինչի վերայ են ամրացած, այդ ինձ յայտնի չէ, ըստ որում բոլոր քարվանսարայում այնքան անասունի աղտոտութիւն կայ, որ ծածկել է յատակը մինչև մսուրները, այնպէս որ կողքերի կամարների տակ կարելի է ման գալ միայն կուզեկուզ։

Քարվանսարայի վերջին (արևմտեան) ծայրումը կան երկու մի[illegible] հանդէպ դռներով սենեակ։ Հարաւային սենեակի դուռը թրքով ծա[illegible]լ է, իսկ հիւսիսայինի մէջ կարելի է մտնել միայն փորսող։ Առաջին սենեակի դռան վերը՝ պատի մէջ հագուցած է մի սրբատաշ քար բոլորովին հարթ մակերևոյթով, որ Ջալալեանի գրքի մէջ դարձել է խաչքար։ Քարվանսարան իւր լոյսը ստանում է երեք լայն լուսամուտից (երդիկ) միջնակամարի առաստաղի մէջ։ Դռնից մտնելով եթէ թեքուենք իսկոյն դէպի աջ կողմը, այդ տեղ, հիւսիս արևելեան անկիւնումը կտեսնէք պատի մէջ փոքրիկ խողովակ, տակը դրած երեք արշինաչափ երկարութեամբ քարէ նաւ, իբրև ջրաման։ Այդ նաւը ունեցել է իւր նման մի ընկեր ևս, բայց Նորբայազետի գաւառի Վերին Ղարանլըխ գիւղի բնակիչք մօտ տարիներումս տարել են իրեանց գիւղը։ Յայտնի է ուրեմն, որ դրսից ջուրը գալով անցնելիս է եղել խողովակով դէպի քարվանսարայի ներսը՝ նաւակների մէջ անասունների և մարդկանց պիտոյքի համար։ Աղբիւրը և այժմ իսկ բղխում է քարվանսարայից 30 քայլ դէպի հիւսիս-արևելք։

Եթէ հետաքրքրութիւնից բարձրանանք քարվանսարայի տանիքի

վերայ, կտեսնենք որ նա ամբողջապէս ծածկուած է լայն սրբատաշ սալերով՝ երկարութեամբ աւելի քան երեք արշին և մեծ հմտութեամբ միմեանց հագուցած։ Տանիքը ունի ձկան մէջքի նմանութիւն։ Շինութեան քարեղէն մթերը վերցրած է նոյն իսկ քարվանսարայի մօտից, ինչպէս ցոյց է տալի շինութեան և օրահանքի քարերի նմանութիւնը։

Բայց և այնպէս այդ չքնաղ շինութիւնը շուտով աւերակ կդառնայ, ըստ որում սիւները շատ տեղ թեքուել են, պատերը ճեղքուել են, դրան կողմից չորրորդ և հինգերորդ սիւների արանքի կամարները այնպէս են ճեղքուել, որ ամբողջ քարվանսարայի մարմինը բաժանուել է երկու կէս։ Այդ բոլոր չարիքը հասել է քարվանսարայիս 1840 թուականի շարժի շնորհիւ։ Մորանից յետոյ մի չնչին հարուած ևս, և ահա ճանապարհորդը չքնաղ շինութեան տեղում կտեսնի սրբատաշ քարերի լոկ վիթխարի կոյտը......

Քանի տարի արդեօք կանգնած է՝ այդ պճնազարդ շինութիւնը, ով է դորա շինողը և ինչ նպատակի համար է շինել։ Այդ հարցերը լուծելու համար հարկաւոր է դիմել վերոյիշեալ հայերէն արձանագրութեանը, որ կազմում է քարվանսարայի միակ պատմութիւնը։ Ջալալեանի գրքի մէջ այդ արձանագրութիւնը այնքան է աղաւաղուած, որ յայտնի չէ նաև շինողի անունը։ Դորա համար հարկաւոր եմ համարում ամբողջութեամբ դնել այստեղ արձանագրութեան իսկական պատճէնը։

« Յանուն ամենակարող հզօրին Աստուծոյ, ի թվին ՉՁԱ (781) յաշխար-
« հակալութեան Բուսայիդ ղանին, ես Չեսար որդի իշխանաց իշխանին Սըմ-
« բատի, ես նիրնամուն թոռն Իւանէին և եղբարց իմ աւուծագեղ իշխա-
« նացն Բուրթելին և Սմբատայ և Էլիկումին յազգէ Աւրբէլեանց և կենա-
« կից իմ Խորիշահն դուստր իշխանին Վարդանայ և Դուփենի յազգէն
« Ընխարեմանց ի հալալ արդեանց մերոց շինեցաք զհոգետուն ի փրկու-
« թիւն հոգւոյ մեր ծնողաց և եղբարց մեր ի Քրիստոս ննջեցելոց և կե-
« նաց իմոց ու որդւոցս Սարգսի Յովհաննիսի քաջի, Քրդին և Վարդա-
« նայ աղաչեմք զպատահողդ յիշել զմեզ ի Քրիստոս սկիզբն..... բա-
« պունապետին նաւայ ու կատարումն աղօթիւք նորա. թվին ՉՁԱ (781)»

Ահա այս է այն բոլոր անկատար տեղեկութիւնը, որ պատմութիւնը կարող է տալ մեզ քարվանսարայի վերաբերութեամբ։ Դարալագեազի զանազան շինութեանց վերայ եթէ ունենք որ և է պատմական տեղեկութիւն, դորա համար մենք պարտական ենք մասամբ նորանց պատերի արձանագրութեանցը և առաւել ևս Ստեփաննոս Օրբելեանին։ Վերջինի ուշադրութիւնից հազիւ թէ կարողանար սայթքել այդ քարվանսարան իւր այն ժամանակեայ նշանակութեամբ, եթէ նա լինէր մեր պատմաբանի օրով, բայց վերջինը մեռել է 753 հայոց կամ 1304 փրկչական թուականին, այնինչ քարվանսարան շինուել է 1332 (781 հայոց) թուականին, այսինքն 28 տարի Օրբելեանից յետոյ։

Եւ այսպէս Սելիմի հզօր քարվանսարան կանգնած է ահա 544 տարի

և այդ հինգ ու կէս դարը ոչինչ ազդեցութիւն չէր ունենալ նորա պարթև հասակի վերայ, եթէ 1840 թուականի շարժը փոքր ինչ անգթաբար չվարուէր։

Վերը գրած արձանագրութիւնը ցոյց է տալի, որ այդ շինութիւնը կառուցել են Օրբելեան Ջեսար իշխանը և նորա կին Խորիշահն իւրեանց հալալ արդիւնքով։ Ամուսինները կառուցել են իւրեանց ծնողաց, հանգուցեալ եղբայրների և իւրեանց չորս որդւոց՝ Սարգսի, Յովհաննէսի, Քրդի և Վարդանի հոգւոյ փրկութեան համար։ Ջեսար իշխանը պատմութեանը բոլորովին անծանօթ անձն է և որքան ես քննել եմ Դարալագեազի արձանագրութիւնները՝ Ջեսար անունը յիշւում է, բացի Սելիմի քարվանսարան, երկու տեղ ևս, այն է Ամաղուի Նորավանքի տապանաքարերից մինի վերայ և Հորս գիւղի մի խաչքարի արձանագրութեան մէջ։ Երբ մտնէք Ամաղուի Նորավանքի զանգակատունը, եկեղեցու մէջ տանող աստիճանների հէնց աջ կողմումը կտեսնէք մի փոքրիկ մարմարիոն տապանաքար, որ ամփոփում է իւր տակ Ջեսար իշխանի որդի մանուկ Իվանէի ոսկերոտիքը։ Արձանագրութիւնը բարբառում է։

« Կայ հանգուցեալ այս տապանի,»
« Ջքնաղ մանուկ զարմանալի,»
« Որ Իվանէ անուն կոչի,»
« Եղջիւր ծագել Աւրբելեցի,»
« Որդի Ջեսար մեծ իշխանի։»

Թէև այս ոտանաւոր արձանագրութիւնը թուական չունի, բայց ես կարծում եմ որ այս Ջեսարը պէտք է լինի քարվանսարայի շինողը։ Նոյն Ջեսար անունը յիշւում է և Հորս գիւղի հողում թաղուած խաչքարի արձանագրութեան մէջ, 1349 թուականից, որի իսկական պատճէնը դրեցի ԻԳ. նամակիս մէջ։ Այդ արձանագրութեանցը համաձայն Ջեսար Օրբելեանը առաջին անգամ յայտնուում է 1332 և վերջին անգամ 1349 փրկչական թուականներին, որ կազմում է 17 տարու շրջան։ Այնուհետև Ջեսարի անունը ոչ մի տեղ այլ ևս չէ յիշատակուում։

Իշխանաց իշխան Օրբելեան Ջեսարը թաթարների Բուսայիդ խանի աշխարհակալութեան ժամանակն էր։ Այդ Բուսայիդը (և ոչ Ըւսայիդ. Ջալալեան) մեռաւ 1334 թուականին և նորա անունը յիշւում է Հայր Ջամչեանի հայոց պատմութեան երրորդ հատորի 321, 324, 333 և 338 երեսներումը։

Ես Ժ. նամակումս յիշել եմ, որ տասներկու և տասներեքերորդ դարերում Դարալագեազի գլխաւոր ճանապարհը անցանելիս է եղել Շարուրից Արփաչայի ձախ ափերով, Արփայ գիւղով, Արփայի կամրջով, ապա Արփաչայի աջ ափերով և Դոյթուլ գետի աջ կողմից մտել է Սելիմի ձորը, որտեղից դուրս գալով Այրիջի բարձրավանդակը, գնացել է դէպի Սևանայ ծովը։ Այդ երկար ճանապարհը կտրելու համար ճանապարհորդը անշուշտ պէտք է ունենար մի քանի տեղ օթևաններ։ Ճանապարհին մօտիկ

գիւղերում իջնանել գուցէ անյարմար էր և կամ վտանգաւոր։ Դորանից է ահա որ յիշեալ ճանապարհի վերայ շինած են Աղաւնաձորի, Աղքեանդի, Սելիմի և Այրիջի (էշակ քարվանսարայ) քարվանսարաները։ Այսպիսի աւերակ քարվանսարաներ այժմ կան մի քանի տեղեր Երևանի Նահանգումս ա. Ապարանի գաւառում (Արագած լերան հիւսիսային ստորոտումը) բ. Ախուրեան գետի վերայ Ջրփիի գիւղի մէջ, գ. Նոյն Ախուրեանի վերայ Հաջի-բայրամ գիւղի մօտ, դ. Արագածի արևելեան ստորոտում Կարփի գիւղի մօտ և այլ շատ տեղեր։

Արդեօք ինչ պայմանով էին շինուում քարվանսարաները և ինչ կանոնների էին ենթարկվում։ Ինչպիսի կառավարութիւն ունէին և ով էր նորանց կառավարիչը։ Սելիմի քարվանսարայի արձանագրութիւնից յայտնագործուում է, որ նորան կառուցել է մասնաւոր մարդ մարդասիրական և կրօնական զգացմունքների դրդմամբ։ Այդ պատճառով նա արձանագրութեան մէջ կոչվում է հ ո գ է տ ո ւ ն, որ նշանակուած էր շինողների և նորանց արենակիցների հոգւոյ փրկութեան համար։

Ճանապարհորդը իջնանելով այդ քարվանսարաներում ինչ պայմանի էր ենթարկուում, որքան ժամանակ նա կարող էր մնալ այնտեղ, որտեղից և ինչ պայմանով էր նա ստանում իւր և իւր անասունի սնունդը. քարվանսարայի շինողը նորանից նիւթական օգուտ քաղում էր թէ ոչ, գոնէ բացասութեամբ։ Բացասութեամբ եմ ասում, ըստ որում դժուար է ենթադրել որ Չեսար Օրբելեանը իւր շինութիւնը հ ո գ է տ ո ւ ն անուանելով նիւթական օգտի ակնկալութիւն ունենար նորանից։ Ընդհակառակը նա իւր պատահողներից մ ի ա յ ն խ ն դ ր ո ւ մ է ր ո ր ա ռ Ք ր ի ս տ ո ս յ ի շ ե ն նորան և նորա ազգականներին։ Եթէ այս այսպէս է, ապա ինչպէս էին միւս քարվանսարայք։ Վերջապէս որ և իցէ կարգ ու կանոն պէտք է լինէին նորանց մէջ թէ ոչ և ով էր պարտական հսկելու այդ կարգ ու կանոնը կատարելու համար և այլն, և այլն և այլն։ Եթէ շարունակեմ, հարցերս անվերջանալի կլինին.....։

Հիւրերի մասին հոգացողութեան սովորութիւնը դեռ կռապաշտութեան ժամանակը կար Հայաստանի մէջ։ Տիգրան գ. Արշակունի թագաւորը Նոր տարեգրութեան երկրորդ դարու վերջերումը կարգադրութիւն արեց որ Բագաւանի մէջ իւր եղբօր Մաժան քրմապետի գերեզմանի վերայ բագին շինեն, որպէս զի անցաւորները և օտարականները այնտեղ եղած զոհերից կարողանան կերակրուել և բագինի մօտերքումը բնակուել։ Քրիստոնէութեան ժամանակը, այն է չորրորդ դարու վերջին կէսումը Մեծն Ներսէսը, բացի հիւանդանոցներ և աղքատանոցներ իւրաքանչիւր գաւառում շինել տալը, կարգադրութիւն արեց գիւղերի մէջ օտարանոցներ հաստատելու ճանապարհորդ և պանդուխտ մարդիկների բնակուելու համար, ըստ որում «հիւրք ո՛ ծանօթք ոչ ընդունէին և օտարք ոչ ժողովէին» ասում է Մովսէս Խորենացին։ Այդ հաստատութիւնների նիւթական ապահովութեան համար Մեծն Ներսէսը աւանների և ագարակների կալից, բեր-

դից և բուսական բերքերից եկամուտ նշանակեց։ Իսկ հաստատութիւնները կարդ ու կանոնի ենթարկելով կարգեց նորանց վերայ առանձին տեսուչներ։

Այսպէս էր լինում չորրորդ դարումը. բայց ինչպէս էր լինում հազար տարի Ներսէսից յետոյ. այն է տասնեւչորսերորդ դարումը։ Այստեղ կրկին առաջ են գալի վերը յիշած հարցերը, որ թողնում եմ առանց լուծելու։

ԳԱԶՐԵՐՈՒՆԻ։

ՀԱՅԵՐՈՒՍ ԲԱՂՁԱՆՔԸ

Ա՜խ, ինչպէս կուզեմ տեսնել մեր Հայքն
Ազատ, ապահով, կրթեալ - ինքնագոհ,
Ամէն հայի տուն — դրախտ երկնային….
Լոկ այդ բանն ինձնից չուզենար մէկ զոհ:

Ա՜խ, ինչպէս կուզեմ տեսնել Հայաստան
Մի օր ազատուած թշնամու ձեռքէն
Հայի երկիրը — հայի սեպհական…
Լոկ այդ չէր առնէր ինձ իմ կոպէկէն:

Ա՜խ, ինչպէս կուզեմ, որ մեր Հայերուս
Արծարծվէր սէրը ուսման, գիտութեան,
Հայի մէջ չմնար մի հատիկ անուս…
Լոկ հեռի ինձնից թուղթ ստորագրութեան:

Ա՜խ, ինչպէս կուզեմ, որ Հայ պատանիք
Դէպ համալսարան խմբով վազէին,
Եւ ջուխտերով երթար Հայ աղջիկ…
Լոկ ինձնից նոքա կոպէկ չուզէին :

Ա՜խ, ինչպէս կուզեմ, որ Հայի երկիրն
Ճեմարան, դպրոց, գրատուն ունենար,
Ունենար Թատրոն և շատ լրագիր….
Լոկ ինձ նա փողի անունը չտար:

Ա՛խ ինչպէս կուզեմ՝ որ մեր Զէյթունցին
Միթռայլեօղ՝ շասպօ՝ ռըմբկէն ունենար՝
Զարդ ու բուրդ անէր Գուրդ ու Զէրքէզին...
Լոկ ինձնից զէնքի նա փող չուզենար։

Երբ մեր Հայրենին հրաշքով աղատուէր՝
Մերոնք էլ ազատ կեանք—օր վարէին՝
Ա՛խ ինչպէս՝ ինչպէս լաւ բան կրլինէր
Երբ Հայք ինձ իրանց իշխան ընտրէին։

ԴԱՄԱՌ—ԲԱԹԻՊԱ։

ՄԻ ԼԵՀԱՑԻ ՍԱՎՕՆԱՐՕԼ

ՊԵՏՐՈՍ ՍԿԱՐԳԱ

(Sigismond Cieszkonski. Revue Britannique mai et juin 1878.)

1606ին Վարշավայում գումարուած ազգաժողովը բոլոր նախընթաց ժողովներից փոթորկալի էր եղել: Լեհ ազնուականութիւնը որ միշտ անհանգիստ էր եղած իւր արտօնութիւնների համար, կարծելով թէ վտանգ է սպառնում նոցա թագաւորական իշխանութեան կողմից, այս անգամ սովորականից աւելի կասկածական աչքով էր նայում արքունիքի վրայ. շատ իշխաններ բանը այնտեղ էին հասցրել որ պահանջում էին թագաւորին դատաստանի ենթարկել: Սորանից մի կողմն, անբուժելի երկպառակութիւն էր ծագել ժողովարանի մէջ. երկպառակութիւն որ յաջորդ տարին քաղաքական պատերազմի նշան պիտի տար: Ցրուելուց առաջ՝ ժողովի բոլոր անդամները ըստ սովորութեան մայր եկեղեցին գնացին, ուր թագաւորական տան երէցը սովորաբար մի քարոզ էր ասում: Նոյն ժամանակ այդ պաշտօնը յանձն առնող քարոզիչը մի յիսուսեան կրօնաւոր էր՝ Պետրոս Սկարգա անունով, որ յայտնի էր իւր պերճախօսութեամբ. նա մի քանի անգամ արդէն առիթ էր ունեցել Սիգիսմունդ Գ-ի թագաւորութեան ժամանակ կատարուած յաղթութիւնները փառաբանելու: Նոյն իսկ յաղթական զօրքերի առաջնորդները իւր ունկնդիրների թւումն էին: Բայց նա կարծես այդ օրը մոռացութեան տուաւ նոցա ներկայութիւնը, և իւր քարոզի բնաբան առաւ Եկլեսիաստէսի հետևեալ խօսքը. «Թագաւորութիւնները իրանց անօրէնութեան պատճառով մէկ ազգից միւսին են փոխադրւում», և խորհելով միայն հայրենիքին սպառնացող դժբաղդութիւնների վրայ, «Զուր են», կանչեց նա ականաւոր ժողովին դառնա-

լով, զուր են, ի՞շխաններ, ձեր տարած յաղթութիւնները և թշնամիների վրայ բերած ահ ու սարսափը: Ձեր գժտութիւնները, եթէ միայն մի վախճան չտաք նոցա, անշուշտ վերջիվերջոյ սարկութիւնը կը բերեն այս երկրի վրայ: Միթէ չգիտէ՞ք որ թշնամին միշտ պատրաստ է և միայն մի առիթ է սպասում ձեզ ոչնչացնելու համար: Հէնց որ յարմար առիթը ներկայանայ, նա կը յարձակի ձեզ վրայ՝ իբրև մի որսի վրայ, որին ձեռք ձգելու ապահովութիւնն ունի: Խրախուսուեցէք, կաղաղակէ նա իւր դաշնակիցներին, նոցա սրտերը բաժանուած են, և այժմ նոքա կը կորչին. նոցա ոտքը սայթաքում է, այլ ևս չեն կարող ազատուիլ մեր ձեռքից. թնաջինջ անենք նոցա:

«Այն ժամանակ օտար բռնակալութիւնը կուլ կը տայ ձեր բոլոր իրաւունքները. այդ իրաւունքները, որոնցով այսօր այդքան պարծենում էք, առակ կը դառնան ապագայ սերունդների համար և ծիծաղելու առարկայ կը լինին աշխարհի համար: Այն ընդարձակ երկիրները, այն պետութիւնները որ երբեմն անկախ էին և ինքնակամ եկան ձուլուեցան ձեր պետութեան հետ՝ իրանց զօրութեամբ ձեր զօրութիւնը ընդարձակելով, ձեր երկպառակութիւնների շնորհով կը բաժանուին, հեռահետ կը հեռանան ազգի մարմնից և ձեր հայրենիքը բոլորովին մաս մաս կը լինի: Ձեր լեզուն, պաշտօնական լեզուների մէջ միակ բարբառը, որ աղաղութիւնը ընտրել ու ընդունել է, ձեր հարազատ լեզուն կը խլուի ձեզանից, և այն ցեղն սերունդները, որ երբեմն ծաղկեալ ու փառաւոր վիճակի մէջ էին՝ ստիպուած պիտի լինին ընդունելու մի արհամարհելի ժողովրդի սովորութիւնները: Այլ ևս ոչ թագաւորներ կունենաք, ոչ ընտրութիւններ. ձեր հայրենիքն անպատմ ձերը չի լինիլ: Աքսորուած, անպատուած, թշուառ ու թափառական կեանք վարելով, նոյն իսկ այն թագաւորութիւնները երես չեն ցոյց տալ ձեզ, որոնք այսօր ձեր դաշնակցութիւնն են որոնում: Ոչ թէ պատերազմից պիտի երկնչեք, որովհետև ձեր արիութեամբ կը կարողանայիք թշնամիների առաջն առնել. ձեր կորուստը ներքին գժտութիւններից պիտի առաջանայ: Մի պտուղ որի կեղևը միայն սկսում է ապականուիլ՝ դեռ կարող է պահպանուիլ. բաւական է եթէ վատած տեղը կտրուի. իսկ եթէ մի որդ կրծում է նորան միջից, ամենայն ինչ կորած է. պէտք է դեռին ձգել նորանց»:

Մարդ զմայլանում է հաւատալ որ այս խօսքերը արտասանուած լինին տասանեօթներորդ դարու սառաջին տարիներում, այսինքն Լեհաստանի բաժանումից մօտ երկուհարիւր տարի առաջ: Այդ

ժամանակ ամէն ինչ կարծես փառաւոր և հաստատուն ապագայ էր խոստանում այդ պետութեանը: Հանարակապետութեան ընտրողական դահի վրայ նստած էր Վալանների ցեղից սերուող մի իշխան, որին, հօրը մահից յետոյ, ընկել էր Շվեդիայի թագաւորութիւնը; այսպէսով հիւսիսային երկրների երկու ամենազօրաւոր պետութիւնները միացել էին մի դայիսոնի տակ: Նորա թագաւորութեան սկզբում Գերմանիայի կայսեր եղբայրը ամօթալի կերպով յաղթուելով, նորընտիր իշխանի երկիրը երկար ժամանակ ապահով պիտի մնար աւստրիական տան փառասիրական ձգտումներից: Նախընթաց տարին ուրիշ նշանաւոր յաղթութեամբ մի վտանգաւոր յափշտակիչի նպատակները խորտակուել էին. Սուդերմանիայի դուքսը, Սիքիսմունդ թագաւորի հարազատ հօրեղբայրը և Գուստավ Ադոլֆի հայրը, իւր եղբօրորդու բացակայութեան ժամանակ փորձել էր Շվեդիայի թագաւորութիւնը ձեռք ձգել: Նոյնքան փառաւոր յաղթութիւններ տարուել էին մոլդավիացիների, թաթարների և ռուսների վրայ, որով բոլոր շրջակայ ազգերը ակնածում էին Լեհաստանից: Կարելի է ասել թէ երբէք զէնքերի բաղդը աւելի հաստատուն կերպով չէին ցոյց տուել իրանց յաջողութիւնը Լեհացիներին: Եւ սակայն այս պիսի յաղթութիւնների մէջ, մի փառաւոր թագաւորի առաջ, որի երկրները ձգվում էին Պալտիկ ծովից մինչև Սև ծովը, մի աշնուականութեան առաջ, որ իրաւամբ պարծենում էր իւր սխրագործութիւններով, աւելի ևս պարծենում էր իւր իրաւունքներով որ այն ժամանակ բոլոր աշխարհում ինքը միայն էր վայելում, այնպիսի ունկընդիրների ներկայութեանը, որ իրանց ապահովութիւնը կարծում էին տեսնել յաղթութիւնների մէջ, — մի մարդ տխուր նախազգացութիւնից դրդուած աղաղակում էր. «Ի՞նչ անեմ քեզ, դժբաղդ թագաւորութիւն: Եթէ Եսայի լինէի, բոլոր ոտքերով և պատառոտուն հանդերձներով կը շրջէի աղաղակելով. Անուղղելի մեղաւորներ, դուք որ ապստամբել էք աստուածային օրէնքներից, ահա այսպէս պիտի կողոպտեն ձեզ և պիտի մերկացնեն ձեր թշուառութիւնը: Ձեր անօրէնութիւնը բարձրանում է մի հաստ պարսպի նման, որի ճեղքերը այստեղից տեսնում եմ. այդ ոչինչ է, ասում էք դուք, այդ ոչինչ է: Բայց այն միջոցին երբ ամէնից աւելի վստահ կը լինիք, պատը կը խորտակուի և կը ծածկէ ձեզ իւր փլատակների տակ:

«Եթէ Երեմիա լինէի, ոտքերս և վիզս շղթայակապ կը դայի ձեր առաջ և կաղաղակէի. Այսպէս կը կաշկանդուին և գերի կը վա-

բուին ձեր առաջնորդները։ Եթե պէտք է ներկայանայի ձեզ մի պատասխանատուն և ցեցակեր հանդերձով, և թոթափելով փոշի դարձնէի նորան և ասէի ձեզ. Ահա այսպէս քամին կը տանի ձեր փառքն ու մեծութիւնը։ Վերջապէս, մի կաւէ անօթ առնելով և ձեզ իմ շուրջը կանչելով, ամենայն զօրութեամբ կը խփէի նորան պատին և մարգարէի հետ կապարակէի. Ահա այսպէս կը խորտակէ ձեզ Տէր Աստուած իւր բարկութեան մէջ. նա կ'ոչնչացնէ ձեզ, ինչպէս ես ոչնչացրի այս անօթը, որի կտորները այլ ևս չեն կարող կպչել»։

«Յետոյ, երբև թէ բաւական երկիւղ ձգած չլինէր իւր ունկնդիրների սիրտը, երբև թէ զգում չլինէր որ իւր խրատներն անգամ անպտուղ կը լինին, նա աւարտում էր ցոյց տալով իւր խօսքերի բուռմը և մի առ մի թուում էր այն փորձութիւնները, որոնց դատապարտուած էր իւր ազգը. «Ո՞վ ինձ բաւական արտասուք կը տայ, ապաշխարում էր նա վշտացած սրտով, զիշեր ցերեկ իմ հայրենիքի որդոց դժբաղդութիւնների վրայ ողբալու համար։ Այսպէս ուրեմն դու այրիացար, գեղեցիկ երկիր, մայր այնքան զաւակների։ Տեսնում եմ քեզ քո սարկութեան մէջ, ո զոհող թագաւորութիւն. դու ողբում ես քո որդոց վրայ և մի մարդ չես գտնում, որ քեզ մխիթարէ։ Քո հին բարեկամները դաւաճանում են քեզ և երեսները քեզանից դարձնում են. քո առաջնորդները, քո պատերազմականները ոչխարների հօտի պէս գնում են երկրի վրայ առանց կանգնելու և առանց մի հանգստեան տեղ գտնելու։ Մեր եկեղեցիները և մեր սեղանները թշնամու ձեռքը մատնուեցան. սուրը բարձրանում է մեր առաջ, թշուառութիւնը սպասում է մեզ դուրսը և սակայն Տէրը ասում է. Առաջ գնացէք։—Բայց ո՞ւր գնանք, Տէր։—Գնացէք մեռէք, դուք որ մեռնելու էք. գնացէք չարչարուեցէք, դուք որ չարչարուելու էք»։

Ո՞վ չի զարմանալ այսօր կարդալով այս խօսքերը, որ սրանից երեք տար առաջ ասուել են մի ազգի, որ իւր զօրութեան ու փառքի վերին աստիճանին էր հասել։ Եւ սակայն Եղեհասանի գիճակը նապատուշակուեցաւ այդ դժբաղդ երկրին ոչ միայն Հին կտակարանի մարգարէներից փոխ առած խորհրդաւոր ձևերով, որոնց երբեմն մեղադրում են թէ երկրիմի այլաբանութիւններ են գործ դնում, այլ նաև ամենապարզ ու գրական կերպով, այնպիսի որոշ խօսքերով, որ ոչինչ երկբայութիւն չեն կարող թողնել մարդու մտքում։ Արդարև այս լեզուն բանեցնող մարդը կերկայնամիտ չէ կարող լինել մի

ցնորամիտ կամ երազատես համարուիլ. վերջին ժամանակների փորձը կատարելապէս իրաւունք տուաւ Նորան: Բայց ի՞նչպէս եղաւ որ մի հասարակ քարոզիչ, և այն այնպիսի ժամանակում, կարողացաւ նախագուշակել իւր երկրի ցաւալի վախճանը: Ո՞ւր գտաւ նա այնքան զօրութիւն և համարձակութիւն այդպիսի ունկնդիրների ներկայութեանը դամբանական ճառ կարդալու մի ազգի ղլխին, որ իւր կենսականութեան ամենափառաւոր ապացոյցներն էր տալիս: Ճշմարիտ է, բեմբասացութեան պատմութիւնը, նոյն իսկ արդեան ժամանակներում այս տեսակ մարգարէական նախազգացութեան զարմանալի օրինակ է ներկայացնում մեզ. այդ Սավօնարօլի օրինակն է: Բայց առանց կամենալու Սուրբ Մարկոսի համբաւաւոր աւագերէցի փառքը նսեմացնելու, թոյլ տրուի մեզ նկատել որ Կարոլոս Ը-ի Իտալիա յանձն առած արշաւանքը այնպիսի մի դէպք էր, որ ժամանակով շատ աւելի մօտ էր և բացի սորանից շատ աւելի հաւանական քան Լեհաստանի քայքայումը մեր աչքի առաջ ունեցած ժամանակի վերաբերմամբ: Նախազուշակել այդքան հեռաւոր ժամանակում ճակատագրի աղետալի վճիռը, առաջուց յայտնել Նորան այդպիսի զարհուրելի ճշգրտութեամբ, միթէ այդ խորամիտ խելքի, բացառիկ իմաստութեան նշան չէ: Մենք կարծեցինք թէ շատ օգտաւէտ կը լինէր ուսումնասիրել այդպիսի մարդու գործունէութիւնը, որ կարողացաւ այդքան նրբութեամբ տեսնել ապագան: Թէ շատ խրատական կը լինէր հետազօտել այն իրողութիւնները, քննել այն քաղաքական և բարոյական երևոյթները, որ առաջնորդեցին այս ականաւոր անձին և վերոյիշեալ զարհուրելի եզրակացութեանը հասցրին:

Ակարգան տասնութ տարի շարունակ քարոզեց Լեհաստանի ազգային ժողովի առաջ վերոյիշեալ դէպքի նման հանգամանքներում: Նորա բեմը այդպիսի բոպէներին մի նոր տեսակ ամբիոնի էր փոխվում: Նա բազմաթիւ քարոզներ արտասանեց, որոնք ամենայն իրաւամբ քաղաքական ճառեր են համարվում և որոնք որքան հոգեորական նոյնքան և պատմական նշանակէտից առաջ ամենամեծ կարևորութիւն ունին: Այս քարոզների մէջ նա հեղհեղուկ քննում է այն խնդիրները, որ ներկայ ժամանակների ամենազբաղդ ազգերից մէկի ապագային էին վերաբերում: Նա մի առ մի հերքում է այն սխալանքները, որոնց անխուսափելի հետևանքն եղաւ մի պետութեան անկումը, որ ժէ դարում ամենաճաշակեալ վիճակի մէջ էր:

Մեր դիտաւորութիւնն է ուսումնասիրել այս քարոզները, որ

Սկարդան արտասանեց իւր կեանքի վերջին քսան տարիների ընթացքում, որովհետև արդէն յիսուներկու տարեկան հասակումն էր՝ երբ Սիքիսմունդ գ-ի պալատը հրաւիրուեցաւ: Մինչև այն ժամանակ, իւր կրօնական պարտաւորութիւններին ու կոչմանը հաւատարիմ մնալով, նա երկար տարիներ անց կացրեց վանական աւանձնութեան մէջ: Եւ թէպէտ իւր կեանքի այս առաջին մասը աւանձին ուշադրութեան արժանի դէպքեր չէ պարունակում, այնու ամենայնիւ աւելորդ չէ տեղեկանալ այն անցքերին, որոնք նոյն շրջանում նորա աչքերի առաջ կատարուեցան: Առանց այդ անցքերին մասնակից լինելու և միայն իւր տեսակէտից դատելով և գնահատելով պատահած իրողութիւնները, նա հետզհետէ այն համոզմանն եկաւ՝ որ այնպէս զօրաւոր կերպով արտայայտեց իւր հուսորական արդիւնքների մէջ: Պէտք է ասել որ այս միակ միջոցն է մնում մեզ այս զարմանալի մարդու կեանքի հանգամանքները քննելու: Միցկեվիչ լեհացի բանաստեղծը սլավոնական գրականութեան վրայ Փարիզում ասած դասերի մէջ առաջին անգամ խոստովանեց՝ որ շատ սակաւ կենսագրական տեղեկութիւններ են մնացել Պետրոս Սկարգայի գերդաստանի և նորա մասնաւոր կեանքի վրայ: «Այդ մեծ կորուստ չէ մեզ համար, աւելացնում է բարեբաղդաբար դասախօս բանաստեղծը, որովհետև այդ մարդը ոչ մի կուսակցութեան և ոչ մի շրջանի ներկայացուցիչ է. նա մի ամբողջ ազգ է պարունակում իւր մէջ, նորա ընտանիքը Լեհաստանն է»: Այս գեղեցիկ խօսքերը բաւական են մխիթարելու մեզ վերոյիշեալ պակասութեան համար և յորդորելու որ խորհրդաւոր քարոզչի կեանքի հանգամանքներին ծանօթանանք: Այսպէսով նորա պատմութիւնը սերտ կապով կապուած ենք գտնում իւր երկրի պատմութեան հետ և նա ներկայանում է մեզ իբրև մի մարգարէ, որ ունայն տեղը զգուշացնում է այն ազգային ողբերգութեան անմիտ պերճասաններին մի մեծ ողբերգութեան, որի ընթացքը ինքը միայն է պարզում և եղերական վախճանը նախագուշակում է:

Այդ ողբերգութիւնը նորա աչքերի առաջ բացուեցաւ: Դեռ այդ ցաւալի ողբերգութեան ամենափոքր նշանն անգամ չէր երևում՝ երբ Սկարգան աշխարհ եկաւ: Նա ծնաւ 1536ին Մօռավիայի մի փոքրիկ քաղաքում. նորա ամբողջ երիտասարդութիւնը անց կացաւ Յագելլոնեան հարստութեան երկու վերջին իշխանների՝ Սիգիսմունդ

Ա. Ծերունու և նորա որդու Սիգիզմունդ Օգոստոսի փառաւոր ու յաջող թագաւորութիւնների ժամանակ: Այս մօտ քառասնամեայ շրջանը Լեհաստանի պատմութեան ամենաերջանիկ ժամանակն է վերաբերում: Նա ներկայացնում է դուցէ նոյն երկրի յաջողութեան ամենաբարձր կէտը, նորա ոսկեդարը, ինչպէս որ ասում են ազգային պատմիչները: Այս միջոցում, մինչ եւրոպական ազգերի մեծ մասը, դարևոր հարստութիւնների հովանաւորութեան ներքոյ, զօրաւոր միապետութիւններ էին կազմել, ԺԶ դարու առաջնակարգ պետութիւնների շարքում միայն Լեհաստանը ներկայացնում էր մի զարմանալի հասարակապետութեան պատկերը, որ կախվում էր ընտրողական թագաւորութիւնից և կառավարվում էր այնպիսի օրէնքներով, որոնք անհատական ազատութեան ամենաանսահման սկզբունքների վրայ էին հիմնուած: Այս կողմից նա ըստ երևոյթին ամենաքաղաքակիրթ ազգերից առաջ էր անցել, և կարծես Ֆրանսիական յեղափոխութիւնից երկու հարիւր տարի առաջ արդէն իւր կառավարութեան մի քանի սկզբունքների մէջ իրագործում էր այն իդէալը, որին ձգտում էին ԺԸ դարու ամենամեծ փիլիսոփաները: Սակայն մինչև այդ ժամանակ Լեհաստանի հաստատութիւնները որոշ կերպարանք չէին ստացել՝ ոչ ազգի ընդհանրութեան մէջ և ոչ նորա օրէնսդիրների մտքում: Երբէք ճշդութեամբ չէին սահմանել ու ձևակերպել նոցա, երբէք մանաւանդ քաղաքական դէպքերը առիթ չէին տուել փորձելու թէ մինչև որ աստիճան յարմարաւոր ու գործադրելի են կեանքի մէջ: Արդարև, թէև ոչ ոք չմտածեց կասկածի տակ դնել ընտրողական իրաւունքի օրինաւորութիւնը, թէև ոչ մի ապօրինի գործողութիւն չէ խափանել երբէք նորա ազատ գործադրութիւնը, այնու ամենայնիւ այս արտօնութիւնը երկար դարունակ ուրիշ արդիւնք չունեցաւ՝ բայց եթէ երկրի իշխանութիւնը միևնոյն ցեղի մէջ պահպանել. ահա այս կերպով Եագելլոնեան տոհմը բազմաթիւ թագաւորներ տուեց Լեհաստանին, որոնք իրանց իմաստուն քաղաքականութեամբ մեծութեան վերին ծայրը հասցրին նորան և այնքան ազնիւ գտնուեցան որ երբէք չներեցին իրանց ազգի թանկագին իրաւունքներին որևէ վնաս հասցնել: Գուցէ Լեհաց կողմից Եագելլոնեան հարստութեան շնորհուած այս նախապատուութեան մէջ ուրիշ բան չպէտք է տեսնել՝ բայց եթէ մի շատ բնական ցանկութիւն; այն է մի դժգոհութեան պատճառ չտալ Լեթվանիային, որ ինքնակամ եկել միացել էր լեհական հասարակապետ-

տութեան հետ և որի ժառանգական դուքսերը նոյն Լանգեդոկեան տան իշխաններն էին։ Սակայն տարակոյս չկայ որ երկու ժողովրդների ձուլման հետևանքը ուրիշ կողմից էլ արդիւնաւէտ պիտի լինէր. շարունակ միևնոյն տոհմից թագաւորներ ընտրել, նշանակում էր լուութեամբ ընդունել ժառանգական իշխանութիւնը։ Բայց այդ զարհուրելի ճգնաժամը, որ երկար ժամանակ յետաձգուեցաւ հեղգհեակ յաջորդող և ազգի վստահութիւնը արդարացնող իշխանների շնորհով, չէր կարող վերջիվերջոյ չդալ մի պետութեան գլխին, որ ճիշդ ու որոշ սահմանադրութիւն չունենալով անակնկալ դէպքերից կախում ունէր։ Վաղ թէ ուշ այդ ճգնաժամը պիտի երևէր, և նա երևեցաւ նոյն իսկ մեր քարոզչի կենդանութեան ժամանակ։

Սկարգան ուղևորուել էր Հռոմ գնալու։ Այդ ճանապարհորդութիւնը նա յանձն էր առել նոյն ժամանակ պապական գահի վրայ փառաւորապէս նստող քահանայապետի հետ ծանօթանալու ցանկութեամբ, այն Պիոս Ե-ի հետ, որի քաղաքականութիւնը մի ոչնպիսի մեծ յաղթանակ էր տարել Լեպանտի յաղթութեամբ և որի մասին Վոլտէրը պիտի ասէր մի օր թէ «նորա ամենամեծ փառքը նոյն իսկ Կոստանդնուպօլսից էր գալիս» [1]։ Նա կամեցել էր նոյնպէս մտերմանալ եկեղեցիների հուչակաւոր առաջնորդի՝ Ֆրանչէսկո Բորջիայի հետ, յիշեալ ընկերութեան ոգուն հիմնաւորապէս տեղեկանալու դիտաւորութեամբ. որովհետև զանազան պատճառներ, որ յետոյ առիթ կ'ունենանք քննելու, սասպիկ յորդորում էին Նորան նոյն ընկերութեան մէջ մտնելու։ Բայց այս բոլոր պատճառները այնքան զօրութիւն չունեցան՝ որ կարողանային հեռու պահել Նորան իւր հայրենիքից այն ժամանակ՝ երբ երկրի ապագային ամենամեծ վտանգ էր սպառնում։ Նա վերադարձաւ ժամանակին՝ Լեհաստանի համար պահուած սասկալի փորձութեանը վկայ լինելու և ականատես այն կենդանի դասին, որ պատմութեան ամենախրատական դէպքերը պիտի տային Նորան։

Սկարգայի հայրենիք վերադառնալուց մի տարի յետոյ, 1572ին, վաղահաս մահուամբ հանդուս այն փառաւոր տոհմի վերջին ներկայացուցիչը, որ այնպիսի մեծ սեր էր վայելել ազգի կողմից։ Սիգիսմունդ Ա-ի մահը, Լեհաստանի գահի ընտրողական յաջորդութեան

---

[1]) Պիոս Ե-ի մահուան օրը Թուրքերը ուրախութիւնից լուսաւորեցին Վենետիկի ափերը։

դուռը վերջնական կերպով բանալով, հասարակապետութեան օրէնսդիրների առաջ մի սահմանադրական խնդիր դրեց, որի լուծումը նոքա թեթեւամտութեամբ մինչեւ այդ ժամանակ յետաձգել էին: Բոպէն վճռական էր եւ քաղաքագէտ անձանց բոլոր արթնութիւնը պահանջում էր: Ժամանակակից պատմիչներից մէկը լաւ է ըմբռնել այս դէպքի կարեւորութիւնը եւ այն արդարացի մտատանջութիւնը, որով վրդովուած էին մարդիկ: «Մի զարմանալի անհանգստութիւն, ասում է խոհական պատմիչը [1]), տիրեց ամենի վրայ երբ Թագաւորի մահուան բօթը տարածուեցաւ քաղաքի մէջ: Անհանգստութեան առաջին պատճառն այն էր, որ Թագաւորը ժառանգ չէր թողնում, մի դէպք, որի նմանը անյիշատակ ժամանակներից չէր պատահել: Եւ յիրաւի. ո՞վ կարող էր մտաբերել վերջին անիշխանութեան ժամանակները, ո՞վ մինչեւ անգամ այդ մասին մի խօսք էր լսել իւր հայրերից: Վերջին անգամ անիշխանութիւնը բացուել էր Լուդովիկոս Անժուեան Հունգարիայի ու Լեհաստանի Թագաւորի մահուան ժամանակ, եւ ընտրողական սկզբունքը նոր յաղթանակ տարաւ: Նորան յաջորդող Թագաւորները նոյնպէս ընտրութեամբ գահի վրայ բարձրացան. բայց ինչպէս Լուդովիկոսի մահուան ժամանակ, այսպէս եւ նորանից յետոյ ոչ ոք երբէք չմտածեց իշխանութիւնը մի օտարականի յանձնել: Եւ ահա յանկարծ Սիգիզմունդը մեռնում է, մինչդեռ ոչ յաջորդութեան իրաւունքն էր հաստատուել, ոչ գոնեա ընտրութեան ձեւը օրէնքով սահմանուել էր: Վտանգի մեծութիւնը այնպէս ակներեւ էր եղել ամենի համար, որ տակաւին Սիգիզմունդ Օգոստոսի կենդանութեան ժամանակ պալատի դեսպանները հրապարակաւ ցոյց տուին Լեհաստանի ազգային ժողովին Թագաւորին մի յաջորդ նշանակելու կարեւորութիւնը կամ առաջուց որոշելու ընտրութեան իրաւունքը եւ այն ժողովների կազմակերպութիւնը, որոնք գումարուելու էին նոր Թագաւորի ընտրութեան համար: Բայց այնինչ Թագաւորի առողջութեան եւ նորա անձի նկատմամբ զգացուած ակնածութեան պատճառով այս խնդրի քննութիւնը յետաձգվում էր, Սիգիզմունդի վաղահաս մահը ընդհատեց այս բոլոր փորձերը, ինչպէս որ ընդհատել էր սորա նման ուրիշ շատ խորհուրդների գործադրութիւնը:

Ժամանակակցի այս վկայութիւնից երեւում է, որ նոյն շրջանի

1) Հէյդէնշտէյն.

հեռատես մարդիկ շատ լաւ էին ըմբռնում այս ծանր վիճակը, և Սկարգան անտարակոյս սոցա թուին էր։ Շատ աւելի նուրբ ու թափանցիկ խելքի տէր լինելով քան վերոյիշեալ պատմագիրը, նա պէտք է այդ ժամանակ ուրիշներից աւելի լաւ կշռէր այն վտանգը, որին ենթարկվում էր իւր երկիրը և նոյնքան ստուգութեամբ դուշակէր նորա պատճառը։ Նա տեսնում էր մի ծաղկեալ պետութիւն, որ արդէն հինգ դար քաղաքական զոյութիւն էր ունեցել և համարեա իւր զօրութեան և իւր սահմանների ընդարձակութեան վերջին կէտին էր հասել, իսկ այժմ յանկարծ մի դէպք, որի առաջն առնել շատ դիւրին էր, մի դէպք, որպիսի է թագաւորող հարստութեան անգրանիկ ծիւղի սպառումը, սպառնում է կանգնեցնել նորան իւր ասպարիզում. առանց առանձին անյաջողութիւններ տեսնելու, առանց որևէ ընկերական յեղափոխութեան հետևանքները զգալու, այս տէրութիւնը յանկարծ մի անդունդի բերանը գտնուեցաւ, որ իւր անհոգ օրէնսդիրները փոյթ չէին ունեցել ժամանակին լցնելու։ Մի սահմանադրութիւն, որ իշխանութեան կանոնաւոր փոխանցման համար այսպիսի սովորական հանգամանք աչքի առաջ չունէր, որպիսի է իշխանական ցեղի ընդհատումը, առաջուց դատապարտելի էր և պատհանջում էր կամ նորից կազմուիլ և կամ որոշ կերպով ձևակերպուիլ։ Իւր թերութիւններով նա իւր հիմնած հաստատութիւններն անգամ բաղդի կամքին էր յանձնում, այնպէս որ տէրութեան հիմնական օրէնքները, իշխանութիւնը և մինչև կառավարութեան ձևը, բոլորը կարող էր, իւրաքանչիւր նոր ընտրութեան ժամանակ, անպատիժ քննութեան ենթարկուիլ։

Այս բանը չէր կարող հասկանալ երիտասարդ քարոզիչը, և մի դիպուածն՝ որ Վարշավայի մեծամեծների ժողովը դումարելուց անմիջապէս յետոյ պատահեցաւ, պիտի հաստատէր նորան իւր համոզման մէջ։ Խօսքը այն անձի կոչման վրայ էր, որին հին աւանդութեան ճնացորդը անիշխանութեան ժամանակ լոկ իշխանութեան ուրուականն էր տալիս։ Մի սովորութեամբ որ իւր սկիզբը խոր հնութիւնից էր առնում, Գնեզէնի արքեպիսկոպոսը, իբրև Լեհաստանի եպիսկոպոսապետը, թագաւորի մահուան ժամանակ ծերակուտին նախագահելու և նորընտիր թագաւորին պսակելու իրաւունքն էր վայելում։ Անշուշտ այս առանձնաշնորհութիւններից ոչ մինը և ոչ միւսը ազգի արտօնութիւններին չէին սպառնում. բայց այսքանը բաւական եղաւ կասկածներ յարուցանելու մի ազնուականութեան կողմից,

որ վճռել էր տէրութեան օգտի համար սահմանուած ամէն կարգերի մէջ մի փնասակար բան տեսնել իւր թանկագին արտօնութիւնների համար: Հապա թէ արքեպիսկոպոսը ժողովել էր Ծերակուտի անդամներին, որ ամէն կողմից սկսան յարձակուիլ Նորա վրայ. Նորան ամբաստանում էին թէ կամենում է յափշտակել մի իշխանութիւն որ, ասում էին, «շուտով թագաւորական իշխանութիւնից էլ կարող է տանջիլ, եթէ միայն փառասիրութիւնը, որ այնպէս շուտ է արծարծվում իշխանութիւն ունեցող մարդկանց սրտում, ղրդէր Նորան իւր սեպհական օգտի համար գործ դնել այն ազդեցութիւնը, որ պիտի տար Նորան Ծերակուտի վիճաբանութիւններին առաջնորդելու իշխանութիւնը»: Մի անգամ որ փոթորիկը բարձրացաւ, քիչ էր մնում որ մի անգամից տանէր այն վերջին խախուտ պատնէշը, որ քիչ շատ չափաւորում էր խռովարարներին, որոնք ոչինչ կարգ ու կանոն չէին ուզում ճանաչել: Բարեբաղդաբար, նոյն միջոցին այդ բարձր պաշտօնի մէջ գտնուող արքեպիսկոպոսը, Յակոբ Ուլխանսկին, որքան ճարտար՝ նոյնքան և համարձակ մարդ էր: Նա ինքն անձամբ յանձն առաւ պաշտպանել այն իրաւունքները, որ փորձում էին խլել Նորանից և փոթորկի դէմ կանգնելով գնաց ուղղակի Ծերակուտի ժողովարանը:

«Այս առաջին անգամ չէ, ասաց նա, որ խռովարար և փոփոխութիւններ սիրող մարդիկ պնդում լինեն թէ թագաւորի մահուան ժամանակ ամենայն իշխանութիւն, ամենայն հեղինակութիւն հասարակաց գործերի մէջ պիտի դադարի, ուրիշ խօսքով, թէ անիշխանութեան միջոցին անդարութիւնը պիտի ընդհատուի... Բայց ով որ ծանօթ է հնութեանը ինչպէս նաև քրիստոնեայ տէրութիւնների այժմեան վիճակին, նորա համար ակներև է որ ոչ մի պետութիւն, ոչ մի հասարակապետութիւն անփոյթ չէ եղել մի կատարիչ նշանակել՝ թագաւորի մահից յետոյ կամ նոյն իսկ նորա բացակայութեան ժամանակ Ծերակուտին նախագահելու պարտաւորութեամբ: Հեթանոսների մէջ ընտրութիւնն ընկնում էր մի աշխարհականի վրայ, իսկ քրիստոնեաների մէջ սովորաբար մի եկեղեցական է հրաւիրվում մինչև մի ասպիճան հանդուցեալ թագաւորի տեղը բռնելու՝ յանձնելով Նորան հրապարակական վիճաբանութիւններին առաջնորդել: Նոյն կարգը պահպանուել է և մեր մէջ, և այս իրաւունքը միշտ տրուած է եղել իմ նախորդներին, որոնց Կաղմիր Մեծը նախապատիւ իշխանի տիտղոսն է շնորհել: Իւր իշխանութեան ծագումն ու օրինաւորութիւնը պատմաբանօրէն հաստատելուց և բոլոր իրաւունքները որոշելուց յետոյ [1]) վերջապէս

[1]) Եպիսկոպոսապետի վայելած արտօնութիւնների մէջ վայ մեկը, որ կարող է չափազանց երևել. նա իրաւունք ունէր պաշտօնապէս ընդունել

անիշխանութիւնից առաջ եկած վտանգները ակներև փաստերով ապացուցանելուց յետոյ, անվեհեր արքեպիսկոպոսը վկայ էր բերում իւր հասակը (նա եօթանասուն տարուց աւելի էր), որպէս զի դորանով փարատէ այն կասկածանքները, որ կարող էր յարուցանել իւր ոյժ խիստ ընթացքը։ «Գալով ինձ, ասում էր նա խօսքին վերջ տալով, կեանքից ձանձրացած, զզուած դարուս ապականութիւնից, որի մէջ ապրում եմ, յոգնած փառաւոր հանդէսներից, ես արտանց ցանկանում եմ ազատ մնալ այն հոգսերից ու նեղութիւններից, որ պատճառում է ինձ նոյն իսկ իմ պաշտօնի մեծութիւնը։ Բայց երբ մի այսպիսի արտօնութիւն ժառանգութեամբ հասած է ինձ իմ նախորդներից, ապագան կը դատապարտէ ինձ եթէ դարձեալ չպաշտպանեմ նորան, ինչպէս որ մինչև այսօր պաշտպանել եմ։ Եթէ ամենազգուելի ամբաստանութիւնների ենթարկուած՝ ցաւով տրտի տեսնեմ որ այն անձինքը, որոնց վրայ աւելի յոյս ունիմ, թողնում հեռանում են ինձանից, այն ժամանակ բաւական կը լինի ապագայ սերունդների դատաստանին դիմել. թող հրապարակաւ վկայութիւն տրուի ինձ որ իմ պարտաւորութեան մէջ թոյլ չեմ գտնուել և թող այդ վկայութիւնը արձանագրուի հասարակապետութեան դիւանների մէջ»։

Այս ճարտար ու ազդու խօսքերով արքեպիսկոպոսը յաջողեցաւ խռոված մտքերը հանդստացնել։ Առժամանակ վտանգի առաջն առնուեցաւ և մի հեռատես մարդ իւր հաստատամտութեամբ կարողացաւ, գոնեա այս անգամ, պետութեան կարգերը անխախտ պահպանել։ Բայց այսպիսի ճգնաժամեր կարող էին կրկնուիլ իւրաքանչիւր նոր դէպքում, եթէ խոհեմ օրէնսդիրը չաշխատէր նոցա առաջն առնել։ Վահանանի նոյն ժամանակ գտնուած վիճակի մէջ կարծես երկու ճանապարհ կար այն պետական մարդու համար, որ կը կամենար իւր երկրի ապագան ապահովել։ Առաջին փրկարար միջոցն էր գուցէ բուն հասարակապետական կառավարութիւն սահմանել։ Ցիրաւի, պետութեան ամենամեծ պաշտօնէի ընտրութեան եղանակը առաջուց որոշելով, կարելի էր երկիրը ազատ պահել այն բուռն հարուածներից, որ բնականաբար իւր հետ բերում է ամենայն անակնկալի փոփոխութիւն հասարակական գործերի վարչութեան մէջ։ Մնում էր քննել թէ մինչև որ աստիճան կառավարութեան այս ձևը յարմար էր ազգի բնաւորութեանը, մինչև որ աստիճանը մանաւանդ այս վերջինը պահպանել էր այն քաղաքական առաքինութիւնները, որ Մոնտէսկիէօն անհրաժեշտ էր համարում այս բարձր կառավարութեան համար։ Բայց եթէ այս կամ այն պատճառով այս միջոցը

Թագաւորի կամքի դէմ, եթէ նորա ցանկութիւնը տէրութեան օգտին հակառակ համարէր։

անդործադրելի էր թվում, պէտք էր անդառնալի կերպով հրաժարուիլ նորանից, պէտք էր բոլորովին մի կողմ դնել հասարակապետութեան գաղափարը և հիմնել մի ժառանգական միապետութիւն։ Այս կերպով մի ճանապարհով որ առաջինից տարբեր էր, նոյն հետևանքին էին հանում. որովհետև իշխանութեան յաջորդական փոխանցումը մի որևէ հարստութեան յանձնելով դուցէ կարելի լինի բաղդի բերմունքներից մի աստիճանի աղաս պահել ժողովրդների կանոնաւոր դարդացումը։ Ուրեմն այստեղ մի հանճարեղ մարդ էր հարկաւոր որ լաւ ճանաչէր իւր ազգը և բաւական մեծ ազդեցութիւն ունենար նորա վրայ, որ կարողանար անարդել գործ դնել այս երկու վարչական ձևերից մէկը կամ միւսը, միակ կառավարութիւնները, որոնց գործադրութիւնը փորձով սրբագործուել է եւրոպական ժողովրդների մեծ մասի մէջ։ «Երանի՜ այն հասարակապետութեանը, ասում է Մաքիավելը, որին բաղդը այնպիսի խոհեմ մարդ է շնորհում, որ իւր տուած օրէնքներով կարողանում է ապահովել իւրաքանչիւր անհատի հանգստութիւնը առանց հարկաւորութիւն ունենալու վերանորոգութիւնների դիմելու։ Այսպէս ահա տեսնում ենք որ Սպարտան ութ դարուց աւելի անխախտ է պահում իւր օրէնքները առանց մեծամեծ վտանգների ենթարկուելու։ Սորա հակառակ, վա՜յ այն քաղաքին, աւելացնում է Տիտոս Լիվիոսի խորամիտ մեկնիչը, որ իմաստուն օրէնսդրի չհանդիպելով սնիպուած է լինում ինքն իւր մէջ կարգը վերահաստատել. որովհետև մարդկանց մեծ մասը նոր օրէնքի կամաւորապէս չեն հնազանդում, երբ այդ օրէնքը քաղաքի մէջ մի նոր կարգ է սահմանում, որին նոքա հպատակելու կարիքը չեն զգում. և որովհետև այդ կարիքը երբէք առանց վտանգի չէ գալիս, շատ հեշտ կարող է պատահել որ մի հասարակապետութիւն իւր կատարելութեան հասնելուց առաջ մեռնի։» Որպիսի մեծ կշիռ կրստանան Ֆիորէնցայի պետական մարդու խօսքերը, եթէ վերաբերենք նոցա Լեհաստանի հասարակապետութեանը... Հէնց այդ իմաստուն օրէնսդիրը, որի վրայ խօսք է լինում՝ պակասում էր Լեհաստանին. վասն զի դժբաղդաբար այն մարդը, որ նոյն ժամանակ կարծես իւր ձեռքին բռնած ունէր այդ դժբաղդ երկրի ապագան և որն որ իւր համաքաղաքացիների վրայ ունեցած ազդեցութեամբ դուցէ միակ անձն էր, որ կարող էր ամենամեծ ծառայութիւն մատուցանել մի ազգի, որին վտանգ էր սպառնում, այդ մարդը, ասում ենք, նորա բոլոր դժբաղդութիւնների պատճառն եղաւ. փոխանակ

արմատախիլ անելու այն ախտը, որով ազգը վարակուած էր, ընդհակառակն աւելի եւ ամրացրեց նորան մի այնպիսի մեծ սխալանքով, որի նմանը հազիւ թէ կարելի լինի գտնել նոր ազգերի պատմութեան մէջ։

Երբ 1573ի աւագաժողովը գումարուեցաւ նոր թագաւորի ընտրութեան եղանակը որոշելու համար, շփոթն ու տարակոյսը տիրեց ամէնի մտքի վրայ: Վիճաբանութիւնը որոշ խնդրի վրայ չըլինելով, նախ ընդհանուր խօսակցութեամբ զբաղեցան: Մի քանի պատգամաւորներ Վենետիկի հասարակապետութեան գովասանքը անելով, որի կազմակերպութեանը տեղեկացել էին Կանտարինի կարգինալի ստորագրութիւնից, առաջարկեցին ընդունել այն ձեւը, որին հետեւում էին այնտեղ դուքսերի ընտրութեան ժամանակ: Ուրիշները պնդում էին մինչեւ անգամ թէ, Նուրէնբերգի հասարակապետութեան օրինակին հետեւելով, պէտք էր մի պատգամաւորութիւն ուղարկել Վենետիկի ծերակուտի մօտ, խնդրելով որ իւր ամենալաւաւորեալ անդամներից երեքին նշանակէ, որոնք իբրեւ փորձառու անձինք յանձն առնէին այս փափուկ խնդիրը որոշել: Ո՞վ գիտէ, գուցէ իտալիացի օրէնսդիրները իրանց իմաստութեամբ յաջողէին մեծամեծ վտանգներից ազատել մի հասարակապետութիւն, որ այնպէս մութ կերպով էր ըմբռնում իւր օգուտները: Ինչպէս եւ լինէ, այս երկու կարծիքներից ոչ մինը չյաղթանակեց: Իսկապէս ոչ այնքան ընտրութեան ձեւը որքան նորա սկզբունքը վիճաբանութեան առարկայ էր դարձել. խնդիրը նորա վրայ էր թէ ում պիտի շնորհուի թագաւորական իշխանութիւնը այս կամ այն անձին յանձնելու արտօնութիւնը: Մինչեւ այդ ժամանակ այս իրաւունքը բացառապէս ծերակուտին սեփհական էր համարվում, ոչ ոք չէր համարձակում հրապարակաւ մի խնդիր յարուցանել այդ մասին: Նոյն իբրեւ մի կարծիք իմանալու դիտաւորութեամբ էր որ Յովհաննէս Պօնեատովսկին, Լեհաստանի վերջին թագաւորի նախնիքներից մէկը, համարձակեցաւ հետեւեալ խնդիրը դնել, թէ արդեօք հասարակ ազնուականի ձայնը ծերակուտի անդամի ձայնի արժողութիւնը չպիտի ունենար: Պատգամաւորի դիտաւորութիւնը ոչ այլ ինչ էր եթէ ոչ իւր ընկերների տրամադրութիւնը իմանալ. նա ամենեւին չէր մտածում իւր հարցը հրապարակական քննութեան առարկայ շինել: Բայց բաղդը օգնեց նորան. վիճաբանութեան սկզբնակէտը դրուել էր, մնում էր միայն նորա ձեւը որոշել: Եւ ահա այն ժամանակ Յովհաննէս Զամոյսկին,

որ դեռ նոր էր սկսում իւր ասպարէզը, բայց արդէն իւր համաքա-
ղաքացիների համարումը վայելում էր մասամբ, սկսաւ խօսել՝ ներ-
կայացնելով իւր սկզբունքը, որ նա համարեա այս ձևով հա-
մառօտեց. «Ազատ հասարակապետութեան մէջ, ասաց նա, ուր քա-
ղաքական հաւասարութիւնը ընդունուած ճշմարտութիւն է, արդա-
րութիւնը պահանջում է, որ այդ հաւասարութիւնը գործադրուի
քաղաքացիների քուէարկութեան մէջ թագաւորների ընտրութեան
ժամանակ, որովհետև մեզանից իւրաքանչիւրը անձամբ զէնք է կրում
հայրենիքի պաշտպանութեան համար, իրաւացի է որ իւրաքանչիւրը
նոյնպէս անձամբ իւր ձայնը տայ այն իշխանին, որ պէտք է պաշտ-
պանէ իրան»: Եւ իւր խօսքերի հաստատութեան համար նա յի-
շեցնում էր ժողովականներին մի արտօնութիւն, որ Ծերունի Սիդիս-
մունդ թագաւորը իւր որդու Փիլիպպոս Օգոստոսի ընտրութեան ա-
ռիթով շնորհել էր ազգին, այն արտօնութեան զօրութեամբ թա-
գաւորական պատիւը այնուհետև այն անձին միայն պիտի տրուէր, որ
«ընդհանուր հաճայնութեամբ» կ'ընտրուէր: Զամօյսկին մի բանի
վրայ չէր կարող կասկածել, այն է որ բաւական էր մի այսպիսի
կարծիք յայտնել որ իւր համաքաղաքացիները իսկոյն ընդունէին
նորան: Արդարև, դժուար կը լինէր նորան մի աւելի հրապուրիչ ա-
ռաջարկութիւն անել ազնուականութեան համար, որ ոգևորութեամբ
ընդունեց նորա ասածները. և որովհետև ժողովարանի մէջ ազնուա-
կանները շատ աւելի ձայն ունէին քան ծերակուտի անդամները, շատ
դիւրին կը լինէր նոցա իսկոյն քաղաքական օրէնքի զօրութիւն տալ
յիշեալ առաջարկութիւնը: Աւանձին յարգանք ցոյց տալով ժողովի
մեծամասնութեանը, յարգանք որի նմանը դուր կը լինէր որոնել Լե-
հաստանի ամբողջ պատմութեան մէջ, մարդ չգտնուեցաւ որ ձայն
բարձրացնէր Զամօյսկու առաջարկութեան դէմ: Ահա այսպէս բաղդի
անդուրեղ խաղով և մի մարդու յանդգնութեամբ, որ ԺԶ դարու Լե-
հաստանի ամենամեծ անձնաւորութիւնն էր, միաձայն ընդունուեցաւ
մի օրէնք, որ ամենանվաստակար էր յիշեալ երկրի համար, մի օրէնք,
որի հետևանքը պիտի լինէր մի օր ազգային անկախութեան կո-
րուստը... երբէք Դանտէի խօսքը աւելի զարհուրելի գործադրութիւն
չպիտի դանէր. երբէք մի ժողովուրդ աւելի մեծ համբմամբ չար-
ձակեց այս աղէտաբեր աղաղակը. «Կեցցէ իմ մահը, մեռնի՛ իմ ա-
զատութիւնը»:

Ասես թէ այս պատկերը, որ կարող է «Երինային կատակեր-

գութեան» ամենագրաւիչ կեղծիքների հետ համեմատուիլ, միշտ զբաղեցրել է լեհացի քարոզչի միտքը: Նա իբրև մի բնաբան է ծառայում այն այլաբանական խօսքերի համար, որ այնպէս յաճախ կրկնվում են նորա ճառերի մէջ: Պկարգան նոյնպէս մի օր պիտի ճառէր «Միապետութեան վրայ». գոնեա այս վերնագիրը տուաւ նա իւր հրատարակած քարոզներից մէկին, որ ամբողջապէս նուիրուած էր այն նիւթին, որին Ֆլորէնցիայի բանաստեղծը արժանի է համարել առանձնապէս նուիրել իւր զօրաւոր հանճարը: Այս ճառը, որ իւր տեսակի մէջ միակ է և որի մէջ մանրամասնաբար հանդէս է բերվում մեր քարոզչի քաղաքական տեսութիւնը, մի այնպիսի յանդիմանութիւն է պարունակում, որ Դանտէի նկարագրած խելագար ամբոխի արձակած աղիողորմ աղաղակի արձագանգը կարող է համարուիլ: Զարհուրանօք մտաբերելով այն սոսկալի կուրութիւնը, որի մէջ ընկել էին իւր հայրենակիցները, «Դուք վախենում էք բռնակալութիւնից, աղաղակում է նա յանկարծ իւր բոլոր զօրութեամբ, բայց դուք ինքներդ էք դառնում ձեր բռնակալները, երբ թիւր ազատութիւնը կամ, աւելի լաւ ասեմ, անկարգութիւնը իբրև սկզբունք ընդունելով ձեր բոլոր զօրութիւնները զործ էք դնում կորստեան անդունդն ընկնելու: Անպիտան օրէնքը ամենաանդութ բռնաւորից երկիւղալի է. որովհետև բռնաւորը կարող է միշտ կամ փոխուիլ կամ դիջանել, կամ վերջապէս իշխանութիւնից զրկուիլ, և այն ժամանակ բռնակալութիւնը նորա հետ միասին անյայտանում է. բայց անպիտան օրէնքը, մի անդամ որ հաստատվում է, միշտ աւում է և շարունակ կոտորածներ է անում, նման այն կատաղի ուանբան գազաններին, որոնք ոչինչ խօսք չեն հասկանում և որոնցից միայն մեռցնելով կարելի է ազատուիլ...» Դժուար չէ համոզուիլ որ այս խօսքերը, Դանտէի խօսքերի կենդանի մեկնութեան հետ, կատարեալ դատապարտութիւն են այն տեսութեան, որ Վարշավայի ժողովարանի երիտասարդ պատգամաւորը առաջ էր բերում. դորա համար բաւական է խորհել այն հետևանքների վրայ, որ յիշեալ տեսութիւնը ծնեցնում էր իւր զործադրութեան մէջ: Արդ որո՞նք էին այդ հետևանքները: Ցաւալի բոլոր ազնուականութեանը մի արտոնութիւն, որ մինչև այն ժամանակ միայն ծերակուտին էր պատկանում, Զամոյսկու տեսութիւնը բարդի բերումն էր յանձնում այն որոշումները, որոնք ամենամեծ կարևորութիւն ունին մի պետութեան դոյութեան համար:

Լեհացի օրէնսդրի առաջ բերած սկզբունքը կարող էր խնկապէս արդարացնել նորան միայն հին հասարակապետութիւնների նման կազմակերպութիւն ունեցող տէրութեան մէջ: Նախ յիշեալ տեղերում քաղաքացիների տուած իշխանութիւնը կարճ ժամանակի համար լինելով, նոցա ընտրութիւնը չէր կարող այնքան ծանր հետեւանքներ ունենալ երկրի շահերի համար, ոչ էլ չափազանց կերպով ազդել հասարակապետութեան ապագայի վրայ. բացի սորանից, միեւնոյն քաղաքի պատերի մէջ բնակելով, ընտրողները միջոց ունէին ընտրուելու հետամուտ եղող անձի արժանաւորութիւնները գնահատել և կատարեալ գիտակցութեամբ այս կամ այն որոշումը անել: Բայց օրէնքը քաղաքական իրաւունքներից հեռու էր պահում այն քաղաքացիներին, որոնք կարող էին հետզհետէ միանալ կենտրոնական տէրութեան հետ: Սպարտայի սահմանադրութեան հիմնական սկզբունքներից մէկն էր օտարականներին բացարձակապէս մերժել հասարակապետութեան ներքին գործերի մէջ խառնուելու իրաւունքը: Ժամանակ անցնելուց յետոյ, Վենետիկի հասարակապետութեան հիմնադիրները միեւնոյն սկզբունքը ընդունեցին. մտածելով որ իրանք բաւական բազմաթիւ են իրանց քաղաքական կեանքի կարիքները լցնելու համար, նոքա նորեկներին մերժեցին կառավարութեան մասնակցելու իրաւունքը: Հէնց այս պատճառով է որ «popolani» (հասարակ քաղաքացի) էին անուանում վերոյիշեալ իրաւունքից զուրկ բնակիչներին, այն ինչ կառավարելու արտօնութիւնը վայելող անձանց, աւելի մեծ նշանակութիւն տալու համար «ազնուական» էին անուանում: Ահա այս կերպով վերոյիշեալ երկու հասարակապետութիւնները, որոնց կառավարութեան ձեւը ամենից աւելի մօտենում էր լեհական սահմանադրութեանը, իրանց վիճակը ապահովացրել էին անիշխանութեան վտանգներից: Բայց Հռոմը աւելի շօշափելի օրինակ կը տայ մեզ այս համեմատութեան մէջ: Երբէք նորա օրէնսդիրներից մէկը կը մտածէ՞ր գերագոյն պաշտօնակալների ընտրութեան համար հրաւիրել այն նահանգական բնակիչներին, որոնք նորա իշխանութեան տակ էին գտնվում Յունաստանում, Աֆրիկայում կամ նոյն իսկ Իտալիայում: Եւ սակայն բոլորովին սորա նման բան պիտի բերէր Լեհաստանում Զամօյսկու ընդունած սկզբունքը: Մի ընդարձակ տարածութեան վրայ որ, Բալտիկ ծովից մինչև Սեւ ծովը, Ֆինլանդիայից մինչև Սիլեզիա, Ուկրայնայի բարեբեր հովիտներից մինչև Կամծյեաների ապարօտ դաշտերը, տեսակ տեսակ երկրներ, ցեղեր ու ժողովուր-

ներ էր պարունակում, այսպիսի ընդարձակ երկրի վրայ ցրուած անհանդիստ ու պատերազմասէր ազնուականները, որոնք տարբեր կրքերով ու շահերով էին ոգևորուած, ամենայն իշխանութեան ժամանակ պիտի հրաւիրուէին թողնել իրանց տուն ու տեղը, որպէս զի անձամբ դան իրանց ձայնը տալու այն անձանց, որոնց անունը արտասանելու պէտք էր լինում նոցա երբեմն սովորել... Ահա սորա մէջ, ընտրութեան իրաւունքին տրուած այս անտեղի ընդարձակութեան մէջ պէտք է որոնել ամենայն չարիքների սկիզբը, որոնք Լեհաստանի կարգերը խանգարեցին և հետևապէս նորա կորստեան պատճառ եղան։ «Pacta conventa»ի (միաբանական ուխտ) անդաստար փոփոխուիլը, որ ամենայն անիշխանութեան ժամանակ անմոռութեամբ սահմանափակում էր թագաւորական իշխանութիւնը. «liberum veto»ն, որով մի առանձին քաղաքացի իւր միակ ձայնով իրաւունք էր տանում մեծամասնութեան որոշումները ոչնչացնելու, այս բոլոր չափազանցութիւնները այն սկզբունքի անհրաժեշտ հետևանքներն էին, որի վրայ Զամոյսկին կամեցաւ հիմնել իւր երկրի սահմանադրութիւնը։ Ուրեմն Սկարգան ունայն տեղը չէր աշխատում իւր հայրենակիցների սիրտը ահ ձգել, երբ ասում էր նոցա թէ «մի պետութեան օրէնսդրութեան մէջ անիսհեմաբար մուծուած սխալը ամենավնասակար թոյնի նման է, որ մի ամուր ու առողջ մարմնի երակների մէջ մուտ է գտել»։ «Մի քաղաք, աւելացնում էր նա, դեռ ևս անդառնալի կերպով դատապարտուած չէ անյայտանալու, եթէ իւր շուրջը բաւական ամուր պարիսպ չէ պատել. ընդհակառակն, նորա կորուստը անխուսափելի է, եթէ սահմանուած օրէնքները բաւական զօրութիւն չեն տալիս իւր ներքին կազմակերպութեանը։ Առաջին դէպքում, մի լաւ բանակ դեռ կարող է արշաւանքից փրկել նորան, իսկ երկրորդ դէպքում, ոչինչ չէ կարող ազատել նորան անիշխանութիւնից։» Զամոյսկու սխալն այն եղաւ որ իւր օրինակները լաւ չընտրեց։ Եթէ, փոխանակ հնութիւնից փոխառած վարդապետութեամբ ոգևորուելու և գործադրելու նորան մի ընկերական վիճակի մէջ, որ ամենևին նորա ոգուն չէր համապատասխանում, նա աչքերը իւր շուրջը դարձրած լինէր ժամանակակից պետութիւնների վրայ, որքան խրատական բան կը գտնէր այն զգուշութիւնների մէջ, որով խոհեմաբար շրջապատել էին իրանց արդեան ընկերութիւնները, օրինք ընտրողական սկզբունքը, Լեհաստանի նման, մի անդամ հիմն էին ընդունել իրանց քաղաքական

կազմակերպութեան մէջ։ Մէկ կողմից Ջենովայի և Վենետիկ հասարակապետութիւնների դուքսերի ընտրութեան եղանակի մէջ առոտիճանաբար ներմուծած փրկարար միջոցները, միւս կողմից Հոլլանդիայի հասարակապետութեան աղմկալի փոփոխութիւնները և մի դրացի պետութեան՝ Հունգարիայի վիճակը, ուր թագաւորների կրկնակի ընտրութիւնը տաճկական արշաւանքն էր առաջացրել, բազմաթիւ օրինակներ էին ներկայացնում նորան, որոնց կարող էր հետևիլ կամ որոնցից պէտք է զգուշանար։ Սակայն առանց Հռոմից դուրս գալու, որի կարգերը առանձին կերպով գրաւում էին նորա ուշադրութիւնը, բաւական էր նորան կոխել անցնել դարերի տարածութիւնը, և կը համոզուէր թէ մինչև որ աստիճան այդ մեծ քաղաքը գիտէր իւր հաստատութիւնները հետզհետէ յաջորդող հասարակութիւնների պիտոյքներին յարմարեցնել. նա կը տեսնէր թէ ինչ փոփոխութիւնների էր ենթարկուել այնտեղ այն միևնոյն ընտրողական սկզբունքը, որի հեղինակութեան վրայ հիմնվում էր, նայելով թէ ինչ տեսակ իշխանութիւն տալու էր կանչվում։ Եթէ հիւպատոսը, այդ ժամանակաւոր պաշտօնեան, որի դերն էր իսկապէս ծերակուտի երկար բարակ խորհած ծրագրերը կատարել, կարող էր, առանց վնասակար հետևանքներ ունենալու, հասարակ քաղաքացիների ժողովից ընտրուիլ, եկեղեցու քահանայապետը, որ մի ղօրաւոր աստուածպետութեան գլուխն էր դրվում մինչև իւր մահը, ամենաընդարձակ և ամենաբացարձակ իշխանութիւն վարելու համար, իւր ընտրութեան քուէները քառասունի չափ կարդինալներից էր ստանում, որոնց թիւը առաջուց խստութեամբ որոշվում էր։ Այս բոլոր օրինակներից խրատուելով, կրկնում ենք դարձեալ, Ջամոյսկին պէտք էր, կարծես, կամ թնդաւորական իշխանութիւնը կործանէր, եթէ ենթադրում էր թէ իւր ազգը այնքան կարողութիւն ունի որ ինքն իրան կառավարէ հասարակապետական հնարաւորութիւնների միջոցով, և կամ, եթէ հարկաւոր էր համարում պահպանել մի իշխանութիւն, որ միանգամայն թագաւորական իշխանութեան համարումն ու տեղակալութիւնը ունենար, նա պէտք է ապահովէր այդ իշխանութեան կանոնաւոր փոխանցումը, եթէ ոչ զահի ժառանգականութեամբ, գոնեա մի սահմանափակ ընտրութեամբ, որպէս զի ապագայում պետութիւնը այսպիսի վտանգաւոր յուզմունքներից ազատ մնայ։ Իսկ նա աւելի լաւ համարեցաւ կանգ առնել մի միջին կառավարութեան եղանակի վրայ, որ, իւր մտքում, հաւանականաբար պիտի բռնա-

դակեր իշխանութեան և ազատութեան առաւելութիւնները, բայց խիկարքս ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ հակառակ հաստատութիւնների մի խառնուրդ, որ մինչև այն ժամանակ քաղաքակիրթ ազգերի օրէնսդրութիւնների մէջ ընդունուած դասակարգութիւններից ոչ մէկի շարքում չէր կարող դասուել:

Այս նկատմամբ ոչինչ աւելի խրատական չէ կարող լինել քան իտալական դեսպանների շփոթութիւնը, բոլորն էլ քաղաքական խնդիրներին տեղեակ անձինք, երբ նոքա իրանց տեղեկագրերով կամենում էին սահմանել այն կառավարութեան ձևը, որի մօտ ուղարկուած էին իրանց հասարակապետութիւններից կամ իշխանութիւններից: Այս տեսակ թղթերից առաջինը 1568ին է գրած, այսինքն Սիգիզմունդ Օգոստոս թագաւորի մահից չորս տարի առաջ: Այդ տեղեկագիրը Յուլիոս Ռուջիէրի անունով պապական դեսպանի կողմից է գրած, որին Պիոս Ե ուղարկել էր Լեհաստանի կառավարութեանը պաշտօնապէս ընդունել տալու Տրենտի ժողովի որոշումները: Նոյն ժամանակի դեսպանների սովորութեամբ լեհական երկրի սովորութիւնները, բնաւորութիւնը, ընկերական և նիւթական պայմանները առանձին ուշադրութեամբ քննելուց յետոյ, քաղաքագէտ հոգևորականը հետևեալ կարծիքն է յայտնում այն կառավարութեան ձևի վերայ, որ մանրամասնաբար հետազօտել էր. «Լեհական ազնուականութիւնը, ասում է նա, երևակայում է թէ իւր կառավարութիւնը հասարակապետական է, որովհետև մեծ ազդեցութիւն ունի պատգամաւորների և ծերակուտի ժողովարանների վերայ, որովհետև ընտրում է մի թագաւոր, որի իշխանութիւնը սահմանափակ է, և այս բանը իւր կառավարութեանը մի տեսակ նմանութիւն է տալիս լակեդեմոնական հասարակապետութեան հետ[1]): Բայց նա սխալվում է. նախ հասարակապետութիւնը չէ կարող տարածուել ամբողջ երկրի վերայ. նա սովորաբար միմիայն քաղաքում կենտրոնացած է լինում. երկրորդ, ոչ թագաւորների ընտրութիւնը այնքան ազատ կերպով է լինում այստեղ, ոչ էլ նոցա իշխանութիւնը այնքան սահմանափակ է որ կարելի չլինի կամ, աւելի լաւ ասել, որ իրաւունք չունենանք Լեհաց կառավարութիւնը չափաւոր միապետութիւն անուանել»: Ճշմարիտ է, Ռուջիէրին գանգատում

---

[1]) Ցիցերոնի Սպարտան մի տեսակ ազնուապետական հասարակապետութիւն էր, որին մի թագաւոր էր գլխաւորում:

է թէ ոչ մի տեղ ճիշտ տեղեկութիւն չէ գտել թագաւորների ընտրութեան ժամանակ բռնուած ընթացքի վրայ, և թէ միայն մի բան կարողացել է իմանալ, այն է որ այդ ընտրութիւնները ընդհանուր համաձայնութեամբ են լինում: Այսքանով գոհ չէ նա, նոր ցանկալի կը լինէր գիտենալ «այդ համաձայնութիւնը կայացնող անձանց թիւն ու յատկութիւնները, ոչ միայն այն իմանալու համար թէ որոնք են այն քաղաքացիքը որոնք ընտրութեան ժամանակ վճռողական ձայն ունին, այլ նաև թէ ինչ թիւ է հարկաւոր մեծամասնութիւն կազմելու համար այն դէպքում, երբ քուէարկողները համաձայն չեն մի և նոյն անձի ընտրութեան վրայ»: Բայց եկեղեցական դեսպանը վկայում է գոնեա հաճութեամբ թէ եպիսկոպոսները և տէրութեան բարձրաստիճան պաշտօնեաները առաջին տեղն են բռնում քուէարկողների թվում: «Իրօք, ասում է նա, դոքա են ընտրում, կարծեմ, ձայների բազմութեամբ թագաւորին ամբողջ կեանքի համար, իսկ նորա մահուան ժամանակ հրաւիրում են ըստ սովորութեան անդրանիկ որդուն նորան յաջորդելու»: Այս պատճառով մի անգամ որ այս կէտի վրայ ստոյգ տեղեկութիւններ է քաղում, նա այլևս չէ դանդաղում իւր առաջին նպատակութիւնը հաստատելու, եզրակացնելով թէ լեհական կառավարութիւնը, չնայելով իւր հասարակապետական ձևերին, եթէ լաւ քննենք՝ միապետական կառավարութիւն է: Ահա ինչ հայեացք ունէր իտալացի պետական մարդը լեհական սահմանադրութեան վրայ, քանի որ գեռ այս վերջինը Զամոյսկու պահանջած փոփոխութիւններին չէր ենթարկուել: Մի «չափաւոր» միապետութիւն—մենք այսօր կասէինք սահմանադրական միապետութիւն—այսպէս երևում նորան այն կառավարութեան բուն բնաւորութիւնը՝ ուր թագաւորական իշխանութեան արտօնութիւնները ազգային ներկայացուցիչների արտօնութիւնների մէջ իրաւացի ու չափաւոր հաւասարակշռութիւն էին գտնում:

Անենք այժմ դորանման մի ուրիշ վկայութիւն, որ առաջինից միայն մի քանի տարի յետոյ դրուեցաւ. այս անգամ Վենետիկցի է խօսողը: Հերոնիմոս Լիպոմանին, Մօչենիգօ դոժի կողմից դեսպանութեամբ ուղարկուելով Հենրիկոս Վալուայեան թագաւորի մօտ, նոյնպէս քննութեան է ենթարկում այն խնդիրը, որ նորանից առաջ փորձել էր լուծել Ռուջիէրին, և մի զարմանալի նմանութեամբ՝ պապական դեսպանի նման նորանից է սկսում, որ ցոյց է տալիս թէ լեհացիք չարաչար խաբվում են իրանց կառավարութեան հասարակապետութեան անուն տալով,

«մի բան, ասում է նա, որ անպատեհ նոյա բերանում պտոյտ է գալիս»: Բայց Լիպոմանիի եզրակացութիւնը բոլորովին տարբեր է այն եզրակացութիւնից, որ իրաւունք էր համարում իրան ներկայացնել հռոմէական արքունիքի դեսպանը: «Լեհական կառավարութիւնը, շարունակում է Վենետիկցի դեսպանը, չէ կարող համեմատուել երբէք վարչական ձևերից ոչ մէկի հետ, որոնց մասին խօսում են տէրութիւնների կազմակերպութեան վրայ գրող հեղինակները: Նա ամենևին միապետութիւն չէ, վասն զի միապետը բացարձակ իշխանութիւն ունի իւր հպատակների վրայ, մինչ Լեհաստանի թագաւորը չէ կարող ոչինչ բան անել առանց պատգամաւորների ժողովի հաճութեանը: Օլիգարքիա (մի քանի անձինքներից բաղկացած իշխանութիւն) էլ չէ, վասն զի Լեհաստանում մօտ երկու հարիւր հազար ազնուական կայ, և ծերակոյտը իւր կողմից չէ կարող ոչինչ վճռել առանց թագաւորի: Իրօք ամենայն բան թագաւորն է որոշում վերջնական կերպով, բայց եթէ խնդիրը որևիցէ կարևորութիւն ունի, պէտք է նախապէս պատգամաւորների ժողովի քննութեանը ենթարկել նորան, որի համաձայնութիւնը անհրաժեշտ է ծերակուտի վճիռներին օրէնքի զօրութիւն տալու համար: Վերջապէս, Լեհաստանի կառավարութիւնը ռամկապետական ևս չէ, վասն զի ժողովուրդը, առանց որի հասարակապետութիւն չէ կարող լինել, իւր ներկայացուցիչները չունի պատգամաւորների ժողովում, և ազնուականները, որոնց մէջ պարունակվում է իշխանութիւնը, միևնոյն քաղաքում հաւաքուած չեն, այլ ամբողջ երկրի վրայ ցրուած են: Այս բոլոր պատճառներով կարելի է ասել թէ Լեհաստանի կառավարութիւնը մի խառնախնթոր կառավարութիւն է, որ իւր հաստատութիւնները միանգամայն ամէն տեսակ վարչական ձևերից փոխ է առել»: Այսպէս ուրեմն, մինչ պապական դեսպանը տակաւին այնքան կարգ ու չափ է գտնում ընտրութեան մէջ և այնքան իշխանութիւն թագաւորի ձեռքում, որ Յագիլլոնների կառավարութեան մէջ տեսնում է մի միապետութիւն փոքր ինչ մեղմացած ձևով, Վենետիկի հասարակապետութեան դեսպանը, 1572ի ժողովից յետոյ գալով և նշմարելով Զամոյսկու ազդմամբ սահմանադրութեան մէջ ներմուծուած հակասական օրէնքները, չէ խմանում թէ ինչ անուն գտնէ այդ սահմանադրութիւնը որոշելու համար:

Քաղաքագէտը, պաղարիւն ու անաչառ հանդիսատեսը կարող է մտադրութեամբ դատել մի օրէնսդրութեան թերութիւնների

վրայ, որ աւելի պարզ է ցոյց տալիս նորան այն հաստատութիւն-ների արժէքը որոնց իւր հարազատ հայրենիքը պարտական է իւր գօրութիւնն ու ապահովութիւնը. իսկ շնչանկատ հայրենասէրը, որ հասկանում է թէ ինչ վտանգներ կարող են առաջ գալ իւր հայ-րենիքի համար մի սխալանքից, որի հետևանքների առաջն այլ ևս անկարելի կը լինէր առնել, դօրաւոր խօսքերով կը դատապարտէ այդ յանցաւոր մոլորութիւնը, կը պախարակէ այն անձին, որ մի ամբողջ ազգի ապագան վտանգի է ենթարկում: «Մարդասպանը որ իւր նման-նին խլել է, ասում է մի տեղ հայր Սկարդան, լոկ մի մարդու մահով է ծանրացնում իւր խղճմտանքը. այն ինչ օրէնսդիրը, որ մի անգամ անզգոյշ է գտնուել, պատասխանատու է ամբողջ սերունդ-ների համար պատրաստած վիճակի համար:» Այս խօսքը, որ այն-պէս համարձակ է մի քարոզչի բերանում, ուրիշ ամէն խօսքից լաւ է ցոյց տալիս Սկարդայի պերճախօսութեան բնաւորութիւնը: Մի միտք որ հազիւ թէ համարձակէր արտայայտել Աւետարանի սովորական մեկնիչը, որ ուսուցանում է «ընդհանուր հաւատացեալներին», ինչ-պէս որ եկեղեցական առմամբ ասում են, Սկարդան չէ վախենում այդ միտքը բարձրաձայն ասել մի խումբ ընտրեալ ունկնդիրների ա-ռաջ, որոնց նա ուսուցանում է իրանց ահագին ու դժուար պար-տաւորութիւնները: Այստեղ ոչ այնքան սրբազան պերճախօսը՝ որ-քան քաղաքական հռետորն է խօսողը, և սորա ապացոյցն այն է, որ մեր քարոզչի այս խօսքը կարող է համեմատուիլ մի սկանաւոր անձի ասածի հետ, որ անտարակոյս եկեղեցական պերճախօսութեան հետ ոչինչ յարաբերութիւն չէ ունեցել: Այս միևնոյն իմաստը չէ՞ր որ իւր բացատրութիւնը գտաւ Տալեյրաններից մէկի բերանում և որ յաւիտեան անբաժան կը մնայ մի զզուելի չարագործութիւնից. միթէ նոյն բանը չէ՞ր կամենում ասել Նապոլէոն Ա-ի նախարարը, երբ դ'Անգիէն դուքսի սպանութիւնից յետոյ այս խորին միանգամայն և տխուր խօսքը փախցրեց իւր բերանից. «Այդ չարագործութիւնից աւելի է, այդ մի սխալ է»: Հետաքրքրական է տեսնել այստեղ, որ լեհացի քարոզիչը մի կարծիք է յայտնել այն մարդոց առաջ, որի քաղաքական իմաստութիւնը իրաւամբ առակ է դարձած այժմեան քաղաքականութեան մէջ:

Սակայն չպէտք է կարծել թէ Սկարդան բաւականանում է միշտ ընդհանուր նկատողութիւններ յայտնելով, որոնք կարող են ամէն տեսակ դէպքերի ու խնդիրների յարմար դալ: Տարակոյս չկայ որ

Նորա ճարտարախօսութեան բնաւորութիւնը, նորա կոչումը պահանջում են մինչև մի աստիճան ծանր լեզու բանեցնել, մի տեսակ ընդհանրութիւն հայեացքների մէջ, որ արգելում են նորան ուղղակի ակնարկութիւններ անել և մօտաւոր անձանց դիպչել: Այս զգուշութիւնը մանաւանդ այն ժամանակ է պահանջվում նորանից, երբ կամենում է յանդիմանել և դատապարտել: Ուրիշ բան է երբ նա գալիս է իւր գաղափարները բացատրելու, այսինքն թէ ինչ հայեացք ունի մի խնդրի վրայ և ինչպէս պէտք է այդ խնդիրը լուծել. երբ խրատների ու սպառնալիքների տեղ՝ նա կամենում է իւր խորհուրդները լսել անել ունկնդիրներին: Այստեղ նա կատարեալ ազատութիւն է տանում և չէ վախենում ճշդութեամբ բացատրել իւր կարծիքը: Այս մասին մի զօրաւոր ապացոյց տալիս է մեզ նորա քարոզը միապետութեան վրայ, որի մի հատուածը բոլորովին յարմար ենք համարում բերել այստեղ: Ներկայացնելով իւր քաղաքական տեսութիւնը, Սկարգան վախենում է թէ մի՛ գուցէ իւր միտքը ծուռ կերպով ըմբռնուի: Գիտենք որ հանրապետական և միապետական կառավարութիւնների մէջ նա արդէն իւր ընտրութիւնը արել է. միանգամ որ թագաւորութիւնը պահպանվում է, նա կամենում է տեսնել նորան հաստատուն հիմք դրած և մերժում է հասարակապետական կառավարութիւնից անտեղի կերպով փոխ առած հրահանգները, բայց նորա դիտաւորութիւնը չէ ամենևին բացարձակ միապետութեան ախոյեան կանգնել. ընդհակառակն նա զգուշելով մերժում է այդ միտքը:

«Ես դիտաւորութիւն չունեմ, ասում է նա, առաջարկել ձեզ մի միապետութիւն, որի նմանը հաստատուած ենք տեսնում թուրքերի, թաթարների մէջ և ուրիշ տեղեր. դոքա ոչ այլ ինչ են եթէ ոչ մի մի անիրաւ ու անկարգ բռնակալութիւններ: Իմ ցանկացածս ձեզ համար այնպիսի կառավարութիւն է, որ իւր նեցուկը գտնում է իմաստուն մարդկանց խորհրդների մէջ, որ իւր զօրութիւնը միանգամայն և չափաւորութիւնը արդար ու ճիշտ կերպով որոշուած օրէնքներից է առնում: Դուք Վենետիկի օրինակն էք առաջ բերում. բայց մի՞թէ կարծում էք մի բան գտնել այնտեղ որ արդարացնում լինի ձեր ձգտումներն ու բաղձանքները: Ճշմարիտ է որ այդ հասարակապետութիւնը արդէն տասնմէկ դարու կեանք է ունեցել մինչև այսօր: Բայց ի՞նչ ենք նշմարում այնտեղ: Նախ ժողովրդի ստորին դասը կառավարութեան գործերին մասնակից չէ. նորա

կարծիքը հարցնում են միայն այնպիսի խնդիրներում որոնք ոչինչ կարեւորութիւն չունին: Իսկ այն գործերը որոնք տէրութեան կառավարութեանն են վերաբերում՝ յանձնուած են դուժին և ուրիշ երեք բարձրաստիճան պաշտօնեաների, որոնց ձեռքին է գերագոյն վարչութիւնը: Երկրորդ, միեւնոյն քաղաքում հաւաքուած բնակիչների համար, որոնց համար կարելի է ասել թէ միեւնոյն յարկի տակ են ապրում, հասարակապետական կառավարութիւնը այնպիսի մեծ դժուարութիւններ չէ ներկայացնում իւր գործադրութեան մէջ: Բայց այնտեղ ուր տէրութիւնը հարիւրաւոր մղոններ է տարածվում իւր շուրջը, կարելի՞ է արդեօք մտածել բոլոր քաղաքացիներին մի տեղ ժողովել»:

Այս հատուածը վերյիշեալ երկու Իտալացի դեսպանների հաղորդած տեղեկագրերի լուսմն է կամ, լաւ եւս ասենք՝ նոցա յայտնած կարծիքների հակադիր պատկերն է ներկայացնում: Այս օրինակից տեսնում ենք արդէն թէ Սկարգան որպիսի նուրբ հայեացք ունէր քաղաքական խնդիրների վրայ և թէ որքան ընտանի էին նորան այստեսակ խնդիրները: Նորա միապետութեան վրայ ասած ամբողջ քարոզը այնպիսի խորին իմաստութեան կնիք է կրում, որից կատարելապէս զուրկ էին երեւում իւր բոլոր հայրենակիցները: Բայց այս ճառի բոլոր արժանաւորութիւնները գնահատելու համար՝ հարկ է նախ միառմի լուծել նորա մէջ քննուած խնդիրները, հարկ է տեսնել թէ ինչ բանի մէջ էին կայանում այն սխալները որոնց դէմ մաքառում էր քարոզիչը և որոնք, ինչպէս արդէն ասացինք, իրանց սկիզբն առնում էին այն վարդապետութիւնից որ Զամօյսկին իբրեւ սահմանադրական սկզբունք առաջ բերեց:

Շատ դիւրին գործ կարող է համարուիլ երեք դար յետոյ դատել մի տէրութեան վրայ որ քաղաքական դէպքերը արդէն սորանից հարիւր տարի առաջ դարհուրելի կերպով դատապարտել են: Բայց աչքի առաջ ունենալով մի պատմական երեւոյթ որ այնպիսի մեծ հետաքրքրութիւն կարող է ունենալ արդեան ընկերութիւնների խառնաշփոթ ընթացքին ուշադրութեամբ հետեւող անձի համար, արդեօ՞ք իրաւունք չպիտի տրուի գոնեա մի փորձ փորձել այն շարժառիթները գտնելու, որոնք կարողացել են մի այնպիսի քաղաքական սկզբունքի ծնունդ տալ որի անպատեհութիւնը դժբաղդաբար կատարելապէս ապացուցել են անցեալի փորձերը: Գոնեա մի մտնաւոր պատճառ կայ որ յորդորում է մեզ այդ բանը անել. այն է

ծանօթացնել մի անձ որի հետ մեր քարոզիչը դեռ շատ անգամ առիթ կ'ունենայ հանդիպելու այն գաղափարական կուռի մէջ որ նա մղում է մի կուրացած հասարակութեան դէմ. մի մարդ որին նա միւսներից աւելի պիտի աշխատի չթոյլ տալ, ինչպէս որ ինքն իսկ ասում է, «որ իւր քաղաքականութեամբ երկիրը կործանման տանի»:

Առաջի բերան, մարդ կարծես պատրաստ է աղնուականութեան արատաւորիչների համար ունեցած կոյր յափշտակութեանը վերաբերել այն սխալը որի մէջ ընկաւ Վարշավայի ժողովի երիտասարդ պատգամաւորը: Բայց մի այսպիսի ենթադրութիւն, թողնենք որ Լեհացի պետական մարդուն քաղաքական իմաստութիւնից բոլորովին դուրկ կը համարէր, բայց և ամենևին համաձայն չէր լինիլ այն գաղափարին որ կը կազմէինք նորա մասին, եթէ աւելի ուշադրութեամբ զննէինք նորա բարոյական յատկութիւնները: Իւր արժանաւորութիւններով ինչպէս և իւր պակասութիւններով, իւր ընդարձակ խելքով ինչպէս և իւր ընաւորութեամբ, Զամոյսկին այն անզուգական դարու հարազատ ծնունդն է որի ամենանշանաւոր անձնաւորութիւններից մէկն եղաւ: Քիչ կերպարանք կայ արդարև որ նորա նման որոշ կերպով կրում լինին իրանց վրայ Վերածնութեան հրաշալի կնիքը: Բոլոր յատկանիշ գծերը որոնցով ճանաչում ենք նոյն շրջանի ականաւոր անձանց,—զիտական և խորին յարգանք դէպի հնութիւնը, բազմակողմանի տեղեկութիւններ և ընդունակութիւններ, մի բաղդ որ անդադար մէկ յաջողութիւնից միւսն է տանում նորան, մի ներողամտութիւն որ անգանգատ հաշտվում է անհանդարտ մարդկանց ու դէպքերի հետ, և ամենից աւելի մի յայտնի գերազանցութիւն մտաւոր կարողութիւնների կողմից բարոյական կարողութիւնների վրայ,—այս բոլոր գծերը միասին առած՝ ցոյց են տալիս որ նա մեծ նմանութիւններ ունէր այն անձանց հետ որոնք, նոյն շրջանում, եւրոպական ուրիշ երկրներում, անուն էին հանել պատերազմի, գիտութեան կամ քաղաքականութեան մէջ: Իբրև յաջողակ և խոհեմ զօրավար, նա Բիցինայի պատերազմում աղնուականի համար անզուգական բաղդն ունեցաւ մի արքայազարմ գերի բռնելու և իւր իշխանական դղեակի մէջ բանդարկելու Աւստրիական տան մի իշխան, որ աշխատում էր Լեհաստանի թագը ձեռք բերել: Իբրև հմուտ ու խորին իրաւաբան, նա թագաւորութեան աւագ նախարարը դարձաւ, և այս պաշտօնի մէջ այնքան նշանաւոր դրա-

նուեցաւ՝ որքան նորանից մի քանի տարի առաջ Ֆրանսիայում նշանաւոր էր եղել իմաստուն ու անաչառ Լ՚Օպիտալը: Իբրեւ ազատ ու ճարտար մտքի տէր մարդ, նա Հենրիկոս Գ-ի նման դժուար չհամարեցաւ բողոքական կրօնը թողնել, որի մէջ կրթել էին նորան իւր ծնողքը, և ընդունել կաթոլիկութիւնը, որ իւր համաքաղաքացիների մեծ մասի կրօնն էր: Վերջապէս իբրեւ հռետոր, նա որքան ճարտասան՝ նոյնքան և քաջ տրամաբան էր, որով և կարողացել է միշտ ներգործել իւր հայրենակիցների մտքերի վրայ, նա նոյնքան պերճախօս ու համոզիչ գտնուեցաւ երբ, Հենրիկոս Վալուայի փախուստից յետոյ, յորդորեց Լեհացոց իրանց ազգակիցներից մէկին թագաւոր ընտրել, որքան նորանից երկու տարի առաջ, երբ օտար թագաւոր ընտրելու կարևորութիւնը ցոյց տուեց նոցա:

Այսպիսի զարմանալի ընդունակութիւնների տէր էր այն մարդը որ տասնվեցերորդ դարու վերջին երեսուն տարիների ընթացքում ահագին ազդեցութիւն ունեցաւ Լեհաստանի բաղդի վրայ: Եթէ դժուար է բոլորովին ճիշտ գաղափար կազմել նորա բնաւորութեան վրայ, գոնեա չէ կարելի չհիանալ նորա խելքի ճարտարութեան վրայ, որ գիտցաւ պէս պէս հանգամանքներում այնքան զարմանալի ընդունակութիւններ ցոյց տալ: Նոյն իսկ ազնուականութեան վրայ եղած համարումը, որքան և զօրաւոր լինէր այն ժամանակ Լեհաստանում, այնուամենայնիւ այնքան զօրաւոր չէր որ կարողանար այդպիսի կորովամիտ մարդուն կուրացնել: Բայց եթէ անկարելի է կասկածի տակ դնել նորա քաղաքական իմաստութիւնը, շատ աւելի մեծ սխալ կը լինէր ենթադրել թէ նա կամաւ և առանց որևէ պատճառի ցանկացել է իւր երկրի գլխին բերել անիշխանութեան չարիքը, որ վաղ թէ ուշ պիտի զրկէր նորան իւր անկախութիւնից: Ոչինչ չէ կարող արդարացնել այսպիսի մի անհեթեթ ենթադրութիւն. ամենազօրաւոր երևակայութիւնը չէ կարող արդարև ընդունել պատմութեան մէջ մի անձնաւորութիւն որի հետ համեմատելով բանաստեղծութեան ամենապարհուրելի կեղծիքն անգամ մի դժգոյն ստեղծագործութիւն կ՚երևէր:

Ուրեմն, ինչպէս տեսնում ենք, չէ կարող խօսք լինել մի ենթադրութեան վրայ որ նոյն իսկ իւր անմտութեամբը հերքվում է: Բայց եթէ այդպէս է, ինչպէս պէտք է ուրեմն մեկնել Լեհացի պետական մարդու բռնած ընթացքը: Նոքա որոնք փորձել են այդ բանը անել, նայելով թէ ինչ կէտից են քննել խնդիրը, երկու տարբեր

փաստեր են առաջ բերել։ Ոմանք. Զամոյսկու սկզբունքներին ծածուկ կուսակիցներ լինելով, արդարացնում են նորա բռնած ճանապարհը հիմնուելով Լեհաստանի նոյն ժամանակ ունեցած ընկերական կազմակերպութեան վրայ։ Լեհական ազգը, ասում են նոքա, այն ժամանակ երեք տարրից էր բաղկացած. 1) վասալները, որոնք կատարեալ սարկութեան մէջ էին, ինչպէս որ ինքը Զամոյսկին խոստովանում է, երբ ասում է (մի ճառի մէջ որ փոքր ինչ յետոյ առիթ կունենանք յիշատակելու) թէ իշխանները նոցա վրայ ոչ միայն մի դերագոյն իրաւասութիւն ունէին, այլև կեանքի ու մահուան իրաւունք. 2) փոքր ազնուականութիւնը, որի դերը կարող էր համեմատուիլ հռոմէական հասարակապետութեան «ձիաւորների կարգի» դերին. և 3) վերջապէս ծերակոյտը, որի անդամներն էին սէրութեան բարձրաստիճան պաշտօնեաները և երկրի ամենամեծ դերդաստանների անդամները։ Այս երեք տարրերից առաջինը դեռ այնպէս սաստիկ ընկղմած էր սարկութեան խաւարի մէջ որ չէր կարելի մտածել քաղաքական կեանքին մասնակից անել նորան։ Փոքր ազնուականութիւնը, ընդհակառակն, այդ ժամանակ հաւասար քաղաքային իրաւունքներ էր վայելում իշխանական տների հետ, որոնք մի հեղ թագաւորութեան ներքոյ՝ մեծ կշռութեան էին հասել և համարեա միշտ իրանց ձեռքին ունէին հասարակապետութեան ամենաբարձր պաշտօնները։ Քաղաքական իրաւունքների հաւասարութիւնը որին ջերմեռանդութեամբ էր ձգտում փոքր ազնուականութիւնը, նորան անմերժելի հետևանք էր թվում այն արտօնութեան որ առաջուց արդէն ձեռք էր բերել։ Նա բոլորովին վճռել էր վաղ թէ ուշ ձեռք բերել և այս վերջին իրաւունքը։ Մերժել նորան այդ իրաւունքը նոյն միջոցին կը նշանակէր լոկ յետաձգել մի խնդրի անհրաժեշտ լուծումը, որ միայն ներքին խռովութիւնների ու երկպառակութիւնների անսպառ աղբիւր կարող էր ծնեցնել։ Ուրեմն Զամոյսկին չէր կարող աւելի խելացի ճանապարհ բռնել։ Նա իւր աչքի առաջ երեք սկզբունք ունէր, որոնք այնպէս խոր արմատ էին դրել իւր Հայրենիքի ընկերական կազմակերպութեան մէջ որ մտածել անդամ չէր կարող արմատախիլ անել նոցա։ Մէկ կողմից թագաւորական իշխանութիւնն էր, իսկ միւսից ընտրողական սկզբունքը և քաղաքային իրաւունքների հաւասարութիւնը։ Եթէ երկու վերջին սկզբունքներին նախապատուութիւն տալով հասարակապետութիւնը հրատարակէր, նա պէտք է անշուշտ թագաւորութիւնը կործանէր. իսկ եթէ ընդհակառակն, հիմնուելով

այս վերջին հաստատութեան վրայ, ժառանգական թագաւորութեան պաշտպան հանդիսանար, նա պէտք է դիմէր ընտրողական իրաւունքին որին այնքան դէմ էին գնում, որով և այստեղ էլ մեծ ընդդիմադրութեան պիտի հանդիպէր: Մի բան էր մնում նորան անել, այն է առանց որևէ նորոգութիւն մտցնելու և լոկ իւր նախորդների աւանդած սահմանադրութեան ոգին բացատրելով, խիստ եզրակացութիւններ հանել այն սկզբունքներից որ իրանից առաջ հաստատուած էր գտնում. նա այդ բանը արաւ քուէարկութեան իրաւունքը թագաւորների ընտրութեանը յարմարեցնելով, և այն այնպիսի խոհականութեամբ որ ցոյց է տալիս թէ նա հռոմէական իրաւագիտութեան ճշմարիտ աշակերտ էր:

Ինչպէս երևում է, Զամօյսկու վարմունքի այս արդարացման մէջ այնպիսի կէտեր են առաջ բերվում որոնք ապացոյցի կարօտ են. այդ քիչ շատ վարագուրեալ ջատագովութիւն է մի քաղաքական գրութեան որ այնքան վնասակար է եղել Լեհաստանի համար և որը հետևապէս ինքն իւր մէջ կրում իւր դատապարտութիւնը: Հիմնվում են հռոմէական իրաւաբանութեան վրայ, բայց այդ, մեր կարծիքով, բոլորովին անտեղի է: Կասկած չկայ որ այս անորոշ խօսքը գործածելով երկու միմեանցից բոլորովին տարբեր գաղափարներ են շփոթում, այն է հռոմէական ազգի իրաւագիտութիւնը և նորա քաղաքականութիւնը: Ճշմարիտ է, լեհացի պետական մարդուն ընծայուած դատողութեան մէջ կարծես փոքր ինչ երևում է այն մաթեմատիկական ճշտութիւնը որ Լէյբնիցը հիացմամբ գտնում էր Ուլպիանոս իրաւագէտի մէջ, բայց այդ դեռ բաւական պատճառ չէ ենթադրելու թէ հռոմէական ծերակոյտը, որի իմաստութիւնը ինքը Զամօյսկին հետազօտել էր մի շատ նշանաւոր գրուածի մէջ, նոյն կերպով գտնում լինէր այն ստէպ ստէպ պատահող ճգնաժամերի րոպէներում՝ երբ նա մաքառում էր հասարակ ժողովրդի դէմ, որի պահանջողութիւնները շատ աւելի արդարացի էին: Իրաւագէտն ու օրէնսդիրը իրանց որոշումների մէջ բոլորովին տարբեր սկզբունքների վրայ են հիմնվում, և Մոնտէսկիէօն իրաւամբ ասում է. «Ծիծաղելի բան կը լինէր եթէ մարդ մտածէր թագաւորութիւնների, ազգերի և տիեզերքի իրաւունքները այն սկզբունքների համեմատ որոշել որով որոշում են մասնաւոր անձանց իրաւունքները մի անձրևի խողովակի վրայ, ինչպէս որ ասում է Կիկերոնը»: Ապա ուրեմն, եթէ պնդում են թէ Զամօյսկին այս առթում հռոմէական իրաւագիտութեան

սկզբունքների համաձայն է վարուել, ամենևին իրաւունք չկայ դովել նորան այդ բանի համար. իսկ եթէ խօսքը հռոմէական քաղաքականութեան վրայ է, բոլորովին անճիշտ է ասել թէ Զամօյսկին ճշմարտապէս յիշեալ քաղաքականութեանը հետևած լինի:

Մեծ կարիք չկայ իմանալու թէ մինչև որ աստիճան դժուար պիտի եղած լինէր նորան արմատական փոփոխութիւններ մտցնել սահմանադրութեան մէջ այս կամ այն մտքով, այսինքն ընտրողական սկզբունքին նախապատուութիւն տալ և բուն հանրապետական կառավարութիւն հաստատել կամ ժառանգականութեան սկզբունքը գերադասել և մի իշխանական հարստութիւն ընդունել: Յայտնի է որ երկու դէպքումն էլ նա սրբագործում էր մի սկզբունք որ հաւասարապէս ընդունելի էր սահմանադրութեանը, վասն զի մէկ կողմից գահի ընտրական ժառանգներն անգամ պէտք է ընտրուէին, իսկ միւս կողմից ընտրութիւնը աւարտւում էր միշտ ծննդեամբ կամ ազգակցութեամբ որոշուած ժառանգին թագաւոր հրատարակելով: Երկու դէպքումն էլ, նա վերջ էր դնում երկու հակառական և շարունակ միմեանց դէմ կանգնող սկզբունքների, որոնք չէին կարող սահմանադրութեան մէջ միմեանց կողքին անդաւորել առանց վտանգների աղբիւր լինելու պետութեան համար, և որոնցից մէկը կամ միւսը պէտք է անպատճառ ընդունուէր իբրև տիրապետող սկզբունք քաղաքական կազմակերպութեան մէջ: Բայց դիցուք մինչև անգամ թէ մի այսպիսի ձեռնարկութիւն այն ժամանակ անիրագործելի լինէր, այնու ամենայնիւ կար մի ուրիշ բան որին պէտք էր շատ աւելի խնայել քան կառավարութեան այս պակասաւոր ձևին. խօսքը գերագոյն իշխանութեան էութեան ու ամբողջութեան վրայ է, որի փոխանցման եղանակը կամենում էին վերջնական կերպով որոշել ապագայի համար:

Զարմանում ենք այժմ, արդեօք այսպիսի նախատեսութիւն ունեցա՞ւ 1572ի լեհայի օրէնսդիրը: Ամէն ինչ յորդորում է մեզ կարծել որ նա ձգտում էր բոլորովին հակառակ հետևանքների հասնել: Ճշմարիտ է որ նա զգոյշ գտնուեցաւ և չկործանեց մի թագաւորութիւն որ իւր արժանաւորութիւնների համար այնքան սիրելի էր դարձել ազգին, որին նա իմաստութեամբ կառավարել էր. բայց թագաւորութիւնը պահպանելով հանդերձ, ինչպէս որ պարտաւորութիւն էր համարում իւր համար, նա թուլացրեց նորան խափանելով նորա գործունէութիւնը մի անհամեմատ ոչնչականութեան

շարունակ միջամտութեանը օրէնքի զօրութիւն տալով: Նա դերագոյն իշխանութեան աւանդապահին իր սխալը թողեց, բայց այդ իշխանութիւնը յաւիտեան վտանգի մէջ ձգեց. Նա թոյլ տուեց նորան իշխանութիւնը պահպանել մինչև իր կեանքի վերջը, բայց խլեց նորա ձեռքից այդ իշխանութիւնը գործ դնելու միջոցները այն զօրութեամբ որ բացառիկ հանգամանքները երբեմն պահանջում են: Կարելի՞ է ուրեմն ասել թէ նա հռոմէական քաղաքականութեան սկզբունքներին է հետևել:

Դարձեալ, առաջ են բերում քաղաքական հաւասարութիւնը որով իրաւունք ունին համարում պարծենալ լեհացի հասարակապետականները. բայց այդ հաւասարութիւնը ոչ այլ ինչ էր եթէ ոչ մի ինքնախաբութիւն: Որպէս զի նա իրօք գոյութիւն ունենար, ինչպէս որ երբև սկզբունք ընդունուած էր օրէնքով; պէտք էր երբև սկզբնական հիմն ընդունել մի ուրիշ հաւասարութիւն որ Լիկուրգոսը հաստատեց իր հասարակապետութեան մէջ, այն է հարստութեան կամ աւելի ուղիղ՝ աղքատութեան հաւասարութիւնը: Բայց մի՞թէ կարող էր խօսք լինել այս տեսակ հաւասարութեան վրայ մի երկրում ուր մեծամեծների զօրութիւնը իր ընդարձակութեամբ և միջոցներով աւելի մեծ էր քան եւրոպական ուրիշ ազգերի ազնուականների զօրութիւնը, ուր աղքատ ազնուականը ինքը անձամբ էր վարում գութանը, մինչ հարուստ ազնուականը, որ նորա հաւասարն էր համարվում պետութեան մէջ, արքայավել կեանք էր վարում իր ընդարձակ կալուածների մէջ: Այստեղ դարձեալ, հնութեան տուած օրինակին հակառակ, մինչ Սպարտայում օրէնսդիրը հաստատել էր հարստութիւնների հաւասարութիւնը և ընդունել վիճակների անհաւասարութիւնը, Լեհաստանում ընդհակառակն հրատարակում էին քաղաքացիների հաւասարութիւնը թոյլ տալով որ մնան և օրէցօր մեծանան այն տարբերութիւնները որ առաջացնում էր նոցա մէջ բաղդի անհաւասար շնորհը: Ուրեմն փոքր ազնուականութիւնը այնքան ազդեցութիւն չունէր ինչպէս որ կամենում են հաւատացնել, որ իրաւունք համարէր իր համար չափազանց մեծ մասնակցութիւն պահանջել վարչական գործերի մէջ: Բայց եթէ նորա պահանջողութիւնները զօրանից էլ պակաս լինէին, տէրութեան օգուտը աչքի առաջ ունենալով պէտք էր աշխատել որքան կարելի է յետաձգել նորա միջամտութիւնը քաղաքական կեանքի մէջ: Միթէ հռոմէական հասարակապետութեան օրինակը պատրաստ չէր

Զամոյսկուն զգուշացնելու համար: Միթէ նա չգիտէր թէ ինչպէս, նոյն իսկ արքունութեան հաստատուելուց յետոյ, երեք հարիւր տարուան ընթացքում որ տեւեց Յագելլոնեանց անկման ժամանակից մինչև Դրակքեանց ժամանակը, ազնուականութիւնը քայլ առ քայլ պաշտպանեց իւր առանձնաշնորհութիւնները ժողովրդի յափշտակութիւնների դէմ: Միթէ այս լոկ մի կոյր յամառութիւն էր նորա կողմից: Ի հարկէ ոչ. նա լաւ էր հասկանում որ եթէ ժողովուրդը մի անգամ իշխանութիւնը ձեռք ձգէր, անտարակոյս ազատութիւնը պիտի տանէր դէպի իւր կորուստը, և իրերի ընթացքը կատարելապէս արդարացրեց նոցա երկիւղները: Մարիոսից, այս ժողովրդական ամենամեծ հերոսից սկսած՝ հասարակապետութիւնը, ներքին պատերազմների մտնելով և մէկ գլխաւորի ձեռքից միւսին անցնելով, վերջիվերջոյ ձանձրացած՝ կայսերական բռնակալութեան գիրկն ընկաւ: Սորանից աւելի ախուր վիճակ էր սպասում Լեհաստանին. նա պէտք է կուլ տուէր դրացի պետութիւններից որոնք իրանից աւելի զօրաւոր կազմակերպութիւն ունէին:

Ուրիշները այլպէս են մեկնում Զամոյսկու գործունէութիւնը: Դեռ երիտասարդ գալով և համարեա նոր ոտք կոխելով քաղաքական ասպարիզում, Զամոյսկին, ասում են նոքա, դեռ բաւական ազդեցութիւն չունէր իւր ազգակիցների վրայ որ կարողանար կանգնեցնել նոցա այն յորձուն ճանապարհի վրայ ուր ձգում տանում էին նոցա իրանց վտանգաւոր ցանկութիւնները: Զգալով որ հանգամանքների վրայ իշխելու չափ զօրութիւն չունի, որպէս զի այն շարժողութեան առաջն առնէր որ իւր ազգին դէպի կործանումն էր տանում, նա աւելի լաւ համարեցաւ այդ հանգամանքներից օգուտ քաղել իւր նպատակներին ծառայեցնելու համար, չկարողանալով անմիջապէս գլխաւորութիւնը պահանջել, նա լաւ գիտէր համբերել ազնուականների ռամկապետական կուսակցութեան ոգին դառնալ, նորա իրաւունքների պաշտպան հանդիսանալ. գործով նա մի անգամից բոլորովին պիտի իշխէր այդ կուսակցութեան վրայ և պիտի յուսար անշուշտ ապագայում մի հլու գործիք գտնել նորանում իւր նպատակների համար: Եթէ այս է եղել արդարև Զամոյսկու դիտաւորութիւնը, պէտք է խոստովանել որ նորա ծրագրի առաջին մասը հրաշալի կերպով յաջողեցաւ. նա պաշտելի առարկայ դարձաւ մի կուսակցութեան համար որ, ինչպէս տեսանք, նորա շնորհով իւր սպասածից էլ վաղ ձեռք բերեց քաղաքական կեանքը: Բայց թէ

ինչ նպատակի էր կամենում հասնել ընտրելով մի այսպիսի վտանգաւոր ձեռնարկ, այդ դժուար կը լինէր գուշակել: Արդարև ոչ մի անգամ չէ երևում որևէ դիտաւորութեան հետքը, որի վրայ Զամոյսկին հիմնաւորապէս խորհած լինի և որին նա համապատասխանութեամբ ձգտած լինի իւր երկար և փառաւոր ասպարէզի ընթացքում: Արդեօք նա ինքը ցանկանում էր թագաւորութեան հասնել և յոյս ունէր թէ միանգամ որ իշխանութիւնը ձեռք բերէ կը յաջողի մի վերջնական ձև տալ իւր երկրի սահմանադրութեանը: Գուցէ, նորա ռամկավարական և ժողովրդասէր ընթացքը կարողանայ այն ենթադրութեան մէջ գտնել իւր մեկնութիւնը, որ, աչքառ է առել, նորա լեհ կենսագիրների ոչ մէկի մտքումը չէ եկել: Մի լեհացի է դարձեալ, որ յայտնում է մեզ այդ կարծիքը այն խորին նրբամտութեամբ, այն հետազօտիչ ոգով որ թափանցում է մինչև հոգիների խորը մարդկային որոշումների ամենածածուկ շարժառիթները գտնելու համար: Յովհաննէս կարդինալի քարտուղարը, Հորացիօ Սպանոկքին, 1587ին հրատարակեց «մի ճառ Լեհաստանի անիշխանութեան վրայ» որ Ստեփան Բաթորի թագաւորի մահից յետոյ տեղի ունեցաւ: Այդ ճառի մէջ նա մի առ մի խօսում է այն անձանց վրայ որոնք, իւր կարծիքով, ամենից աւելի յոյս կարող էին ունենալ թագաւորութեան հասնելու: Գալով Զամոյսկուն, նա ամենից առաջ խոստովանում է թէ «արդարև դժուար կը լինէր ամբողջ հասարակապետութեան մէջ մի ուրիշ մարդ գտնել, որ նորանից աւելի արժանի լինէր թագին: Մի բան միայն, աւելացնում է նա, կարող է մեծապէս վնասել նորան. այն է որ, մինչ նա կառավարութեան ղեկը իւր ձեռքին ունէր[1]), փոխանակ աշխատելու մեծամեծ ազնուականների սիրտը գրաւել, իւր ջանքը գործ դրեց խոնարհեցնելու այն անձանց հպարտութիւնը, որոնք իրանց ծննդեամբ, հարստութեամբ կամ վարչական գործերի մէջ ունեցած փորձառութեամբ ընդհանուր մակերևութից բարձր էին, նա աւելի լաւ էր համարում նոցա տեղ ստոր ցեղից դուրս եկած մարդիկ կարգել, որոնք ամենևին ծանօթ չլինելով և կամ անընդունակ համարուելով ուղղակի նորա կամքին էին հպատակում: Թէև նա կարողացել է այս ընթացքը բռնել որ աւելի հեշտութեամբ մնայ այն զօրութեան աստիճանի վրայ որին հասել էր,

[1]) Զամոյսկին միևնոյն ժամանակ թագաւորութեան սպարապետ և դիւանապետ էր:

բայց, ով գիտէ, գուցէ դորա հետ միասին ուրիշ աւելի բարձր նպատակներ ունէր, գուցէ նա այդպէսով յոյս ունէր օրինակի համար իւր կուսակիցների թիւը աւելացնել անիշխանութեան ժամանակի համար որ շուտով գալու էր: Յայտնի է որ եթէ գաւառական ժողովների մէջ խօսք լինի մի պիաստ (ազգային կանդիդատ) ընտրելու, Զամոյսկու կուսակիցները շատ բազմաթիւ կը լինին և զօրաւոր կերպով կը նպաստեն նորա ընտրութեանը, բայց այս էլ նոյնքան յայտնի է որ առաջին կարգի ազնուականները երբէք չեն համաձայնիլ նորան ընտրել»:

Պէ՞տք է արդեօք ընդունել թէ իտալացի քաղաքագէտը ներկայացնում է մեզ այստեղ Զամոյսկու ընթացքի բուն շարժառիթը Վարշաւայի ժողովարանում: Եթէ այդպէս է, պէտք է ընդունել նոյնպէս որ նա իւր դիտաւորութիւնները մերկացնելուց առաջ հրաժարուել է նոցանից, հասկանալով որ դժուար կը լինէր իրան, ինչպէս որ Սպանիոլքին գուշակել էր, իրագործել այդ դիտաւորութիւնները: Այս առաջին օրինակը չէր լինիլ այն դառն անձնախաբութեան որ զգացել են ամենաազնիւ փառասիրութեան տէր մարդիկ, որոնք իրանց բոլոր փառահեղութիւնը լոկ ժողովրդական համակրութեան վրայ են դրել: Մեր օրերում, մի նշանաւոր խօսք շատ լաւ էր բացատրում մի կուսակցութեան առաջնորդի դժգոհութիւնը անհանգիստ ամբոխից, որի առաջին ձգտումներին ինքն էր առաջնորդել, «Ես ստիպուած եմ հետևել նոցա, ասաց մի օր Լեդրիւ-Ռոլլէնը փարիզի խռովարարների վրայ խօսելով, որովհետև ես նոցա առաջնորդն եմ»: Լեհացի պետական մարդն էլ իւր ծերութեան օրերում մի ծանր խօսք արտասանեց, որ կարող է կարծել տալ թէ ինքն էլ, տարբեր պայմաններում, իւր ցանկացած նպատակից հեռու էր գնացել: Իւր մահից փոքր ինչ առաջ, լեհ ազնուականութիւնը մի նոր առիթ էր գտել արքայական կամքի դէմ գլուխ բարձրացնելու. նա կամենում էր ինչպէս և իցէ ճանաչել Սիգիզմունդ Գ-ի երկրորդ ամուսնութիւնը աւստրիական տան մի արքայազնուհու հետ: Օստրօգօրսկի իշխանը, որ դժգոհների գլուխն էր կանգնել, առաջարկում էր արդէն սուր կանգնեցնել ազնուականներին որ թագաւորին ստիպէ հրաժարուել իւր առաջին որոշումից: Այս անգամ Զամոյսկին էր որ փոթորկի առաջ կանգնելով իւր ազդեցութեամբը պաշտպան կացաւ թագաւորութեանը: Նա համոզեց Օստրօգօրսկուն որ իւր խորհուրդը գործադրելուց յետ կանգնի: «Ինձ քաջ յայտնի է, ասաց նա, թէ որքան գլուխն բան է ժողո-

վուրդը ապստամբեցնել. բայց և այն յայտնի է ինձ թէ որքան դժուար է զսպել նորա կատաղութեանը, եթէ մի անգամ գրգռուեցաւ, և արգելել որ ոչ չար անկարգութիւններ չգործէ»: Այդ խօսք այս բառերի մէջ շօշափելի է տեսնել մի անգամն խոստովանութիւն որ վշտացած ծերունին արտասանում է իւր երիտասարդութեան անբուժելի մոլորութիւնների նկատմամբ: Իւր երկարատև ու փառաւոր ասպարէզի վերջը հասնելով, Զամոյսկին դեռ կենդանի էր որ արդէն վտանգաւոր անկարգութիւնների նշանները տեսնում էր, անկարգութիւններ որ սահմանադրութիւնն անգամ ներում էր և որոնց առաջը նա այնուհետև անկարող պիտի լինէր առնել: Շատ ուշ էր այդ չարիքին օրինաւոր ճանապարհներով դարման տանել: Արդէն մի քանի տխուր իրողութիւններ առիթ էին ունեցել կատարուելու, որոնք արգելք էին լինում տէրութեան կազմակերպութեան մէջ կանոնաւոր կերպով փոփոխութիւններ մտցնելու: Միակ յաջող վայրկեանը երբ կարելի էր առանց որևէ վնասի, առանց բռնաբարութեան դիմելու և միայն համոզման զօրութեամբ վտանգի առաջն առնել ընկերական շէնութեանը հաստատուն ու տևողական հիմունք տալով, այդ միակ վայրկեանը որ ինքն ըստ ինքեան ներկայացաւ Սիգիզմունդ Օգոստոսի մահուան ժամանակ, Զամոյսկին անդառնալի կերպով ձեռքից թողել էր. ընդհակառակն, նա նորանից օգուտ էր քաղել երկիրը աւելի առաջ մղելու մի ճանապարհի վրայ որ պէտք է անշուշտ դէպի կորուստ տանէր նորան: Որքան էլ աշխատէր նա իւր խղճմտանքը հանգստացնել, այնու ամենայնիւ այդ վայրկեանին նա պիտի զգար թէ ինչ պատասխանատուութիւն ծանրանալու էր մի օր իւր յիշատակի վրայ, որքան էլ խաբուած լինէր. նա չէր կարող չհասկանալ այդ ժամանակ թէ այն անկարգութիւնները որոնց անձնատուր լինել էր սկսում ազգը իւր վնասակար ընթացքի հետևանքներն էին: Նա էր բուն հեղինակը այն ընտրողական սկզբունքի որ բոլոր ազնուականներին միահաւասար իրաւունք տալով իրանց թագաւորների ընտրութեանը մասնակից լինելու՝ ամբոխի հաճոյքին էր յանձնում մի երկրի ապագայ բախտը, որ ուրիշ ամէն երկրից սպառնալի վտանգների էր ենթարկուած:

Այսպէս ահա տեսանք և քննեցինք ամենակարևոր քաղաքական իրողութիւնը որ պատահել է Լեհաստանում մեր քարոզչի կենդանութեան ժամանակ: Մենք այդ իրողութիւնը ամէն կողմից հետազօտեցինք, որպէս զի լաւ ըմբռնենք թէ ինչ ազդեցութիւն

պիսի գործեր նա Հայր Սկարպայի քաղաքական դաղափարների վրայ։ Տեսանք որ այդ իրողութեան հետևանքը անխմանալի չէր նորա հեռատես մտքին և մենք այժմեանիկ կարող էինք զուշակել թէ ինչ դիրք պիսի բռնէ Վարշավայի ժողովարանի ներկայութեանը ազգասէր բեմբասացը, որ նորա խղճմտանքը լուսաւորելու պարտաւորութիւնը յանձն էր առել։ Բայց այդ ժամանակը նորա համար դեռ չէր եկել։ Նա պէտք է ականատես լիներ նախ այն տեսութեան առաջին հետևանքներին որ իրրև սկզբունք ընդունուած էր և այնուհետև պիսի գործադրուէր իւր Հայրենիքի կառավարութեան մէջ. նա պէտք է դեռ քսան տարի շարունակ ներկայ լիներ այն հիւանդութեան արագ ու աղետաբեր զարգացմանը՝ որի սերմը այդ միջոցում դեռ նոր էր դրուել լեհ ազգի սրտում։ Սեղ մնում է նորա հետ հետևել իրողութիւնների ընթացքին այն կարգով որով նոքա տեղի ունեցան նորա աչքերի առաջ այդ բոլոր ժամանակամիջոցում. տեսնել թէ ինչպէս տխուր փորձերով ամրացաւ ու կազդուրուեցաւ նորա մէջ այն քաղաքական դատաստանը որի տարրերը ցոյց տուինք, մինչև որ անկարող լինելով այլևս ծածկել իւր հայրենասէր սրտի անհանգստութիւնը, նորա համոզումը պերճախօսութեան հոսանքով դուրս ցայտէ կուրծքից որ այնքան ժամանակ զսպել էր նորան և իւր մարդարէական զուշակութիւնները որոտայ մի բազմութեան ականջին որ դժբաղդաբար խուլ մնաց նորա յորդորանքների առաջ։։։

(Մնացածը յաջորդ համարով.)

ՀՐԱՇՔ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ)։

Կրսոսկար ահէն Հայը անպաշտպան,
Երբ Մոհմադ ոտքը՝ դրրաւ Հայաստան,
Փրկութեան, դիտէր, ոչինչ յոյս չիկար,
Թէ որ ի վերուստ մէկ հրաշք չի գար։

Սրաբը՝ ոսկու, արեան ծարաւին,
«Օրհասը մօտ է, կասէր, սիրդ Հային»,
Հրով ու սրով ահեղ կրսպառնար
Բանդել, կործանել Հայաստան իսպառ.

Արիւն կրծորար առած վէրքերէն
Սրմբատ ու Ներսէս զօրավարներէն,
Կուզէր նա անմեղ արիւնով Հային
Սրբել սև ամօթ պարտրուած զօրքին։

Թագաւոր, պաշտպան, զէնք ու զօրական
Թրշուառ Հայերուն չէին օգնական.
Ցոյսը երկինքէն վաղուց հատել էր,
Երկինք Հայերէն ձեռք վեր առել էր.

Ո՞ւմ յուսան Հայերն, դէպ որի՞ն դիմեն,
Պաշտպան, ապաստան՞ որտեղ թող գտնեն.
Դրրացիք՝ խարդախ ցոյնք ու դոռ Պարսիկք
Ինքներն են Հայի արեան ծարաւիք։

Ազգին այսպիսի թրշուառ ժամանակ
Յիշեց իւր հօտը Հայրապետ Սահակ,
«Ես կերթամ, ասաց, Մոհմադի դուռը
Հեռացնել Հայէն մահաբեր սուրը»։

Ասաց ու իսկոյն ճանապարհ ընկաւ,
Այլ ճամփու վրայ նա տրկարացաւ,
Մահուան մահճի մէջ գրրեց մէկ նամակ,
«Թէ մեռնիմ, ասաց, Մոհմադին կուտաք»։

Շատ չի ապրեցաւ արդար Ծերունին,
Խոր աղէտքի մէջ թողնելով Հային,
Օրեր, ամիսներ դին անթաղ մընաց,
Եւ այն նամակը աջի մէջ դրրած։

Երբ Մոհմադ կատղած Հայաստան մըտաւ,
Սուրբի մարմինը տեսնել ցանկացաւ.
Հաղիւ հազ ոտքը դրրել էր շէմքին,
«Ողջոյն քեզ, Սահակ», ասաց դիակին։

Ո՛վ հրաշք... դին իւր ձեռքը կարկառեց,
Իբր կուզէր ասել, երբ թուղթը տրւեց,
«Ինչ խնդիրք ունէր քեզմէն Սահակը,
Տեղով կիմացնէ քեզ այս նամակը»։

Լուռ էին ամէնքն, լուռ որք շուրջ էին...
Ահ ու սարսափը պատեց Մոհմադին։
Կարդաց նամակը. խոր ոդոց հանեց,
Ու կատղած զօրքը Հայ երկրէն հանեց։

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՄԻ ԵՐԵՍ ԿԱՐՆՈՅ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Օգոստոսի 30ն 1878

Այսօր ռուսաց Կայսեր անուանակոչութեան տօնն է և որովհետև երկու օրից յետոյ զօրքերը պիտի սկսին դուրս երթալ Կարինից (Արզրում), այդ պատճառով զեներալ Շերէմէտիեվը, իբրև այս տեղի ռուսաց բանակի գլխաւոր հրամանատար, կամենում է մեծ զօրահանդէս կատարել։ Ժամի 9ն է առաւօտեան. նահանգապետին (գուբերնատոր) եկած են Կայսերական տօնը շնորհաւորելու ի Թիւս այլոց. պարսից հիւպատոսը գեղին ժապաւէնով և ոսկեզօծ հագուստով, քաղաքիս մէջ ճնացած տաճիկ մեծամեծները փաշայական պատուաղդեստով, հինգ վեց հայ և հայ-կաթոլիկ էֆէնդիներ, որոնց տաճկաց տէրութիւնը իրաւունք է տուած պատուաղդեստ հագնելու և որոնք չարաչար են գործ դնում այդ իրաւունքը, աշխատելով բաց չը թողուլ ոչ մի առիթ, երբ միայն կարելի է փառքով ու պատուով երևալ Կարինի փողոցներում։ Նկաւ և Ծերունի յոյն Գէօրգի էֆէնտին նոյնպէս զարդարուած և մի առանձին հպարտութիւնով, որովհետև ռուսների Օրթոդոքս եկեղեցւոյն պատկանելու պատճառով նոցա իւր մօտիկ ազգական է կարծում։ Մի ժամից յետոյ նահանգապետը, հետը առած իւր ծառայակիցներին և այդ նշանաւոր քաղաքացոց, հանդիսով ելաւ իւր տանից և քաղաքիս նշանաւոր փողոցների միջով դուրս գնաց Ղարսի դռներից դէպի բանակը։ Ցեղացի հայք արդէն քանի օր է զիտեն ռուսների Կարին թողնելու որոշումը և այժմ նահանգապետի այդ բազմութիւնով դուրս երթալը տեսնելով կարծում են որ ահա ռուսները բոլորովին գնացին. կանայք և երեխայք դուրս են թափում փողոցները և տեսակ տեսակ սիրտ ճմլող խօսքեր ասում։ Բանակի մէջ յահագին բազմութիւն է ժողոված. մօտ 16 հազար զօրք շարուած է Ահալի

և Ալեգեէ ամրոցների մէջ գտնուած դաշտի մէջ: Երբ կայսեր համար աղօթքը վերջացաւ, և քաղաքի ներսաբերդից որոտացին թնդանօթները՝ սկսուեցաւ զօրահանդէսը, որ մօտ երկու ժամ տևեց: Ահա ռուսաց մեծամեծները, բոլորեքեան ձի նստած, կանգնել են մի կողմ. դոցա մօտ շարուել են և Կարնոյ էֆէնդիները, որոնց նահանգապետը գխաւորեամբ հրաւիրեց ներկայ գտնուել հանդէսին: Զօրքերը նուագարաններով և «կեցցէ» աղաղակներով անցնում են դոցա առաջից. այսօր զինուորները հագնուած են մաքուր, երեսների գոյնը կարմիր է և խրեանք առողջ և քաջ դէմք ունին, երևում է որ ամառը Կարնոյ ջուրը և օդը խրեանց շատ օգնած է: Մտաբերում եմ ես փետրուար և Մարտ ամիսները, երբ զինուորները թոյլ, դեղնած, հիւանդոտ Կարնոյ քրիստոնէաների գութը շարժում էին խրեանց տեսքով: Այսօր զօրաց կորիչ քայլուածքը մեծ տպաւորութիւն ունի ամէնքի վրայ: Ցածիկ Ալի էֆէնդի Արարզադէն, որ տեղւոյս մաւսուլմանների մէջ ամէնից խելօք և քաղաքագէտն է համարվում և դաղանի ռուսաց ոխերիմ թշնամի, փոքր ինչ առանձնացել է և մեծ ուշադրութիւնով դիտում զօրքերին: Հետաքրքրութիւնից ես աննշմարելի կերպով մօտեցայ իրան և ուզեցայ դիտել, թէ ինչ տպաւորութիւն ունի իւր վրայ այդ հանդէսը. մի դառը ժպիտ և նախանձ երևում էր նորա երեսի վրայ, երբ հետևակ զօրքերը կանոնաւոր քայլուածքով անցնում էին իւր առաջից. եկաւ հերթը հեծելազօրքին. դրագունները թուրերը հանած վազացրին խրեանց ձիաները փոշին ամպեր բարձրացնելով և հրամանատարի առաջը հասնելով յանկարծ կանգնեցին. տպաւորութիւնը մեծ էր. Ալի էֆէնդին ժպիտը աւելացրեց: Եկան կազակները նոյնպէս ձիաները քշած և այնպիսի արագութիւնով, որ Ալի էֆէնդիի ձին յետի ոտքերի վրայ կանգնեց և նետեց իւր նստողին: Բարկացած և դեղնած հեծաւ նորից իւր նժոյգի վրայ Ալի էֆէնդին և նորա երեսի դառնութիւնը փոքր ինչ անցաւ, երբ ձի քշող կազակներից երկուսը նմանապէս ընկան: Այդ միջոցին մօտեցաւ ինձ տեղւոյս քաղաքային վարչութեան գլուխ Մահմադ Ալիբէգը, որ Վրացի Աբաշիձէ իշխանների ցեղից է Աջարիայի կողմերից. սա, չնայելով իւր մահմեդականութեանը թուրքաց կառավարչութեան ատող է և ապաւինած է ռուսաց:» Այսօր ձեր դրացին (Ալի էֆէնդին) բոլորովին մեռաւ. «Հիմայ նոր զգում է դա, որ այս վիշապներին դէմ դնել կարող չէին «թուրքերը...»

—Թուրքերն էլ զօրահանդէսներ յաճախ էին կատարում, կրտրեցի ես խօսքը, գիտենալով որ Մահմատ Ալին ընդունակ է շողոքորթելու: «Հազիւ երկու երեք տարին մի անգամ պարոն, հաց չունէին ուտելու, բոբիկ, տկլոր, զօրահանդէսը միտքերնին կուգար....

Այդ ժամանակ դղրդոցով սկսան անցնել թնդանօթները. «Թուրքերի աչքը դուրս գայ, իւրեանց թնդանօթները ահա ռուսները տանում են» ընդընդաց Մահմատ Ալին. բայց նա սխալվում էր, թնդանօթներից ոչ մինը տաճկացը չէր:

Երբ մի ժամից յետոյ զօրքերի մի մասը նուագելով մտաւ քաղաք, ռամիկ տաճիկները նորից տխրեցին, կարծելով թէ ռուսաց երթալու լուրը այս անգամ էլ սուտ է և թէ դոքա երբէք երթալիք չունին: Նորից տներից դուրս վազեցին փողոցը հայոց կանայքը և երեխայքը, ուրախանալով որ զօրքերը վերադարձան: Միմիայն զարգացած հայոց երեսներին տեսնում եմ ես մի տխրութիւն, մի մտատանջութիւն որովհետև գիտէին, որ զօրքերը չեն մնալու քաղաքում...:

Երեկոյեան հարբած ռուս զօրականների թիւը առատ էր...:

Օգոստոսի 31.

Հազիւ թէ առաւօտեան ժամի 8ը լրացել է, ինձ շտապով կանչում է նահանգապետը: Պատրաստվում եմ երթալու. ներս է մտնում շփոթուած տանտէրս և դողդոջուն ձայնով պատմում, որ դիշերս տաճիկները սկսել են ջարդել հայերին և թէ այս բոպէիս հայ ժողովուրդը մեծ բազմութիւնով գնաց նահանգապետի մօտ: Գործի եղելութիւնը, ինչպէս յետոյ ճիշտը իմացուեցաւ, ահա այս է՝ դեռ ևս պատերազմի ժամանակ տաճիկները մեղադրում էին հայոց, որ սոքա աւելի համակրում են ռուսաց քան թէ օսմանցոց. երբ Կարինը պաշարուեցաւ, մուսուլմանները միանգամայն համոզուած էին, որ ռուսների յաղթութեանց պատճառը տեղացի քրիստոնեայքն են, մանաւանդ որ ռուսական բանակի գլխաւոր հրամանատարները մեծ մասամբ հայեր են: Այդ բոլորը այնքան զրգռած էր մահմետական ամբոխին, որ սոքա պատրաստ էին յանկարծ յարձակուիլ և ջարդել բոլոր հայոց. եթէ այս միտքը պաշարման ժամանակ չիրագործուեցաւ, պատճառն այն էր, որ քաղաքը ամէն կողմից շրջապատուած էր ռուսական զօրքով և օրէցօր սպասվում էր թէ Կարինը պիտի ռմբակոծուի և անձնատուր լինի: Մահմետականները շատ վախենում էին, որ չլինի թէ Ղարսայ և Արդահանի նման կողոպտուի

Կարին ռուսաց զօրքերից և Իւրեանք էլ սրի քաշուին. այս բանը աչքի առաջ ունենալով, մուսուլմանները խոհեմութիւն էին համարում առ ժամանակ նոյն իսկ իրանց առած քրիստոնէից պաշտպանութեանը և միջնորդութեանը դիմել, որպէս զի ռուսաց մնած ժամանակ Իւրեանց կայքը և կեանքը ապահովին: Բաղաքին Հայերը Իւրեանց կողմից չէին խնայում ամէն ջանք՝ ապացուցանելու տաճկաց տերութեանը, որ Իւրեանք սուլթանի ամենահաւատարիմ հպատակներն են և թէ ամէն կերպ պատրաստ են քաղաքը պաշտպանելու, օրինակի համար՝ երբ Աղեզնէի վրայ ռուսները յարձակումն արին, Հայերը՝ հազար հոգի զէնք վեր առան, Իւրեանց մէջ հարիւրապետներ և տասնապետներ ընտրեցին և կարգ ու կանոնով բարձրացան ամրոցները պաշտպանելու: Այդ հարիւրապետ և յիսնապետ Հայերից շատերը մինչև այսօր պահած ունին, իբրև յիշատակ, Իւրեանց այն ժամանակուայ հագած պատուազգեստը, թուրը, հրացանը և այլն: Վերջապէս ռուսները խաղաղ ձևով մտան Կարին և մահմետականները ազատ շունչ քաշեցին, բայց և վերանորոգուեցաւ նոցա մէջ այն ոխը, որ ունէին դէպի հայ հասարակութիւնը: Այնուհետև առիթները պակաս չէին այդ նախանձի աւելի և աւելի զրգռուելուն, օրինակի համար՝ ռուսաց բոլոր մեծամեծները քրիստոնէից տների մէջ բնակուեցան ուր և ամէն կերպ հիւրասիրութիւն էին գտնում: փողոցում նշանաւոր մօլլայի կամ էֆէնդիի անցնելիս խանութպան հայերը առաջուայ սովորութեամբ ոտքի չէին կանգնում և խոնարհ ողջոյն տալիս—ասել է՝ հայերը հպարտացել են ռուսների գալու պատճառով. մօտ հարիւր հայ ռուսաց ոստիկանութեան ստորին պաշտօնեայ (գափտիէ) գրուեցին, սոքա տեղացի մահմետականների հետ երբեմն աւելի կոշտ էին վարվում—այս իրողութիւնը բոլորովին անտանելի էր մուսուլմաններին. «գեաուր» ասելը արգիլուեցաւ. հայք ամէնտեղ ձայնը բարձրացրել էին և մահմետականների հետ հաւասար իրաւունքի տէր կուզէին լինել. հայն համարձակ պահանջում էր տաճկից Իւրեան հասանելիք գումարը և այլն և այլն: Տաճիկները սրտով ատում էին ռուսներին, բայց նոցա վարմունքից ամենևին չէին նեղանում, այնինչ երեկուայ Իւրեանց հպատակ, գեաուր հայերի դլուխ բարձրացնելը միանգամայն անտանելի էր թվում Իւրեանց և տաճկական ամբոխը օրէցօր զրգռվում էր հայոց դէմ: «Սպասեցէք, թող երթան ռուսները—մենք ձեզ ցոյց կուտանք, «ամէնքիդ սրի կը քաշենք, ձեր տները կ՚այրենք» այս սովորական

խօսքերն էին, որ լսվում էին ամէն ատիճանի տաճիկներից, երբ մի որ և իցէ չնչին վէճ էր ծագում նոցա և հայոց մէջ։ Դարերով վա-խեցած հայը օրէցօր սպասում էին այս սպառնալիքի իրագործման։ Որքան մօտենում էր ռուսաց երթալու ժամանակը, այնքան աւելա-նում էին տաճկոյ սպառնալիքները, և այնքան մեծանում էր հայոց վախը։ Հասկանալի է որ գիւղերի մէջ աւելի էր հայոց անհանգստու-թիւնը. թէև ամառուայ հունձի ժամանակներն էին, երբ շինականի համար ամէն ժամը թանկ է, բայց հայ գիւղացիք, իւրեանց հունձը և կալը թողած, խմբովին գալիս էին քաղաք այս կամ այն ճանա-պարհով ճիշտը իմանալու թէ իրաւ ռուսները գնում են և երբ ու ինչպէս։ Լքած հոգւով, վզերնին ծռած, դառնում էին նոքա իւրեանց տուն և տխուր բօթ տալիս իւրեանց ընտանեաց, որ ռուսները իրաւ որ գնում են... Այնուհետև գիւղացոց մէջ սիրտ չը մնաց իւրեանց կալը կասելու, հացերը ժողովելու. ամէնքը սպասում էին թէ ինչ պէտք է լինի։

Ռուսական վարչութիւնը համոզուած էր, որ ոչինչ մի նշանա-ւոր դէպք չէ պատահելու. զօրքերի յետ քաշուելուց յետոյ. այնու ամենայնիւ, զգուշութեան համար, նահանգապետը հեռագիրներով բանակցում էր մուշեր-վալի Իզմայիլ-փաշայի հետ, որ այդ միջոցին Երզնկայ էր, թէ ռուսները չեն թողնիլ Կարինը, մինչև որ տաճկա-կան զօրքը և վարչութիւնը չը մտնեն քաղաքը, որպէս զի Կարինը անտէր և անպաշտպան չը մնայ։ Իզմայիլ-փաշան խոստացած է այս պահանջմունքը կատարելու։ Այդ միջոցներին սկսուեցին Ռամա-զանի պասը, երբ գիշերները մուսուլմանները անքուն են մնում և զուարճանում։ Մեր ոստիկանութիւնը պէտք եղած միջոցները ձեռք առաւ, որ չեղէ թէ քաղաքիս մէջ անկարգութիւն պատահի։

Այս գիշեր (երեսունից լոյս 31ը Օգոստոսի) առաւօտեան դէմ Կարնոյ յետ ընկած փողոցների մէկում չորս տաճիկ աւազակներ քանդելով պատուհանը մտել են մի աղքատ հայի աշչի (խոհարար) Կարապետի տուն, ձեռքը ոտքը կապել, դանակոծել, վիրաւորել, բռնաբարել իւր աչքի առաջ կնոջը և, մօտ 150 ռուբլու արժո-ղութեան իրեղէններ յափշտակելով, գնացել։ Կարապետի գոռալու վրայ հասել են ոստիկանութեան ծառայողները և տաճիկներից նոսոյ երկուսին, ապա երրորդին բանտարկել, իսկ չորրորդը դեռ անյայտ կորած է։ Կարապետը ասում է, որ այդ յանցաւորներից մէկը իւր

դրացին է և թէ հետը ոխ է ունեցած և այդ պատճառով ինքը վաղուց սպասելիս է եղել նորա վրէժխնդրութեան: Լոյսը բացուելուն պէս այս լուրը զարմանալի արագութիւնով հասել էր հայերի ականջը և ահա խումբ խումբ հայեր վազել թափել էին առաջնորդարանը: Քանի մի հայեր սկսել էին շտապով զարնել եկեղեցւոյ զանգակները: Իսկոյն հայ վաճառականների և արհեստաւորների խանութները փակուել էին և եկեղեցու գաւլիթը ժողովուել քանի մի հազար հայ: Անմիջապէս տեղւոյս առաջնորդ Յարութիւն արքեպիսկոպոսը հրաւիրել է ազգային ժողովի անդամներին, որ պէտք եղած միջոցները գործ դնուին և ժողովուրդը բաւականութիւն ստանայ: «Կամ ռուսները մինչև իւրեանց երթալը մեր վիճակը ապահովա-«ցնեն, և կամ մենք էլ իւրեանց հետ պիտի երթանք. մենք տաճ-«կայ ձեռքին անապահով ենք....» ահա զայրացած ժողովուրդի աղաղակը: Երբ առաջնորդը և ժողովականները չեն կարողացել ամբոխին բան հասկացնել—այն ժամանակ վճռել են որ ամէնքը միասին երթան նահանգապետին: Եպիսկոպոսի և իշխանների առաջնորդութեամբ մօտ երեք չորս հազար հայ աղաղակներով դիմում են նահանգապետի տունը. փողոցը ժողովրդով լցվում է: Հազիւ քնից զարթած նահանգապետ Դուխավսկոյն զարմացած մնացել է թէ այս ինչ է պատահել, սորա կինը սաստիկ վախ է զգում, երբ տեսնում է որ ամբոխի մէջ մէկը բարձրացրել է ատրճանակը և փողոցից սպառնում պատշգամի վրայ կանգնած Յարութիւն եպիսկոպոսին, զուռալով թէ դու մեզ համար ամենևին հոգ չես տանում, դու ես «արդելում մեզ գաղթել»: Տիկին Դուխավսկոյն կարծել էր թէ հայք իւր ամուսնոյ դէմ ապստամբել էին [1]. երբ առաջնորդը և ժողովրդականք մտել են նահանգապետի մօտ և հասկացրել գործի էութիւնը և ժողովուրդի պահանջմունքը, դեներալ Դուխավսկոյն ցած էր եկել փողոց և ասել ժողովուած հայերին հետևեալը: «Ռուսաց զօրքը քանի մի օրից բո-«լորովին պիտի թողնէ Կարինը, բայց այդ չի նշանակիլ որ տեղ-«ւոյս քրիստոնեայք մոռացման են տուած. ես բանակցեցի Իսմայիլ «փաշայի հետ և ստացած պատասխաններիս վրայ հիմնուելով, «հաւատացնում եմ ձեզ, որ ձեր կեանքը և կայքը ապահովա-«ցած են, մանաւանդ որ Բարձրագոյն Դուռը խոստացած է մեր կայ-«սեր որ իւր կողմից նշանաւոր բարենորոգումներ պիտի մտցնէ Հա-

[1]) Մի զարմանալի երևոյթ է որ հայերը իրանց զօրութիւնը միշտ փորձում են միայն.... հոգևորականների վերայ:

» յաստանի մէջ։ Ես չեմ դուրս երթալ կարնից, մինչև որ չը
« յանձնեմ քաղաքը Օսմանեան օրինաւոր վարչութեան, որ պիտի
« ձեզ պաշտպանէ։ Հանդարտուեցէք և լսող եղէք ձեր տէրութեան
« օրինաւոր պահանջներին։ Իսկ ինչ որ կվերաբերի ձեր գաղթելու
« դիտաւորութեանը, ահա վճռական կերպով ձեզ յայտնում եմ, որ
« Ռուսաստանը չի կարող ընդունել ձեզ, որովհետև ոչ ազատ հաղ
« ունի ձեզ համար և ոչ կուզէ ձեր դժբաղդութեան պատճառ լե-
« նել։ Ես խոստանում եմ ձեզ, որ այսօրուայ իրողութիւնը կը հե-
« ռադրեմ Ղարս զեներալ Լազրեվին և Իզմայիլ փաշային և վեր-
« ջինիցս կպահանջեմ նորից ամէն կերպ ապահովութիւն ձեզ հա-
« մար։» Այդ միջոցին բազմութեան մէջ լուր է տարածուել, թէ
երեկոյեան, գիշերուայ դէմ կարնից ոչ հեռու գտնուած Մուդուր-
կայ գիւղի ճանապարհին երկու տաճիկ բռնել են սայլով գնացող
մի հայ գիւղացու և ուզեցել են մորթել, բայց այն տեղից անցնող
ռուս կօզակները ազատել են հային, իսկ տաճիկները փախել։ Նո-
րից բարձրացնում է ամբոխը իւր աղաղակները, բայց նորից լսում է
նահանգապետի բերանից նոյն խօսքերը։ Ժողովուրդը պատրաստ է
արդէն ցրուելու, երբ յանկարծ երկու հայ կին գոռալով և աղաղակե-
լով վազում գալիս են նահանգապետի մօտ գանգատուելու, որ մի
մանչաճառ տաճիկ իւրեանց 11 տարեկան զաւակին խփել, սպանել
է։ Սարսափը սկսում է ժողովրդի վրայ. «տաճիկները երեխայներին
կոտորում են» աղաղակում է ամբոխը։ Վերջը դուրս եկաւ որ մնա-
ճառ տաճիկը իրաւ որ աքացի է տուել մի հայ տղայի և վերջինս
քանի մի բոպէ ուշաթափ մնացել է։ Տաճիկը անմիջապէս բանտար-
կուել է և տղան ողջ և առողջ է։

Նահանգապետը նորից հրաւիրում է ժողովուրդին ցրուել և
գնալ իւր գործին։ Կէս մի ապահովացած վերոյիշեալ խոստմունք-
ներից, կէս մի անբաւական, բազմութիւնը թողնում է զեներալ
Դուխավսկոյի տունը և քաշվում է դէպի առաջնորդարանը։ Այդ
ճանապարհի վրայ գտնվում էր ռուսաց պահապան զօրքի զօրանոցը,
որ միևնոյն ժամանակ նշանաւոր յանցաւորների համար իբրև բանտի
տեղ էր ծառայում։ Նոյն միջոցին երբ ժողովուրդը պիտի անցնէր
այդ զօրանոցի առաջից, ահա պահապաններով շրջապատած բե-
րում են բանտարկելու Կարապետի վրայ յարձակուող երեք աւազակ-
ներին։ Ժողովուրդին առաջնորդող երիտասարդների խումբը թա-
փում է այդ չարագործների վրայ, միտք ունի սպանելու, բայց բանը

վերջանում է գանակոծելով, որովհետև ոստիկանութիւնը զինուորներ է պահանջում օգնութեան և ամբոխին դէմ դնում: Բարեբաղդաբար ժողովուրդը կռիւ չէ մտնում զինուորաց հետ և ոստիկանութեան պահանջը կատարելով սկսում է հեռանալ դէպի հայոց եկեղեցին: Կոմենդանտ (քաղաքի հրամանատար) գնդապետ Կազբէկը և քաղաքապետ մայոր Կամնարականը բանտարկում են 11 հոգի այն երիտասարդներից, որոնք բարձրաձայն աղաղակելով դրդռում էին ժողովուրդին անպատճառ տեղն ու տեղը մահացնել տաճիկ աւազակներին: Նոցա բանտարկելու միտքը այն էր, որ գոնէ քանի մի ժամ ամբոխը առանց առաջնորդների մնալով, ցրուի. ոչ Կազբէկը, ոչ Կամնարականը նոցա պատժելու դիտաւորութիւն չունէին և պէտք է որ մէկ երկու ժամից յետոյ արձակէին նոցա:

Ժամի զանը դեռ չէր լսացել, երբ ես շտապում էի դէպի Նահանգապետի տունը. փողոցներում բոլոր խանութները փակ էին. քանի մի հատ տաճկի խանութ կար բաց և քանի մի տաճիկ այս տեղ ու այնտեղ ժողովուած, ըստ երևոյթին, զարմացքով խօսում էին հայերի այս օրուայ տարօրինակ և չը տեսնուած վարմունքի մասին: Որքան մօտենում էի Հայոց առաջնորդարանին, այնքան շատանում էր հայ բազմութեան թիւը: Առաջնորդարանի առաջ այնքան խիտ էր ամբոխը, որ ձիս հազիւ հազ կարողանում էր քայլել: Իսկ այստեղ ամենևին արգելեցին ինձ առաջ երթալ: «Երիցով, ձիուցդ վար իջիր, եկու առաջնորդին» հրամայական ձայնով դարձաւ ինձ Բաստրմաճեան Յարութիւն էֆէնդին, որ ձիուս առաջը կտրել էր: Ես հնազանդեցի. «Ճանապարհ, ճանապարհ» գոռալով Բաստրմաճեանը, որ սարսափելի ուժի տէր է, մէկ ձեռքով աջ ու ձախ էր մղում ամբոխին, որ կիտուել էր առաջնորդարանի սանդուխի վրայ, միւս ձեռքով ինձ այնպիսի արագութեամբ բարձրացնում էր վերև, որ կասես թռչում էի: Վերևը մի և նոյն բազմութիւնն էր, նախաձեռնողները լիքն էին ժողովրդով, ընդունելութեան ահագին դահլիճը նոյնպէս. ձայն, աղաղակ, զիւղացի, քաղաքացի, երեխայ, ծեր, բոլորը միմեանց խառնուած մի այնպիսի տեսարան էր ներկայացնում առաջնորդարանը, որ կասես հրդեհը լափում է շինութիւնը: Ինքը առաջնորդը նստած իւր սովորական տեղը, ձեռքով բռնած էր գլուխը՝ երեսը տխուր, դոյնը կապտացած. երբէք նորան այդ դրութեան մէջ չէի տեսած: Հազիւ թէ երկու խօսք ասացինք միմեանց, մեր խօսակցութեան մէջ խառնուեցին բոլոր ներկայ եղողները, նա-

խառնիճաղանճներից էլ հետաքրքիրները եկան մեզ լսելու: «Պէտք ձեր խոստումները մեր ապահովութեան մասին գործ դնէք ու այնպէս երթաք...»: Հազարումէկ այսպիսի խօսքեր ամէն կողմից թափւում էին այս: Վերջ ամենայնի Յարութիւն եպիսկոպոսը ինձ յայտնեց որ միւս սենեակի մէջ այս բոլէին ազգային ժողովի անդամները խմբագրում են հեռագիրներ Պօլսոյ Պատրիարքին, ազգային ժողովին, անգլիացոց, Ֆրանսիացոց, իտալացոց, գերմանացոց և նոյն իսկ ռուսաց դեսպաններին, նոյնպէս միտք ունին հեռագրել Վեհ. կաթողիկոսին և գեներալ Լազրեւին, վասնորոյ խնդրում է նահանգապետից նախ թոյլտուութիւն որ այդ հեռագիրները ռուսաց հեռագրատան ձեռքով ուղարկուին. երկրորդ, որ ոստիկանութեան ձեռքով կէս ժամ առաջ բանտարկուած 11 հայ երիտասարդները անմիջապէս արձակուին: Ես խոստացայ կէս ժամից երկու առաջարկութեանց պատասխանն էլ բերել և դարձեալ նոյն Բաստրմաճեանի օգնութիւնով կարողացայ վայր գալ ու ամբոխը ճղելով հասնել նահանգապետի բնակարանը: Ինձ հետ մտաւ և քաղաքի հրամանատար Կազբէկը. վերջինս խնդրեց գեներալ Դուխովսկոյի համաձայնութիւնը որ ամէն կերպ անկարգութեանց դէմը առնելու համար քաղաքի փողոցների մէջ քանի մի հարիւր հոգի զօրք շարուի: Ինքը Դուխովսկոյն, գոյնը նետուած՝ պարապում էր Իզմայիլ փաշային և Կարս ուղարկելիք հեռագիրների խմբագրելովը: Նա ուրախութեամբ համաձայնեցաւ, որ հայքը ուղարկեն իւրեանց հեռագիրները ռուսաց հեռագրատանով, միայն թէ ինքը պէտք է գիտենայ հեռագիրների բովանդակութիւնը: Իսկ բանտարկուած երիտասարդների վերաբերութեամբ հրամայեց ինձ ասել առաջնորդին, որ միամիտ կենայ, դոցա չեն պատժելու, բայց թէ երկու ժամից յետոյ կարող են ազատուիլ, երբ ժողովուրդը բոլորովին կը ցրուի: Քանի մի ուրիշ հրամաններ ստանալով, ես պէտք է նորից վերադառնայի առաջնորդարան:

Փողոցները դեռ լիքն է հայ ժողովուրդով. հայագէտ ռուս զօրապետները այստեղ ու այնտեղ խումբեր կազմած խօսում են այս անցքի մասին և միատեսակ խղճում հայերին «մենք որ երթանք, «ի՞նչ կլինի խեղճերի վիճակը. մենք ենք մեղաւոր, որ այնքան մոռացրինք մեզ դոցա, մինչև որ մեր վրէժն էլ տաճիկները այսու«հետև հայերի վրայ պիտի թափեն», ասում է մէկ զօրապետ.

— Թող հայքը զէնք վերառնեն իրանց պաշտպանելու համար, ասում է միւսը.

«Այդ է բանը որ հայերի ձեռքից օսմանցիք առած են բոլոր «զէնքերը, իսկ իւրեանց տաճիկները ամէնքն էլ զէնք ունին», պատասխանում է երրորդը:

Արդէն պատրիարքին ուղարկելիք հեռագրի սեւագրութիւնն էր կարդում առաջնորդը, երբ ես հաղիւ հազ մտայ իւր դահլիճը. Նորից լսում բազմութիւն ներս թափեցաւ իմ ետեւից, նորից աղաղակներ...

Եպիսկոպոսը յուսահատութեան էր հասել. ժողովուրդը պահանջում էր նորանից, որ իսկոյն ազատէ բանտարկուածներին. առաջնորդը համոզում էր հանդարտուել, ցրուել, խոստանում էր ամէն միջոց գործ դնել, ինչ որ միայն կարելի է, ցոյց էր տալիս հեռագիրների պատճէնները...

«Մեզ յոյսերով կպահես, չենք ուզեր լսել—գոռում են մի կողմից:

—Պիտի գաղթենք—աղաղակում են միւսները:

«Ապահովութիւն կուզենք...:

—Կեցցէ Հայաստան...վախ Հայաստան...

«Արիւններս կը թափենք...գոչում էին ոգեւորուած երիտասարդները:

—Բանտարկեալները պէտք է որ ազատուին, կպահանջենք... և այսպիսի անսահ անսակ բացագանչութիւններ սաստիկ շփոթ էին պատճառում դահլիճի մէջ. ոչ ոք լսող չկար միմեանց: Համաձայն նահանգապետի խօսքերին, առաջնորդը համոզում էր բազմութեանը ցրուել և խանութները բանալ, եթէ կուզեն որ բանտարկուածները ազատուին. «արդէն ձեր բողոքը լսուեցաւ, ամէն կողմը «հեռագիր գնաց. դուք ձեր անելիքը արիք. հիմիկուհիմիկ անե- «լիք չկայ. բաւական է. վստահացէք մեզ վրայ ու գացէք...»:

Ժողովուրդը պատասխանում էր, որ նախ բանտարկուածները ազատուին, ու յետոյ իրանք ցրուին: Թէ առաջնորդը, թէ ազգային ժողովի անդամները, և թէ նշանաւոր հայք պայմանում էին հասարակութեան յամառութեան վրայ: Երեւում էր, որ ժողովուրդին դրդողներ կային, մանաւանդ գաղթականութիւն քարոզողներից: Երբ ես դուրս եկայ առաջնորդարանի մեծ սրահը, տեսայ որ պատուհանների կողմը մի մեծ բազմութիւն է գումարուել և մեծին ուշադրութեամբ լսում է: Մօտեցայ և ամբոխի միջից անցայ առաջ, տեսնեմ ռուս ոստիկանութեան զինուորներից մէկը, մի հայ [illegible], որ

իւր ապօրինի վարմունքի համար մի երկու շաբաթ առաջ արտաքսուել էր պաշտօնից և որ իւր կոշտութիւնով շատ գրգռած էր տաճիկներին, նստել է աթոռի վրայ, ձեռքին ծխախոտ, աչքերը երկարցրած, ճառ է խօսում ժողովուրդին և համոզում, որ ոչ ոքի չպէտք է լսել, այլ պատրաստուել ռուսների հետ երթալ, որովհետև տաճիկները պատրաստւում են սուր քաշելու և այլն և այլն: Նորա լրբութիւնը ինձ շատ զարմացրեց. իսկոյն բանտարկեցի նրան և ուղարկեցի ոստիկանութեան: Երբ պատուհաններից ցած էին տանում պարոնին, մի այլ պարոն սկսեց դէմ դնել պահապաններին. «Աստիկ իմ սիրելիս է... արիւնս պատրաստ եմ թափելու... չեմ «թողուր...»: Այս վերջինն էլ բանտարկուեցաւ: Բազմութեան մէջ արդէն զինուորածներ սկսան երևալ, և արիւն թափելու խօսքը շատ շուտ էր կրկնւում: Քաստորմաճեանը և ես իջանք փողոցը և համոզում էինք ժողովրդին ցրուել. այդ միջոցին մէկը, ֆէսը գլխից առած, պինդ բռնեց ձեռքս ու սկսեց սեղմել. «պատրաստ եմ արիւնս թափելու...» գոռում է նա:

— Որի՞ դէմ, հարցնում եմ ես զինուորածին, որ հազիւ հազ ոտքի վրայ է կանգնած.

«Ի՞նչ գիտնամ.... որու դէմ կը հրամայես...» պատասխանում է նա և մեզ շրջապատող ամբոխի ծիծաղը շարժում.

— Հիմայ կը հրամայեմ որ երթաս քնես, վաղը կը մտածենք թէ որու դէմ արիւն թափենք:

Ամբոխը նորից ծիծաղում է. զինուորածը շփոթուած հեռանում է: Ժամի 11ին մի գունդ ռուսաց զօրք եկաւ բանակից. զինուորները փոքրիկ խմբերով ոստիկաններին առաջնորդ անելով, ցրուեցան փողոցների մէջ: Սաստիկ արգելուած էր դէնք գործ ածել ժողովրդի դէմ, բայց և այնպէս ոստիկաններին հրամայած էր ցրուել բազմութիւնը: Զինուորների մի խումբը կանգնեց առաջնորդարանի դրանը, միւսը եկեղեցու բակում, վախ կար որ չլինի թէ այս տեղերում մի անկարգութիւն պատահի: Երբ ամբոխին քշում էին ոստիկանները, նա մէկ տեղից անցնում էր միւս տեղը: Երբ գլխաւոր փողոցները լցուեցին զօրքերով, ժողովուրդը խուռն բազմութիւնով գնաց կխուեց եկեղեցու և առաջնորդարանին կից Հայոց ընդարձակ գերեզմանատանը և այնտեղ մնաց մինչև մթնանալը: Դեռ ես մինչև զօրքերի գալը, մի խումբ Հայերի առաջնորդական փոխանորդ Տէր Մելքիսեդ քահանային առաջը առած նորից գալիս էր նահանգապետին: Գեն-

բայ Շերեմետեւը հեռուից նկատեց այդ խումբը և հրամայեց ցրուել․ կամնարականը և ես գնացինք դիմաւորելու բազմութեանը. «Ո՞ւր էք գնում և ի՞նչ կամիք, տէր հայր։»

—Արքայզանը յատուկ ողջոյն ունի և կխնդրէ որ բանտարկեալները ազատէք և մեզի յանձնէք, վասն զի ժողովուրդը կը պահանջէ….

«Գնացէք և խնդրեցէք Արքայզանին, որ յայտնէ ժողովուրդին, որ մինչև նա չի ցրուիլ, բանտարկածները չեն ազատուիլ, պատասխանեց կամնարական։

—Շատ համոզեց, լսող չկայ․ Արքայզանին կմեղադրեն որ ինքը չի ուզեր նոցա ազատուիլը․ օգնեցէք իրեն, ժողովուրդը կըռնանայ, կամաց ասաց ականջիս մէջ Տէր Մելքիսէդը։

Արդէն վճռուած էր, որ բանտարկուածները ազատուին զօրքերի դալուց յետոյ․ բայց կառավարութիւնը չէր ուզում որ այդ բանը ամբոխի պահանջման և կամքի կատարելու ձև ստանայ։

—Ասացէք արքայզանին, դիտութեամբ բարձր ձայնով ասացի քահանային, որպէս զի ժողովրդականք լսեն, որ այն երիտասարդները բանտարկուած են տէրութեան ձեռքով իւր օտարականներին ընդդիմանալու համար և պիտի ազատուին նոյն տէրութեան հրամանով և ոչ թէ ամբոխի պահանջելով։ Արդէն արքայզանի խնդիրը յարգեց նահանգապետը և խոստացաւ արձակել, երբ ժողովուրդը ցրուի․ մինչև ժողովուրդը չը քաշուի, ոչ եպիսկոպոսի միջամտութիւնը կօգնէ, ոչ ձեր խնդիրը․ գնացէք ասացէք այս ամենքին և արքայզանին մի անհանգիստ անէք…։

Խումբը լուռ ու մունջ յետ դարձաւ։

Ժամի 12ին բանտարկուած երիտասարդներին արձակեցին։ Ծիծաղելով և ուրախ ուրախ դուրս եկան դոքա բանտից և նորից խառնուեցան ամբոխի մէջ քարոզելու, համոզելու…։ Այդ պարոնները, շատ ընտիր երիտասարդներ են․ պարկեշտ, բարոյական և անչափ ազգասէր․ դոքա կարնոյ հայ հասարակութեան ծաղիկներն են․ մի քանիսը դոցանից փոքր ինչ Ֆրանսերէն գիտեն, ոմանք առևտրական գործերով երթևեկած են Պօլիս, բայց մեծ մասը կարնից դուրս չէ եղած և այստեղի դպրոցի մէջ է աւարտած իւր ուսումը։ Վերին աստիճանի վառվռուն և բնական ընդունակութեան տէր են դոքա․ ազգային զգացմունքները զարգացրել են դոցա երևակայութիւնը այն աստիճան, որ հայոց անկախութիւն, թագ և գայսօն են երազում չը

նայելով իւրեանց ներկայ դրութեանը. ուստիշ կերպ պայմանների չեն կամենում զիջանել. և դիշեր ցերեկ մտածում են թէ ինչ միջոցներով կարելի է իրագործել այն վեսեմ նպատակը, որ և նոյն իսկ արդարութեան պահանջը կարող է համարուիլ: Դոցա գլխաւոր արժանաւորութիւններից մէկը և այն է որ միմեանց հետ շատ հաշտ են և միաբան: Մի առանձին ուրախութիւն էի զգում, երբ տօն օրերը տեսնում էի դոցա միասին խմբուած գնում են զբօսնելու. այդ ժամանակ իւրեանց սովորական խօսակցութիւնը Հայաստանի վրայ է.....:

Ժամի մօտ երկուսն է և դեռ մենք պարապած ենք ժողովուրդին համոզելով, որ ցրուի: Ինձ քաղաքի հրամանատար Կաղբէկը կանչեց ու խնդրեց որ Շերեմետիեվի հրամանով գնամ հրաւիրեմ ազգային ժողովի անդամներին իւր մօտ: Ութ հոգի կարնոյ հայ պատուելիներից եկան հետս Կաղբէկի մօտ: Քաղաքավարի ընդունելուց յետոյ Կաղբէկը ասաց:

«Հայ չլինելով, մի հայի չափ համակրում եմ ես ձեզ և որտանց ցաւում որ ոչինչ միջոց չունիմ իմ համակրութիւնս ձեզ գործքով ապացուցանելու: Համակրում եմ ես և ձեր այսօրուայ չարժման. այդ ձեզ իւր օգուտները պիտի առաջացնէ. արդէն ամէն կողմը հեռագրուեցաւ ձեր և մեր կողմից. ում պէտք էր լսել այսօրուայ անցքերը լսեց: Դուք ինքներդ գիտէք որ մի այդպիսի չարժումն էլ իւր չափը ունի. իմ բարեկամական խորհուրդս և խնդիրս էլ այս է, որ տակաւին բաւականանաք այսօրուայ եղելութիւնով, որովհետև առաջ երթալու ճանապարհ և միջոց չունիք: Վերջացուցի իմ բարեկամական առաջարկութիւնը և պիտի աւելացնեմ, որ որքան և համակրեի ձեզ հոգւով, այնու ամենայնիւ իմ պաշտօնական պարտականութիւնս էլ ունիմ, որ սրբութեամբ պիտի կատարեմ. այսօր ես քաղաքիս զօրաց հրամանատարն եմ և բնակչաց անվրդովութեան պատասխանատուն: Մեր օրէնքով արգելուած է ժողովրդի այդ տեսակ խուռն դիզուելը. ես, դարձեալ կասեմ, համակրելով ձեզ, թոյլ վարուեցայ այսօր քանիցս անգամ հրաւիրելով միայն որ ցրուի ժողովուրդը. ինձ լսող չեղաւ. վերջի փորձը փորձում եմ դառնալով ձեզ, հայ ազգի ներկայացուցիչներին, խնդարհաբար խնդրելով, որ ամէն միջոց գործ դնէք համոզելու ժողովրդին ցրուելու, խանութները բանալու: Եթէ այս վերջին խնդիրս էլ չի լսուիլ, այն ժամանակ ստիպուած կլինիմ անթերի կատարել այն, ինչ որ օրէնքը ինձ պատուիրում է, այն է զէնքով ցրուել, որ ինձ համար շատ ցաւալի պիտի լինի: Հրամայած եմ զօրքերին, որ երկու ժամից յետոյ ընդիմացողների վրայ հրացան արձակեն»:

Ես թարգմանեցի Կաղբէկի ճառը. ժողովականներից մի քանիսը յայտնեցին իւրեանց շնորհակալութիւնը այարոնի համակրանաց համար դէպի հայոց գործը, պատմեցին թէ ինչպէս իւրեանք ևս աշ-

խօսում են հանդարտացնել ժողովրդին, բայց վերջինս շատ խրատացի կերպով երաշխաւորութիւն է ուզում, որ այսուհետեւ իւր կեանքը եւ ստացուածքը ապահով պէտք է լինի բարբարոս սանձիկներից: Կազէկը պատասխանեց, որ քանի որ ռուսները Կարինը չեն թողած, ինքը երաշխաւոր է այդ ապահովութեան, իսկ մնացածը իւր ձեռքին չէ եւ այլն:

Ազգային ժողովի անդամները գնացին առաջնորդարանը խորհելու թէ ինչպէս համոզեն ժողովրդին ցրուելու: Արդէն զինուորուածների թիւը այնքան շատացել էր, որ ամբոխը մեծ յամառութիւն էր ցոյց տալի գերեզմանատանից եւ եկեղեցու բակից դուրս երթալու մասին: Թէ ի՞նչ կուզէին, ի՞նչ նպատակ ունէին, ոչ ոք չը գիտէր, որովհետեւ գուցէ ոչինչ մի նպատակ չկար: Իմ բարեկամ ....ի որդին, որ մի 18 տարեկան երիտասարդ է, այսօր բանտարկածներից մէկն էր եւ հիմայ նորից պարագլուխ էր դարձել ամբոխի ամենագրգռուած մասին: Վախում եմ որ մի արիւնհեղութիւն չլինի, որովհետեւ իմ առաջ կարգադրութիւն եղաւ երեկոյեան դէմ՝ բռնի ցրուել բազմութիւնը: Փոքր ինչ առաջ երթալով, ես տեսայ իմ բարեկամ ...ին եւ մտերմաբար խորհուրդ տուեցի, որ զգուշացնի որդուն ժողովուրդը գրգռելուց:

«Ան իւր պարտականութիւնը կը կատարէ» պատասխանեց հայրը.

—Բայց վտանգ կայ, զօրքերին հրաման եղաւ հրացան պարպելու չլողների վրայ.

«Վնաս չկայ, թող պարպեն»:

—Դուք ուզում էք ձեր որդուն արիւնթաթախ տեսնել...

«Ինչու չէ, քանի որ ազգի փրկութեան համար է».

Ես մնացի զարմացած, որ Կարինում պատմական Աթէնացի եւ Սպարտացի քաղաքացիք եմ տեսնում:

Հազիւ թէ ճաշեցի, եկաւ տան տէրս եւ պատմեց մի ցաւալի իրողութիւն: Երեկոյեան ժամին Յարութիւն արքեպիսկոպոսը բեմ է բարձրանում, կարդում է իւր ուղարկած հեռագիրների պատճէնները, պատմում է թէ Կազէկը ինչպէս է խօսացել, նահանգապետը ինչ է ասել եւ վերջացնում է խօսքը համոզելով, որ հանդարտութիւնով ցրուեն ու սպասեն պատասխաններին: Քանի մի հարբածներ այդ միջոցին սպառնալիքներ են անում եպիսկոպոսի դէմ եւ նո-

բան բեմից ցած բերում։ Առաջնորդը հազիւ ազատվում է ամբոխի ձեռքից և փախչում մտնում իւր սենեակները։ Ես նորից ձի հեծայ և գնացի. խանութները դարձեալ կողպած են. փողոցներում հայ չէ երևում. ամենքեան հայոց գերեզմանատանն են կիտուած. ես ձիով ուղղակի մտայ եկեղեցւոյ բակը և այնտեղից անցայ գերեզմանատուն. խուռն բազմութիւն լի էր այնտեղ։ Մտայ և կանգնեցի ժողովուրդի մէջ. քանի մի հարիւր մարդ շրջապատեց ինձ։ Յայտնեցի որ կուզեմ խօսալ և մինչև չը վերջացնեմ, չընդմիջեն ինձ. խոստացան և լռութիւն տիրեց։ Ես երկար ու բարակ համոզում էի, որ ինչ որ պէտք էր արդէն կատարուեցաւ և թէ հիմա ժամանակ է ցրուելու և այլն։

«Ես պիտի այստեղ մեռնիմ» կտրեց խօսքս մի հարբած.

—Երևի կուզես քիչ ծախս լինի թաղմանդ վրայ, պատասխանեցի ես. ժողովուրդը բարձր ծիծաղ բարձրացրեց։ Օգուտ քաղելով այդ ժամանակից, առաջարկեցի որ կամեցողը ինձ հետ միասին դուրս գայ գերեզմանատան պարսպից։ Քանի մի հարիւր հոգի հետևեց ինձ, բայց շատերը մնացին այնտեղ մինչև որ գիշերուայ մութը նոցա ևս ստիպել էր բաժանուելու։

Այսօրուայ խրոխտութիւնը ինձ երազ է թվում, որովհետև այստեղի հայերից մի այդպիսի ցոյց ամենևին չէր սպասուիլ։ Ցաւալի է ինձ տեսնել, թէ ինչպէս մի երկու պատահական դէպքերից այդպիսի վախ էր զգացել կարնոյ հայ հասարակութիւնը, որ մինչև անգամ գաղթել էր ցանկանում. բայց միւս կողմից ուրախ եմ որ իւրեանց մէջ այդքան միութիւն կայ և պատրաստութիւն միմեանց պաշտպանելու։ Այսօր առաջին անգամն է որ այդքան հայ տեսայ կարնոյ մէջ։ Ի՞նչ հետևանք պիտի ունենայ արդեօք կարնեցոց այսօրուայ խաղաղ, անզէնք և անարիւն յեղափոխութիւնը։ Շատերը ինձ նման այս հարցով զբաղուած պիտի անկողին մտնեն.....

Սեպտեմբերի 1.

Եօթը օրուայ մէջ կտոր կտոր պիտի դուրս երթան քաղաքից ռուսաց զօրքերը և այսօր առաջին գունդն է ելնում։ Արդեօք բացի՞ն խանութները թէ ոչ, այս հարցով ես տանիցը դուրս եկայ։ Դարձեալ նոյն է հանդիսանում աչքիս առաջ. խանութները գոց, ժո-

ղեկավարները առաւօտից սկսած առաջնորդարանի առաջ և գերեզմանատան պարսպում կիտուած է: Մինչև իմ գալս, նահանգապետը պտըտել է փողոցները, համոզել է բանալ խանութները, լսող չկայ: Քաղաքապետ Կամսարականը պատահեց ինձ, հետը առաւ և մենք փողոց պտըտելով յայտնում ենք խանութպաններին, որ եթէ կէս ժամից յետոյ խանութները չը բանան, տաս տասը ռուբլի տուգանք կառնուի: Դուրս եկաւ, որ քանի մի պարոններ գաղտնի յայտնում են ժողովուրդին, որ ով միայն համարձակի բանալ խանութը, իսկոյն նորա կը թալանեն: Բաստրիմաճեան Յարութիւն էֆէնտին պատահեց և մեզ շատ օգնեց այս գործի մէջ. որին բռունցք տալով, որին աքացի, որին քշոց, կէս ժամի մէջ գլխաւոր փողոցի բոլոր խանութները բացել տուեց և առուտուրը սկսուեցաւ:

Այսօր գեներալ Դուխովսկոյն ստացաւ Կարս գտնուող գեներալ Լազարեւից իւր երեկուան հեռագիրների պատասխանները. հրամայած է ամէն միջոց գործ դնել ժողովրդին հանգիստ պահելու: Միևնոյն ժամանակ Լազարեւը Մուշիր Իզմայիլ փաշային մի հեռագիր է ուղղած որ պիտի այստեղ թարգմանուի թուրքերէն և օսմանցոց հեռագրատան ձեռքով ուղարկուի Երզնկայ Իզմայիլին: Ահա հեռագրի բովանդակութիւնը, որ բառ առ բառ բերում եմ այնպէս, ինչպէս որ նա թարգմանուել է հայերէն տպագրելու համար:

Կարս 31 օգոստոս. ժամի 8 րոպէ 45.

«Գէնէրալ-լէյթընանտ Լազարէֆէն առ Միւշիր Իսմայիլ փաշա. Երզ-
« րումի զինուորական կուսակալը ինձ հաղորդեց որ երեկ գիշեր քանիմը
« տաճիկներ մտեր են հայու մը բնակարան, զայն կողոպտեր են, մէկ մարդ
« վիրաւորեր են և մէկ կին բռնաբարեր են. այսօր ևս թուրք մը վիրա-
« ւորեր է հայ մը, որ ընդդիմախօսեր է նորա քրիստոնէից նկատմամբ ա-
« րած սպառնալեաց. սարսափահար ժողովուրդը հազարաւոր բազմու-
« թեամբ խռներ են արքեպիսկոպոսին քով, յայտնելով անոր տաճկաց
« սպառնալեաց յաւելնալը և իրենց անելանելի դրութիւնը:

«Առաջարկելով Դուխովսկոյին ձեռք առնուլ ամէն կարելի միջոցներ
« մինչ մեր զօրաց Էրզրում մտնալու վերջին րոպէն քաղաքին մէջ կարգ
« պահելու և ամենուն ընչից ու անձանց ապահովութեան համար, ես կը
« դիմեմ Ձեր բարձր գերազանցութեան չը դառնալ Ձեր կողմանէ ևս գոր-
« ծադրել ամէն կերպ միջոցներ և Ձեր բարոյական ազդեցութիւնը քրիս-
« տոնեայ ժողովրդոց պաշտպանութեան և անդորրութեան համար:

« Միւշիր, ես բոլորովին հաւատացեր եմ որ Դուք կրելով Ձեր վրայ
« ժողովրդեան և զօրաց խորին յարգանքը և Նորին Մեծութեան սուլթա-
« նին Ձեզ շնորհած ընդարձակ իրաւասութիւնը և վստահութիւնը, Ձեզ

« համար դիւրին է զսպել մահմետական ամբոխի կրից գրգռումը, և քրիս-
« տոնէից մէջ կազմել լիակատար համոզում առ արդարութեան ուժը և
« Օսմանեան պետութեան հայրախնամ հովանաւորութիւնը մասնաւորաց և
« ընդհանուրին համար։ Հայոց ազգին ուղղած հրատարակութեանս մէջ
« դուք կտեսնէք թէ ինչ համոզմամբ և ինչ լի հաւատով կը նայիմ Օս-
« մանեան հպատակութեան տակ գտնուած քրիստոնէից ապագայ վիճակին
« վրայ. վասն որոյ կը համարձակիմ մտածել, որ Ձեր Բարձր դերազան-
« ցութիւնը ուշի ուշով նկատողութեան կառնու իմ այս յայտարարութիւն-
« ները և կը կարեկցի քրիստոնեայ ժողովրդին։ Խնդրեմ Ձեր կարգադրու-
« թիւնները ինձ հաղորդելու շնորհն ընէք, որ ես ալ ներկայացնեմ Նորին
« Բարձրութեան Մեծ Դուքսին։»

Երէկ երեկոյեան քանի մի հարիւր զինուոր և երկու հարիւր կողակ փողոցների մէջ անցկացրին գիշերը քաղաքի մէջ անկարգութեանց առաջն առնելու համար։ Երէկ Դուխավկոյն կանչել է Ալի էֆէնդի Արաբզատէին և շատ անարգել մուսուլմանների ցոյց տուած կրօնամոլութեան համար։ Տաճիկ էֆէնդին շատ կարմրած է դուրս եկել դեներալի մօտից. նահանգապետը ասել էր, որ եթէ միայն դարձեալ մի անկարգութիւն պատահի, պէտք է հրամայէ որ ամէն օր քանի մի հարիւր մուսուլման կախուի փողոցներում և այլն։

Այսօր Ալի էֆէնտին փողոցի մէջ ասել է քանի մի նշանաւոր հայերին, թէ «չաժէր այդպիսի մի փոքրիկ բանից այդքան մեծ բան շինելը և իրար անցնելը»։ Պատմում են որ իւրեանց մուսուլմանների վրայ բարկանալով, նոյն Ալի էֆէնտին ասած է՝ «անպիտաններ, չէիք դարող քանի մի օր էլ սպասել, որ ռուսները երթային, յետոյ սկսէիք»։ Նշանաւոր և խելքի տէր մահմետականները, ասում են, նոյն մտքով են խօսացել։ Այս լուրերը հայոց աւելի են անհանգիստ անում։ ասել է թէ մի բան պէտք է լինի ռուսների դնալուց յետոյ։

Այս գիշեր պատմում են մի տարօրինակ բան։ մուսուլմաններին, չգիտեմ ով, զգուշացրել է, որ հայքը պատրաստվում են իւրեանց կոտորելու և տաճիկները սաստիկ ահի ու դողի մէջ են։ Ասել է թէ հայքը թուրքերից են վախում, թուրքերը հայերից։ Փոքր ինչ ծիծաղալի է, բայց տեսնենք վերջը ուր կերթայ։

Սեպտ. 2.

Հայ-կաթոլիկների Մելքիսեդէկ արքեպիսկոպոսը, որին այստեղ սովորաբար «մօնսինիօր» կամ մեծաւոր անուն են տալիս, Ալի էֆէնդիի օրինակին հետևելով, երեկոյեան ասել է ցարութիւն եպիսկո-

պօսի հետ անմտնելիս թէ «արժէր միթէ որ Հայք այսպիսի մի «չնչին բանից, ինչպէս աշխի կարապետի վերաւորուելն է, այդքան «աղմուկ բարձրացրին»: Մեր թշնամիքը կաթօլիկները և յոյներն են, այսպէս էր ասում այսօր մի Հայ, մօնսինեօրի խօսքերի վրայ զայրացած:

Հայ-բողոքականների քարոզիչ միստր Կօլլը, որին «պատուելի» են կոչում, այսօր բերել էր մի հեռագիր անցեալ դէպքերի վերաբերութեամբ, ուղղած Պօլսոյ Ամերիկայի Միացեալ Նահանգների հիւպատոսին և խնդրում նահանգապետից թոյլտուութիւն որ ռուսաց հեռագրատանով ուղարկուի: Միստր Կօլլը քիչ մի չափազանցօրէն էր նկարագրել անցքը և անխտահութիւն էր ցոյց տալիս քրիստոնէից ապագայ վիճակի վերաբերութեամբ, խոստանալով դեսպանին, որ այդ մասին աւելի մանրամասնօրէն կգրէ նամակով: Ակներև դուրս է գալիս որ այստեղի Հայ-պրօտեստանտներն էլ Ամերիկացոց դեսպանի պաշտպանութեան տակն են: Միստր Կօլլի խնդիրը կատարուեցաւ:

Լազարեվի կողմից նորից ուղարկուեցաւ միւշիր Իսմայիլ փաշային հետևեալ հեռագիրը, որ դարձեալ բառ առ բառ արտագրում եմ՝

«Ղարս սեպտ. 1. կէս օր.

« Երէկ հեռագրով Ձեզմէ խնդրեցի, որ Դուք միջոցներ ի գործ դնէք « քրիստոնէից ընչից և անձանց ապահովութեան համար. այսօր ստացայ « հեռագիր Հայոց ժողովուրդէն որ խիստ երկիւղի մէջ է, և Օսմանեան « կառավարութեան պաշտօնէից վրայ հովանաւորութիւն մը չի տեսներ, և « թէ սաստիկ բռնութիւններ տեսնելով, պատրաստ է ինք զինք ձգել մեր « սահմանները. արդէն Ալաշկերտէն սկսեր է քրդերու երկիւղէն հայոց « գաղթականութիւնը, անոնց օրինակին կսկսին հետևիլ մասնաւորապէս և « Խորասանի (Բասէնի) քրիստոնեայք:

« Միւշիր, Դուք գիտէք, որ ես ինքս և նմանապէս թագաւոր կայ- « սեր փոխարքայէն ստացած տեղեկութեանց համեմատ՝ աշխատեցի բո- « լոր իմ բարոյական ազդեցութիւնս բանեցնել Հայոց ազգն իր տեղը պա- « հելու համար, պատուելս զիրենք վստահացնելով թէ իրենց համար ա- « մենայն պահպանութիւն և երաշխաւորութիւն է լիակատար հաւատք և « տարապայման հնազանդութիւն ունենալ Օսմանեան պաշտօնէութեան « նկատմամբ:

« Միւշիր, ես բոլորովին համոզուած եմ, թէ Դուք ինձ գաղափարա- « կից էք և անշուշտ առանձին և ազդու միջոցներ ի գործ կը դնէք Հայոց « հասարակութեան անդորրութեան համար. ասով Դուք վերջ կը դնէք « անոնց յուզեալ վիճակին և կը հարկադրէք զիրենք տեղերնին նստել և « խաղաղ իրենց աշխատանաց զբաղիլ. հարկ չէ Ձեզ հաւատացնել, որ իմ

«մէկ խօսք՝ այն է զաղթեցէք մեր սահմանները Ձեր բոլոր «քրիստոնէաբնակ գաւառները կամայացնէ: Բայց ես հոգւով և սրտով «բարեացակամ լինելով Հայոց ազգին և գիտենալով թէ մեծ բազմութեանց «գաղթականութեան վրայ ինչ զրկանքներ և զոհողութիւններ կը հասնին, «և ունենալով հաստատ հրամաններ Նորին Բարձրութեան Մեծ Դքսէն, «կը համոզեմ ղՁեզ, պատուելի Միւշիր, այս գործին հետամուտ լինիք ա-«մենայն եռանդով. ղՁեզ կօրհնեն այն ժողովուրդները, որոնք զօրաւոր և «արդար իւրեանց տակ կը գտնեն հանգստութիւն և ապահովեալ նշահա-«են իրենց աշխատանաց պտուղներով: Ինչ որ ըրերէք գաղթականու-«թեան առաջն առնելու համար, խնդրեմ ինձ իմաց տաք:»

Լազարէֆ:

Նահանգապետ Դուխովսկօյն նմանապէս տուեր էր հետեւեալ հեռագիրը:

«Դուք կը կարդաք այն հեռագիրը, զոր ես Ձեր միջոցաւ կը խրկեմ «Իզմայիլ փաշային. յայտնեցէք արքեպիսկոպոսի միջնորդութեամբ Հայոց «ազգին, որ անկասկած եմ, նոցա անկեղծ բարեկամը լինելով, բոլորովին «անմտատանջ եմ իրենց ապագայի մասին և մտմտուք հակառակութիւն «մը չի կրնար պատճառ լինել ընդհանրութեան յուզման: Օսմանեան «տէրութեան շահը չի ներեր նեղել աշխատաւոր խաղաղ Հայոց ժողո-«վուրդը, որոնք կը հարստացնեն Օսմանեան գանձը. և արհեստներու, վա-«ճառականութեան և երկրին հարստութեան բարգաւաճման հիմունքն են. «յայտնեցէք անոնց Իզմայիլ փաշային ղրկած հեռագիրներուն իմաստը և «ըսէք թէ Նորին Բարձրութիւնը բանակցութիւններ ըրեր է Պօլսոյ պաշ-«տօնատարաց հետ. ես հաւատացած եմ որ Իզմայիլ փաշայի խրատները և «իրեն ստորադասեալ զօրքերը կը բերեն իրենց հետ ապահովութիւն և եղ-«բայրասիրութիւն մեր թողնելիք երկիրներուն քրիստոնեայ ժողովրդոց «անձանց. բայց միևնոյն ժամանակ հարկ է որ Հայոց ազգի առաջնոր-«ները պահանջեն ազգէն սանձուիլ, խելաբերիլ, արժանաւոր գրից մէջ «մնալ, և քրիստոնէավայել պարկեշտութիւն ունենալ: Բարեօքումներն «Սան-Ստեֆանոյի դաշնագրութեան մէջ գրուեր են, և Պերլինի դաշնա-«գրին ալ զանոնք չէ ջնջեր:»

«Գէնէրալ—Լէյթէնանտ Լազարէֆ:»

Կէսօրին մօտ գնացի առաջնորդին. ասացին որ եպիսկոպոսը քանի մի իշխանների հետ գնացել է գիւղերը և թէ երեկոյեան միայն կը վերադառնայ: Երեկոյեան, ուշ ժամանակ, տեսայ ես իրան և իմացայ հետեւեալը: Առաւօտեան լուր էր առել, որ Կարսից մօտ 15 վերստ հեռու գտնուող Նորշէն գիւղի հայ բնակիչները մտադիր են այսօր խմբովին գաղթելու և նոցա օրինակին պիտի հետեւին Օվայ դաշտի բնակիչներից շատերը: Անմիջապէս եպիսկոպոսը, հետն առ-

նելով քաղաքից պատուելիներից մի քանիսին, ձի է նստում և շտապում դէպի Նորշէն: Գիւղից մէկ ժամ հեռաւորութեամբ հանդիպում է սոցա՝ գաղթողների կարաւանը. 16 տուն, մօտ 120ից բաղկացած, իւրեանց ամենաանհրաժեշտ պիտանի բաները բարձած 18 պստլիկ փոքրիկ սայլերի վրայ, դուրս են եկած իւրեանց գիւղից. տաւարը և ոչխարը և ամենայն բան, ինչ որ աւելորդ է իւրեանց թուացել, ծախել են դրացի թուրքերի վրայ: Կանայք և ծերերը երեխաների ձեռքը բռնած, կամ ուսին շալակած, կիսատկլոր և բոկոտն հետևում էին սայլերի ետևից: Միմիայն մէկ սայլի վրայ մարդ կայ նստած կամ պառկած, շրջապատած երկու լացող կանանցով. դա մի 7 կամ 8 տարեկան տղայ է, որ գաղթականների գիւղից դուրս գալու ժամանակ պատահմամբ ընկել է սայլի անիւների տակ և սաստիկ ջարդուել: Միայնակ տղամարդն է դա իւրեանց տան մէջ և այժմ արիւնաթաթախ և կիսաշունչ ընկած է սայլի վրայ, ամէնքի գութը շարժելով: Շատ աշխատած են եպիսկոպոսը և իշխանները դոցա համոզելու, որ վերադառնան իւրեանց տները. ստիպուած են եղել մինչև անգամ սպառնալիքներ գործ դնել. ամենից շատ գաղթականութիւն ցանկացողները կանայքն են և գլխաւորապէս պառաւ կանայքը: Վերջապէս վերադարձել են Նորշէնցիք իւրեանց տները. ինչպէս պիտի ապրին սոքա՝ քանի որ ամէն բան ծախել են չնչին գներով:

Օվայի մէջ եօթը ութ գիւղ է այցելել այսօր եպիսկոպոսը, ամէն տեղ տեսել է գիւղացոց գաղթելու պատրաստութիւններ, և ամէն տեղ յաջողել է համոզել թողնելու այդ ազգակործան միտքը:

Սեպտ. 3. կիւրակի.

Ես չը հասայ այսօր ժամերգութեան պատարագի ժամանակ, ահագին բազմութեան ներկայութեամբ, Յարութիւն եպիսկոպոսը կարդացել է գեներալ Լազարեւի ուղերձը դէպի Կարնոյ հայ հասարակութիւնը, նմանապէս Լազարեւից Իզմայիլ փաշային գրած հեռագիրների պատճէնները և վերջապէս իւր գրած հեռագիրների պատճէնները և ստացած պատասխանները Պօլսոյ պատրիարքից, Լազարեւից և այլ տեղերից: Լազարեւի ուղերձը արդէն թարգմանել էին Ղարսի մէջ և բաւականին թոյլ: Գուխասևկօյն ինձ յանձնեց փորագրել և տպել քարի վրայ քանի մի հարիւր օրինակ այդ ուղերձի հայերէն թարգմանութիւնը: Ստիպուած էի երթալ և յարմար մեծութեան քար պտռել տաճկաց տպարանում: Մի բաւականին մեծ

շինութեան մէջ պաշարման ժամանակ միմեանց վրայ դիզել են վեց եօթը հին ձևի տպագրական մամուլներ և այլ և այլ գործիքներ։ տպարանը ունի հայերէն և տաճկերէն տառեր, այստեղ մինչև պաշարման ժամանակները տպվում է եղել Կարնոյ միայնակ լրագիրը «Էնվարը շարգիյ՝» անունով։ Թերթի առաջի և վերջի չորրորդ երեսը տաճկերէն տառերով է, իսկ միջի երկրորդ և երրորդ երեսը հայ տառերով, բայց տաճկերէն լեզուով է։ Խմբագիրը մինչև հիմայ էլ Կարին է և ինքը ազատամիտ և զարգացած մի անձն է։ Այս լրագրի մէջ բաւականին հետաքրքիր տեղեկութիւններ կան վերջին պատերազմի վերաբերութեամբ։

Զբնայելով որ այդ տաճկական տպարանը ներկայումս մի աւերակ էր ներկայացնում, ես յիշեալ լրագրի խմբագրի հետ գնայ այդտեղ ամէն բան, ինչ որ պէտք էր ուղերձների վիմագրելու և տպելու համար։ Ինձ հետ ուղարկած ռուսաց բանակի վիմագրութեան գլխաւոր արհեստաւորը շատ զարմանում էր որ տաճկաց թէ վիմագրական քարերը, թէ դեղօրայքը և ներկերը, թէ, վերջապէս, մեքենան, բոլորն էլ աւելի լաւ տեսակներից են, քան թէ մեր ուներցածները։ Լազարէվի ուղերձի բովանդակութիւնը այս է։

«Ա՛ռ ազգն Հայոց՝ որ ի Կարին քաղաքի և ի շրջակայ գաւառս։ Լուր
« հասաւ մեզ, որ քրիստոնեայ բնակիչք Կարնոյ և շրջակայից, ուսկից այս-
« մօտերս, ըստ դաշնադրութեան որ ի մէջ Ռուսաց և Օսմանեան պե-
« տութեանց, մեկնելու է մեր զօրքը, անհանգստութեան մէջ են իրենց ա-
« պագայ վիճակին համար։ Որբև գլխաւոր իշխող կողմանցս, ազդեալ եմ
« բարձրագոյն իշխանութենէ, որ յետ մեկնելոյ ինձ ենթարկեալ զօրացս,
« ձեզ անհանգստութիւն տուող և ձեր վիճակը վատթարող չի պիտի լինի
« ամենևին։ Եթէ գտնուին չարակամ անձինք, որ իւրեանց անձնական
« շահու կամ այլ ինն նպատակաւ ձեր մէջը վրդովեցուցիչ լուրեր տարա-
« ծելով, կաշխատին համոզել որ իբր թէ նեղելու են զձեզ,—զայնպիսիները
« հեռացուցէք ձեզմէ կամ տեղւոյդ իշխանութեանը ներկայացուցէք զի-
« բենք։ Վստահ եղէք, որ այսուհետև անդորր և հանդիստ կեանք պիտի
« վայելէք առանց դաղթելոյ տեղերէդ, ուր ձեր նախնեաց գե-
« րեզմաններն են և ձեր գերդաստանները կը բնակին։ Մի հեռանաք ձեր
« երկրէն, ուսկից ձեր երջանկութիւնը կախեալ է։ գիտցէք որ ձեր դաղ-
« թականութեան հետևանքները պէտպէտ զրկանք և թշուառութիւնք են,
« մանաւանդ մեր սահմանները դաղթելը, ուր երկիրները ձեզ անծանօթ
« լինելով, անորոշ և մութ ապագայի մը դիմելու է։

«Վստահ եղէք, որ մեր հզօր կայսեր և նորա ժողովրդեան հետ մեկ-
« տեղ կը համակրեն ձեզ Պեռլինի դաշնադրութիւնը ստորագրող Եւրոպայի
« միւս տէրութիւններն ևս։ Տարակոյս չունիմ, որ Օսմանեան պետու-

«թիւնն կա պատրաստ է իւր կողմանէ յանձն առնուլ առ ձեզ ունեցած
«պարտաւորութիւնները միւս հպատակաց հետ համահաւասարապէս, որով
«ձեր կայքը և ձեր անձք բոլորովին պիտի ապահովանան։

«Ի գոհանիլն իմ յէրզրում, նոյն առ միտքս բացատրել էի ձեր ներ-
«կայացուցիչներին և որովհետև խորին կերպով համոզուած եմ, թէ Օս-
«մանեան կառավարութեան անկեղծ դիտաւորութեանց մասին և թէ ճըշ-
«մարիտ համակրութեանց, որ ունին առ ձեզ ամենայն տեղ, նորէն կը
«կրկնեմ ձեզ, հնազանդ լինել ձեր տէրութենէ դրուած օրինաւոր իշխա-
«նութեանց և նոցա ապաւինել առանց երկբայութեան։

«Եթէ գործերս ներեն, մտադիր եմ երկրորդ անգամ ևս այցելութեան
«գալ յէրզրում և անձամբ կրկնել այս յայտարարութեանս մէջ յիշած-
«ներս։ Ի վերջոյ բանիս հաստատ յուսով եմ, որ դուք վստահութեամբ
«կընդունիք վերոյիշեալ ըսածներուս ճշմարտութիւնը և ըստ այնմ կը
«շարժիք։»

Ղարս. 1878 ամի. օգոստոսի 24։

Գլուխ զօրաց որ ի Ղարս և ի շրջակայ
գաւառս՝ ղեներալ-լէյտէնանտ
Լազարեան։

Այս գրութեան բուն օրինակը, որ Լազարէվի ստորագրութիւնն է կրում, յանձնուեցաւ առաջնորդին, որ մշտապէս պահուի դիւանատանը։ Ցարութիւն եպիսկոպոսի այսօրուայ խօսած ճառը եկեղեցւոյ մէջ ժողովուրդի վրայ մեծ ազդեցութիւն է ունեցել։ Սրբազանը մէկ առ մէկ հաշուել է թէ որքան վնասակար եղաւ հանգուցեալ Կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ եղած դաղթականութիւնը 1830 և 1831 թուականներին և այլն։ Ցոյս կայ որ հիմայ Կարնեցի հայք բոլորովին թողնեն դաղթականութեան միտքը, թէև, ինչպէս երևում է, քանի մի գերդաստաններ և անձինք հաստատ կերպիւ պատրաստվում են երթալու Ռուսաստան։ Մէկը դոցանից պատերազմի ժամանակ կամ առաջ տաճկաց դանձապահ է եղել և բոլոր արքունական փողերը թաքցրել— հիմայ կուզէ ռուսաց հետ երթալ, կարծելով թէ բոլորովին ազատվում է պատասխանատուութիւնից. միւսը մասնաւոր պարտքերից է փախչում. երրորդը ռուսաց ժամանակ զափտիայ (ոստիկանութեան գինուոր) էր դարձել և տաճկաց հետ ամենայն չարութեամբ վարուել— հիմայ կուզէ դաղթել նախ տաճիկների վրէժխնդրութիւնից ազատելու և երկրորդ՝ այստեղ առանց դործ քաղցած և ծարաւ չը մեռնելու. չորրորդը սաստիկ սիրել է ռուսաց չինովնիկութիւնը և որովհետև վերջի ժամանակները ռուսաց պաշտօնեայ էր և բաւականին նշանաւոր ամնական էր ստա-

նում—հիմայ կարծում է թէ Ռուսաստան գաղթելով դարձեալ պաշտօն կունենայ և մեծ ռազիկ կըստանայ. կարծում է որ միշտ միջոց կունենայ օղի խմելու և ծոյլ կեանք վարելու. վեցերորդը սիրահարուած է ռուսաց ռուբլիներին և համոզուած է որ ամէն տեղ, որպէս Կարին ռուբլիները շաղ են տրվում, միայն ժողովող պէտք է. և այլն և այլն. Ահա այս տեսակ մարդիկ են գաղթողները և այլոց էլ գրգռողները:

Երեկ և այսօր գեներալ Լազարէվից Դուխավսկոյն ստացել է հետևեալ հեռագիրները:

«Ձեզ ես յայտնում եմ որ ես հրամայեցի Խորասանի (Բասէնի) և Հա-
« սան Ղալայի նահանգապետներին չթողնել ամենևին որ գաղթականութիւն
« լինի տաճկաց երկիրներից դէպի մեր սահմանները. եթէ ինքնագլուխ
« անցնելու լինին, հրաման տրուած է բռնի յետ դարձնել. իսկ եթէ հա-
« կառակ ամենայնի դարձեալ ջանան անցնիլ, այն ժամանակ պարտաւոր
« են ձերբակալել և յանձնել տաճկաց կառավարութեան, որ տանի իւր-
« եանց տեղերը:

Լազարէվ:

Դարձեալ: «Արտաքին գործոց նախարարը հաղորդել է Նորին Բարձ-
« բութեան Մեծ Իշխանին, որ պատուիրած է Կ. Պոլսոյ դեսպան Լաբա-
« նով—Ռոստովսկուն, որ բանակցի Բարձրագոյն Դրան հետ օգնել մեզ
« տաճկահայոց գաղթականութեան դէմ առնելու և յատկապէս միջոցներ
« պիտի գործ դնուին չփոթեալ ժողովուրդը հանդարտացնելու համար:

Լազարէվ:

Սեպտեմբեր 4.

Զարմանալի է թէ գեներալ Լազարէվը ինչ մեծ համակրութիւն է վայելում այստեղի հայերից, ինչ մեծ ազդեցութիւն ունի ամենքի վրայ և որ աստիճանի վախ են զգում նորանից նոյն իսկ տաճիկները: Երեկուան կարդացած ուղերձը Կարնոյ հայոցը գրած՝ Կարնոյ մէջ պատերի վրայ ամենանշանաւոր տեղերը կպցրած է. ամենքը կարդում են կամ միմեանցից հասկանում բովանդակութիւնը. հայերը վստահանում են ուղերձի վրայ, որովհետև դա իւրեանց սիրած Լազարէվի գրածն է. տաճիկներն էլ ուրախ են որ հայերի պատճառով ռուսները մուսուլմաններին չը դիպան: Տաճիկները այն աստիճան վախեցած են, որ չեն համարձակում պատերի վրայ կպցրած ուղերձները, բուռ իւրեանց սովորութեան, պոկելու:

Իզմայիլ փաշան, Պոլսոյ հետ բանակցելուց յետոյ, Լազարէվին հեռագրել է հետևեալը,

«Երկու կողմանց հպատակներու ապահովութեան համար հոգ տա-
« նիլը պարտաւորութիւն է նոցա պաշտօնատարներուն. այս առթիւ կը
« փութամ իմ շնորհակալիքս մատուցանել Ձեր գերազանցութեան, որ այս-
« չափ հոգատար էք նոցա ապահովութեանը. առաջուանից տեղեկութիւն
« առած լինելով այդ անկարգութեանց մասին, ես ուղարկեցի Ֆէրիգ (գե-
« ներալ- լէյտէնանտ) Մուսայ փաշային իբր զինուորական, և իբր քա-
« ղաքական՝ Հաջի Հիւսէյին փաշային, հարկ եղած պաշտօնատարներով
« և ոստիկաններով: Իսկ Պայազիտի համար միւթէսէրիֆի պաշտօնով ու-
« ղարկեցի Եուսուֆ փաշային, նոյնպէս պաշտօնեաներով և ոստիկաննե-
« րով: Վանից էլ զօրքերը կպատրաստուին շուտով եկել և յիշեալ տե-
« ղերն հարկ եղած կարգադրութիւնները անելու համար, եւ ես կպատ-
« րաստուիմ անձամբ այցելելու (Արզրումը). ուստի դարձեալ շնորհա-
« կալ եմ Ձեզ, ձեր իմ վրայ ունեցած համակրութեան համար»

Այսօր Ցարութիւն եպիսկոպոսը Պօլսոյ պատրիարքից հետևեալ հեռագիրը ստացաւ:

«Սադրազամը կը հրամայէ ինձ հեռագրել Ձեզ թէ ապահովութեան
« հրամանները տրուած են. վերանորոգումները անպատճառ պիտի գոր-
« ծադրուին, փութայով պատասխան պիտի ստանաք: Պատրիարք Հայոց
« Ներսէս»

Ռուսաց զօրքերը դեռ ևս կարնոյ փողոցները լցնում են և գիշեր ցերեկ պահպանում են, թէև, փառք Աստուծոյ, ամենայն ինչ հանդարտ է: Առաջնորդարանի և Հայոց եկեղեցւոյ առաջ շարունակ կանգնած է պահապան զունդը: Կարնեցիք ծիծաղելով ասում են որ Ցարութիւն եպիսկոպոսը երբէք այսպիսի փառք ու պատուի մէջ չէ եղել: Արդէն ռուսաց բանակը օրէցօր նուազում է. մաս մաս ամէն առաւօտ գնում են զօրքերը: Զօրապետներից մի քանիսը այսօր գանգատում էին որ վաղը իւրեանք ճանապարհ պիտի գնան, իսկ այսօր ամբողջ գիշեր պարտաւոր են փողոցներում լուսացնել խաղաղութիւնը պահելու համար:

— Այսպիսի կեանք ենք վարում ու յետոյ ասում են թէ ինչ է պատճառը որ զինուորները այնքան շատ են հիւանդանում տիֆօյով, ասաց նրանցից մէկը......

— Չէ, բոլորովին անյարմար ժամանակ սկսեցին իւրեանց ապստամբութիւնը այս Հայերը, պատասխանեց միւսը:

Սեպտեմ. 5.

Մեզ պաշտօնական կերպիւ յայտնեցին, որ մայեօր Կամսարականը հիւպատոսի պաշտօնակատար է կարգվում, իսկ ես, պրապօրշչիկ Հազարապետեանը, կուզնեցովը պէտի հիւպատոսա-

բանի, ծառայողներ լինինք մինչև տեղւոյս հիւպատոսի հարցը վերջնական վճիռ ստանայ: Կամնարականը, պէտք է բնակուի Շաբանեանի տանը, ուր առաջ անգլիացւոց հիւպատոսն է եղել բնակվում: Այսօր ես ու կինս տեղափոխվում ենք Ամթ մէյդան ասած փողոցում գտնուող պարոն Թավրիզեան Մկրտիչ աղայի տանից: Տան տիկինները շատ ախուր են որ այսպիսի աղմկալից ժամանակ, երբ վտանգներ են սպասվում, ես ուրիշ տեղ եմ գնում բնակուելու: Խնդրում, աղաչում են որ մի տասն օր դարձեալ մնամ, որովհետև հաւատացած են թէ ուր որ ռուսի պաշտօնեայ բնակուի, այն տունը անվտանգ է տաճիկներից: Մինչև անգամ իմ դրացիները իւրեանց ապահովացած էին համարում իմ այն թաղի մէջ բնակուելու պատճառաւ: Մի դրացուհի, 90 տարեկան կին, որին «հաճի ապլայ» անունն են տալիս ամենքը և որ Պասքևիչի ժամանակ արդէն թոռների տէր է եղել ու ամէն չար ու բարին տեսել, եկել ձեռքերս բռնել ու արտասուալից աչքերով խնդրում է որ տունս չը փոխեմ: սիրտս գրաւելու համար խեղճ պառաւը կաշառի ձև խոստանում է որ մեր հացը (լաշը) թխելիս ինքը կօգնէ, կնոջս բաղանիք կը տանէ, ժամ կը տանէ և այլն. միևնոյն ժամանակը պառաւը ծերութիւնից հազիւ ոտքի վրայ է կանգնած: Ամենքը ծիծաղում են, ես մխիթարում եմ խեղճ կնոջ և խոստանում որ ամէն օր կանցնեմ իւր տան առաջից, կը հսկեմ որ տաճիկները չհամարձակուին իւր տան վրայ յարձակուիլ.

«Ոչ գալերնիդ լինէր, ոչ գնալնիդ...» վերջի խօսքն էր պառաւի, որ ուղղած էր մեր բանակին:

Այսօր քանի մի ցաւալի լուրեր ստացուել են գիւղերից: Սրեկոյեան վեց հատ տաճիկներ Կրիչք անուանուած գիւղի մօտ մտել են Ցարութիւն հայու ջաղացքը, իւրեան սատիկ ծեծել և ձեռք ու ոտքը կապելով, իւրեանց հետ բերած սայլերի վրայ բարձել են ջաղացի մէջ գտնուած ալիւրը և ցորենը և գնացել: Ցարութիւնը աւագակներին չէ ճանաչած:

Նոյնպէս երեկոյեան քանի մի զինուորուած ձիաւոր տաճիկներ գնացել են Նորշէն գիւղը, ուր տեղի հայք անցեալ օր մտադիր էին գաղթել, մտել են հայոց տները, ամբողջ գիշերը զուարճացել, հայ հարսներին անպատուել, ստակ առել, ոչխարներ մորթել և մեծ սպառնալիքներ տալ թէ ինչպէս համարձակուեցիք գաղթելու դիտաւորութիւն ունենալու: Առաւօտեան դէմ հեռացել են հայերին

ահ ու դողի մէջ թողնելով: կարծում են որ նշանաւոր աւազակ Մհերալիի խմբից են այդ կտրիճները:

Դարձեալ կուտրաշէն գիւղի բնակիչ Բէսօօղլեան Յովհաննէսը այսօր բողոքագիր տուեց թէ երկու օր առաջ Հունուտցի Շէրիֆ աղայի որդի Հիւսէյինը մի քանի զինուած մարդիկներով եկել է իւր տուն ոչխար մորթել տուել, կերել և ապա յիսուն ոսկի է ուզել, սպառնալով որ եթէ չտրուի տունը բոլորովին կայրուի: Այդ սպառնալիքից վախեցած Յովհաննէսը շտապում է առնել իւր հետ կնոջը և որդոցը և ապաստանած է այս օրերս գիւղէ գիւղ, տունէ տուն դաղտնի պտըտիլ:

Այսօր երեկոյեան կարին մտաւ վալի-վէքիլ (քաղաքական գուբեռնատոր) — Հաճի Հիւսէյին փաշան, որ իմ տան տիրոջ — Մկրտիչ աղայ Թավրիզեանի բարեկամն է: Ռուսների կողմից դիմաւորեց իւրեան միայն մայոր Կամարականը, դեռ ևս քաղաքապետի պաշտօնով: Փաշայի հետ եկած են քանի մի ոստիկաններ, որոնց վաղը կամ միւս օրը պարտաւոր ենք յանձնել քաղաքի վարչութիւնը:

Սեպտ. 6.

Ռուսաց բանակը օրէցօր նուազում է. շատերը արդէն գնացին, միւսները պատրաստւում են. ամէնքը ճանապարհի վրայ են, էլ ոչինչ գործ չէ տեսնվում: Այսօր Հաջի Հիւսէյին փաշան և Դուխովսկոյն միմեանց այցելութեան գնացին. այնուհետև փաշան ընդունել էր քաղաքիս հոգևոր և մարմնաւոր ներկայացուցիչներին և նոքա փոխադարձաբար այցելել նորա: Երբ փաշան եկել է այսօր Հայոց առաջնորդարանը, եպիսկոպոսին այցելելու, դռանը առաջը բռնել են ռուսի զինուորները, որոնք ահա քանի օրէ գիշեր ու ցերեկ այնտեղ կանգնած են: Որքան ասում են զինուորներին թէ սա հասարակ տաճիկ չէ, փաշայ է, զինուորները կրկնում են «չի կարելի». Հայերից մի քանիսը ուրախացել էին այս ինքնատիպեան կռվիս վարմունքին. «փառք քեզ Աստուած, հասանք այն օրին, որ վալի-վէքիլին էլ արգելեցին առաջնորդարան մտնելու» ասում էին այդ ծայրահեղ ազգասէրները:

Այսօր քաղաքային վարչութիւնը, ոստիկանութիւնը և բանտը յանձնուեցաւ տաճկաց. այս գիշեր տաճիկ և ռուս ոստիկանները միասին պիտի հերթապահութիւն անեն:

Նահանգապետին եկել էր դանգատուելու Ս. Խաչաձորցի Յովա-

կիմ Կիրակոսեանը. գիշերս Օրթըղի գիւղի տաճիկները մտել են տէրտէր բոստանը, ձմերուկները կտրել և ոտնակոխ անելով բոլորը աւերակ դարձուցել են: Խեղճին հասկացրին որ այսօր վարչութիւնը փոխւում է և թէ վաղուանից տաճկաց տէրութիւնը կլինի, որին և պէտք է դիմել: Լուռ ու մունջ քորեց ծոծրակը իւր վիզը, շարժեց գլուխը, և դարձաւ գնաց:

Այս երեկոյեան Գուխասովսկօյն հրաւիրել է իւր մօտ ճաշելու Հաճի Հիւսէյին փաշային, բայց վերջինս իբր թէ տկարութեան պատճառով չէ կարողացել ընդունել հրաւէրը: Ասումեն ճիշտ պատճառը կրօնամոլութիւնն է՝ փաշան չէ ուզում այս րամազանի պասին սեղանի վրայ գինի տեսնել և նահանգապետի կնոջ ներկայութեամբ ճաշել: Արդէն մութն էր, երբ եկաւ գեներալ Գուխասովսկօյի մօտ այստեղի հայ-կաթոլիկաց առաջնորդ Մելքիսեդէկ արքեպիսկոպոսը. նա շատ շփոթուած պատմեց որ Ալաշկերտի իւր ժողովուրդից լուր է առել, որ օգոստոսի վերջերին Ալաշկերտի կառավարիչ Հայազգի շտաբս կապիտան Առաքելեանը ժողովել է բնակիչներին և ասել որ ահա ռուսաց զօրքերը շուտով պիտի հեռանան այն տեղից, այդ պատճառով թող քրիստոնեայները (հայերը) պատրաստուին զօրաց հետ միասին հեռանալու դէպի Ռուսաստան, ապա թէ ոչ քիւրդերի բռնութեան զոհ կերթան: Ալաշկերտցիք ընդունել են այդ հրաւէրը և գաղթել ռուսաց հետ այրելով իւրեանց հացի դէզերը, կալերը և տները, որ քիւրդերին չմնայ:

—Դուք մեզ բեմից քարոզել էք տալիս, որ ժողովուրդը տեղէն չը շարժի, իսկ Ալաշկերտ ձեր պաշտօնեաները նպաստում են և հրաւիրում գաղթականութեան. ի՞նչ կնշանակէ այս, ասում էր մօնսինիօրը:

Գուխասովսկօյն մնացել էր զարմացած և պնդում էր թէ սուտ կլինի այդ լուրը: Որովհետև Ալաշկերտի նահանգը պատկանում է Երևանի գաւառին, այդ պատճառով գեներալը մօնսինիօրի պատմածը հաղորդեց հեռագրատան Ղարս Լազարեվին:

Մօնսինիօրը Ալաշկերտի մէջ մի քանի գիւղ հայ-կաթոլիկ ժողովուրդ ունէ, որոնք եթէ գաղթած լինեն, ասել է թէ գերապայծառը յաւիտենական պիտի զրկուի նոցանից, որովհետև Ռուսաստանի հայ կաթոլիկները իւր իրաւասութեան տակը չեն: Առհասարակ Մելքիսեդէկ եպիսկոպոսը գանգատաւոր է որ ռուսաց տէրութիւնը իրաւունք չէ տալիս իւր երկրի մէջ գտնուող հայ կաթոլիկ-

ներին առանձին եպիսկոպոս ունենալ, այլ ստորադրել է նոցա լատինական հոգևոր վարչութեանը: Չասկանալի է, ի հարկէ, թէ ինչ է պահանջում և ինչի համար:

Սեպտ. 7.

Այսօր Տաճկաց զօրքերը հանդիսաւոր մուտք պիտի գործեն Կարին և քաղաքը իւրեանց պիտի յանձնուի: Զօրքերի հետ մտնելու է Ֆ ե ր ի կ (գեներալ-լեյտենանտ) Մուսայ-փաշայ Կունդուխովը, որ Կովկասի լեռնական ցեղերի իշխան է, Ռուսաստան մեծացած և ուսում առած և մինչև գեներալութեան աստիճանի հասած ու այս 1865 թուին լեռնցի գաղթականների հետ միասին անցած է Տաճկաստան: Ամենքեանս ձիաներով գնացինք հանդէսը տեսնելու: Իլիջայի ճանապարհը, որ միևնոյն ժամանակը տանում է Տրապիզոնի շօսսէ, լիքն է բազմութիւնով: Քաղաքի դռներից մի կէս ժամ հեռու, այդ ճանապարհի վրայ կայնած սպասում է Մուսայ—փաշայի գալստեան ռուսաց դ ր ա գ ո ւ ն հեծելազօր զօրքի մի գունդ գեղեցիկ հագնուած, իւր նուագարանով: Ահա հեռուից երևեցան փաշան և տաճկական զօրքերը: Նուագարանները չալեցին. Մուսան թիկնապահների խուռն բազմութիւնով շրջապատած մօտեցաւ առաջ. իսկոյն գլխաւորից իւրեան կարծոյ հրամանատար պօլկովնիկ Կազբէկը և յայտարարեց քաղաքի հանգստութեան մասին: Այս իմանալով Կազբէկի անունը Մուսան ձիու վրայից փաթաթուեց Կազբէկի հետ և երկուսի աչքերից էլ արտասունք թափեցին: Զարմանալի բաղդի բերմունք: Մուսա փաշան Կազբէկի մօր եղբայրն է և 1865 թուից սոքա միմեանց չեն տեսած. այսօր մէկը յանձնում է քաղաքը միւսին և հեռու հեռու Կազբէկ լեռնից, որի վրայ երկուսն էլ ծնած են, այստեղ, Հայաստանի սրտի մէջ, սոքա երկու միմեանց դէմ մրցող տէրութիւններ են ներկայացնում: Երկուսն էլ փառք են տալիս Աստուծոյ, որ պատերազմի մէջ չը տեսնուեցան...:

Այդ սրտաշարժ տեսութիւնից յետոյ ներկայացան փաշային միւս ռուս աստիճանաւորները. ապա ինքը բարևեց զօրքին ռուսերէն լեզուով և սկսուեցաւ ընթացքը դէպի քաղաքը: Ամենից առաջ գնում էին տաճիկ քաղաքապետը (ալա-բէյ) իւր օգնականներով և քանի մի տաճիկ դրագուններ (սուարի), ապա ռուսաց հեծելագունդը նուագելով, յետոյ Մուսա փաշան՝ շրջապատուած մօտ 200 պատուաւոր անձինքներով, որոնց մէջ էին ռուսաց քանի մի աստիճանաւորներ, Հայոց և Հայ կաթոլիկաց եպիսկոպոսները, Հայ և

տաճիկ պատուաւոր քաղաքացիք և այլն: Նուիրից գալիս էին տաճկաց հետևակ և ձիաւոր զօրքերը տաճիկ ամբոխից շրջապատած:

Մենք կամաց կամաց մօտենում ենք քաղաքին. ահա աջ կողմը մի տեղ ժողովուել են մօտ 100 տաճիկ մոլլաներ, սպիտակ փաթաթոցներով գլխին, որ փաշայի մօտենալուն պէս բարձրաձայն երգեցին և խնարհ բարևեցին: Մուսան սառը բարևում է և անցնում: Այստեղ ու այնտեղ նորից դիմաւորում են փաշային տաճկաց դպրոցների աշակերտների խումբերը բարձր աղաղակելով, Մուսան քաղաքավարի բարևում է, բայց չէ կանգնում, չէ խօսում նոցա հետ: Ահա քաղաքից ոչ հեռու մի կողմը ժողովուած է մի խմբակ, դա յունաց քահանան է իւր յոյն ժողովուրդով. Մուսան մօտեցաւ բարևեց և քանի մի բոպէ հետերնին խօսեց: Փոքրինչ առաջ գնալով, փաշային դէմ եկաւ գեներալ Շերէմէտիեվը, իբրև Կարնոյ բանակի ընդհանուր կառավարիչ. դոքա միմեանց հետ երիտասարդութեան ժամանակից ծանօթ են: Հասանք քաղաքի դռներին և այստեղ հազիւ հազ նկատեցի ես քանի մի հայ արհեստաւորներ. հայ կանայքը ամենևին չեն երևում, բայց ոտից մինչև գլուխ ծածկուած մահմետականուհիք մի առանձին համարձակութեամբ և ուրախութեամբ յառաջ են եկել և ամէն տեղ շարուել, օրհնելով, երևի, այս օրը, երբ նորից քաղաքը տաճկաց ձեռքն է անցնում: Որքան տարբերութիւն Լազարէվի ընդունելութեան հետ, երբ հայոց ահագին բազմութիւնը լցրել էր փողոցները, գոյնզգոյն հագուստով հայ կանայք և երեխայք զարդարել էին կտուրները, երբ միևնոյն ժամանակ տաճիկները տխրած պահվտել էին տների մէջ: Այսօր փոխադարձ կերպով հայերը պահուել են և տաճիկները ուրախանում: Գեներալ Դուխավսկոյն, մեր կանայքը և քանի մի աստիճանաւորներ կանգնել էին տաճկաց զինուորական դպրոցի առաջ մի բարձր տեղ և այնտեղ սպասում հանդէսի անցնելուն: Երբ Մուսա փաշան մօտեցաւ այդ տեղին և նկատեց տիկնանց ներկայութիւնը, իսկոյն ձին քշեց, բարձրացաւ նոյն տեղը և վար իջնելով, ընկերացաւ նոյն խմբեակին: Երբև իւր խորին յարգանաց նշան դէպի տիկիններին, փաշան հրամայեց որ քաղաք մտնող տաճկական զօրքերը նուագելով անցնին այստեղից: Դունդ գունդ անցնում էին մեր առաջից տաճկաց զօրքերը և փաշան պատմում էր տիկնանց թէ որը նոցանից ինչ անուն է կրում և այլն: Ընդամէնը մտան այսօր մօտ 1200 հետևակ և մօտ 300 հեծելազօր զօրքեր, 6 հատ թնդանօթներով: Երբ հանդէսը

անցաւ, փաշան սիրով բարեւեց ամէնիս և գնաց: Մենք եկանք տուն և ժողովուեցինք այն տան պատշգամի վրայ, ուր իջաւ Լազարեվը երբ եկաւ Կարին և որին, այնուհետև Լազարեվի տուն ենք անուանում: Այստեղից կուզէինք դիտել, թէ մեր գիմացը գտնուող գլխաւոր զօրանոցի պահապան ռուս զօրքերին ինչպէս պիտի գան փոխեն տաճիկ զինուորները: Այստեղ նոյն հանդէսին սպասում էին Կազէկը, պոլիցմայստրը և շատ զօրականներ: Մէկ ժամից յետոյ երեւեցաւ փողոցի մէջ տաճիկ զինուորների մի խումբ. ռուս զինուորները դուրս վազեցին և շարուեցին, պատրաստուելով որ պիտի փոխուեն: Տաճիկները եկան, անտարբեր կերպիւ անցան մօտովը և գնացին ցածի փողոցները, չգիտեմ ո՞ւր և ի՞նչու համար:

Մի կէս ժամից յետոյ եկաւ մի ուրիշ խումբ տաճկաց. զինուորների առաջնորդը մի հարիւրապետ էր առանց թուրի և ձեռքին մի կտոր փայտ բռնած: Զինուորները նորից շարուեցան, բայց երբ հրամանատարը տեսաւ տաճիկ հարիւրապետի անգիտութիւնը, ձեռքի փայտը և զինուորական կարգ ու կանոնի չգիտենալ. հրաժարուեցաւ յանձնել իւրեանց զօրանոցը:

Երեւի Մուսայ-փաշային համբաւ գնաց հրամանատարի պահանջման մասին. ահա կէս ժամից յետոյ եկաւ մի նոր գունդ տաճիկ զինուորների իւրեանց մեծամեծներով, որոնք Կազէկից ներողութիւն խնդրեցին առաջուայ եկողների անճոռնութեան մասին. շարուեցան երկու կողմի զինուորները, բարեւեցին միմեանց զինուորական օրէնքով և կարգին կանոնին ռուսները ելան զօրանոցից, տաճիկները մտան: Յանձնուեցան այնուհետև օսմանցոց քաղաքի ներքնաբերդը Կրամիտլի, Ազիզիէ և Մէջիդիէ ամրոցները և ռուսաց բոլոր զօրքերը քաշուեցին քաղաքից դուրս բանակը, ուր տեղից վաղ առաւօտը բոլորովին պիտի երթան:

Ճաշից յետոյ նահանգապետը և ռուսաց բոլոր պաշտօնեաները հանդիսաւոր կերպիւ թողին քաղաքը և գնացին գիշերը անցկացնելու բանակի մէջ: Կարնոյ մէջ մնացողներս ճանապարհ ձգեցինք սոցա մինչև իւրեանց գլանները և յետոյ վերադառնալով քաղաք Կամսարականը հրամայեց բարձրացնել մեր տան վրայ ռուսաց հիւպատոսական դրօշակը:

Երեկոյեան Ալի էֆէնդին, որի տանը առժամանակ իջել է Մուսայ փաշան, հրաւիրել է ճաշելու մօտ 30ի չափ ռուս պաշտօնեաներից: Դուխովսկոյն և իւր կինը գնացել են: Երեւակայեցէք կրօնամոլ

մահմետականի տանը. այնքան տղամարդոց մէջ նստում, խօսում, ճաշում է եւրոպացի կինը, թէեւ ըստ մահմետական օրինաց Ռամազանի պասին թուրքերին արգելուած է կանանց հետ ճաշելը: Արդեօք ինչ ազդում պիտի բարձրանար Ալի էֆէնդիի կանանոցում.....:

Տաճկական զօրքերը մեզ վրայ այսօր վատ տպաւորութիւն թողեցին. վատ և աղքատ էին նոքա հագնուած. պատառոտուած կօշիկներով, իրանք նիհար, երեսներին դեղնած: Զօրքի ետեւից մօտ 200 զինուոր սայլերի վրայ պառկած, տնքալով և հազիւ հազ կենդանի մտան: Մենք կարծեցինք որ դոքա տիֆօյի հիւանդներ են և թէ քաղաքի մէջ նորից պիտի սկսուի սարսափելի հիւանդութիւնը, բայց Մուսա փաշան հաւատացնում է, թէ դոքա տենդով են հիւանդ Երզնկայի վատ կլիմայից, իսկ Կարնոյ պատուական օդը և ջուրը շուտով պիտի օգնէ դոցա: Մոռացայ ասել, որ զօրքի ետեւից գալիս էին այսօր ծածկած սայլեր, որոնց մէջ սեղմուած նստել էին եկած տաճիկ զօրապետների կանայքը: Սայլերը ամէն կողմից հաստ կարպետներով ծածկուած էին, որ կանայքը ոչոքի չը տեսնեն, թէեւ նոքա դարձեալ հնար են գտնում գոնէ մէկ աչքով դուրս նայելու: Երբ նոքա հասան մեր առաջ և եւրոպական հագուստով կանայք տեսան ռուս աստիճանաւորների հետ կանգնած, ի հարկէ խեղճերի հետաքրքրութիւնը աւելի շատացաւ և մի սեւ աղախին համարձակուեցաւ գլուխը հանել կարպետի տակից աւելի լաւ դիտելու: Տաճիկ սայլապանը, որ մի 15 տարեկան տղայ էր, իսկոյն փայտով զարկեց խեղճ կնոջ ձեռքին և կարպետը վայր իջեցրեց:

Սեպտ. 8.

Այսօր կովկասու փոխարքայի տիկնոջ Մեծ իշխանուհի Օլգայ Ֆէոդորովնայի ծննդեան տօնն է: Ռուսաց մնացած բանակը բոլորովին թողնում է այսօր Կարինը և հեռանում տաճկական հողից: Ժամի ութն էր առաւօտեան երբ մենք հիւպատոսարանում մնացողներս, մեր կանանց հետ միասին, ձի նստած շտապեցինք դէպի ռուսաց բանակը, ուր այդ ժամանակ մաղթանք էր կատարվում ի պատիւ Մեծ իշխանուհուն: Հասանք այն ժամանակին, երբ վերջացել էր աղօթքը, և որոտում էին թնդանօթները: Մի տարօրինակ տպաւորութիւն ունէր ինձ վրայ մեզ ներկայացած տեսարանը. ռուսաց զօրքերը վերջնական կերպիւ շարուեցին ճանապարհ ընկնելու և լուռ ու մունջ կանգնեցին: Մի փաշտ տաճկաց զօրքերի, թւով մօտ հարիւր մարդ, դրօշակով և նուագարանով լուռ ու մունջ կանգնել էին Ղարսի

անուանեալ դրան առաջ՝ գնացող ռուսներին զինուորական յարգանք մատուցանելու: Գեներալ Շէրէմէտիեվը մօտ երեք հարիւր ռուս զօրավարներով աստիճանաւորներով շրջապատած, լուռ ու մունջ առաջ եկաւ և կանգնեց տաճկաց զօրքի դրօշակի դիմաց, մէջ տեղը մի լայն ճանապարհ թողնելով մեր զօրքերին անցնելու: Ամէնքի երեսին մի մի կերպ տխրութիւն է նկարվում, ոչ ոք չկայ խօսող, ծիծաղող: Ամենեքին չես կարծել թէ այս այն մարդիկն են որ դեռ քանի մի օր առաջ աղօթք էին անում Հայաստանի մայրաքաղաքից շուտ հեռանալու մասին......

Գեներալ Շէրէմէտիեվը նշան տուեց և ահա ռուսաց զօրքերը նուագելով եկան տաճկաց զօրքի մէջ տեղից անցնելու. ռուսական նուագարանի ձայները միացան տաճկականի հետ և Օսմանեան դրօշակը խոնարհութեամբ ողջունեց ռուսաց դրօշակին: Դեռ քանի մի ամիս առաջ սոյն այս տեղերը միմեանց հետ պատերազմող զինւորները այսօր այսպիսի բարեկամական ցոյցեր են տալիս միմեանց: Հեռու, բերդի պատերի վրայ, ժողովուել են Թուքի ամենակրօնամոլ հոգևորականները տեսնելու թէ իրա՞ւ—գնում են ռուսները...: երևում...:

Հազիւ թէ ռուսաց զօրքը անցաւ. Շէրէմէտիեվը և միւս զօրավարները և մենք էլ նոցա հետ զօրքի ետևից ուղղեցինք մեր ձիաները դէպի Կարսի դռները. այստեղ մեր ետևից հասաւ, ձին քշելով, Մուսա փաշան մնաս բարև ասելու մեծամեծներին: Վերջացաւ և այդ քաղաքավարական տեսութիւնը ու սկսուեցաւ զօրաց ընթացքը Դէվէբօյնուի վարի ճանապարհով: Մի սիրուն տեսարան էր ներկայացնում այսօր այդ լեռների վրայ բարձրացող և խորը ձորեր իջնող օձաձև ճանապարհը. հետևակ զօրքերը հեծելազօր գունդերի հետ խառնուած երկար ու բարակ շարուած գալիս են երգելով: Այստեղ թնդանօթները դղրդոցով վայր են գալիս լեռան գլխից, այնտեղ մի ծանրաբեռնած սայլ ընկել է փոսը և զինուորները բարձր աղաղակով աշխատում են նորան ոտքի կանգնացնել:

Մենք ամէնքս ձիաներով նահանգապետի հետ մի խումբ ենք կազմել շտապով առաջ ենք գնում, որովհետև թեթև անձրև է գալիս: Կէսօրին մօտ հասանք Կարնից երեք ժամուայ ճանապարհ հեռու գտնուած Ղուրուջոխ տաճկաբնակ գիւղը, ու մէկ ժամի չափ հանգիստ առանք: Ապա ամենքին գնաք բարև ասելով, Կարնոյ մէջ մնացողներս կրկին վերադարձանք քաղաք. Կամսարականը և իւր

կինը, ես ու կինս, Եղիշէ Հազարապետեանը և իւր տիկինը, ռուս զինուորական Եանուշը, հեռագրատան մեծաւոր յոյն աստիճանաւոր Զարաֆանկօն և տասն և երկու կողակ չորս ղավասներով — մնում ենք Արզրում: Երեկոյեան դէմ էր, երբ բոլոր վերոյիշեալներս մօտ 24 ձիաւոր հանդիսաւոր կերպիւ մտանք քաղաք: Ցաճիկները զարմացքով նայում են, թէ ինչպէս է որ ռուսների գնալուց յետոյ, դարձեալ այսքան մարդ վերադարձաւ քաղաք: Հայ երեխայք շտապով դուրս են կանչում սենեակներից իւրեանց մայրիկներին և ուրախացնում, որ ռուսները յետ եկան. քրիստոնեայ հասարակութիւնը դիզուել է փողոցների մէջ և մեզ պարկեշտութեամբ ողջունում...:

Այս առաջի գիշերն է, որ մենք ռուսների բացակայութեամբ մնում ենք Արզրումում: Մեր և տեղացի ժողովրդի ապագան մութ է և մեզ համար երկար մտածողութեանց առարկայ..:

Սեպտ. 9ը

Տկարութեանս պատճառով այսօր տանից դուրս գալ չեմ կարող: Պատմում են որ Հայ—կատոլիկաց առաջնորդ Մելքիսէդէկ եպիսկոպոսը երեկուան օրը քանի մի անգամ եկել տանը չէ գտել: Այսօր շատ կանուխ դարձեալ եկել էր: Կամարականը ընդունեց Նորան և յետոյ ինձ մօտ ուղարկեց: Խոտրջուրի Հայ—կաթոլիկների վրայ քանի մի օր առաջ տաճիկները մեծ յարձակումն են արել և մինչև անգամ մարդիկ սպանել: Մօնսինիորս շատ չփոթուած է ստացած տեղեկութիւններից. նա երեկոյեան, մեր բացակայութեամբ, քանի մի անգամ դիմել է Ֆրանսիացոյ հիւպատոսական փոխանորդին և պատասխան է ստացել թէ միայնակ գործը որ կարող է կատարել այն է՝ կհեռագրէ անցքի իրողութիւնը Պօլսոյ Ֆրանսիացոյ դեսպանին: Եղել է դերապայծառը Մուսա փաշայի մօտ, բայց պատասխան է ստացել թէ Խոտրջուրը այժմ Կարնոյ գաւառին չի պատկանել: Գնացել է Ցարութիւն եպիսկոպոսին, նդրել որ միասին բողքեն Պօլիս, համոզել է որ սա աղգային գործ է, միասին պէտք է ներգործել: Ցարութիւն եպիսկոպոսը երևի մտաբերել է դերապայծառի անցեալ օրուայ վարմունքը, երբ վերջինս իբրև թէ տաճկաց վերաբերութեամբ քաղաքականութիւն պահելով, պնդում էր թէ «չարժէ որ հայերը մի պատահական անցքի պատճառով այդքան աղմուկ են բարձրացնում». այդ պատճառով սրբազանը քաղաքավարի պատասխանել է մօնսինիորին «թէ չարժէ որ հիմայ դուք այդպիսի

մի պատահական անցքի պատճառով այդքան աղմուկ էք բարձրացնում, այնուամենայնիւ ես կկհեռագրեմ պատրիարքարանին»: Ինձ զարմացնում է թէ ինչո՞ւ մենսինիօրը կարծում, որ հայ կաթոլիկները ուղղակի զաղղեացոց հիւպատոսի իրաւասութեան տակ են, ինչո՞ւ չեն դիմում, օրինակ, իտալացոց, իսպանիացոց և միւս կաթոլիկ տէրութեանց պաշտպանութեանը...

Խոտրջուր անուանուած փոքրիկ նահանգը, ուր այժմ ապաստանել են հայերը, պատկանում է հին Տայոց աշխարհին և հեռու չէ Ձորոխ (Զորոխ) գետից: Կարնից հինգ օրուայ ճանապարհ է: Խոտրջուրը մի լեռնոտ և խորը ձորերով լիք տեղ է և, ինչպէս պատմում են, մի գեղեցիկ տեսարան է ներկայացնում: Երբ բարձր տեղերը այնքան սառն ամառ ունի, որ հացը և դարին շատ անդամ չեն հասնում, ձորերում հասնում է խաղողը: Բացի հայոց օտար ազգ չկայ Խոտրջուրի ձորերում: Միմիայն ամառուայ ժամանակները անցնում են այդ ձորով Կարին ճանապարհորդող լաղերը: Տները փայտէ են և միմեանցից հեռու այգիների կամ անտառի մէջ ցրուած: Ընդամէնը քսան ու չորս գիւղից է բաղկացած Խոտրջուրի բնակութիւնը, բայց այդ գիւղերը, որոնք թաղ են կոչվում, բաւականին երկար տարածութիւն ունեն բռնած. իսկ անների ցան ու ցրիւ լինելուն պատճառով դժուարէ որոշել թէ ուր է վերջանում մէկ գիւղը և սկսվում միւսը: Բնակիչները, իբրև շինական, աղքատ պէտք է լինէին, որովհետև ամենաառատ տարիքը հացի բերքը հազիւ վեց ամիս է բաւում իւրեանց, իսկ մնացածը ստիպուած են փողով գնել Խալիբի կողմերից: Ճանապարհները վատ են և անանցնելի, մանաւանդ ձմեռ ժամանակ: Այդ պատճառով, տեղացի հայերը ամէն տարի մի քսան, երեսուն լաղ են վարձում, գնում իւրեանց տանը կանանց և որդոց պահապան, իսկ ինքեանք գնում են Թիֆլիս կամ Կարին փող աշխատելու զլխաւորապէս փոնչութեամբ: Թիֆլիսի փոնչիքը մեծ մասը Խոտրջուրցիք են: Զարմանալի կերպով դուրս են վերոյիշեալ վարձած լաղերի հաւատարմութիւնը և բարոյականութիւնը: Խոտրջուրցոց տները պաշտպանելու համար այդ լեռնականները չեն խնայում իւրեանց արիւնը, գիտենալով որ մէկ երկու տարուց յետոյ կվերադառնայ տան տէրը փողերով և առատ կը վարձատրէ: Խոտրջուր կամ Կիսկիմ նահանգները ընդամէնը մօտ 800 դերդաստան հայ բնակիչ ունին, որոնք բոլորն էլ կաթոլիկ են և շատ կրօնամոլ: Դրքա կարնոյ մի առաջնորդի իրաւասութեան տակն են: Գիւղերի ա-

նուններն են Կիսկիմ, Օշնակ, Զորկանց, Մալուրջուր, Վերի և Վերի Մուխուրկուա, Ծեռկունց, Լոյտաղր, Արխիս, Հոնտուտ, Հունկամէջ, Պեօրթ քիլիսէ (չորս եկեղեցի), Բարէկամուրջ, Կուտրաշէն, Ճիճապաղ, Արեզդէմ, Կաղմուտ, Գեղուտ, Խանդաղոր, Սուլոնձ (Միւնեկաց), Կրման, Կիսակ, Թոլորշենց Դռներ և Լեզան:

Մինչև այսօր ոչ մի ուսումնական ճանապարհորդ մտած չունի այս հեռաւոր ձորերը, երևի ճանապարհների վատութեան պատճառով, և այդպէս Խոտորջուրը և Կիսկիմի մուտքն են չուսումնասիրեալ աշխարհին անծանօթ:

Մելքիսեդեկ եպիսկոպոսը արտաքրել է ինձ համար իւր ստացած նամակների պատճէնները, որից մէկը մոցնում եմ վիշապակապանիս մէջ առանց փոփոխութեան:

« Գերապատիւ գերապայծառ Տէր Բարէ, երկու տարի է վեր ու-
« րիշ նիւթ չունինք ձեզ հաղորդելու, բայց եթէ սպանութեանց և կոտո-
« պուտներու լուր. նոյն միջոցին որ այս դժբաղդ արկածները ձեզ հաղոր-
« դելու պարտաւորուած էինք, չէինք դադարեր նա ևս մեր դատն դան-
« դատները հասցունել Օսմանեան կառավարութեան ականջը, որ մեզ յի-
« շեն. բայց ունայն աշխատանք. մեր ճակատագիրը կը թոքի ըլլալ սա-
« ատ անպաշտպան ըլլանք, զոհ բարբարոսութեան լաղերու և թուրքաց, որ
« զմեզ չուրջ կը պատեն:

« Տերեկ ատեն կիւրակի օր մը պաշարեցին Մօխուրկուտի եկեղեցին,
« ուր ժողովուած կը դտնուէր համայն հասարակութիւն, քահանան ա-
« զանէն լծեցուցին և թէ ժողովուրդը և թէ եկեղեցին մերկացնելով, գը-
« նացին, գիւղէն առած բոլոր աւարը նոյն իսկ քահանաներուն կոնդակը
« հանելով մինչև լեռան գլուխը: Սմիս մը, և կրնանք ըսել, չաբաթ մըն ալ
« չէր անցներ, որ բռնաբարութեան, աւարառութեան և խարդաւանու-
« թեան գործքեր չը դառնացունէին մեր խեղճ խոտորջոյ նահանգը. Քիչ
« ատեն կայ, որ ըոլորովին վառեցին Մօխրկոտ եկեղեցին. բայց այս
« ամէնը դեռ պիտ՝ որ ըլլար միայն յառաջաբան մը այն դժբաղդութեանց,
« որ պիտ՝ որ կրէինք. Քաջ գիտնալուէք, որ բնաւ ապահովութիւն չու-
« նենալով ոչ պատուոյ, ոչ ստացուածոց և ոչ ալ կենաց, պարտաւորուած
« էինք մեր սատակ խեղճութեան մէջ և այս տարիներու սարսափելի սը-
« ղութեան միջոցին սուղ կերպով մեզի մերձակայ եղող գիւղերէն տա-
« ճիկներ (լաղ) վարձել որ զմեզ պաշտպանեն իշարկի, մատակարարելով
« իրենց ծանր ամսականներէն զատ բոլոր պիտոյքը և անուղղ. Բայց այս
« ամէնը չպատսպարեց զմեզ այն մեծ դժբաղդութենէն որ վրայ հասաւ.

« Օգոստոսի 29ին (1878թ.) յանկարծ Ճիճապաղ Թաղին (գիւղի)
« կողմէն երևան եկան 30 մը զինեալ տաճիկներ. մեր պահապանները
« փորձեցին արգելել անոնց յառաջանալը, բայց իզուր. ոմանք, վիրա-
« ւորուած այն բարբարոսաց կապարներէն, ինկան, միւսները զիւղացւոց

« հետ ճողոպրիլ ջանացին։ Բայց ահա Լեռանա կողմէն 30 ուրիշ զինեալ « այլազգ յարձակեցան մեր թաղին վրայ, կապարի կարկուտ իջուցնելով « գիւղը։ Պատճառաւոր կին մը հրացանի գնդակովը զարնուած ինկաւ « մեռեալ, ուրիշները վիրաւորուեցան։ Այս խուժդուժ խումբը կողոպտեց « բոլոր խանդաձոր գիւղը և յետոյ կրակ տուաւ գիւղին չորս կողմէն ա- « ռանց միտ դնելու տղայոց, կանանց և համայն ժողովրդեան աղիողորմ « ողբերուն և հեկեկաձայն աղաղակներուն։ Այսպէս ուրեմն թողուցին որ « վառի 150էն աւելի չէնք, իրենց պարունակուած բոլոր պաշարներով, « կահ կարասիներով և այլն, որոնք հետերնին տանելու անկարող եղան « և այսպէս մեկնեցան բարբարոսական երդերով և աղաղակներով իրենց « ուրախութիւնը արտայայտելով։ Այսպէս ուրեմն մոխրոյ վրայ նստած « մնացինք առանց հագուստի և առանց պարէնի, զոր չենք կրնար իսկ « դուրսէն ստանալ, վասն զի բոլոր ճանապարհները այս չարագործներէն « բռնուած ըլլալով, մահ պիտի ստանան, որոնք որ կը յանդգնին այն « ճանապարհներէն անցք փորձել։ Ինչպէս գիտէք, մեր բոլոր պարէնը և « հագուստը դուրսէն կը բերուի. արդ, մեր ամէն ունեցածը ի հուր մատ- « նուած ըլլալով, դիւրին կըլլայ ձեզ գուշակել մեր դժբաղդ վիճակը այս « ողորմելի դրութեան մէջ։

« Այս չարագործներուն գլխաւորները էին Խաչիդ և Հիւսէին Հու- « նուտցի Շերիֆ աղին որդիք, Թոյլ օղլիներն ու Գարայ-դերէի Օնպաշին « իւր արբանեակներով։

«Այս ողորմ դէպքերը ձեզ հաղորդելով, կաղերսենք, կը պաղատենք « դանոնք հաղորդել որուն պիտի և ամենեցուն, որք բարձր զգայմամբ « տոգորուած մեր վիճակին կարեկից կարենան ըլլալ, թող մեզ ծանուցվի « ինչ որ պէտք ենք ընել, կամ ցուցվի տեղը, ուր քաշուինք կեանքերնիս « ապահով ունենալու համար։

«Յանուն քրիստոնէութեան և մարդկութեան կաղաչեմք մեզ օգնու- « թիւն։... Եթէ արագ և ազդու միջոցներ չը գործածուին, եթէ անյապաղ « գնութիւն մեզ չը հասնի, մենք կորսուած ենք. բոլոր Խոտորջրոյ գա- « ւառն, 800 դերդաստանի քրիստոնեայ հանդարտ հասարակութիւնը ալ « չը պիտի տեսէ....»

(Հասարակութիւն Խոտորջրոյ)

Սիւս նամակից իմացվում է, որ այստեղ յիշած աւազակները կողոպտել են և վերաւորել Խանթաձորի Տէր Անտոն քահանային և այնուհետև, բոլոր ճանապարհները բռնելով, անցնող եկողներին կո- ղոպտում են։ Մանաւանդ սիրում են թալանել Թիֆլիսից եկողներին, որովհետև սոքա շատ փողով են գալիս։

Սեպտ. 10.

Սեպտեմբերի 8ին, երբ ռուսները գնացին Կարինից, քաղաքիս մէջ մի տաճիկ ապայ մնում է Յարութիւն Ամասեան և Յովհաննէս

Մանվանեան դերձակների խանութը և ասում է, որ Կարնոյ պաշարուելուց առաջ ինքը այդ դերձակների մօտ թողած էր իւր զինուորական հագուստը և թէ այժմ վերադառնալով քաղաք պահանջում է որ դարձնեն իւրեան: Այս սուտ պատճառով, սպայն յարձակուել է դերձակների վրայ, հայհոյել, ծեծել, կարերը պատռտել, բանուորներին խանութից դուրս արել և այլն:

Սպայն բանտարկուեցաւ:

Միևնոյն օրը մի ուրիշ տաճիկ սպայ մտել է ժամագործ Յարդիս Համբարձումեանի խանութը և պահանջել որ վերադարձնեն իւր ժամացոյցը, որ տակաւին անցեալ տարի տուել էր մաքրելու: Բացատրական պատասխան ստանալով, սպայն հայհոյանքներով և սպառնալիքներով հեռացել է:

Այս երկու անցքերը նշանաւոր են իբր նոր տեսակ քրէական յանցանքներ, որոնք Կարնոյ վերջի մէկ տարուայ մէջ կրած փոփոխութեանց պտուղն են:

Դարձեալ նոյն օրը երեկոյեան դէմ երեք տաճիկ զինուորներ (սուարի) մտել են Նապլկի—Զարսուանուանեալ փողոցում գտնուած Մատթէոսի սրճարանը, ուր կռիւ սարքելով, վերաւորել են սրով դերձակ Կարապետ Գրիգորեանին: Երկուսը այդ զինուորներից տեղն ու տեղը բանտարկուել են, իսկ երրորդ զինուորը փախել է քաղաքի հայերի օգնութեամբ: Յանցաւորները շղթայակապ բանտարկուած են և զինուորական դատով պիտի քննուին:

Վերջապէս դարձեալ նոյն սեպտեմբերի 8ին գիշերը եօթը հատ տաճիկներ Կարնից ոչ հեռու գտնուած Կրիչք գիւղի տէր Բարունաբաս քահանայի տան երդիկը (կտուրը) քանդելով ներս են մտել ու նորա ընտանեաց վրայ յարձակուելով ծեծել. տէրտէրը մութը տեղից դուրս է վազում օգնութիւն կանչելու, բայց դուռը պահող գողերը հրացանի կոթով քանի մի հարուածներ են տուել տէրտէրի գլխին և ուշաթափ արել. ապա կողոպտում են ընտանեաց բոլոր ունեցածները և հեռանում: Գողերից երկուսին ճանաչել են, մէկը նոյն իսկ Կրիչք գիւղի բնակիչներից է:

Այսօր այս յանցաւորները բանտարկուեցան:

Երեկեան օրը հեծելազօր դնդից քանի մի զինուորներ (սուարի) Մուստաֆայ չաուշ առաջնորդութեամբ գնացել են Թարգուն գիւղը Սիմոն Դաֆայելեանի տուն և պահանջել են որ իսկոյն իւրեանց յանձնէ իբր թէ իւր մօտ գտնուած զինուորական հրացանները: Սիմոնը պատաս-

լսած է, որ իւր մօտ հրացաններ չկան. այն ժամանակ զինուորները քանի մի մանէթ փող են պահանջել. այդ էլ չստանալով, Սիմոնին և քանի մի Հայերի ծեծ տուեցին և հեռացան:

Այս մասին քննութիւն պիտի նշանակուի:

Դարձեալ երեկեան օրը Դինարկոմցի նշանաւոր Ալի բէկը եկել է Չիթահող գիւղը Պապիկի տունը և իւրեան ու նրա ընտանեացը չարաչար ծեծել այն պատճառով, որ ռուսաց այստեղ եղած ժամանակ Պապիկը համարձակուել է Ալի բէկից պահանջել իւրեան պարտք եղած 300 ղուրուշը և ռուսական ոստիկանների ձեռքով յաջողել է ստանալ:

Այսօր եկան Յարութիւն եպիսկոպոսի մօտ Թարգուն գիւղի Հայ բնակիչները և բողոքեցին որ իւրեանց գիւղի տաճիկները միշտ խաչ և կրօնք են հայհոյում ու սպառնում բոլորովին ջարդել Հայոց: Առաջնորդը գնացել յայտնել է այս ամէնը Մուսա փաշային: Որովհետև այժմ Ռամազան է տաճկաց, երբ մահմետականներ ամբողջ օրը պաս են պահում և աղօթքով անց կացնում, այդ պատճառով պ. կոմսարականը յարմար դատեց ինքը հիւպատոսարանի ծառայողների հետ միասին պաշտօնական այցելութիւնները քաղաքիս տաճիկ մեծամեծներին երեկոյեան դէմ կատարել: Մուսա փաշան ուղարկել էր հիւպատոսին խնդրելու, որ, եթէ կարելի է, բարեկամաբար այցելէ իւրեան առանց պատուազգեստի և ամենայն պարզութեամբ: Ժամի 7ն էր երեկոյեան երբ մենք գնացինք. առաջ առաջ գնում են երկու լապտերներ, նոցա ետևից երկու ձիաւոր ղաւասներ (հիւպատոսարանի պաշտօնական սպասաւորներ), այնուհետև մայեօր կոմսարականը աջ ու ձախ ունենալով ինձ և պօրուչիկ Նանուշին, ապա մեր հեռագրատան կառավարիչ աստիճանաւոր Զարաֆանկօն և Եղիշէ Հազարապետեանը, իսկ նոցա ետևից 12 զինուորուած կօզակներ, որոնք հիւպատոսարանի իրաւասութեան տակն են: Ընթացքնիս շատ հանդիսաւոր էր. տաճիկ զօրանոցների զինուորները ամէնտեղ մեզ պատուոյ ցոյցեր արեցին, իսկ փողոցի մէջ պատահող տաճիկները յարգանքով ճանապարհ էին տալիս, չը կարողանալով ծածկել իւրեանց զարմացքը թէ արդեօք այս ինչ հանդէս է: Առաջին մեր այցելութիւնը Մուսա փաշային էր, որ տակաւին բնակվում է Ալի էֆէնդիի տանը: Մեզ արդէն սպասում էին բազմաթիւ ծառայք և զինուորներ: Սենեակի մէջ քանի մի քայլ առաջ եկաւ Մուսան և ողջունելով սեղմեց պ. կոմսարականի ձեռքը որ և ներ-

կայացրեց մեզ ամենիս: Այստեղ գտնվում էր Կարնոյ սպիտակամօրուս մուֆթին, որ զարմանալի ատող է ռուսաց և այժմ, ըստ երևոյթին, անբաւական մեզ ցոյց տուած ընդունելութիւնից, քաշուած մի անկիւն: Մուսան ռուսերէն հարցրեց կամանդանտին թէ կը ճանաչէ մուֆթիին և պատասխան ստացաւ որ տեսած է իրան և շատ լաւ ծանօթ նորա քաղաքական ուղղութեան հետ: Մենք աշխատում էինք այդ կրօնաւոր հոգևորականի վրայ շատ ուշադրութիւն չը դարձնել, որովհետև նրա դրամադրութիւնը քրիստոնեից վերաբերութեամբ մեզ յայտնի էր:

Մուսայ փաշան չը նայելով, որ երկու կրակի մէջ տեղն էր և ըստ երևոյթին փախում էր մուֆթիի կրօնամոլութիւնից, մեզ հետ շատ սէր կապեց: Խօսակցութիւնը նախ չնչին առարկաների մասին էր. ապա Սողանլուխի անտառի մասին եղաւ խօսք, որ այսուհետև պատկանում էր ռուսներին և վառելիքի կողմանէ Կարինը շատ նեղ տեղն էր ընկած: Փաշան ասում էր թէ ինչպէս օգտակար են ռուսական վառարանները, որոնք քիչ փայտ են ծախսում և շատ տաքացնում և թէ ներկայ հանգամանքների մէջ որքան ցանկալի էր որ Կարնոյ մէջ քանի մի հատ այդպիսի վառարաններ շինուէին: Պօրուչիկ Եանուշը, որ այդ մասին քաջ գիտութիւն ունէր, յայտնեց փաշային, որ պատրաստ է ինքը իւր ծառայութիւնները առաջարկելու, եթէ միայն պէտք լինի: Խօսակցութիւնը բոլոր ժամանակ ռուսերէն էր և ամէնքս ազատաբար մասնակցում էինք, այնինչ այդ ժամանակ ներկայ գտնուող տաճիկները, մանաւանդ մուֆթին, բան չէին իմանում մեր ասածից և խռոված նայում էին փաշային: Մուսան երևի նկատեց այդ դէմքը և յանկարծ դարձաւ դէպի այդ մուսուլմանները ու բացատրեց մեր խօսակցութեան առարկան. «էֆէնդիներ, մարդասիրի հոգ տանելու է, որ այս ձմեռ, երբ Սօղանլուի անտառը մեր ձեռքը չէ, ժողովուրդը առանց վառելիքի չը մնայ և ցրտից չը սառչի. ահա Եանուշ էֆէնդին քաջ գիտացեր է ռուսական վառարաններ շինել և այլն և այլն»: Մուսուլմանները լռութեամբ լսեցին Մուսայի տուած բացատրութիւնը, բայց, ըստ երևոյթին, համոզուած մնացին, որ Կոնդուխով փաշան «գեավուր է և ուրախ գեավուրների հետ տեսնուելուն»:

Այդ միջոցին տաճկական սովորութեամբ մեզ սուրճ բերեցին և երբ ծառան կամենում էր առաջին գաւաթը տալ կամանդանտին, Մուսան նշան արեց հրամցնելու մուֆթիին, ապա կամանդանտին:

Մինչդեռ տաճիկները Մուսային գնալուց են համարում, մենք էլ հիմայ այն գաղափարի տէրն եղանք, որ կոտորելով փաշան, չը նայելով իւր գործածմանը, դարձեալ կրօնամոլ մուսուլման է: Սուրճը խմելուց յետոյ կամսարականը յայտնեց Մուսային, որ իւր հետ առանձին խօսել կուզէ. երկուսը միասին հեռացան առանձին սենեակ, ուր ուշացան կէս ժամից աւելի: Այդ միջոցին մենք Ալի էֆէնդիի հետ խօսակցութիւն բացինք, իսկ մուֆթին իւր շուրջը ժողովել էր մուսուլմաններին, որոնց առաջ մի ճարտարախօս մարդարէ էր դարձել: Երկար չը մնացինք մենք, երբ կամսարականը և Մուսան եկան առանձնասենեակից: Սիրով բաժանուեցինք մենք փաշայի հետ և հիւպատոսի խոստացաւ, իւր խնդրանաց համեմատ, շուտ շուտ այցելել իւրեան: Փաշան մինչև սանդուխի գլուխը առաջ եկաւ մեզ ճանապարհ գցելու

Մուսայի մօտից մենք գնացինք Հաճի Հիւսէին փաշայ վալի-վէքիլի մօտ, որին գտանք անկողնի մէջ պառկած և տենդով հիւանդ: Ցնքալով յայտնեց մեզ տեսնելու ուրախութիւնը այդ ողորմելի ծերունին, որին ժամանակ է այն աշխարհ երթալու: Որքան նկատեցի, սա ամենևին անձնաւորութեանց վրայ տեղեկութիւններ ունէ ստացած և մանաւանդ քաջ տեղեակ է կամսարականի բազմարդիւն գործունէութեան հետ իբրև քաղաքապետ: Ցանկալի էր մեզ սորա տեսութիւնքը, բայց այնու ամենայնիւ պէտք է որ համբերութեամբ սպասէինք մինչև կը հրամայեցնէր մեզ՝ նախ ծխախոտ, ապա անուշեղէն, ապա սուրճ և նորից ծխախոտ և վերջապէս շէրբէթ (քաղցր ջուր), որոնց ամէն մէկի վրայ մօտ տասը տասը րոպէ ժամանակ էր անցնում: Խօսում էր գլխաւորապէս կամսարականը փաշայի հետ Երզնկայի և Կարնոյ կլիմայի մասին, բայց այդ միջոցին Հաճի Հիւսէյինը անդադար աչքերը մոտ էր ածում մեզ վրայ, աշխատելով գիտել թէ մեզանից ով ինչ է շինում, ով է ծխում, ով սուրճ խմում և այլն:

Տխուր տպաւորութիւնով ելանք մենք այս վալի-վէքիլի մօտից, որովհետև վերին աստիճանի անխոհեմութիւն է Օսմանեան կառավարութեան կողմից այսպիսի ազդկալի ժամանակ նշանակել Արզրումի վալիութեան մի բանից, ուժից ընկած ծերունի, որ իւր մահուան մերձաւորութիւնը զգալով, գիշեր ու ցերեկ հոգւոյ փրկութեան համար է աղօթում, մի կրօնամոլ մարդ, որ փոխանակ գործ շինելու, «Իշալլահ լաւ կերթայ ամէն բան» ասելով է անցկացնում

ժամանակը։ Մենք վճռեցինք այս փաշայի անունը «իշալլահ» կոչել, որ շատ յարմար էր զալես իւր վարքին։

Սեպտ. 11.

Գիշերս Կարնոյ գլխաւոր փողոցի վրայ, ոչ հեռի Հայոց եկեղեցուց, երկու Հայոց խանութներ են կոտրել անյայտ գողեր և նշանաւոր դրամարի ապրանք տարել։ Քրիստոնէից կարծիքով գողերը անպատճառ տաճիկներ են և կրօնամոլութիւնից են գործած այդ չարութիւնը։

Այսօր Կամսարական մեզ հետ միասին պաշտօնական այցելութիւն տուինք Հայոց և Հայ կաթոլիկաց եպիսկոպոսներին, բողոքական միստրը կօրին, Պարսից հիւպատոսին, մեր դրացի զաղղիացոց հիւպատոսական փոխանորդին և քաղաքիս քանի մի նշանաւոր քրիստոնէից։

Փոխադարձաբար մեզ այցելութեան եկաւ Յարութիւն եպիսկոպոսը, որ պատմում էր թէ ինչպէս բողոքել է Մուսա և Հաճի Հիսէյին փաշաներին վերջի ժամանակուայ չարաղործութեանց շատանալու պատճառով և թէ նա ինչ պատասխանել և այլն։ Այդ միջոցին եկաւ մեզ Մուսա փաշան։ Երբ որ սուրճը բերեցին, Կամսարականը, կամենալով հասկացնել Մուսա փաշային, թէ որքան անյաջող էր նորա վարմունքը նոյն դէպքում և աչքի առաջ ունենալով թէ մանաւանդ արևելքում ամենայն չնչին բան իւր նշանակութիւն ունի՝ երեկոյեան հրամայեց Ծառային առաջ եպիսկոպոսին հրամայեցնել։ Մու սան հասկացաւ և կարմրեց։

Պէտք է ասել, որ երեկեան օրը, Կամսարականը Մուսայի հետ առանձնացած ժամանակ յայտնած է իւրեան ի միջի այլոց և այս միտքը. «Կարծիք չկայ, ասել է Կամսարականը, որ մուսուլմանները դրգռուած
« են քրիստոնեայների և մանաւանդ հայերի դէմ այն համակրութեան հա-
« մար որ ամէն քայլին նոցա ցոյց են տուած ռուսները։ Ցաճկաց սպառնա-
« լիքները օրէցօր չատանում են և արդէն այստեղ ու այնտեղ այնպիսի
« չարագործութիւններ են պատահում, որք, ըստ երևոյթին, կապ ունին
« այդ սպառնալեաց հետ։ Եթէ մինչև անգամ այդ բոլորը իբրև պատահա-
« կան մասնաւոր դէպքեր նկատելու լինէինք, այնուամենայնիւ վերջին
« ժամանակներս չարագործութիւնները այնքան չատացան, որ ժողովրդին
« ոարտավի մէջ են պահում և պիտի դրաւեն մինչև անգամ օտար տէ-
« րութեանց ուշադրութիւնը, ուր մնաց թէ Օսմանեան կառավարութեան։
« Ես ունիմ երկար ու բարակ ցուցակ թէ այս միջոցիս ինչ ու ինչ է պա-
« տահել և կուզեմ ձեզ ներկայացնել։ գիտեմ ես որ այդ անցքերի պատ-
« մութեան մէջ փոքրինչ գերազանցութիւն կայ, բայց իրողութեանց ճըշ-
« տութիւնը չատ է քան թէ աւելացրածը։ Ես, իբրև ռուսաց տէրութեան

« ներկայացուցիչ Արզրումի մէջ, պատրաստակամութիւն ունիմ հսկել ամէն բա-
« նի վրայ, բանակցել ձեզ հետ և հաղորդել ամէն բան իմ տէրութեանս։
« Սակայն նախ և առաջ ես մարդ եմ և սիրտ ունիմ, ապա հայ եմ և չեմ
« կարող կարեկցութիւն չը ցոյց տալ իմ ազգիս։ Ես գիտեմ թէ ներկայ
« ժամանակներում որքան ցանկալի է Օսմանեան պետութեան համար հայոց
« ապահովութիւնը, գիտեմ և ձեր գերազանցութեան բարի դիտաւորութիւն-
« ները և այդ պատճառով կարծում եմ որ ձեր և իմ նպատակը միևնոյն
« է ժողովուրդի անդորրութիւնը առանց ազգային խտրութեանց։ Քանի որ
« այսպէս է, լաւ կլինի կարծեմ, որ մենք աջակցենք և օգնենք միմեանց
« միևնոյն նպատակին հասնելու. Անկեղծութիւնը և պարզութիւնը ամենա-
« լաւ միջոցներն են ասածներս իրագործելու. Իշխանութիւնը և իրաւունք-
« ները ձեր ձեռքին են, իսկ հսկողութիւնը և խորհրդակցութեան պարտա-
« ւորութիւնը ինձ թողէք։ Կուզէի որ ամենից քիչ դիմենք պաշտօնական
« գրութեանց և ամենից շատ գործ կատարենք..։

Մուսան, չը թողնելով վերջացնել խօսքը, երկու ձեռքով սեղմել է կառավարականի ձեռքերը և իւր խորին շնորհակալութիւնը յայտնելով ասածների մասին, խնդրել է իւր կողմից անկեղծաբար և պարզօրէն օգնել իրան երկիրը անդորրութեան մէջ պահելու:

Այսօր Մուսան իւր այցելութեան ժամանակ նոյնը կրկնեց և, եպիսկոպոսին դառնալով, խնդրեց որ նոյն պարզութեամբ ցերեկ և գիշեր ժամանակ անմիջապէս դառնայ իրան, երբ միայն վարչութեան օգնութիւն է հարկաւոր:

Մուսան յայտնեց նմանապէս որ ժողովուրդի ապահովութեան համար սաստիկ հրամայած է զօրաց և ոստիկանութեան որ գիշերուայ ժամի ութից յետոյ Արզրումի փողոցների մէջ ոչ ոք, ոչ լապտերով, ոչ առանց լապտերի, չը համարձակուի երևալ, ապա թէ ոչ բանտարկել և մինչև անգամ հրացան պարպել երևացողի վրայ:

« Հրամայած եմ, ասաց փաշան, որ եթէ ես երևամ գիշերը, ինձ էլ
« չխնայեն, ինձ վրայ էլ հրացան պարպեն. բացառութիւնը միմիայն ռու-
« սաց հիւպատոսարանն է, որոյ մէջի ծառայողները միշտ իրաւունք ունին
« ազատ շրջել և մինչ անգամ, եթէ կամին, հսկեն թէ որ աստիճանի խստ-
« ութեամբ է կատարվում այդ հրամանը։ Կարծեմ որ այդ կարգադրու-
« թիւնս գողութեանց վերջ տայ։»

Գիշերս կառավարականը և ես ելանք փողոցները պտտելու, մութ և խաւար փողոցներում ոչ ոք չկայ, ամէն տեղ մեռելութիւն է: Զօրանոցի առաջ հասած ժամանակ, զինուորները ձայն տուեցին «ո՞վ է գալիս» — Ռուսաց հիւպատոսը, պատասխան եղաւ իրանց և դարձեալ տիրեց լռութիւն:

Ա. ԵՐԻՑԵԱՆ

(Շարունակութիւն հետևեալ համարով)։

—

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԱԿԻՍ ՈՎԻՆ ԵՒ ՀԱՅ ԱՊԱԳԱՅՆ [1])

Ներկայ ժամանակիս ոգին ճշգրիտ հասկնալու և լաւ դատելու համար պէտք է երթալ ետ մնօք այն ժամանակներուն մէջ որ մարդկութեան սկիզբն կը կազմեն. և այնուհետև դարէ դար բարձրանալ և վերջը տարուէ տարի եղած տարբերութիւնքը քննել որպէս զի կարելի լինի ժամանակիս ոգւոյն խելամտել:

Պէտք է հարցնել.—պատմական ժամանակներէ առաջ ի՞նչ է եղել մարդս:

Ահա երկրաբանը՝ ահա կենդանաբանը որ մեզ կը պատասխանեն և մեզ երկրայութիւն չի թողլու համար կը տանեն կը մոցնեն զմեզ մոռացեալ քարայրներու խորերը և նոցա մթութենէն ի լոյս կը բերեն կոյտ կոյտ ոսկորներ և անդամաղնութեան օրինօք դէզերը կը քանդեն և այդ կանոնաւորութեան մէջ անկանոնութիւն մը մեզ կ'իմացնեն և կ'որոշեն ոչխարի, եզի, խոզի ոսկորներու հետ մարդու ոսկորները նոյնպէս յղկեալ և մաքրեալ աղբաներով և մեզի կըսեն. «Ահա մեր հարց հին պատմութիւնը, հին անցեալը հազարաւոր տարիներ առաջ, նոքա ոչխարի, եզի, խոզի հետ իրենց նման մարդը կ'ուտեն եղեր, մեր հայրերը շէնք շնորհք մարդակեր են եղեր, վասն զի նոքա միայն դաղանաց մէջ այդ կանոնաւորութիւնը կրնային, ինչպէս իրենց քարեայ գործիքներն ալ ցոյց կուտան:

Իսկ երբ թողլով այդ մութ ժամանակները կը հասնինք պատմական դարերու, թէպէտ մարդս իբրև կերակուր չի հրամցներ իր սեղանուոյն վրայ իր եղբօր մարմինը, այլ կը տեսնենք թէ քաղաքա-

---

[1]) Մենք բաղդաւոր ենք համարում մեզ որ կարող ենք մեր նոր շրջանը բանալ մի յօդուածով, որ պատկանում է «Թորոս Լեռնի» տաղանդաւոր հեղինակի գրչին։ Մենք տպում ենք այս յօդուածը առանց որեէ փոփոխութեան մեր կողմից։

Վստահանում ենք կարծել որ ընթերցողը մեր երկու տարուայ «փորձ» ինկատի առնելով, պարզ կտեսնէ այն կէտը որի մէջ չենք կարող համաձայն լինել մեր պատուելի աշխատակցի հետ։

Ծան. խմբագ.

կանացեալքն յաղդաց, ճոխացեալքն վաճառականութեամբ Փիւնիկեցիք և Կարքեդոնացիք՝ իբրու թէ նախահարք այժմեան Անգլիացւոց, աստուածներ ունին մարդկային արեան ծարաւի և որոց կատաղի յաղուրդը լեցնելու համար դոքա ոչ միայն իրենց զերիները կը զոհեն՝ այլ նաև իրենց զաւակները:

Իսկ եթէ Ասիա և Ափրիկէ թողունք և անցնենք Եւրոպա՝ գնանք ի մայրն քաղաքաց աշխարհի՝ ի մայրն քաղաքականութեան Հռոմ, այսօր տխուր սուգ զգեցեալ կը տեսնեմք՝ և մեծ քրմապետը խոժոռ դիմաք խեղճ աղջիկ մը առջեն ձգած կը տանի արդէն պատրաստեալ գերեզմանին մէջ թաղելու համար կենդանի, վասն զի չէ կրցեր գերմարդկային առաքինութեամբ հանդիսանալ: Իսկ վաղը՝ ուրախ՝ զուարթ՝ արբեալ ժողովուրդ մը որ հրապարակներու շուրջը բոլորեալ կը ծափահարէ՝ կը գոռայ՝ կը դղրդի. վասն զի հարիւրաւոր գերեաց խումբք իրար կը կոտորեն և կրկեսներու գետինը արեան գետեր կոուզեն:

Երեկ վեստեան կոյս մ՝ էր:

Այսօր սուսերամարտկաց հանդէս մ՝ է:

Այս տեսարանաց յետոյ՝ պէտք կը մնայ արդեօք երթալ տեսնել ուրիշ գերեաց վիճակը որոց ոմանք՝ և երջանիկքը ծառայութեան են մատնեալ իսկ թշուառքը՝ սահմանեալ են կերակուր լինելու գազանաց, զորս հռոմէական անարդ ագնուատոհմութիւնը՝ թագաւոր—ժողովրդեան շողոքորթելու համար Ափրիկէի խորերէն որսալ և բերել կուտայ:

—Եւ ի՞նչ են այդ գերիքը--խեղճ մարդիկ՝ բնակիչք Բրիտանիոյ՝ Գաղղիոյ՝ Գերմանիոյ՝ Նուպիոյ՝ Սպանիոյ՝ Յունաստանի՝ Հայաստանի, Եգիպտոսի... վերջապէս ամեն ծանօթ աշխարհի որոնք չէին կամեցել ծառայութիւնը ազատութեան վերադասել, անկախութիւնը՝ օտարին իշխանութեան:

Բայց պէտք է խոստովանել թէ օր աւուր խիստ սովորութիւնք կը քաղցրանային՝ վասն զի մարդս իւր նմանը չէր ուտեր և ոչ իւր աստուածոց կը զոհէր՝ այլ միայն գազաններու կերակուր կընէր՝ քիմքը չէին պարարեր՝ այլ աչքերը:

Ժամանակը իր հրաշքը կը գործէր. և քրիստոնէութիւնը՝ սրբազան դերութիւն՝ խաչի՝ կրակի՝ սուրի և ամենայն տանջանաց մատնեալ վերջապէս կը հասնէր ազատութեան և իշխանական գահոյից. և այնպէս կը կարծուէր թէ իւր երկնաւոր վարդապետին յի-

շատակը և պատուիրանքը և իւր մարտիրոսաց չարչարանքը զենք քարոզ պիտի ընէին զթութեան և մարդասիրութեան։ Ոչ այդպէս։ այլ ընդհակառակն անագորոյն դահճի պաշտօնը նա ալ վարեց ուրախ սրտիւ, և հաւատաքննութեան դառն յիշատակները պատմութեանը էջերն կը լեցնեն, վասն զի պէտք է որ ժամանակը քայլէ։ պէտք է որ դարերը սլանան, պէտք է որ նորէն այդ քրիստոնէութիւնն լաւ հասկցուի, և փիլիսոփայական դաղափարները փոխուին և աշխարհք փոխեն։

Աղատութիւնը՝ պէտք էր որ խուզարկու ոգիներ յարուցանէր որ ամեն բան քննեն՝ կշռեն, օրէնքները ի բովս փորձեն և ըսեն թէ այդ վայրենի էր՝ նա անիրաւ էր՝ այս մարդավայել էր՝ սա իրաւացի էր՝ թէ այդ անորոշ էր և միւսը լուսաւորութեան կարօտ էր։

Վերջապէս հասաւ մարդ այն կէտին որ ոչ միայն իւր նման մարդը ուսելէն դադրեցաւ՝ այլ

Մարդաղոհը մոռցուեցաւ,

Գաղանաց մասնուիլը վերջացաւ,

Պատերազմի կալանաւորը ոչ միայն ի մահ և ի գերութիւն չը մատնուեցաւ՝ այլ և մարդասիրաբար պահուեցաւ և խաղաղութեան հետ իւր հայրենիքը դարձաւ։

Գերութիւնը և իւր հետքը նաև քաղաքակիրթ ազգաց մէջէն վերջացաւ, կինը նոյնպէս նոյնպիսի ազգաց մէջ գերութենէ հաւասարութեան հասաւ, տղայն դաստիարակութեան մէջ ոչ չարչարանք այլ ուրախութիւն կը վայելէ։

Դատարանները ճշմարտութիւն գտնելու համար տանջանքի պէտքը ուրացան։

Եւ արդարութեան հոգին այն բարձրութեան հասաւ որ ոմանք յաղագս դատապարտելնուն համար մարդասպանութիւնը՝ մահուան վճիռը դատապարտեցին։

Եւ նոյն ինքն Անգլիա Խաբշիկ Ափրիկեցւոյն վաճառքն արգիլեց յանուն մարդասիրութեան՝ վասն զի այդ վաճառքը իւր շահերուն դէմ չէին։—

Այս ժամանակը իւր բաղմադարեան ընթացից մէջ այսչափ առաջ քշեց մարդկութիւնը։

Ժամանակին ոգին արդարութեան ուրեմն կը տանի զմարդ և օր աւուր այն կէտին կը հասնինք՝ որ կրնանք յուսալ թէ մատնուորի և ընդհանուրի դէմ անիրաւութիւնք դադրին, ամենայն բո-

ղոք և ամէնայն ձայն որչափ և տկար լինի՝ լսելի լինի, և հարստահարողն որչափ և հզօր լինի անպատիժ չի մնայ:

Գանք ուրեմն հայ ազգային, որու բարեկեցութեան սրտատրոփ կ'սպասէ ամէն հայ ոչ միայն հայրենի երկրին մէջ՝ այլ նա մանաւանդ նա որ նոյն հայրենի երկրէն տարագիր, պանդխտական աչքը միշտ հոն է, ուր հայրենի յիշատակներ իրեն կ'սպասեն: Եւ ուսկից նա միայն անոր համար հեռացեր է, վասն զի չէ կրցրեր տանել հարստահարութեանց և ամէն տեսակ վնասուց և բռնութեանց և որուն սիրելի է վերադառնալ ի հին հայրենիս, երբ անդորրութիւն և խաղաղութիւն ապահովին և անզգամութիւնք վերնայ: Եւ վկայ այս խօսքերուս ճշմարտութեան՝ հայը Կալկաթայէ մինչև ի Լոնդոն՝ Պետերսբուրկէ մինչև ի Կոստանդնուպօլիս համագումար սրտիւ բարախոսց՝ երբև անձ մը միաձայն հառաչեց և Հայաստանի բնիկ հայրենակցին հաւասար դառնացաւ՝ երբ իւր անկախութիւնք համարեց ի դերև ելեալ բոլորովին:

Բայց խորհրդածենք քիչ մը այդ վիճակին վրայ և բոլորովին չի յուսահատինք:

Կան պատմութեան մէջ այնպիսի վիճակներ որոնք խորհրդածութեան արժանի են ոչ միայն պատմագրաց և պետական մարդոց՝ այլ և երկրաբանից և բնագիտաց:

Հայաստանի վիճակը այս կարգէ կրնայ համարուիլ:

Ուստի՞ է որ Հայաստան միշտ երկու մեծ ինքնակալութեանց սահմաններու մէջ կը գտնուի յաւիտեան. Պարսից և Յունաց, Պարթևաց և Հռոմայեցւոց՝ Սասանեանց և Սուրբին Կայսրութեան՝ Արաբաց և Թաթարաց, Օսմանեանց և Պարսից, և վերջապէս այսօր սոյն տկարանալէն վերջ երկու ահագին ինքնակալութիւնք Անգլիա և Ռուսիա աշխարհքիս ծայրերէն կուգան կը հասնին և նոյն հին Հայաստանի վրայ իրար կը դիմաւորեն կը կանգնին:... Մեկնէ ով որ կրնայ, մենք իր մը կը հաստատենք միայն: Բայց միանգամայն կը նկատենք թէ ի բաց առեալ մեր հայ ազգին այսօրուան վիճակը՝ այսպիսի մեծազօր ինքնակալութեանց մէջ գտնուելուն՝ մեր հայրենի երկիրը երբէք այդպիսի յուսալի բարեկեցութեան անկախութիւն չէր ունեցեր: Այս բարեկեցութեան մեծ յոյս է երբ երկու քաղաքականացեալ և քրիստոնեայ տէրութեանց մէջ կը գտնուի ազգ մը, որ իւր ընկած և անհար և բարբարոսաց ու անհաւատից ոտնակոխ վիճակին մէջ նաև միշտ ջանացեր է օգուտ քաղել ի գիտութեանց և յուսմանց:

Ո՞ւր էր թէ նոյնչափ երբեմն գիտնար՝ օգուտ քաղել կառավարութեանց ձեւերէն զոր երբէք չէ մոռցեր անցեալին մէջ:

Բայց թողունք անցեալը, նայենք քննենք ներկայ վիճակը, յորում մեր ազգին և հայրենի երկրին առաջ ընդարձակ և գեղեցիկ ապագայ մը կը բացուի:

Պէտք է կայսերը կայսեր և Աստուծոյն Աստուծոյ տալ:

Նախ պէտք է հայ ազգը շնորհակալ լինի և երախտագէտ ժամանակին ոգւոյն, մարդկային յառաջդիմութեան, ուսկից կը ծագի արդարութիւն: Այդ մարդկային յառաջդիմութեան և արդարութեան ոգին է որ ի շնորհս ուսմանց և գիտութեանց՝ արքայից և ինքնակալաց բարձակից յաղթող արքայազնին կը թելադրէ դադրիլ՝ կշռել երիտասարդ քահանայի մը աղաչանքն ծեր քրիստոնեայ ազգի մը համար, որ 800 և աւելի տարիներու բազմաչարչար տանջանաց և տառապանաց մէջ կը հալէր, և արդարութեան ձայնին ունկնդիր՝ իւր յաղթական մատով կը նշանէ 16րդ յօդուած մը դաշանց թուղթի մը վրայ որ ոչ միայն պատմութեան մէջ տեղի մը ունի՝ այլ որ ծնող է բարեբաղդութեան ինկած ազգի մը՝ որուն առաջին յանցանքը քրիստոնէութիւն եղած է Ասիական ժողովրդոց մէջ:

Դարձեալ նոյն մարդկային յառաջդիմութեան և արդարութեան հոգին է որ Բեռլին գումարեալ վեհաժողովին կազմող անձինք՝ թէպէտ սկզբունք կարծէին ունենալ իւրեանց նախադասհի փճիւք թէ «զօրութիւն գերազանց է իրաւանց» բայց դարձեալ չի համարձակեցան Սան-Ստեֆանոյի այդ յօդուածը ջնջել կամ աղաւաղել, որ ինկած և հարստահարեալ հայ ազգին դոյզն՝ բայց ձեռնտուութիւն մ՚ էր պաշտպանութեան:

Ամեն ժողովուրդ իւր անհամբերներն ունի, անշուշտ հայն ալ ունի, ուստի կը յորդորենք այդ անհամբեր անձինքը անգամ մը խորհրդածել լուրջ կերպով և պատասխանել մեզի խղճմտանքով թէ երբէք կը հաւատայի՞ն իրենք 1877ին՝ թէ Եւրոպիոյ մեծ տէրութիւնք երբ ատեան կազմեն 1878ին հայ վեղարաւոր եկեղեցականք իրենց խնդրագիրն ի ձեռին պիտի ներկայանան այն եօթն տէրութեանց որ հոն աթոռ ունէին և իշխանութիւն, և որոց զինուորական համագումար զօրութիւնն գոնէ 10 միլիոն զօրաց բանակներէ կը բաղկանար, կը հաւատայի՞ն, կ՚ըսեմ, որ նոցա՝ այդ սեւագլուխ մուրացկանաց խնդրագիրը խորհրդածութեան արժանի պիտի լինէր, եթէ միայն զօրութիւնն ու հպարատոր հրազինայ շառաչմունքը իրենց ձայնը լսցնէին:

Լսեցինք մեր Սրբազան նուիրակաց մէկուն զրուցելն թէ՝ «Երբ կը տեսնէի Զեռնակորիսի նուիրակին զեռնաքարշ սուրի շառաչմունք և իր բարձրաձայն զրուցելը թէ՝ «Մենք արիւն թափեցինք և իրաւունք ունինք խօսելու» ես ճիկ հանելու քաջասրտութիւն չունէի, մանաւանդ որ կը յիշէի թէ ժամանակիս սրամիտ քաղաքագէտ մը ըսած էր՝-Մենք հրդեհը ուր տեսնենք՝ հոն կը դիմենք մարելու:»

Բայց այդ խօսքերը զրուցողը դարձեալ քաջալերեալ յիրաւանց՝ քաջալերեալ ժամանակիս արդարութեան հոգիէն կը բաղխէր այդ մեծ ատեանին դուռը և յանուն նորա որ խաչին վրայ զոհ եղաւ առանց զօրութեան՝ առանց սուսերաց՝ առանց բիւրաւորաց դիմելու, իւր ազգին համար խնդրեց ոչ անկախութիւն՝ ոչ իրաւանց ժառանգութիւն՝ այլ, ինչպէս ըսինք, արդար կառավարութիւն մը ազատ ի հարստահարութեանց և զրկանաց. և Սան-Սթեֆանոյի 16որդ յօդուածին Բեռլինի դաշնագրին 61որդ յօդուածը յաջորդեց:

Թուրքիոյ քրիստոնեայ ժողովուրդ հայը սովորած է 40 տարիէ ի վեր լսելու աղատական խոստմունքներ Միւլհանէի օրէնսդրութեանց, 1856ի և նորա նման զանազան հատոր հիւմայուններու, և դեռ երեկուան սահմանադրութեան, կրնայ երկբայութեան կասկածոտ ակնարկ մը ձգել նաև այդ 16որդ կամ 61որդ յօդուածներու վրայ, թէպէտ շատ և շատ եռանդուն և սայրասուր զրիչներ կը զինուին համոզելու հայ տկարամտութիւնը՝ յուսալու և հաւատալու թէ ամէն բան վաստակուած է և ապահովուած Բեռլինի դաշնագրէն, և միայն հայուն կը մնայ հասուն պտուղը քաղելու համար ձեռք երկընցնել, և շարունակ աշխատիլ:

Ո՞վ է որ չաշխատիր. հայը աշխատասէր է. տղայք՝ երեկուան տղայք հազիւ թէ դպրոցէն ելած՝ և չելած նաև՝ ընկերութիւններ կը կազմեն, ստակ կը ժողովեն և դպրոց հաստատելու կ'ելնեն ի Հայաստան և կը հաստատեն:

Բայց խնդիրը հայուն աշխատութեան վրայ չէ և ոչ Խարբերդցի Դրան հայուն վիճակը անյապաղ բարելաւելու համար տուած խոստմանց, վասն զի ոչ միայն այլ է խոստանալ և կատարել, այլ նաև այլ է խոստանալ և կարենալ կատարել: Այո՝ կրսէր բարձրագոյն դրան ամենամեծ բարեկամն ու խորհրդական Մ. Լէյարտ. Օսմանցիք փափաք ունին շատ բարեփոխութիւններ ընելու, բայց ոչ դրամ՝ ունին և ոչ մարդ:

Եւ առանց մեծ պետական մարդիկ լինելու հայերն լաւ գիտէին

թէ այս երկու բաներն ալ կը պակսին Բ. Դրան և ասոր համար կառաջարկէին Եւրոպիոյ տալ իրենց Հայաստան, Հայաստան ոչ թագաւորական, ոչ անկախ, ոչ ինքնուրոյն, այլ Հայաստան մասն Օսմանեան տէրութեան՝ հարկատու ճիշդ ուրիշ գաւառաց պէս՝ օգնական մարդով և դրամով միայն ազատ ի հարստահարութեանց, յաւազակաց, նա մանաւանդ ի կուսակալաց, և բարի օրինակ լաւ կառավարութեան նոյն տէրութեան դրացի գաւառաց։ Այսմ պէտք էր փափաքէր նոյն ինքն Բ. Դուռը, բայց դժբաղդութիւն մը է որ կեդրոնացման հիւանդութիւնը, պաշտօնատարց ապականութիւնը, զօշաքաղութիւնն ու կրօնամոլութիւն օրէնք դարձած են ի Տաճկաստան, ուստի Օսմանեան կառավարութիւնն զարմանալի հակասութեամբ մէկ կողմէ դիւրութիւններ կուտար Հայոց պատրիարքի նուիրակաց և միւս կողմանէ նոցա դէմ արգելքներ կը հանէր. մէկ մը կը հրամայէր պատրիարքին յետս կոչել Բեռլինէ և միւս կողմանէ հեռագրական ծածկագրութիւն կը շնորհէր։

Եւ ինչո՞ւ այս հակասութիւնքը։

Անոր համար որ ժամանակին յառաջադիմութեան և արդարութեան հոգին մէկ կողմանէ կը պարտաւորէր զինք հայ խնդիրը կատարել, և միւս կողմանէ նախապաշարմանց և անիրաւութեան սովորութիւնը արգելքներ հանել նորա դէմ կը թելադրէր։

Ուրեմն խնդիրը Օսմանեան պետութեան բարի կամաց վրայ նաև չէ համարելով՝ որուն աւանդական սովորութիւն, կրօնական արգելքներ և նախապաշարմունք կարեւոր միջոցներու պակասութիւն՝ վերջապէս ամենայն նիւթական և բարոյական վիճակ համարենք թէ կ'արգելուն Հայաստանի համար բարելաւ հանդիսանալ։ Պէտք է քննենք թէ Անգլիոյ տէրութեան կառավարութիւն ինչ կորուսէ իւր խորախորհուրդ նախատեսութեան մէջ։

Անգլիա Օսմանեան պետութեան կամ իւր անձնական շահերուն միմիայն բարեկամն է։ Անոր համար նաև, տեսէք, ով է նորա դեսպանն ի Պօլիս. Մ. Լէյարտ, մարդ որ սրտով ու հոգւով թիւրք է քան զամէն թիւրքն, որ Օսմանեան քանի մի հաղուադիւտ պետական մարդոց հետ կը տեսնուի և հաւանական թէ նոցա աչօք կը տեսնէ և կը դատէ եղելոյն ու եղանելիքը ներկայն ու ապառնին։ Ահա Անգլիոյ ամենամեծ սխալն որ իրեն քար գայթակղութեան պիտի լինի այս ծանր խնդրոյն մէջ զոր Արեւելեան անուանեցին, և զոր չէ կրցան լուծել եօթն տէրութեանց իմաստասէրք։

Օսմանեան պետութեան բուն օգուտը կը պահանջէ այնպիսի մարդ Անգլիոյ դեսպան ի Պօլիս, որ գիտնայ հաւասարակշռութիւն պահել իւր համակրութեանց մէջ, որ բուն նոյն տէրութեան օգտին համար քրիստոնէից շահերը՝ Թրքաց հետ՝ ոտնակոխ չընէ և նոցա արդար՝ ոչ պահանջմանց՝ այլ խնդրանաց լսելու ականջ ունենայ, չունենայ այդ սխալ տեսութիւնը որ կարծէ թէ քրիստոնեան բնաջինջ լինելով տաճիկ տարրը կը յառաջանայ. ոչ. և անոր համար չի ներէ որ Սղերդ՝ Վան՝ Տիարպէքիր՝ Խարբերդ և ուրիշ փոքր Ասիոյ և Հայաստանի զանազան կողմերը Չերքէզ և Քիւրդ՝ պաշըպօզուք և կանոնաւոր զինուոր՝ կառավար և կուսակալ ամեն նոր օր ամեն նոր տարի անզգամութեամբ և անիրաւ հարստահարութեամբ լեցնեն երկիրը քրիստոնէից նկատմամբ:

Վասն զի ինչ որ դժուարին է իմացնել Մ. Լէյարտի համոզմամբ և սրտով անձանց՝ արդէն հաւատք է ամեն մտածող մարդկանց թէ Անգլիա բարոյապէս և նիւթականապէս պատասխանատու և գործակից է ամեն անիրաւութեանց որ Ասիոյ Տաճկաստանի մէջ տեղի ունին 1878 յունիսի 4էն վերջը: Այո, այն օրէնէ որ Անգլիա Կիպրոսը Օսմանեան տէրութենէն առնելով իւր սեպհականութիւն ընելով, փոխարէն նորա Ասիական ստացուածքը կերաշխաւորէ. աշխարհք զինքը պատասխանատու կը ճանչէ լինելիք թէ լաւ և թէ վատ գործառնութեանց:

Եթէ ճշմարիտ է թէ անցեալն ապագային խրատն է, Անգլիա անշուշտ պիտի նկատէ այդ իւր նոր սեպհականութեան Կիպրոսի կղզւոյն վրայ նայելով և խորհրդածելով թէ տաճիկ տարրը առանց քրիստոնէի չի կրնար յառաջանալ: Ի բաց առեալ ընդհանուր կղզւոյն աւերակ վիճակը Թրքաց իշխանութեան ենթակայ լինելէն վերջը, որ 750,000 բնակչաց թիւը 150,000 է իջեր, ի բաց առեալ որ կլիմայն նաև յիմար մատակարարութեամբ փոխուեր վատառողջ եղեր է, անշուշտ ի նկատի պիտի առնու Ֆամակուստա քաղաքը ծովուն քով իւր բարձրաբերձ պարիսպներով, իւր գեղեցիկ նաւահանգստով որ օր աւուր աւերակ կը դառնայ, որ անտարակոյս հիմա իւր աւերակաց մէջէն պիտի վերականգնի և կենդանանայ շնորհիւ լաւ կառավարութեան, որ յիմար և քաղաքաւեր օրէնք մը միայն խափանելով աւերակներն ի շինութիւն պիտի դարձնէ. օրէնքը որ Քրիստոնէից արգիլելով բնակիլ այդ քաղաքին մէջ, ուր 150 տուն Թիւրք միայն մնացեր են վկայ՝ թէ ինչ կը դառնայ այդ ժողովուրդը

երբ ինք մինակ է, վասն զի քրիստոնեայն որ քաղաքէն մէջն մը անդին բնակելու պարտաւորեալ է՝ 1500 տուն է և կեանքն հոն իրեն հետն է, երբ թուրքէն դրաւեալ բուն քաղաքը մոխրոյ պատանքէն ծածկուած լուութիւն կը պահէ։ Բայց խորհրդածող մտքի զգայուն սրտի համար այդ գերեզմանական լուութիւնը երկինք բարձրացող հառաչանք մ'է՝ բողոք մ'է. քաղաքականութեան ողորմելի ձայն բարբարոսութենէ խեղդամահ։

Բայց Անգլիոյ պէս տէրութիւն որ աշխարհիս առաջին տէրութեանց և առաջին ազգաց եթէ առաջինը չէ այսօր՝ երբէք երկրորդը չէ, իւր ուսմամբ՝ իւր տարածութեամբ՝ իւր հարստութեամբ՝ իւր զօրութեամբ՝ իւր ազատականութեամբ, միթէ կարելի՞ է մինչև վերջը խաբուի իւր ընարութեանց մէջ և այսօրուան գործիքը մշտնջենաւոր լինի նորա ձեռքը, որ նոր հնարոպութեանց ստեղծիչն է։ Մենք պէտք է սպասենք ուրեմն աւելի բարեբաղդ օրերու մեր հին հայրենեաց համար։

«Բարեբաղդութեան մեծ յոյս մ'է, երբ երկու քաղաքականացեալ և մեծ տէրութեանց մէջ կը գտնուի ազգ մը, որ իւր ընկած և ոտնահար և բարբարոսաց և անհաւատից ոտնակոխ վիճակին մէջ նաև միշտ ջանացեր է օգուտ քաղել ի գիտութեանց և յուսմանց։

Այսպէս ըսեր էինք մենք վերը, և ըսեր էինք նաև թէ այդ երկու մեծ ինքնակալութիւնքը Անգլիա և Ռուսիա էին։

Արևմտեան մեծ տէրութեանց շնչով և գիտութեամբ սնեալ և նոցա համամիտ մարդիկ՝ երբ այդ երկու ազգաց անունները քովէ քով զուգակշիռ տեսնեն մեր այս զրութեան մէջ՝ շատ կարելի է որ պիտի ըսեն։

«Ահա ռուսական տէրութեան գործիք մը՝ արբանեակ մը։ Ի՞նչ, « քաղաքականութեան ասպիճանները մի՛ են ուրեմն Անգլիոյ և Ռու- « սիոյ մէջ որ այդպիսի բաղդատութեան ձեռք զարնել կը համար- « ձակի այս տողերը գրողը. անարդ սարուկներու հետ՝ որոնց միտքը « նիւթական շահերէ վեր չի կրնար բարձրանալ՝ կարելի է այդ ոճը « գործածել, բայց բանական մարդուն այսպէս խօսել և համոզել « կարելի չէ։

կա՞յ անմտութիւն բաղ-
« դատելու համար Անգլիոյ հետ՝ աշխարհիս քան զամենքը յառա-
« ջադէմ՝ ազատ և ազատամիտ ազգին հետ»:

Այդ խիստ և մեծաւ մասամբ անիրաւ դատողութեան դէմ կը պատասխանեն նոքա որ Ռուսիոյ կողմնակից և Անգլիոյ հակառակ են:

«Այդ ազատ և ազատամիտ Անգլիան որ կրօնական խղճմտանքը
« կը յարգէ նոյնչափ որչափ ոսկին, քանի մը տարի առաջ ժողո-
« վրդեան ազատ ընտրութեան հակառակ այնպիսի մոլի օրէնքներ
« ունէր, որ աշխարհիս ամենէն աւելի ոսկով խճողեալ անձը՝ Ռօչիլտ
« մը, կրկին և կրկին անգամ ի պատճառս կրօնի կը մերժէր իւր ազ-
« գային ժողովքներ, և այդ անգլիական ներողամիտ եկեղեցին ան-
« տանելի բռնաբարութեամբ կը հարստահարէր կաթոլիկ Իռլանդան.
« և իւր դեսպանը Պօլիս՝ Հէնրի Պուլվէր՝ որուն դէմքը սրտին պատ-
« կերն էր՝ բողոքողի մը դիակ հայ գերեզմանատան մէջ թաղել տա-
« լու համար Տաճկաց բոլոր զօրութիւնը կը շարժէր:— Ազգութեանց
« նկատմամբ ազատամիտն Անգլիոյ դեռ երեկուան արտաքին գործոց
« պաշտօնեայն Լորտ Դէրպի, անցեալ օր յայտնի կը խոստովանէր
« թէ՝ «Անգլիա քառասուն տարի ամէն ջանք ի գործ դնելով և չի
« կարենալով Յոնիական կղզեաց բնակիչքը անգլիացնել, և յուսա-
« հատ ներգործելու Յունաց տոկուն յամառութեան դէմ և յաղ-
« թելու, վերջապէս պարտաւորուեր էր նոյն կղզիները Յունաց տէրու-
« թեան շնորհել, և թէ նոյնը պիտի համդիպէր Կիպրոսի նկատ-
« մամբ, վասն զի Յոյն տարրը շատ յամառ է՝ շատ տոկուն է իւր
« ազգութեան՝ իւր լեզուին՝ իւր կրօնին մէջ:» Մի՞թէ այս խօսքերը
« բաւական չե՞ն յայտնելու թէ երեսանց է Անգլիոյ ներողամտութիւնը
« և ազատախոհութիւնը, վասն զի նա որ հին ազգաց անշունչ
« և կիսաշունչ յիշատակները կը հանէ և պալատներու մէջ կը բնա-
« կեցնէ զորս Միւզէում կանուանեն այդ քաղաքակիրթ ազինք,
« նա ինքն որ մեռեալ լեզուներուն անյիշատակ պատմութեանը յա-
« րութիւն և կեանք կը շնորհէ, և քաղաքականութեան բարձր աս-
« տիճանին վրայ բազմեալ գոռոզութեամբ ցոյց կուտայ աշխարհիս
« Եգիպտոսի՝ Ասորեստանի՝ Յունաստանի հնութիւնքը կոթողներ՝ ար-
« ձաններ և մատենադարաններ, և նա որ բարբարոս՝ վայրենի՝ վան-
« տալ կամ յիմար կը համարի հնութեան մնացորդ սափոր մը փշ-
« րողը, տեսէք ինչ խղճմտանք չունի այդ ազնուական Յոյն ազգին
« զաւակները օտարացնելու համար բնիկ հայրենեաց գրկէն և չի մտա-

« ծեր թէ՝ այդ վատ միջոցները որ հին և մեծ ազգի մը Թագաւոր-
« ները կանհետացնեն ոճիր մ՚ են և աւելի քան զինուորական մար-
« դասպանութիւն: Արաբը՝ Բուլղարը՝ Թաթարը՝ Թուրքը երբ ապառա-
« պուր ընել կը ջանային այդ հելլէն ազգին պաշտօնները, շատ նուազ
« յանցաւոր էին, վասն զի այդ բարբարոսներ նոցա ոչ լեզուին՝ ոչ
« պատմութեան՝ ոչ արուեստից՝ ոչ գրականութեան ծանօթ չէին.
« մինչ ընդհակառակն՝ Անգլիացին գիտութեամբ կը ջանայ ոչնչացնել
« շահու հրապոյրներով կրօնական նուրբ իմաստակութեամբ Հոմերոսի
« Պղատոնի և Աղեքսանդրի կուսակայ փշրանքները: Ի՞նչ , փոխանի
« ջախջախս արժանի մը Թագաւորդ՝ Ալեքսէսի կեղակարծ նկար մը՝ Ագա-
« մեմնոնի կարծեցեալ պատկն ու գաւազանը այդ Անգլիացի ազգին հա-
« մակրութիւնն ունին պահպանութեան, իսկ փոխանի, բուն Աղա-
« զոնի նման որդին՝ Ալեքսէսի հարազատ զաւակը՝ Ագամեմնոնի ինքն
« իսկ թոռը լաւ են կորսուելու համար Անգլիական Ովկիանոսին մէջ ,
« այդ ահա անկարելի է հասկնալ , յարգել անունը Թէմիստոկլէսի՝
« ոչնչացնել Փառաքլեսի յիշատակը՝ այնպիսի քաղաքականութիւն մ՚ է,
« որու չենք ուզեր - եթէ կարենանք իսկ - նոյնք հասցնել:»

Այդ երկու նկատողութիւնք ալ մերը չեն այլ քաղուած մը զանազան ձայներու, որ այս մեծապօր ինքնակալութեանց դէմ կը մրմնջեն. և մեզ համար աւելորդ ծառայութիւնք են, վասն զի լաւ համոզուած ենք որ անցեալ դարու՝ անցեալ տարուան՝ անցեալ օրուան համոզմունք ու քաղաքականութիւնք այսօր փոխուած են ժամանակին ոգւոյն շնորհիւ:

Ինչ յանցանք որ ունենայ Անգլիա իր պատմութեան մէջ՝ գործ կամ գիտաւորութիւն, ամենքն ալ ներեալ են իրեն. վասն զի ինքն առաջին անգամ մարդասիրական ձայն ձգեց աշխարհիս վրայ և գործեց գերեաց վաճառը արգիլելու համար:

Ինչ որ ունենայ Ռուսիա իր պատմութեան մէջ , ամենքն ալ քաւեալ են իրեն, վասն զի ինչ որ ազատն Ամերիկա ամբաւ արեան հեղեղներով կրցաւ ընել 4 միլիոն սև գերեաց ազատութիւն, նա հրովարտակաւ մը միայն 42 միլիոն ստրկաց շնորհեց ազատութիւն:

Յարգենք՝ ուրեմն ուր որ գտնուած ենք պետութեան օրէնքները, համոզուինք թէ նոցա խստութիւնքը՝ եթէ կան՝ պէտք է ժամանակին ոգւոյն առջև թուլնան, յիշենք թէ Ռուս ազգութիւնն դեռ նոր Ֆինլանտիոյ դքսութեան գրականական օրէնքները քաղցրացնել առաջարկեց երկրին ծերակուտին:

Կազմենք ամէն տեղ օրինաւոր ընկերութիւններ՝ որոնց գլխաւորք իրաւագէտք ըլլան, ուր որ արքայական հրովարտակաց և օրինաց դէմ զանցառութիւնք հանդիպին պաշտօնակալաց կողմանէ դատաստանի զանոնք հրաւիրելու և պէտք եղած ատեաններու և դատաւորներու զանոնք մատնելու համար:

Կազմենք ընկերութիւններ որոնց նպատակը ըլլի՝ այն երկիրներու մէջ ուր օրէնքը զօրութիւն չունի, կառավարութեան տկարութեան համար, և աւազակներ՝ Թափառական հրոսակներ՝ վրանաբնակ վայրենի ժողովուրդներ ամէն հարստահարութիւն իրաւունք կը համարին հայուն դէմ, որովհետև նա քրիստոնեայ է և խաղաղ բնաւորութիւն ունի, զինուինք և զինենք մեր ազգայինքը վանելու համար այդ աւազակաց բռնութիւնքը բռնութեամբ:

Ընդհանուր սովորութիւն ընենք հայուն ուր և որ երկիր որ գտնուի, օգնել ըստ կարի նիւթական և բարոյական միջոցներով իւր ազգայնոյն, ծուլութիւնը և մոլութիւնը վարելով և հեռացնելով, աշխատող Թշուառին և ինկածին նպաստելով:

Հայ եկեղեցականք ազգային զօրութիւն մը համարուելնուն համար պարտ սեպենք նոցա ընտրութեան հսկելու և ամէն օրինաւոր ջանք ի գործ դնենք անարժանները հեռացնելու համար յեկեղեցւոյ:

Ազգային դաստիարակութեան և հրահանգաց կարևորութիւնը ինչչափ ալ ճանչցուած և ընդունուած ըլլի և ամէն հայու համոզումն դարձած, միշտ բաւական չի համարենք և օգնենք այն ամէն ընկերութեանց և դպրոցաց մանաւանդ նոցա, որ հայրենի երկրին մէջ հարստահարութեամբ ճնշեալ դարերէ ի վեր չունին ո՛չ կարողութիւն և ո՛չ միջոց պէտք եղածն ընելու, ուրեմն օգնենք և հետևինք այն Արարատեան Վասպուրականի գործօն ընկերութեան, և այդ Դպրոցասիրաց Տարօնի ընկերութեան:

Հիմնենք եթէ կարելի է այդ Իսրայէլեան ուխտին նման ընկերութիւն մը, հայկական ուխտ կամ դաշնակցութիւն անուամբ, որ ամէն երկրի հայը միանալով միակամ և միաբան՝ աշխատի ազգը իւր ինկած վիճակէն հանելու: Որ ձեռնտու ըլլի Պօլսոյ պատրիարքարանի՝ մեծամեծ տէրութեանց ձեռնտուութիւնը դիւրացնելով:

Ի վերջ բանիս հաւատանք և համոզուինք այս դարուս երևելի մատենագրաց մէկուն հետ թէ՝ «Քանի որ սիրտ մը միայն կայ որ ազգութեան համար կը բաբախէ՝ այդ ազգը դեռ չէ մեռած:»

Իսկ նոցա, որ մեզի ըսեն թէ այդ երկու ահագին Ռուսական և

Անպլիական ինքնակալութեանց մէջ կեցած հայ ազգը միթէ՞ իբրև ցորեն չպիտի աղի և արորի, կը պատասխանենք։

Դիտող աչքեր տեսած են, մենք ալ աւերակաց մէջ հանդիպած ենք և տեսած՝ ինկած երկու մեծ՝ ահագին քարէ սիւներուն մէջէն դուրս բուսած թզենի. տկար և կակուղ բոյսը այդ երկու սոսկալի ծանրութեանց մէջ իրեն ճամբայ և կեանք էր ճարել. բնութեան ընդարձակութեան մէջ կեանք կայ ամենուն համար...

ԾԵՐԵՆՑ

20 դեկտ. 1878.

ՀԱՌԻՃԵԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ)

«Մշակ» շաբաթաթերթի անցեալ տարուայ № 185 ի մէջ մեր նուիրատուութեան բացադրութիւններում դրել էինք հետեւեալ ծանօթութիւնները Հառիճոյ վանուց հոգաբարձութեան և նորա գալող սեպտեմբերից բացուելիք ժառանգաւորաց ուսումնարանի մասին։

—«Ցան. Պարտք է այստեղ հրապարակաւ յիշել որ այս ընկերութեան իմա հոգաբարձութեան) ժապաւինեալ մատեանները քննելով, ընկերութեան բոլոր արձանագրութեանց միտ դարձնելով հաւատի եղանք. նախ որ ընկերութիւնը այս րոպէիս ունի մօտ 12 հազար ռուբլի պատրաստի դրամագլուխ (մեծ մասը տոկոսաբեր արժէթղթերով)—բացի 36 տարվայ ընթացքում եղած մեծամեծ ծախսերը վանուց վերանորոգութեան և պայծառութեան համար, յարմարաւոր մի մեծ ուսումնարանի շինութեան և այլ զանազան շինութեանց համար։

«Երկրորդ. որ ընկերութիւնը նկատելով դժուարութիւնք թոչակատու գիւղացի աշակերտաց կողմից անընդհատարար ուսումն շարունակելու, այժմ ըստ բարեհաճութեան հոգևոր իշխանութեան ծրագիր է կազմում ուսումնարանը ժառանգաւորաց հոգևոր դպրոցի վերափոխելու և 25 դիշերօթիկ ձրիավարժ աշակերտներ պահպանելու Շիրակայ գաւառի գիւղերից։

«Վերը յիշուած մեծ դրամագլուխը փոքր ինչ աւելանալով յատկապէս պիտի ծառայէ այդ դպրոցի իսկական և վերջնական նշանակութեանը, այն է՝ մեր գաւառի գիւղերում նոյն էսկ գիւղացիներից աւելի արժանաւոր քահանաներ և գիւղական վարժապետներ պատրաստելու. (յետոյ յիշւումէ մեր նուիրատուութեան գումարը)։

Մինը մեզանից պատիւ անձին համարելով մասնակցել գործոց այդպիսի ընկերութեան ինչպէս Հառիճեան հոգաբարձական հաստատեալ ընկերութիւնն է, որ չնայելով զանազան դրսէ ի դուրս միտումների գործը խանգարելու կամ պախարակելու, իր տոկուն երկարամեայ գործունէութեամբ և արդիւնաբերութեամբ մեր հայրենեաց մի աղքատիկ անկիւնում, —համարեա առաջին օրինակն է։...»

Այդ միջոցում և ապուեցաւ մեր լրագիրներում ընկերութեան հրաւէրը դէպի ամենայն ազգայինները օժանդակութեան համար։

«Մեղու Հայաստանին» իր անցեալ տարուայ № 14ի մէջ այդ հրաւէրի առթով իրաւացի պահանջ էր յայտնել, որ տպագրուին ընկերութեան հաշիւները. «Որովհետև հաշիւների պարզութիւնը նպաստումէ նուիրատուութեանց առատութեանը։» Մենք լիակատար համակիր եղած ենք յիշեալ լրագրի այդ արդար պահանջին և ինքներս էլ անդամ գրուած ենք և միւս նուիրատուները արած ենք պայման դնելով հաշիւների հրատարակութիւնը և ընկերութեան գործունէութեան ընդարձակելը։ Այժմ հաստատ վճռուած է Հառիճոյ վանուց հոգաբարձութիւնից մի տեսակ հրատարակել ընկերութեան գործունէութեան մասին, ինչպէս որ այդպիսի մի տեսակ լոյս տեսած է բաւականին մեծ դիրքով սորանից 12-14 տարի առաջ։

Այդպիսի ընդարձակ հաշուետուութիւնը ոչ ինչ դժուարութիւն չունի, որովհետև մեզ հաստատ յայտնի է թէ ընկերութիւնը տարէց տարի կանոնաւոր կերպիւ հաշիւ տուած է մեր օրբաղնադոյն Սինոդին, իբրև իւր անմիջական իշխանութեան, որպէս այդ պէտք է անեն և միւս մեր հոգաբարձութիւնները այլ և այլ ուսումնարանների և եկեղեցական կալքերի վերաբերութեամբ։ Կմնայ միայն տեսակի համար պատմական մասը լաւ մշակել։ Դորա համար մի քանի ամիս բաւական է, որ կարելի լինի գործը ամբողջութեամբ հրատարակել նախ «Արարատ» կամ «Փորձ» ամսագրների մէջ և ապա առանձին տեսակներով։ Որպէս զի այնուհետև ամեն նոր անդամ և նուիրատու ընկերութեան անդորրագրի հետ ստանայ անհրաժեշտ և այդ տեղեկագիրը։

Այդպիսի ընդարձակ հաշուետուութեան օգուտները պարզ են նոյն իսկ Հառիճեան հոգաբարձութեան համար, որովհետև այդ պիտի նպաստէ անշուշտ իւրեանց գործունէութեան ընդարձակվելուն. ինչպէս երևում է, «Մեղուն» ևս իւր յիշեալ առաջնորդող յօդուածովն կամենում է այդ իսկ նպատակի համար հաշիւները տպած տեսնել։

Երբ Հառիճեան ընկերութիւնը, իբրև «ընկերութիւն», անորոշ դրութեան մէջ էր՝ մեծապատիւ խմբագրին մեզանից առաւել ծանօթ պիտի լինին այդ ժամանակները, այդպիսի (թէև համեստ և բարեմիտ) ընկերութեանց մասին որքան սակաւ խօսուէր այնքան աւելի օգուտ էր, այնքան աւելի ապահոված էր նոցա գոյութիւնը.....

Իսկ այժմ, երբ յընթացս վերջին տարիների Հառիճեան ընկերութիւնը ընդունուելով հոգևոր իշխանութիւնից ոչ իբրև «ընկերութիւն», այլ՝ իբրև հոգաբարձութիւն Հառիճոյ վանուց և դպրոցի, դատանվումէ այժմ Հոգևոր իշխանութեան լիակատար հովանաւորութեան և իրաւասութեան տակ, առաջուայ ընկերութեան հիմնադիր անդամներին՝ նոցա մատուցած անուրանալի մեծ ծառայութեանց պատճառով՝ վանքը պայծառացնելում, մեծամեծ շինուածքներ աւելացնելում և այլն, հոգևոր իշխանութիւնը ընդունում է իբրև զործավար հոգաբարձուք մինչև նրանց մահը. այնուհետև հիմնադիր անդամ այժմէն գրուողները իրաւունք ունին նոր հոգաբարձուներ ընտրելու իրանց միջից.... «ընկերութիւն» բառը այժմ դարձ է ածվում մ'այն ըստ հին սովորութեան... սրեմն այս նորա-

հաստատ հանգամանքների մէջ Հառիճոյ հոգաբարձութիւնը որքան իւր մասին աւելի ճիշտ տեղեկութիւններ տարածէ, այնքան աւելի օգուտ է։

Միջանկեալ կերպով միայն այստեղ յիշենք «Մեղուի» այդ առաջնորդող յօդուածի մի շատ սխալ կէտը։ Նա ասում է «կարծես Հառիճոյ վանական դպրոցը իրաւունք է ստացել քահանայական վկայական տալու իմաստ հայ ժողովրդոց իրաւանց՝ վկայելու իւր քահանայի արժանաւորութեանցն.... Ինչպէս իմացել ենք (կարծեմ խմբագրութիւնք միայն հաստատ դիտցած բանի վերայ առաջնորդող յօդուած են դրում...) «այդ դպրոցից վկայական ստացողն այլ ևս հարկաւորութիւն չունի ժողովրդական ստորադրութեանը քահանայանալու համար, այլ անմիջապէս հոգևոր իշխանութիւնից ձեռնադրվում է։ Այսպիսի իրաւունք հասկանալի է (!) Ճեմարանի, Ներսիսեան դպրոցի և մի քանի այլ հոգևոր դպրոցների (միթէ), իսկ ոչ Հառիճոյ դպրոցի, որ երբէք մի կանոնաւոր (?) և նշանաւոր ընթացք ունեցած չէ։»

Պարտք ենք համարում հասկացնել «Մեղուի» պատուելի խմբագրին, որ մեր եկեղեցական կանոնական իրաւամբ ոչ թէ Հառիճոյ վանքի, մի Ներսիսեան դպրոցի, մի Ճեմարանի վկայականը չպէտք է ամենեին խանդարէ հայ ժողովրդին իւր քահանայացուի արժանաւորութեան կամ անարժանութեան համար իւր ձայնը (վետօն) տալու, անհրաժեշտ և անխափանելի համարելով իւր այդ իրաւունքը, այլ՝ մեր սպասդայ նոյն իսկ ամենաբարձր հոգևոր ճեմարանների և համալսարանների վկայականներն ևս.....

Բայց մի քահանայացու, մինչև ժողովրդի ընտրութեան դիմելը, անշուշտ պէտք է ունենայ իւր ուսման ընթացքի համար վկայական՝ քահանայացու պատրաստող որև է բարձր կամ միջին ուսումնարանից։

Հառիճեան վանուց Հոգաբարձութիւնը իւր դպրոցի շրջանը որոշելու և բարձրացնելու համար իրաւունք է ստացել միմիայն քահանայացու պատրաստելու և ոչ քահանայ ձեռնադրելու և այժմ էլ այդ իւր ձգտումը գործով հաստատումէ նշանակելով իւր դրամագլուխը ժառանգաւորաց դպրոցի բացման։ (Այդ դրամագլուխը, ասենք փակագծերի մէջ, մինչև 1879 թուի սեպտեմբերը կարող է 15-16 հազար ռուբլու հասնել, եթէ գործին խանդարեն նա և վայրաբան անձինք։)

Խնդրեմ ասացէք, միթէ հոգաբարձութիւնը մեղաւոր է, եթէ մի որև է եպիսկոպոս իւր տգիտութեամբ և անյագ չհասիրութեամբ՝ որև է հոգևոր (նոյն իսկ քահայանացու պատրաստող) դպրոցից վկայական ունեցողին առանց ժողովրդի վկայութեան ուղղակի քահանայ է ձեռնադրում...

Այս հարևանցի նկատողութիւնը անելուց յետոյ դառնանք հաշուետուութեան խնդրին։

«Մեղու Հայաստանին» անցեալ տարուայ իւր 45 №-ի մէջ տպել է և Պ. Հուր-Հերի թղթակցութիւնը։ Սորա գլխաւոր միտքը այն է թէ. 1) վանական դպրոցները, ինչպէս օրինակ՝ Էջմիածնի ճեմարանն է, ինչպէս Հառիճեան ժառանգաւորացը կլինի (իբրև երկրորդական վանական դպրոց)

ինչպէս, կաւելցնենք Արմաշունն է, Երուսաղէմինն է, ինչպէս Խրիմեան Հայրիկինն էր Վարագայ վանուց մէջ և այլն, երբէք նշանակութիւն չունին և չեն կարող ունենալ մեզ համար. ուստի և աւելորդ է Հառիճեան ուսումնարանի համար դրամ նուիրելը ազգային կողմից. այլ՝ Հառիճոյ ուսումնարանի դրամագլուխն էլ պէտք է միացնել Ալեքսանդրապօլի ուսումնարանին և այս վերջինը միայն յառաջացնել 2.) Հառիճեան հոգաբարձութիւնը մեր յիշած 12 հազար ռուբլի դրամագլխից ա ւ ե լ ի պէտք է ունենայ, թող հաշիւ տայ։»

Ընթերցողը տեսնում է, որ պ. Հուր-Հէրի առաջարկութիւնը իւր գըլխաւոր մասովը հակառակ է «Մեղուի» խմբագրութեան կարծեաց. այսինքն՝ «Մեղուի» 45 համարը ջրում է իւր 14 համարի առաջնորդող յօդուածը, ասելով թէ՝ բոլորովին աւելորդ է հոգաբարձութեան գործունէութիւնը և Հառիճոյ դպրոցը ընդարձակելը այլ պէտք է բոլորովին խափանել...

Այս հակառութիւնը ստիպում է մեզ պատուելի խմբագրութեան դարձնել մի ոչ վնասակար նկատողութիւն անելու հարևանցի կերպով։

Մենք միշտ համակրող ենք եղած «Մեղու Հայաստանի» լրագրի գոյութեան մեր ժողովրդի մէջ, իբրև պ ա հ պ ա ն ո ղ ա կ ա ն ուղղութեան օրգանի, գործակցած ենք նորան դեռ մեր ուսանողութեան ժամանակ և արտասահմանից։ Իրաւի, մի՞թէ Ռուսաստանի մեր հայ հասարակութիւնը դէթ երկու ամենագլխաւոր (յառաջադիմական և պահպանողական) ուղղութեանց համար օրական կամ շաբաթական թերթեր չպիտի ունենայ։

Սակայն ցաւով սրտի քանիցս արդէն նկատած ենք, որ «Մեղուի» գլխաւոր ղեկավարութիւնը՝ չկարողանալով իւրեան աւելացած բաւականին զօրաւոր ոյժերից օգուտ քաղել, չկարողանալով պաշտպանել սոցա եռանդը և սէրը դէպի իւրեան օրգանը, չկարողացաւ մինչ ցայժմ էլ ժողովրդին դրաւող հրատարակութիւն դառնալ, չնայելով պահպանողականների բազմութեան մեր հասարակութեան մէջ...

Պատճառը.

Պատճառը ահա այդ անվերջ հակասութիւններն են։

«Մեղուի» ղեկավարութիւնը երբէք չէ աշխատած իւր նիւթը իւր գլխաւոր ուղղութեան և հիմնաւոր կարծեաց հետ համաձայնեցնել. այսօր հարկաւոր է եղել համակրութեամբ կամ հակակրութեամբ մի որև է անձին պաշտպանել կամ վիրաւորել,—«Մեղուն» առանց կապը հասկանալու վեր է առնում և տպում մի յօդուած, որ նոյնիսկ «Մեղուի» բոլոր հիմքերը քանդում է..... Նա տպում է ամեն տեսակ թղթակցութիւններ, ամեն խակ ու ծակ գլխից դուրս եկած վայրաբանութիւններ, ամենաանշանաւոր գաւառական գործերի վերաբերութեամբ, առանց աւելացնելու մի նկատողութիւն իւր կողմից, և արդարացնում է իւրեան թէ՝ «թող հակառակը տպեն». էլ չի մտածում թէ՝ նա այդ կերպ մեր գաւառական քաղաքների մէջ՝ զանազան անօգուտ և վնասակար երկպառակութիւնների գլխաւոր սերմնացանն է դառած....

«Մեղուն» նոյն իսկ պահպանողական ուղղութեան նշանակութիւնը և

հիմքերը հասկանալում տատանել է և մինչ ցʼայսօր էլ տատանում է։ Մի բանի մէջ, իրաւ է, նա հաստատ է մնացել և թղթակցութեանց մէջ ներդաշնակութիւն պահել, այդ՝ մի բարձրաստիճան կղերականին և նորա մի երկու արբանեակներին յաջ և յահեակ պաշտպանելում, որով և նոյն իսկ այդ անձանց նա բաւականին վնասել է....։ Ե՛թէ մի որև է միտք, գործ՝ հասարակական նշանաւոր իրաւանց պաշտպանութեան համար կարող է ամենահեռաւոր կերպով փոքր ինչ դիպչել այդ փոքրիկ կղերական խմբիկին,—«Մեղուն» պատրաստ է կաթողիկոս, հոգևոր իշխանութեան իրաւասութիւն, ուսումնարանաց մեծամեծ արդիւնք, առողջ դատողութիւն, բոլորը զոհ բերել.... և տալումէ՝ «Հնութիւն և Նորութիւն» «Ըմբոստութեան փորձեր», «Ջերարան-մերարան» . . . . ինչպէս այժմ և Հուր—Հերի թղթակցութիւնը։

Այսպիսի մի տարօրինակ և անմեկնելի ընթացքի պատճառը, մեզ յայտնի չէ։

—Երևի, յափշտակեալ մի կուրութիւն կամ թակարդեալ մի դրութիւն....

Թողնենք «Մեղուին» դառնանք Հուր—Հերին. Պ. Հուր-Հեր, մարդ որ գրիչ ձեռն է առնում, անշուշտ նպատակ պիտի ունենայ մի հասարակական արդիւնք յառաջացնելու, մի իրագործելի եղելութիւն կատարելագործելու։ Բայց ոչ թէ գրել այն նպատակով միայն, որ ցոյց տայ թէ՝ միևնոյն բանի համար կարելի է զանազան տեսակ առաջարկութիւններ և կարծիքներ յայտնել, թէ զուր անիրագործելի, գործ խանգարող դատարկաբանութիւններ այդ լինէին...

Ցիրաւի, եթէ բոլոր հայ ազգը բաղկացած լինէր ձեզպէս ծ ա յ ր ա յ ե ղ ա զ ա տ ա մ ի տ ն ե ր ի ց (որոնց շարքում ձեր յօդուածը տալուց յետոյ անշուշտ և «Մեղուի» խմբագիրն է), գուցէ այն ժամանակ վանքերի մօտ դպրոցներ մեզանում չհիմնուէին այժմ։ Բայց երբ դոքա կան և բաւականին դրամագլուխներ ունին. երբ թէ դուք, թէ ես և թէ մեզնից առաւել նոյն իսկ Մեղուի խմբագիրը պարզ գիտենք և ճանաչում ենք թէ՝ ոչ իմ և ոչ ձեր և ոչ այլ հազարաւորների խօսքով Էջմիածնայ սինօդը՝ կամ մեր վեհափառ Կաթողիկոսը չպէտք է փակէ Հառիճեան դպրոցը, զրկելով գիւղականներին յօգուտ քաղաքացոց. երբ մեր հայ ժողովուրդը, չնայելով ձեզ պէս ազատամիտների գրիչ չարժեցնելուն, դեռ երկար ժամանակներ այդ դպրոցներին պիտի օժանդակէ և պաշտպանէ,—դատարկապորտութիւն չէ՞ արդեօք Ձեր յարուցած հարցը, թէ՝ Հառիճոյ ուսումնարանը փակենք (Հառիճը հիմնայատակ անենք)։ Այդպիսի հանգամանքների մէջ, եթէ մենք սիրում ենք գործ, հասարակական արդիւնք, ճշմարիտ (և ոչ կեղծեալ կամ չհասկացած) յառաջադիմութիւն, ինչ պէտք է անենք—պէտք է աշխատենք այդ դպրոցները, որոնց փակել չենք կարող, բարեկարգել, նոցա դրամագլուխը բուն ժողովրդի և մեր գաւառի գիւղականաց օգտին ծա-

ռայեցնել. ժառանգաւորաց ուսումնարանի համար նպատակայարմար ծրագիր կազմել և արդիւնաբեր այժեր նորա համար գտնել։ Եթէ կամենում ենք այդ ձգտումները հաստատապէս իրագործել տալ, պէտք է ինքներս հիմնադիր անդամոց շարքը գրուենք, գէթ տարեկան անդամ գրուինք, որ ձայն ունենանք հոգաբարձութեան գործառնութեանց մէջ։

Հիմայ հասկացանք, պ. Հուր-Հեր, թէ ինչու ես եղբօրս հետ Հառիճեան հոգաբարձութեան նպաստամատոյց ուղեցանք գտնուիլ. Դուք էլ որ իրական և ոչ երևակայական յառաջադիմութիւն սիրէիք, դուք էլ վաղուց կարող էիք մասնակից լինել ընկերութեան գործերին և ինձ մի զարմանալի ողիմպիական բարձրութիւնից ձեր հարցերը չէիք առաջարկիլ։

Բայց այդ նահատակութիւնն էլ յանձն կառնեմ ձեր հարցերին պատասխանելու, ի պատիւ և ի սէր ոչ երևակայական այլ՝ իրական մեր հասարակաց շահերի։

Դուք ասում էք։

«Նախ՝ մեզ յայտնի չէ ում մօտ է գտանվում այդ դրամագլուխը (իմ յիշած 12000 ռ։)

Պատասխան. Այս հարցի մանրամասն պատասխանը կըկարդաք ընդարձակ հաշուետվութեան մէջ. առ այժմ կասենք որ դրամագլուխը ամենահաւատարիմ ձեռքերում կգտնուի և ամենայն խնամօք կը շահուի որ և յայտնի է հոգևոր իշխանութեան։ Ուրեմն համբերութիւն...

«Երկրորդ, Արդեօք ինչ ապահովութիւն կայ այդ գումարին, եթէ վերջանայ ընկերութիւնը (հոգաբարձութիւնը)։

2 Պատասխան. Այն ապահովութիւնը, ինչ որ մեր բոլոր եկեղեցական և ուսումնարանական դրամոց համար։ Հառիճեան հոգաբարձութիւնը պատասխանատու է բարձրագոյն հոգևոր իշխանութեան առաջ ինչպէս ամէն մեր հոգաբարձութիւնները։ Երբ այդ հոգաբարձութիւնը միաումներ յայտնէ, ինքնագլուխ վնասակար կարգադրութիւններ անելու, ուսումնարանի այդ դրամագլխի և այլ կայից վերաբերութեամբ, իսկոյն հոգևոր իշխանութիւնը վրայ է հասնում, իւր վնասները պահանջում և դրամագլուխը ուրիշ հոգաբարձութեան յանձնում։ Ուրեմն՝ յիշեալ դրամագլուխը Հառիճեան հոգաբարձութեան չի պատկանում, այլ հոգևոր իշխանութեան, որ և հսկում է այդ դրամագլխի հաստատ պաշտպանութեան համար։ Եթէ առաջուան հիմնադիր անդամները հեռանան կամ մեռանին, այն ժամանակ հոգևոր իշխանութիւնը նոր հիմնադիր անդամ գրուած անձերից (դորա համար 300 ռուբլի նուիրողներ այժմ բաւականին կան) նոր դրծակատար հոգաբարձութիւն ընտրել կտայ անդամոց միջից։

«Երրորդ, ում է հաշիւ ներկայացրել կամ ներկայացնում այդ ընկերութիւնը և պատճառն ինչ է, որ հրապարակ չի դուրս գալիս դորա հաշուետվութիւնը։»

Պատ. Մենք արդէն վերը յիշեցինք, որ հաշիւ ներկայացուած է միշտ սրբազնագոյն սինոդին, իբրև անմիջական իշխանութեան, և մի ժամանակ առանձին տետրակով ամբողջ հասարակութեան։ Այդ հաշուետուութիւնքը չեն տպագրուած, ինչպէս որ չեն տպագրվում ուրիշ շատ հոգաբարձութեանց հաշուետուութիւններ, այլ միայն սինոդին ուղարկվում։ Ի հարկէ, լաւ կլինէր, երբ պարբերական թերթերում ևս հրատարակուէին այդ հաշիւները, բայց այդ կարող էր անել սինոդն ևս։

«Ջորրորդ՝ մենք հաւատարիմ աղբիւրից լսած ենք և մասնաւորապէս էլ գիտենք (եթէ մասնաւորապէս գիտէք, էլ հաւատարիմ աղբիւրն ինչի՞ էք յիշում, միթէ դուք ձեզ չէք հաւատում.....) որ ընկերութիւնը (հոգաբարձութիւնը) փոխանակ այդ գումարի պիտի ունենար շատ և շատ աւելի մեծ դրամագլուխ։»

Պատ. Զարմանում եմ, որ դուք այդ մասնաւորապէս գիտէք և ահա քանի-քանի տարիներէ ի վեր դուք և ձեզապիսիք «Մեղուն» ձեզ օրդանէք չինել, միմիայն բամբասանք տարածելու, փոխանակ ձեր այդ մասնաւորապէս գիտցածը հաշուի կարգով ուղղակի տպելու։ Ի սէր Աստուծոյ, ցոյց տուէք ճիշտ թուանշաններով, որքան աւելի պիտի ունենար հոգաբարձութիւնը և որ աղբիւրներից։ Ցոյց տուէք մեզ մեր իրաւունքը, ինչպէս այդ աշխատեցինք ցոյց տալ Ալէքսանդրապոլու կրպակաց գործի վերաբերութեամբ, ուր թէ թուանշանները, թէ ուսումնարանների ամբողջ գրկանքը, թէ հոգևոր իշխանութեան իրաւասութիւնը և թէ մարմնաւոր իշխանութեան օրէնքները լիակատար պարզ են և թէ ինչ կերպ պէտք է դուրս բերել դրամագլուխը.... Ի՞նչպէս դուք համբերեցիք այսքան տարի ձեր գիտցածը ճշգրիտ փաստերով չյայտնելու, որ թէ հոգևոր իշխանութիւնը և թէ ուսումնարանների իրաւանց պաշտպան անձինք կարողանային պահանջել ումից որ հարկն էր ընկերութեան դրամագլխի պակասորդը.... Գրեցէք շուտով—դորանով ինձ ևս ուրիշների հետ պարտաւորած կլինէք։ որովհետև ինձ համար այդպիսի հարցերի մէջ միմիայն մի սկզբունք կայ թէ՝ ուսումնարանի դրամագլուխը չը պէտք է կորչի անհոգութեամբ կամ չահասիրութեամբ մասնաւորանձինքների, թէ դուշ հոգաբարձունների, թէ գուշ Տէր-Յովսէփի, Սուքիասի, Կիրակոսի... Այդպիսի հարցերի մէջ գրիչ չարժեցնողը և դատ բացանողը չպիտի մի բոպէ անդամ մտածէ թէ՝ այդ պահանջը սորա կամ նորա խաթրին կամ պատուին կդիպչի, չգիտեմ, «այս ինչ՝ այնինչ՝ մասնաւոր անձինք կվնասին»... Գրեցէք, պարոն, գրեցէք շուտով, միայն՝ ձեր գրելիքը բամբասանք և զանազան ենթադրութիւնք կեղծ սատրադրութիւններով չլինին, որք միայն անօգուտ գլխացաւանք են և եղած գործը ոչ յառաջ տանող այլ խանգարող... գրեցէք այն միայն, ինչ որ հաստատ պահանջելիք է օրինական հիմանց վերայ։

Այս են առ այժմ ձեր հարցերի պատասխանները, աւելի ընդարձակը

կրկարդաք Հառիճեան հոգաբարձութեան ընդարձակ հաշուետուութեան մէջ երբ նա լոյս տեսնի։

Դուք աւելացնումէք ձեր ծանօթութեան վերջում, եթէ ձեր հարցերին պատասխան չտրուի, Հառիճեան ընկերութիւնը (հոգաբարձութիւնը) կարող է կորցնել հասարակութեան (?) համակրութիւնը և վստահութիւնը

—Սխալումէք, ս. Հուր-Հեր։ Դուք կարծում էք թէ՝ մի երկու անդամ թերթն աշխատութիւն յանձն առնելով փոքր ինչ դրիչ շարժեցնելու, դուք կարողէք ժողովրդին որ կողմ ուզենաք՝ այն կողմ դարձնել,—սխալումէք չարաչար։ Ժողովրդի բանականութիւնը ամենից շատ հասկանումէ, որտեղ գործ և արդիւնաբերութիւն հասարակական յառաջադիմութեան մէջ կայ և կլինի։ Ահա տեսէք փաստերը, տեսէք որքան սակաւ են ազդել ձեր չատերիդ այս քանի տարուայ անվերջ բամբասանքը և քքսութիւնքը, դեռ մինչև ձեր ողիմպիական հարցերին պատասխան տալներս....

Ցրնթացս այս վերջին տարիների, երբ յայտնի եղաւ ժառանգաւորաց ուսումնարան հիմնվելու մտադրութիւն, յօգուտ Հառիճեան վանուց նուիրուած է։

Բացի մեր երկու եղբարց 400 ռուբլին.

Նախ մեծապատիւ Մահտեսի Սիմէօն աղան Բարսամեանց իւր եղբօր Ստեփաննոսի հարսանեաց հանդէսը փառաւորելու համար՝ 300 ռուբլի,

Երկրորդ՝ Պ. Սահակ Մահտեսի Համբարձումեան Մովսեսեանց իւր եղբարց և արենակցայ հաճութեամբ 300 ռուբլի,

Երրորդ, նուիրեցին ի հաշիւ որոշելի որդեգրաց Հառիճեան ժառանգաւորաց դպրոցի Պ. Պ. Դաւիթ Սարոեանց, Միքայէլ Գաբրիելեան Թորոսեանց և Աղան Սուքասեան Ջալալեանց յիսունական ռուբլի։

Անդամական նուիրատուութիւնք 25 ական ռուբլի հետեւեալ անձինք 1. Յովհաննէս Յակովբեան 2) Յովհաննէս Խարազեան 3) Մկրտիչ Գործակալեան 4.) Ատովմ Ավոյեան 5.) Ստեփաննոս Տէր Գէորգեան 6.) Ստեփաննոս Զարչօղլեան, 7.) Գէորգ Ճուղուրեան 8.) Վահան Տէր-Յովհաննիսեան, 9.) Յակովբ Տէր-Սիմոնեան 10.) Կարապետ Կոստանեան 11.) Փիլիպպոս Թորոսեան 12.) Ռուբէն Մելիք-Ադամեան 13.) Յարութիւն Ղարիբեան 14.) Աղէքսանդր Դրամբեան 15.) Թադէոս Խաչատրեան 16.) Նաղարէթ Այվազեան 17.) Սարգիս Պողոսեան 18.) Աղէքսանդր Մխիթարեան 19.) Վահան Տէր-Մարկոսեան 20.) Յակոբ Տէր-Աւետիսեան 21.) Պողոս Մալխասեան, 22.) Բարդողիմէոս Տէր-Յովհաննիսեան 23.) Խաչատուր Շաթերեան 24.) Յովհաննէս Մատնիչեան. 25.) Թադէոս Տիգրանեան 26.) Լեոն Տիգրանեան, 27.) Սալվինաղ Տիգրանեան 28.) Սարգիս Աւետիսեան 29.) Տիգրան Տիգրանեան 30.) Թորոս Զմչկեան 31.) Աբրահամ Ասլանեան 32.) Աւետիս Փափանեան, այլ ևս վասն հոգւոյ՝ 33.) Պետրոս քահանայի Կոստանեան և 34.) Երիցուհի Սարրայ Տէր-Պողոսեանց և 35.) Թադուհւոյ Ջանիբէկեան—ընդամենն մի հազար վեց հարիւր քսան և հինգ ռուբլի, մեր

նուիրատուութիւնով—երկու հազար քսան և հինգ ռուբլի. բացի այս՝ կան դեռ. կիսով չափ անդամական վարձ նուիրողներ, ուրիշ նուիրատուութիւններ թէ քաղաքացոց և թէ գիւղացոց կողմից, սակայն նոցա մասին թող հոդաբարձութիւնը իւր ամբողջ հաշուետուութեան մէջ յայտնէ, մեզ ճիշդ յայտնի չին այժմ։

Ահա այդ են. պ. Հուր-Հեր և պ. «Մեղուի» խմբագիր, մեր կեանքի իսկական փաստերը, տեսէք և գնահատեցէք։ Դուք ձեր երևակայական առաջարկութիւններով ժողովրդի բանականութիւնը չէք կարող ճնշել և մեր այժմեան կեանքի բնական հոսանքի առաջը չէք կարող առնել.—Երանի թէ «Մեղուի» խմբագիրը հասկանար իմ այս նկատողութիւնները, իբրև բարեկամի և սրտացաւի խորհրդատուութիւններ, որ այսուհետև իւր օրգանը ծառայեցնէր մեր ժողովրդի չինող դասի ձգտումներին և ոչ քանդող դասի....

Թողնենք այժմ «Մեղուին» և զանազան «Հուր ու մուրներին» դառնանք մեր հասարակութեան բանիբուն և գործասէր անձանց։

Հառիճոյ վանքը գտանվում է 20-25 վերստ հեռու մի աղքատիկ «Ղըլչախ» կոչուած գիւղում, Արագած լերանատորոտում։ Հառիճը ունի դեղեցիկ տեղադրութիւն, առողջարար օդ և զովարար ջուր։ Քաղաքացոց միակ ամարանոց, յարատև հիւանդաց առողջատեղին է։ [1]) 25-30 տարի յառաջ Հառիճոյ վանքը ներկայանում էր իբրև մի հինաւուրց աւերակ, չորս կողմը մի անապատի նման տեղ։ Այժմ Հառիճը ներկայանում է մեզ գեղեցիկ կերպով վերանորոգուած վանք, շրջապատուած բաւականին ընդարձակ և յարմարաւոր ուսումնարանի շէնքով, վանահօր և վարժապետաց համար այնքան յարմարաւոր տներով, որ մեր այժմեան վեհափառ Հայրապետը առանց իւրեան զրկանք համարելու մի երեք ամբողջ ամիս ուրախութեամբ ամարանեց այնտեղ. ուխտաւորաց համար առանձին առանձին խուցերով, փաքրիկ պարտիզով, խոհանոցներով և ախոռատեղիներով. վանքը և ուսումնարանը ունին իւրեանց պաշտպանութեան համար մշտական աղբիւր արդեանց՝ վարելատեղիք և այլն (որոնց մասին մանրամասն տեղեկութիւն կստացուի գալոց տարուայ ընթացքում մի ընդարձակ հաշուետուութիւնից)։

Հառիճոյ ուսումնարանը, թէև հոդևոր միջնակարգ ուսումնարանի աստիճանի չէ բարձրացած, բայց այնու ամենայնիւ, այդ կիսատուվանի ամէն բարեմիտ շրջակեցի, մեր գիւղական ուսումնարաններից ամենից բարձր է հանդիսացած, եղել են ժամանակներ՝ որ հայոց լեզուի, պատմութեան և դրականութեան աւանդութիւնը այդ ուսումնարանում աւելի ծաղկեալ դրութեան մէջ են եղել, քան Աղեքսանդրապոլի ուսումնարանում. (Նոյն իսկ այժմ քաղաքի հոգևոր դպրոցում հայոց լեզուն ամենաանկեալ դրու-

---

[1]) Ափսոս ճանապարհը Աղեքսանդրապոլից Հառիճ դեռ այնքան հարթուած չէ։

թեան մէջ գտայ....) Հառիճեան ուսումնարանը մեր գաւառի համար աւելի արժանաւոր քահանաներ տուած է, քան եղածները (ի հարկէ վատեր էլ պատահել են...), նոյն իսկ Աղէքսանդրապօլի դպրոցի այժմեան կրօնուսույց քահանան, որ բաւականին յարգի է քաղաքացոց մէջ իւր հմտութիւններով և բարքով. դարձեալ Հառիճեան սաներիցն է.

Սոքա ակնյայտնի փաստեր են, սոցա թագցնելը կամ ուրանալը խելագարութիւն է.

Այս ամենով ում ենք պարտական

—Հառիճոյ վանուց մի ժամանակ ընկերութեան, այժմ հոգևոր իշխանութիւնից հաստատուած հիմնաւոր հոգաբարձութեան։

Հառիճեան հոգաբարձութիւնը բացի այդ ամէն անքակտելի արդիւնքը, ցոյց է տալիս մեզ դրամագլուխ (12 հազար ռուբլի. շուտով 15 հազարի հասանելի) ժառանգաւորաց ուսումնարանը իրագործելու։

Գնահատելով այս ամէն իրական և ոչ վայրաբանական արդիւնքները մեր Վեհափառ Հայրապետը՝ գլխաւոր հիմնադիր անդամներին նշանակել է մինչ ցմահ հոգաբարձու վանքի կալքերի և ուսումնարանի վերայ, այն բոլոր իրաւունքներով և սահմանափակութիւններով, ինչ որ միւս մեր հոգաբարձութեանց համար կարգադրուած է.

Մեր գաւառի գիւղականք ամենամեծ դժուարութիւնով միայն կարող են տարին մի երկու գիւղացի տղայ քաղաքում ուսման տալ։

Մեր գիւղացիք հայոց ուսումնարաններից առաւել նոցա կհամակրեն որոնք ոչև լցէ արտօնութիւնք ունին. Հայոց ուսումնարանից մեր գիւղացին՝ այնքան բնական հասկացողութիւն ունի շրջապատող իրողութեանց, որ ուրիշ արտօնութիւն չի պահանջում բացի քահանայացու և վարժապետացու պատրաստելը։ Եւ նկատուած է, որ այդ բանին նպատակ ունեցողքն են աւելի, որ տալիս են իրանց որդոց գիւղական ուսումնարան. մեծ կարողութիւն ունեցող չինականը որ կարող է քաղաքում որդի պահել, ձգտում է աւելի իւր որդին ռուսական շկօլը տալու, ինչպէս ես ինքս ունեցած եմ ընկերներ։

1.) Ուրեմն պարզ հետևանք ասածներիս, եթէ մենք մտադիր ենք աւելի լայն կերպով մեր գիւղականաց մէջ տարածել ուսում. պէտք է հիմնենք յարմարաւոր գիւղ տեղում, գիտենք թէ՝ մի հնաւուրց յիշատակ հիանալի վանքի մօտ լինի այդ, (հաւատացնում ենք «Մեղուի» խմբագրին որ դա մի վնաս չի բերել...)—քահանայացու և վարժապետացու պատրաստելու յատուկ արտօնութեամբ։

Բայց գիւղականը սովորած իւր տնտեսական պայմաններից՝ այդպիսի առ այժմ իւր միակ համակրած հայ ուսումնարանին իւր որդին կըյանձնէ տարուայ մէջ դարձեալ միմիայն երեք ամսու չափ, ոչ աւելի....

2.) Պարզ հետևանք—ուրեմն՝ պէտք է հիմնել ժառանգաւորաց ուսումնարան, ուր գէթ 25 աշակերտ աղքատ գիւղա-

ցոց տներից, որոնք իւրեանց ոյժերի համար այնքան այդ և անդաստան չունին և ուրախութեամբ կտան իւրեանց որդոց ամբողջ տարիներով— պահեցէք, կշտացուցէք և լաւ քահանայ կամ վարժապետ պատրաստեցէք նորանցից նոյն իսկ իրանց գիւղի համար. իսկ մնացողները, որոնց թիւը կարող է շատ և շատ լինել, կյանձնեն այդ ուսումնարանը թոչակով իւրեանց յարմար ամիսները միայն։—Ահա այդ կէտերը կամի իրագործել մեր հոգևոր բարձր իշխանութիւնը Հառիճեան հոգաբարձութեան միջոցաւ, ահա այդ կէտերին կամենում են խանդարել «Մեղուն» և նորա թղթակիցը, առաջարկելով խափանել Հառիճեան դպրոցը և դրամագլուխը տալ Աղէքսանդրապոլի ուսումնարանին...

Դատաւոր եմ կոչում մեր մոռացող հայ հասարակութիւնը.....

. . . . . .

—Ինչու համար տալ այդ էլ քաղաքացոց, երբ քաղաքի ուսումնարանները դեռ այժմս մասամբ խեղճ գիւղականաց տուրքերով են կառավարվում. ինչի գիւղականաց ջերմեռանդութեան բոլոր արդիւնքը յատկապէս գիւղականաց յարմարեցրած ուսումնարանին չպիտի ծառայէ.... Ձէ որ քաղաքացիք աւելի հարուստ են և աւելի զարգացած են համարվում, չեն կարողանում իրանք իւրեանց ուսումնարանը պահպանել, ինչի դեռ ևս իրանց զրպաններում են պահում և իւրեանց անյաջ փորերին ծառայեցնում նոյն իսկ իրանց քաղաքի ուսումնարանաց արդար արդիւնք,, ինչի մի ժամանակ բաւականին ծաղկեալ դպրոց յետին դրութեան հասցրել են... և հիմայ կամենում են գիւղականներից խլել նոցա համար նուիրուած, նոցա գիւղական արդիւնքներից հաւաքած դրամագլուխը»....

Գիւղականաց այդ իրաւանց ներկայացուցիչ հոգաբարձութիւնը այս բոպէին, ոչինչ չլինի, մի կանոնաւոր և յարմարաւոր ուսումնարանի չէնք ունի, իսկ դուք, քաղաքացիքդ, ձեր որդոց կարդացնումէք մի չէնքում, որ կարելի է միայն նմանեցնել հեծելազօրի ախոռատեղեաց.... ամօթ և խայտառակութիւն։

Ի՞նչու Մեղուն և Հուր-Հերը չեն օգնում Աղէքսանդրապոլու ուսումնարանաց նորաշէն կրպակաց մեծագումար արդիւնքը հոգաբարձուներից և կրպականներից սիրով և խաղաղութեամբ չուտով ձեռք բերելու [1]) և այդ դրամով սկսեն մեր և իշխ. Թումանովի աշխատութեամբ ծրագրեալ օրինակելի ուսումնարանի չէնքը, փոխանակ Հառիճոյ ուսումնարանի դրամագլուխը յափշտակելու....

Ի՞նչու այդ մեր երևելի հրապարակախօսները կարծում են որ գիւղական վարժապետացու և քահանայացու պատրաստող դպրոց պէտք է հիմնուի Աղէքսանդրապոլում, և ոչ Արագածի հրաշալի կուրծքում։

---

[1]) Վաղ թէ ուշ այդ անշուշտ կլինի, որովհետև մեր հոգևոր իշխանութի նը անհետացած պիտի համարուի, եթէ այդ չլինի։

Գուցէ Պ. Հուր-Հերը դեռ կարծէ իւր համար թէ՝ նա մեզանից աւելի ճիշդ գաղափար (իդէալ) ունի քահանայացու և վարժապետացու պատրաստող մի դպրանոցի համար, բայց հաւաստի ենք թէ՝ «Մեղուի» պ. խմբագիրը այնքան համեստ է, որ այդ չի կարծում.....

Եթէ այդ այդպէս է՝ մենք կասենք Պ. Հուր-Հերին.—Միայն ձեզ պէս ծակ-ազատամիտները և յառաջադիմականները կարող են կարծել թէ Աղէքսանդրապոլու պէս մի հոտած փոսում, ուր հազիւ մի 5-6 տուն և չէնք կան, որի մէջ դարշահոտութիւն չբուրէ քաղաքացոց վերին աստիճանի անմաքուր ապրուստից, ուր փողոցները միշտ ցեխի և աղտեղութեանց կլօակներ են, ուր ուսումնարանը, զինետունները և սպանդանոցները միևնոյն չէնքում և փողոցում իրար մօտ են գտանվում, այդպիսի քաղաքը և այդ կերպ պահուած ուսումնարանը մեր գիւղականաց համար քահանայացու և վարժապետացու պատրաստող իբրև թէ կարող է և պէտք է դառնայ....

Երբ մենք տեսել ենք լուսաւորեալ արևմուտքում, մանաւանդ Գերմանայիում թէ՝ գիւղական վարժապետացուց և քահանայացուց համար, իստակ՝ մաքուր օդ և ջուր ունեցող, փոքր ինչ հեռի նոյն իսկ եւրոպական քաղաքից օդից (մասամբ քաղաքի վատ օրինակներով լի կեանքից) գիւղ տեղերում աշխատունեն հիմնել իւրեանց դպրանոցները, երբ այդպէս է ճշմարիտ լուսաւորութեան փորձը, ուրեմն ինչպէս չասենք թէ՝ ծակ ազատամտութեան, խակ-համբակութեան (Հուր-Հեր) կամ անհետևողութեան (Մեղու) գործ է քարոզել, քանդելու և միաւորելու մեր մի այդպիսի ճգտումով ուսումնարանը Աղէքսանդրապոլու պէս քաղաքին։

Մի խօսք ևս. Մեղուն կարող է մեզ հարցնել թէ՝ միթէ իրաւի ես կարծումեմ թէ՝ Հառիճեան վանական դպրոցը մեր իդէալին լիակատար համապատասխան է՝ մեր Շիրակայ գաւառի գիւղերի համար քահանացուք և վարժապետացուք պատրաստելու համար ըստ օրինակի Գերմանիայի վարժապետական սեմինարների։ Կպատասխանենք այդպէս կարող են կարծել «Մեղուի» մէջ ասպատակութիւններ անող Դոն-Քիշոթները։ Մեր իդէալին չէ հասել դեռ ձեր Ներսիսեան դպրոցը, ուր մնայ մի Հառիճեան նոր հաստատելիք դպրոց։ Մենք ասումենք միայն Հառիճեան դպրոցը Շիրակայ գաւառի համար կարևորութիւն է. մեր հոգևոր իշխանութիւնը և նոյն իսկ հոգաբարձութիւնը նշանակելով վանուց դրամագլուխը այդ ուսումնարանի համար, նպատակ ունի վերջնոյն վերոյիշեալ ուղղութիւնը տալու։ Օգնեցէք մեզ աստիճան առ աստիճան մեր իդէալին փոքր ի չատէ մօտեցնելու և այդ դպրոցը։ Դուք կարող էք աւելի իդէալականը կամ օրինակելին Թիֆլիզում հիմնել-հիմնեցէք խնդրեմ [1]) իրարու չխանգարենք, դուք ձերը

[1]) Դարձեալ «Մեղուն» էր որ այդ բանի համար արած գիւմրեցու առաջ

յառաջ տարէք, մենք մերը, —տեսնենք որը մեզանից աւելի իրական կերպիւ մտածում և գործում է... Մերը սկիզբն է՝ Ձերը արդէն բաւականին հասած։....

Խնդրում եմ ահա հրապարակաւ «Մեղուի» պարոն խմբագրին թող օգնէ մեզ գալող տարուայ սեպտեմբեր ամսուան երկու ուսուցիչ գտնելու, Հառիճայ ժառանգաւորաց դպրոցի համար՝ մէկը Լուսաց և Հայոց լեզուի, միւսը գիտութեանց։ Զմոռանանք յայտնել, որ Հառիճում վարժապետը կունենայ բնակարան, ուտելիք և խմելիք. սրանց՝ ռոճիկը չափաւոր կլինի։ Հրաւիրումենք Հառիճ մեր այն բազմաանձ վարժապետներին, որոնք բաւականին զգուած մեր միւս ուսումնարաններում երկար ժամանակ գործելուց, մեր հոգաբարձութեանց չատերի ծայրայեղ կրքոտ կամակորութիւնները տեսնելուց, որ կամենային մի հանդարտ առողջարար անկիւնում իւրեանց հացը գտնել, մանկավարժութեան նոր ձգտումները իրագործել։ Առաջին երկու երեք տարին միայն սկզբնական ուսումնարանը ծրագիր կունենայ...։ Ամբողջ ծրագիրն ես գուցէ մինչև սեպտեմբեր հրատարակուի։

«Մեղուի» մեծապատիւ և մեծաջան (այո, խոստովանում ենք հրապարակաւ. սորա երկարամեայ անձնուէր գործունէութիւնը և երախտիքը մեր աղքատիկ գրականութեան կայծերը մեր մէջ պաշտպանելում և այլն.... այդ մեր արդարամիտ խոստովանութիւնը չպէտք է հօ մեր ձեռքերը կապէ՝ նորա այժմեան սխալները ուղղել և նորա այժմ հասուցանելիք հասարակական վնասների առաջն առնել.... Կարծեմ, պարզ է.) խմբագիրը մեզ յայտնեց մանաւոր խօսակցութեան մէջ թէ՝ Հուր-Հերի թղթակցութիւնը տպել է, բանը պարզելու համար։ Կարծեմ թէ՝ այժմ Հառիճեան հոգաբարձութեան հարցն էլ բաւականին նորան պարզբանեցինք։ Եթէ այս էլ չօգնէ, պէտք է մտածել որ իրաւի պատուելի խմբագրի ըմբռնողութիւնը այժմս պակասած է, և այնուհետև իրաւունք պիտի ունենանք նորա «Մեղուի» միւս այդ տեսակ յօդուածներին և թղթակցութեանց միայն երկու ժողովրդական խօսքով պատասխանել— «խելին խրատն ինչ կանէ, սելին սապոնն ինչ կանէ։»

ԱՒԵՏԻՔ ՄԱՀՏԵՍԻ ՄԿՐՏՉԻ ԲԱԲԱՑԵԱՆ։

Յ.Ն Դեկտեմբերի 1878 թ.

Ջարկութիւնը ուղում երխանգարել, բայց այժմեան հոգաբարձութիւնը սակաւառ սակաւ Գիւմրեցու ձգտումները իրագործումէ, հակառակ «Մեղուին»։

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՅԱՍԻՐԱՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՆՊԱՏԱԿ

Հայաստանի մէջ ազգային կրթութեան նպաստելու

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

1. Ընկեր կ'ընդունուի ամեն Հայ՝ Ցնօրէն Խորհրդոյ հաւանութեամբ:

2. Ամեն ընկեր պարտի ամսական մի բաժնոյ համար երկու դահեկան մաքուր թղթադրամ վճարել:

3. Ընկերք մէկէ աւելի բաժին կրնան վճարել, բայց ժողովոց մէջ հաւասար ձայն ունին:

4. Ընկեր մը որ երեք ամսական յաջորդաբար չվճարէր՝ Ցնօրէն Խորհրդոյ կողմանէ ազդարարութիւն մը կ'ընդունի. եթէ սոյն ազդարարութենէն մի ամիս յետոյ դարձեալ չվճարէ հրաժարեալ կը համարուի:

5. Ընկեր մը որ տասը տարեկան բաժանորդագինը կանխիկ կը վճարէ մշտնջենաւոր ընկեր է, այսինքն ընկերական ամեն իրաւունք կը վայելէ առանց տուրք վճարելու ստիպեալ ըլլալու:

6. Ընկերութենէս հրաժարեալ ընկերք յետոյ ստակ մը պահանջելու իրաւունք չունին:

7. Ընկերութիւնս կրնայ ունենալ նաև պատուոյ անդամներ որք կ'ընդունուին Ցնօրէն Խորհրդոյ հրաւիրանօք և որոյ տուրքը կամաւոր է:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

8. Ընկերութիւնս ունի ընդհանուր ժողով մը և ցնօրէն խորհուրդ մը։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

9. Ընդհանուր ժողովը ընկերութեան օրէնսդիր և համարաւոր մարմինն է։

10. Ընդհանուր ժողովը կը բաղկանայ ամէն ընկերներէ և կը գումարուի երեք ամիսը անգամ մը. այսինքն յունուարի, ապրիլի, յուլիսի և հոկտեմբերի սկիզբները։

11. Ընդհանուր ժողով կը գումարի նաև 'ի պահանջել հարկին կամ ընդհանուր ժողովոյ Դիւանի, կամ ցնօրէն խորհրդոյ և կամ քսանևհինգ ընկերաց առաջարկութեամբ։

12. Ընդհանուր ժողով կը գումարուի ներկայ անդամներով։ Բացակայք տրուած որոշմանց դէմ բողոքելու իրաւունք չունին։

13. Ընդհանուր ժողովը կ'ընտրէ իւր Դիւանը, Դանձապետը և ցնօրէն խորհրդոյ միւս անդամները ընկերաց մէջէն՝ գաղտնի քուէարկութեամբ։

14. Ընդհանուր ժողովոյ Դիւանը կը բաղկանայ Ատենապետէ և փոխ Ատենապետէ, Ատենադպրէ և փոխ Ատենադպրէ որոց պաշտօնն երկամեայ է։

ՑՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԴ

15. Ընկերութեանս ցնօրէն խորհուրդը կը բաղկանայ եօթը անդամներէ։

16. Ցնօրէն խորհրդոյ յանձնուած է ընկերութեան ամէն տեսակ գործոց վարչութիւնը. միայն նպաստակին նկատմամբ նոր ձեռնարկութեան մը սկսելէ յառաջ ընդհանուր ժողովոյ հաւանութիւնը պարտի ստանալ։

17. Ցնօրէն խորհուրդն իւր ամէն գործառնութեանց համար պատասխանատու է առ Ընդհանուր ժողովն և պարտի երեք ամիսը անգամ մը Ընդհանուր ժողովոյ ներկայացնել իւր գործողութեանց տեղեկագիրը և Ընկերութեան գանձային վիճակը, իսկ տարեգլխին,

որ է յունուար 1, ամբողջ տարեկան շրջանի տեղեկագիրը և հաշուեցուցակը:

18. Ընկերութեան դրամագլխին բերած շահուն և անդամոց տուրքերու երեք չորրորդը ծախքերը զեղչուելով Ընկերութեան նպատակին գործածութեան կը յատկացուի, իսկ մէկ չորրորդը Ընկերութեան պատահական շահերուն հետ դրամագլխոյն վրայ կը յաւելցուի:

19. Լրացեալ տարեկան շրջանի մէջ գոյացեալ հասոյթը յաջորդ շրջանի մէջ, ըստ նախորդ յօդուածին, կը գործածուի:

20. Տնօրէն խորհրդոյ առ Ընդհանուր ժողով ներկայացուցած հաշուոյ քննութիւնը երեք անդամներէ բաղկացեալ քննիչ յանձնաժողովոյ մը կը յանձնուի որոց մէջ պէտք է գտնուի Ընդհանուր ժողովոյ Դիւանի անդամներէն մին:

21. Հաշուեքննիչ յանձնաժողովոյ ընտրութեան՝ Տնօրէն խորհրդոյ անդամք չեն կրնար մասնակցիլ:

22. Տարեկան ընտրութեանց ժամանակ Տնօրէն խորհրդոյ անդամոց երկուքը նախորդ Տնօրէն խորհրդոյ անդամոց մէջէն կ'ընտրուի:

23. Տնօրէն խորհրդոյ անդամք միանգամայն Ընդհանուր ժողովոյ Դիւանի անդամ չեն կրնար ըլլալ:

24. Տնօրէն խորհուրդը իւր մէջէն կ'ընտրէ իւր Դիւանը և հարկ եղած մասնախումբեր և պաշտօնատարներ:

25. Գանձապետը ուղղակի և անհատապէս պատասխանատու է առ Ընդհանուր ժողովն իրեն յանձնուած ամեն տեսակ արժողութեանց համար:

26. Գանձապետը Ընկերութեան վերաբերեալ իրեն յանձնուած ամեն արժողութեանց ապահովութեան համար պատուաւոր անձ մը երաշխաւոր պարտի տալ:

27. Եթէ Տնօրէն խորհուրդը իւր անդամոց միոյն վրայ անվստահ ըլլայ, կրնայ Ընդհանուր ժողովոյ հաւանութեամբ պաշտօնէ հրաժարեցնել:

28. Տնօրէն խորհրդոյ պաշտօնը մէկ տարի կը տեւէ:

29. Կանոնադրութիւնս վերաքննելի է երեք տարին անգամ մը, բայց Տնօրէն խորհուրդը, հարկ տեսած ատեն, կրնայ փոփոխութիւններ առաջարկել:

ՏՊԵԼՈՎ ԱՅՍ ԴԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԻՒ ՈՒՆԻՆՔ ՑԱՑՏՆԵԼՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՈՐ «ՓՈՐՁԸ» ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ Է ԲԱՑԵԼ ՅՈՒՌԻՍ ԹԷ «ԴՊՐՈՑԱՍԻՐԱՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ» ԵՒ ԹԷ «ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱՐ ԼՈՒԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԿՍԿՍԵՆՔ ՏՊԵԼ «ՓՈՐՁԻ» ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՄԱՐԻՑ։

ԽՄԲԱԳԻՐ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՉԿԱՐՈՂԱՑԱՒ ՏՊՈՒԵԼ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ԱՆԿԱԽ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ։